

2420

243  
9-79

1887

2010



AB 2001

Ապրիլի Շրջանախհան  
343 Եմբռ Հայր Խորբի Կողման  
Գ-79 43 1916 փետրվար

ԱՐԱՎԻ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

Printed in Turkey

ԱՊՈՔԱԳԱԲԱ

ԱՄԵՆ ՀԱՍԱԿԻ,


ՎԻՃԱԿԻ ՈՒ ԱՍՏԻճԱՆԻ ԱՆՑԱՆՑ

ԴՐԵՑ

Հ. ԳՐԻԳՈՐ Վ. ԳՈՎՐԻԿԵԱՆ

ՄԽԱԹ. ԱԼԻՍԵՆ

Բ. ՖԱՖՐՈՒԹԻՒԽ



ՎԻԵՆԱ

ՄԽԱԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1887.

11279

Ոմանց աղքու տկաշամաց, և ոմանց խոտ  
բորեաց՝ առ պիսի տղօթից այսու մատէօթու  
մտակարահեցի, ձնուարկնու ճոգուոյդ զոռու-  
թեամբ կառօցի իհն Մաղթանս բազմադիմո,  
և տմհակցուա սոցիա խնդրուոծ՝ զթութեամ  
մեծիդ յանդիման իմանի սովու համապատ:

Ա. Գր. Կար. Բան. Գ.



2696  
39

Կրասուպութեան սկիզբն. Տէրութ  
չարէն է: "

Printed in Turke

## ՅԱՌԱԶԱԲԱՆ



**Ի՞նչ** որ կ'ընէ արեւը  
տնկոց համար,  
անկէ անհամեմատ աւել-  
մն կ'ընէ աղօթքը ա-  
ռարինութեանց համար:  
Մէկոյ առնունը ա-  
րեգակը տնկերէն,  
ծածկենը անոր  
կենսատու ճառա-  
գայթները բուլոց  
առջեւէն, կը տես-  
նեմ որ չեն կրնար  
ածիւ, կը տժգու-  
նին ու կը ցամքին:  
Այսպէս ալ բա-  
նի որ սրտերնիս  
ջերմեռանդու-

թեւն ու աղօթից բոցերովը չենք տարցըներ,  
չենք լուսաւորեր, կարելի չէ որ Վասուծոյ սի-  
րոյն հուրը ներս թափանցէ, ջերմացընէ,  
համբերութեան, սիրոյ, հեզութեան եւ ուրիշ  
առարինութեանց արմատներ ձգէ:

Ի՞նչ է աղօթքը: Ա՞ն խողովակն է, որուն  
մէջէն Վասուծոյ չորհրներն առատապէս մե-

զի կը հոսին . սանդուղ մը՝ որուն վրայէն դէպ  
ուղիղ երկինք կ'ելլնիր , բանալի մը՝ որով ար-  
քայութեան դուռը կը բանանիր :

Փրկիչը բաւական չհամարեցաւ անապատ  
երթաւ , նոն բառասուն օր աղօթքով անցընել ,  
ամքողջ զիշերներ “հանել ի գոռախ շաղօթան  
Աստուծոյ” . այլ նաև արքայութիւնն ստա-  
նալու իրեւ զօրաւոր միջոց՝ առջեւնիս դրաւ  
աղօթքը . “Աղօթս արտարէք , զի մի անկա-  
նիցիք ի փորձութիւն . ինպրեցէք եւ առնու-  
ցուք .” Այս բարերար Տէրը՝ զմիզ յորդորել  
ուզելով որ ինսդրելէն բնաւ չդադրինք , նմա-  
նաբանութիւններ առջեւնիս դրաւ : Խեղծ այ-  
րոյ մը պատմութիւնը յառաջքերաւ , որ ստէա  
աղաշելուն՝ նպատակին հասաւ : Բարեկամին  
պատմութիւնը պատմեց , վրայ բերելով թ’ :  
շար մարդիկն անզամ իրենց որդւոցն աղէկ  
պարզեւներ կու տան . թէ չկայ հայր՝ որմէ որ-  
դին հաց ուզէ ու անիկայ քար տայ , կամ ծուկ  
ուզէ՝ ան ալ իրեն օծ տայ . եւ թէ ինք լաւ  
հօրմէ մ’ալ աւելի բարի է : Եւ ասուզի՞ւ կա-  
րելի բան է թէ Աստուծ , որ իր միածին  
Որդին աշխարհը խաւրեց , միր փրկութեան  
համար ամէն բան ըրաւ , զամէնքը հաւասար  
սիրով կը սիրէ , եւ ամենուն փրկութիւնը կ’ու-  
զէ , չըսէ անոնց որ “Կուրդան առ նոս ի տուշ-  
եւ ի զիշերի” :


Բայց հիմակուան աշխարհը նոն հասեր է ,  
որ նոյն խոկ չի զիտեր՝ թէ աղօթքն ինչ ըսիւ-

է, ննշալու կը ըլլայ: Մակայն Աւետարանին խօս-  
քը երբեք զետին պիտի չի յնայ, որ մեզի յայ-  
անապէս կը պատուիրէ աղօթք ընելն, ըսելով  
Փարտ և յաղօթս կատ. աղօթս արտարէք.  
Խնդրեցէք: Ուստի եւ ամէն աստուածաբանք  
միաբան կը վճռն թէ ամէն մարդ մեղօք շափ  
պարտական է աղօթք ընելու: “Ամէն մարդ,  
կըսէ Ս. Թուվմաս, աղօթք ընելու պարտական  
է, վասն զի պարտական է նոգեւոք գանձեր  
ժողովեւ, զոր չի կրնար առանց աղօթելու:” Եւ  
Ս. Յովհ. Ուկերերան կ'աւելցընէ. “Ծշմար-  
տութեամք պէաք ենք նամոզուիլ, թէ աղօթք  
չընել ու նոգւոյն կեսները կորսընցընել մի եւ  
նոյն բան է,,,: Եւ ով կրնայ ուրանալ թէ ա-  
մէնս աղքատ ենք: Ուրիմն եթէ նարստանալ  
կ'ուզենիք՝ բաղիսնը, եւ տարակոյս շունենանք  
որ մեզի կը բացուի, ինորենը, եւ կը տրուի:  
Ուսկից կը նետեւի թէ ով որ չի ինորեն՝ չըն-  
դունիք, ով որ չի զարնեն՝ անոր չի բացուիր:  
Այնշափ սուրբեր որ արքայութիւն նասան, ա-  
ղօթքով նասան: Եթէ չաղօթէին, արքայութիւն  
չէին երթար: Ասոր նամար շատ յարմարու-  
թեամք կ'ըսէ Ս. Օգոստինո. “Որշափ ժա-  
մանակ որ կը տեսնես թէ աղօթքը թող տուած  
չես, ապանով եղիք որ Աստուծոյ չորքը  
վրայէն չի պակսիք, եւ Տէր իր ամենազօր  
օգնութիւնը քեզմէ չի նուացընիք,,:

Բայց չնարձենը թէ մնար որ նող ու մն-  
իք ենք, մեր զօրութեամքը պիտի կարենանք

աղօթել: Զէ. աս ալ Աստուծոյ մէկ մասնաւոր  
չնորհքն է: Սակայն Աստուած ամէն բանեն ա-  
ւելի սա չնորհքը կը պարզեւէ ինսդրողներուն:   
Եսոք համար ըսենք Առաքելոց հետ. “Տէր,  
ուստ մեզ յաղօթս,, կալ, եւ Շնորհալոյն հետ՝  
թէ “Որ պատուիրան ծշմարտութեան աւան-  
դեցեր աղօթել միշտ առ Աստուած... չնոր-  
հեա մեզ յամենայն ժամ՝ լինել Քեզ յանդի-  
ման մարուր աղօթիւր ըստ անմարմոցն որ  
յերկինս,,:

Այնձնաւ, Յիսէ. Ա. Կիրակիս. 1867 :



## Առ ՆԵՐԿՐՈՒԹ ՄԱՎԱԳՐՈՒՅԹԻՒՆ:

Իի եմ ուրախութեամբ, լի եմ ինսդութեամբ, քանի որ կը տեսնեմ թէ Աստուած կը փառաւրով ու իր երկրպագութիւնը և տարածի:

Մինչ դեռ կաթուղիկէ նկեղեցին արտասուալց կ'ողբայ, թէ Աստուծոյ հոգին օր քան զօր կը շիջանի քրիստոնէից սրտին մէջ, թէ չերմեռանդութիւնը կը կորուվ հաւատացելոց հոգւոյն մէջ, թէ Աստուծոյ պատուիրանները կ'անարզուին ու նկեղեցւոյ օրէնքները կը մոռցուին. — երբ Ս. Նկեղեցւոյ Դլուխը կը բողոքէ թէ անհաւատութիւնն ընդհանուր տիրած է, երբ մարզարէնները կ'անարզուին, սեղանները կը կործանին. — մենք՝ սրտի վրատանութեամբ ու խղճի հանդարտութեամբ կը լսնէք Աստուծոյ խօսքին կրկնումը՝ թէ Թուղի Էնձ եօթն հազար այր, որ ոչ պազին երկիր Բահաղու: Այս ինքն՝ Պահեցի ինձի Հայոց մէջէն փոքրիկ ժողովուրդ մ'որ աշխարհիս ապականութեանցը մէջ իր նախնեաց Աստուածը չթողուց, որ պահեց իր հարցն առ

Աստուած հաւատարմութիւնն ու ջերմեռանդութիւնը, որ ժամանակին ալիքներէն չյափըշտակուելով, կ'երկրպագէ Հօր՝ հոգլով և ծշմարտութեամբ՝ ինչպէս իր եկեղեցիներուն, անանկ ալ իր խցկանը մէջ:

Այսպէս ժողովրդեանս վրայ միսիթարուելու ատենս, կը պաղատիմ Զեզի, ով ջերմեռանդ հոգիք, որ ասէէ ետեւ ալ զԱստուած չթողուք, չէ թէ միայն ծեր նեղութեանց ու տառապանաց ատեն, այլ նաև ծեր երջանիկ եւ ուրախ ժամերուն մէջ: Եւ ամէն հոգեւոր ու մարմսաւոր պիտոյից համար ինսդրեցէք եւ տացի ծեզ, բախեցէք եւ բացցի ծեզ: Աղօթս արարէք, զի մի անկանիցիք ի փորձութիւն:

Հայաքաղաք Կերպայ, Ս. Պարողանանց  
օրը, 1887:

# ԱՐՏՈՒՐԻ Ա Հ Օ Թ Ֆ Ն Ե Ր

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Աղօթել՝ մտուրնիս առ Աստուած վերցընել է։ Աղօթք ընելն ընդհանրապէս քրիստոնէին պարտքերէն մէկն է։ իսկ առտուաղօթք ընելը՝ անհրաժեշտ պարտք մըն է։ Աս է այն առաւտեան զոհը՝ որուն ձեռքով օրւան երախայրիքն Աստուծոյ կը նուիրենք, Երեմիայի խրատին հետեւելով թէ. «Ելելու ատենդ խորհուրդներդ առ Աստուած ուղղէ ու դովէ քու Տէրդո։ Վասն զի իմաստնոյն ըսածին պէս. Ար վայելէ որ յառաջքան արեգական ծագելն ըլլայ Աստուծոյ փառաբանութիւնը եւ արեւուն ելլելու ատենդ զԱստուած պաշտելը։ Թէ որ հին ատեն երկրաւոր պտղոց երախայրիքն Աստուած իրեն ուղեց, կը պատշաճի որ մենք ալ օրւան, մանաւանդ թէ մեր ամէն գործերուն սկիզբն Աստուծոյ նուիրենք։

Եթէ կ'ուզես որ Աստուծոյ քեղի շնորհած օրը քու փրկութեանդ ծառայէ, պէտք ես զանիկայ Աստուծով սկսիլ: Ուստի անկողնէդ ելլելուդ պէս, ինք զինքդ խաչակնքէ: Անկէ ետքը խոնարհութեամբ օրհնէ ամենակարող Տէրը, ամէն բաներուն ստեղծողն ու պահպանողը: Շնորհակալ եղիր իր հայրական պահպանութեանը համար, որով այս գիշեր զքեղ պահպանեց եւ առառան լուսոյն հասցուց: “Նուիրէ իրեն ամէն խորհուրդներդ, խօսքերդ, գործքերդ, վշտերդ. եւ հաստատութեամբ առաջադրէ, որ առաջիկայ օրը միայն իր պատուոյն ու քու հոգւոյդ փրկութեան համար պիտի անցընես: Խնդրէ իրմէ շնորհք ու օգնութիւն ամէն զործոցդ մէջ: Նուիրէ ինք զինքդ ու քուկիններդ Ա. Աստուածածնի, պահապան հրեշտակիդ ու պաշտպան սուրբիդ: Այն օրն որ Աստուծով սկսած է՝ օրհնուած է, եւ աղէկ ալ կը լմնայ





J. B. Grandjean de la



## Ա Զ Ո Թ Ք

Կոհութեան:

Տիր նիթէ զըրթունս  
իմ շանաս՝ բերան իմ  
երգեսցէ զօրհնութիւնս  
Քո: — Գոհութիւն ու  
փառք քեզի, Աստուած  
իմ, որ այն ժամանակն  
իսկ որուն մէջ վրադ  
չէի մտածեր՝ հսկեցիր վրաս ու դարձեալ  
այս առտուան լուսոյն հասցուցիր: Քու  
անշափ մարդասիրութիւնդ օրհնեալ ըւ-  
լայ յաւ իտեան: Աստուած իմ, Երարիշ  
ամէն արարածոց ու ժամանակաց, քեզի

կը նուիրեմ իրբեւ առաւօտեան զոհ  
մը այսօրուան ամէն ժամերս ու վայր-  
կեաններս։ Պատրաստ է սէրդ իմ, առնել  
զիամս + «Ասպառած»։

Արարիչ լուսոյ, լուսաւորէ հոգւոյս  
աչուրները, որ տեսնեմ ճամբաններդ,  
եւ անոնց վրայէն ընթանալով՝ մահուան  
քնոյն մէջ չթափառիմ։ Կ'առաջադրեմ  
ճշմարտապէս, Տէր իմ, ան ամէն բա-  
ներէն զդուշանալու, որոնք աստուա-  
ծային մէծվայելըութիւնդ նոյն խոկ ա-  
մենափոքր եղանակաւ կրնան վշտացը-  
նել։ Զքեզ միայն կ'ուզեմ սիրել,  
Աստուած իմ, սէր իմ, քեզի միայն  
ծառայել։ Կերկրապագեմ քեզի, ով  
ամենասուրը Երրորդութիւն, եւ ինք  
զինքս բոլորովին քեզի կը նուիրեմ։  
Քեզի կ'ընծայեմ, Տէր, մարմինս, հոգ-  
ւոյս ամէն կարողութիւնները, ցանկու-  
թիւններս ու միտութիւններս։ Օրհնէ  
աս առաջադրութիւնս, եւ ինձի շնորհը  
տուր որ այսօրուան սուրբ օրը միայն

քու մեծադոյն փառացդ համար անցը-  
նեմ: Այլ միացընեմ դարձեալ իմ մտած-  
մունքներս, խօսքերս ու դործքերս աս-  
տուածային Փրկչին, քու սիրելի Ուր-  
դոյդ, ամէն խորհրդոցը, բանիցնու դոր-  
ծոցը, եւ ան մեծ զոհին հետ՝ զոր մեր  
փրկութեան համար խաչին վրայ քեզի  
մատոյց. Եւ կը խնդրեմ որ իր սիրոյն  
համար ինծի ողորմիս:

Հանգչի, Տէր իմ, քու աստուածային  
օրհնութիւնդ, իմ ու իմիններուս վրայ.  
որպէս զի քու ամենազօր շնորհօքդ ա-  
մէն վտանգներէն պահպանուելով՝ այս-  
օր եւ ընդ միշտ փառաւորենիք քու աս-  
տուածային մեծվայելսութիւնդ. ամէն:

Մայր Աստուծոյ, Թագուհի Երկնից  
եւ իմ սիրելի մայրս, Մարիամ, մայրենի  
հովանաւորութեանդ տակ կը դնեմ հո-  
գիս ու մարմինս: Գթած աչուրներովդ  
խոնարհ աղաչանացս նայէ: Դու, անա-  
բատ շուշան մաքրութեան, աղաչ աս-

տուածային Որդւոյդ, որ կարենամ զինք  
կատարելապէս սիրել: Խնդրէ ինծի Հա-  
մար հոգւոյ եւ մարմնոյ մաքրութիւն,  
որպէս զի ըլլայ թէ զգայարանացս  
Հրապուրանացը հաւանելով, Աստուծոյ  
գէմ չար գործք մը գործեմ, հապա քու  
հովանաւորութեամբդ ամէն փորձու-  
թեանց յաղթելով՝ յԱստուած միայն  
ուրախ ըլլամ. ամէն:

Իսկ Դուք, ով փառաւորեալ զուար-  
թունք երկնից եւ երանելի ոգիք, դուք,  
որ անձառելի երանութիւնը կը վայե-  
լէք, աղաչեցէք ինծի Համար որ այս  
ամէն տեսակ վտանգներով լի կեանքը  
յաղթութեամբ լմբնցընեմ: — Դուն  
ալ, իմ պահապան Հրեշտակս, քովս  
կեցիր, որովհետեւ Տէր զիս քու մաս-  
նաւոր հովանաւորութեանդ յանձնեց:  
Ամէն ճամբաներուս մէջ եղիր իմ ու-  
սուցիչս եւ առաջնորդս, որպէս զի ար-  
ժանի ըլլամօր մը քեզի հետ արքայու-

Թեան մէջ զԱստուած օրհնել եւ փառաբանել, ամէն:

Երեք Հայր մեր եւ Երեք Ողջոյն:

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ Եղիցի անուն քո, Եկեսցէ արքայութիւն քո. Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն: Այլ փրկեազմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Ողջոյն քեզ, Մարիամ, լի շնորհօք, Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու ի կանայս եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո Յիսուս: Սրբուհի Մարիամ, մայր Աստուծոյ, բարեխօսեա վասն մեր մեղաւորացս այժմ եւ ի ժամաւ մահուան մերոյ. ամէն:



## ԱՎՈԲՐԴ

առ Ս. Աստուածածին:

Կ'ողջունեմ զքեղ, ով Մարիամ,  
Թագուհի իմ, կեանք իմ, քաղցրու-  
թիւն, խնդութիւն, յօս ու վարձք իմ:  
Կ'օրհնեմ ամենասուրբ Երրորդութիւնն  
զքեղ բոլորովին անարատ եւ սուրբ  
ստեղծելուն համար: Օրհնեալ ըլլան  
Ս. Յովակիմ եւ Ս. Աննա, որ զքեղ  
ծնան, փեսադ Ս. Յովսէփ եւ աւետա-  
բերն գարբիէլ: Գուն ալ, ով գիմած  
մայր, օրհնեալ ըլլաս երկնից բոլոր  
հրեշտակներէն ու սուրբերէն: Օրհնեն  
զքեղ Միքայէլ՝ եկեղեցւոյ հաստա-  
տութիւնը, ամէն առաքեալք, իմ  
պաշտպան սուրբս եւ պահապանհրեշ-  
տակս: Օրհնեն զքեղ ամէն մարդիկ,  
սիրեն զքեղ եւ հաւատաբմութեամք  
քեզի ծառայելու ջանան: Քայց ես ա-  
նոնցմէ աւելի սիրեմ, պաշտեմ ու օրհ-  
նեմ զքեղ: Օրհնէ եկեղեցւոյ եւ տէ-

բութեան գլուխները, ծնողքս, մերձաւորներս, առաջնորդներս եւ ընկերներս։ Օրհնէ նաեւ հոգւոյս փրկութեան աշխատողներուն ամէն ջանքն ու աշխատութիւնը։ Պաշտպանէ զեկեղեցին, բարձրացուր անոր որդիքը. իսկ թըշնամիները խոնարհեցուր։ Ծնորհէ քաւարանի հոգւոց աղասութիւն, արդարոց հանապաղորդութիւն, մեղաւորաց կատարեալ զղջում, իսկ անհաւատից՝ դարձ։ Օրհնէ վերջապէս զիս, որ Յիսուսէն ետեւ՝ ամէն բանէն աւելի զքեզկը սիրեմ, եւ կայրիմ զքեզ ամէն մարդիկներէն սիրուած ու մեծարուած տեսնելու ցանկութենէն։ Ով իմ քաղցր մայրս Մարիամ, քու Արդիեդ ինձի համար կատարեալ սէր, խոնարհութիւն... եւ երեք աստուածաբանական առաքինութեան շնորհքներն ընդունէ։ Տուր իմ մեղացս վրայ ճշմարիտ ցաւ մը. դարձեալ վիճակիս պարտուցն անթերի կատարումը։ Մահուանս ճդնաժամուն մէջ

իմ քովս կեցիր, ու ընդունէ հոգիստ  
Ասոնք են աշա, սիրելի Մայր, զքեզ  
սիրող որդւոյդ աղաչանքները:

## ԱՎՈԲՎ

առ Ս. Յովանի Աստուածահայր:

Ավ երջանիկ նահապետ սուրբ Յովսէփի, գուն մեծ սրբութեանդ համար ընտրուեցար Կոյս փեսայ Աստուածածնի կուսին, զրուեցար մնուցիչ եւ պահապան որդւոյն Աստուծոյ, եւ իրեն հայր կոչուելու պատուոյն արժանացար: Թախանձանօք կը խնդրեմ, եղիր ինծի ալ պահապան ու հայր, որովհետեւ զմեզ իրեն եղբայր կոչելով՝ քեզի ալ որդի ըրաւ: Ցուցուր ինծի կենացս ամէն օրն այն գութն ու հոգը, զոր ունեցար քու Աստուածորդւոյդ վրայ: Աղատէ զիս ամէն հոգեւոր ու մարմնաւոր չարիքներէ: Յիսուսէն շնորհը առ ինծի, որ

մեծերուս անանկ հպատակիմ, ինչպէս  
ինք սիրով քեզի հպատակեցաւ : Որպէս  
զի քեզի եւ անարատ հարսիդ պէս  
հաւատարմութեամբ իրեն ծառայելով՝  
օր մ'ալ արքայութեան փառացն արժա-  
նի ըլլամ. ամէն :

Աղջյն քեզ Յովսէփի, լի շնորհօք Տէր  
ընդ քեզ. օրհնեալ ես դու ի մէջ ա-  
րանց. օրհնեալ է անարատ հարսն քո  
Մարիամ եւ օրհնեալ է պտուղ որո-  
վայնի նորա Յիսուս : — Սուրբ Յովսէփի,  
հայրագիր Որդւոյն Աստուծոյ, բարեխօ-  
սեա վասն մեր մեղաւորացս, այժմ եւ ի  
ժամու մահուան մերոյ. ամէն :


---

## ԱԳՈՐԱՔ

առ պահապան հրեշտակներ :

ԱՎ պահապան հրեշտակս, կ'աղա-  
շեմ ինձի որ վերին գթութենէն քեզի  
յանձնուած եմ՝ փրկութեան ճամբուն  
մէջ առաջնորդէ եւ ամէն չար ոգւոց

Եւ ծանր փորձութեանց դէմ պաշտապանէ: Գիտես, քաղցր պահապանս, որ Արարչիս պատկերին նման ստեղծուած էմ, Քրիստոսի պատուական արեամբը փրկուած, եւ սատանային իշխանութենէն աղատելով՝ քու պահպանութեանդ տակ դրուած էմ, որպէս զի թշնամոյն նախանձով չապականի Աստուծոյ բարերութեան պատսսպարածը: Արդ ինձի օդնութեան հասիր, որ Աստուծոյ իմ վրաս ցուցըցած բարերարութեան այնչափի նշանները պարապի չելեն: Ինձի օդնական եղիր, որպէս զի բարի դորձքեր ընելով, աստուածպաշտութեամբ կենցաղավարելով եւ Արարչիս սիրոյն մէջ հաստատ մնալով, երջանկապէս իր տեսութեան հասնիմ. Եւ զինք երկինքը ամէն սրբոց եւ քեզի հետ յաւիտեանս օրհնեմ. ամէն:



# ՊԱՏԱՐԱԳԻ ԱՂՋԹՆԵՐ

Պատարագն սկսելու  
յառաջ:



Ա Տ Տ Տ Ե Ն Ա Կ Ա Ն Ա Մ Մ Ո Ւ Ա Ճ ,  
Գ Թ Ա Ճ Ա Հ Ո Ւ Ը Ն Ե Ր Դ Ի ն ծ ի ր  
Դ ա ր ձ ո ւ ր ա յ ս ի ս ո ր ա ն ի ն վ ր ա յ է ն , ո ր ու ն վ ր ա յ պ ի տ ի  
մ ա տ ո ւ ց ո ւ ի ն ո ր օ ր ի ն ա ց  
ա յ ն ա ն ա ր ի ւ ն զ ո հ ը՝ զ ո ր  
մ ե ր Տ է ր ը Յ ի ս ո ւ ս Ք ր ի ս  
տ ո ս , ք ո ւ մ ի ա ծ ի ն Ո ր դ ի դ  
ա շ խ ա ր հ ք ի ս ք ա ւ ո ւ թ ե ա ն հ տ մ ա ր ի ս ա ւ  
չ ի ն վ ր ա յ կ ա տ ա ր ե ց : Ք ա հ ա ն ա յ ի ն մ ա  
տ ո ւ ց ա ճ պ ա տ ա ր ա գ ն ե ս ա լ կ ո ւ զ ե մ  
ք ե զ ի ն ո ւ ի ր ե լ . ո ր պ է ս զ ի ա ն ո ւ ն դ ի մ  
վ ր ա ս ո ւ ա մ է ն ա ր ա ր ա ծ ո ց դ վ ր ա յ ա ւ ե լ ի  
ե ւ ս փ ա ռ ա ւ ո ր ո ւ ի : Ա ՛ ո ւ զ ե մ ն ո ւ ի ր ե լ  
ա յ ս ս ո ւ ր ը պ ա տ ա ր ա գ ն ի շ ն ո ր հ ա կ ա -

լութիւն քեզմէ ընդունած ամէն շնորհացս ու բարերարութեանց, ի հատուցումն անթիւ մեղացս, յընդունելութիւն շնորհաց՝ որոնք իմ փրկութեանս հարկաւոր են, ի հոգեւոր եւ ի մարմնաւոր օգուտ ամենուն՝ որոնց համար քեզի աղօթելու պարտական եմ։ Կը բաղձամ դարձեալ նոյնը քեզի մատուցանելու, ի յիշատակ չարչարանաց Յիսուսի, ի պատիւ անարատ կուսին Մարիամու եւ ամենայն հրեշտակաց եւ սրբոց, վերջապէս ի փրկութիւն կենդանեաց եւ ննջեցելոց։ Ընդունէ ասքաղձանքս. եւ ինծի շնորհք տուր որ սուրբ խորհրդոյս ջերմեռանդութեամբ միտ դնելով՝ անկէ բխած անչափ պտղոց ալ մասնակից ըլլամ, Քրիստոսիւ Տերամբ մերով. ամէն։

Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին։

Մեծազօր Թագուհի երկնից եւ երկրի, դուն խաչին քով կենալով՝ սի-

բելի Արդւոյդ կրած ամէն չարչարանաց  
մասնակից եղար: Արդ կ'աղաչեմ բարե-  
խօս եղիք Յիսուսի, որ քարացած սիրտս  
կակղցընէ, մեղացս գէշութիւնն ինծի  
ճանչնալ ու անոնցմէ գարշիլ տայ:  
Ծնորհէ միանդամայն ինծի, սիրելի Մայր,  
ցաւակից սիրտ մը, ինչպէս գուն ունե-  
ցար խաչին քով կեցած ատենդ. որ  
Քրիստոսի չարչարանացը մասնակից ըլ-  
լալով՝ արքայութեան մէջ ալ իր փա-  
ռացը հաղորդ ըլլամ. ամէն:

Ե յարկի սրբութեան:

Ընդունէ, Հայր յաւիտենական, իրեւ  
նուէր հացն ու գինին, զորոնք պաշտօ-  
նեայդ քեզի կը մատուցանէ: Թէպէտ  
հաց ու գինի են քեզի ընծայուած-  
ները, սակայն մէր հոգւոյն կազդուրիչն  
ըլլալու որոշուած են. վասն զի Քրիս-  
տոսի Տեառն մերոյ Ճշմարիտ մարմնոյն  
եւ արեանը պիտի փոխարկուին եւ խաչի  
զոհին հաշտեցուցիչ պատարագը՝ ճըշ-

մարտապէս պիտի նորոգեն։ Աս մաքուր  
նուելիներուն ու բովանդակ ուղղափառ  
Եկեղեցւոյ հետ ինք զինքս քեզի կեն-  
դանի զոհ կը մատուցանեմ. վասն զի ինչ  
որ ունիմ ու եմ, ամէնն ալ քուկդ են։  
Գուն, մարդասէր Տէր, ուրիշ բան չես  
ուղեր բայց եթէ՝ որ քու շնորհքներդ ի  
բարին գործածենք, մեզի ցուցըցած սի-  
րոյդ փոխարէն՝ սիրով հատուցում ը-  
նենք եւ ամէն պատուելիներդ պաշենք։  
Անոր համար կ'առաջադրեմ ասկէ ետքը  
հոգւոյս եւ մարմնոյս ամէն կարողու-  
թիւններն ուրիշ բանի չգործածել, բայց  
եթէ զքեզ միայն սիրելու եւ բոլոր  
սրտանց քեզի ծառայելու, ով անչափս  
սիրելի Աստուած իմ։ Զօրացուր այս  
առաջադրութիւնս եւ Յիսուսի սիրոյն  
համար՝ իմ նուելս քեզի հաճոյ ու ըն-  
դունելի պատարագ ըլլաց. ամէն։

Օրհնեալ թագաւորութիւն:

Քու թագաւորութիւնդ միշտ օրհնեալ պարտական ենք, ով ամենասուրբ երրորդութիւն, որ արքայութեան մէջ քու սիրելի ծառաներդ այնչափ փառօք կը փառաւորես, որ զիրենք քու անհասանելի փառացդ արժանի ընելէն զատ, նաեւ իրենց բարեխօսութիւնը կ'ընդունիս: Արդ ես ալ եկեղեցւց հետ այսօրուան սուրբն ինձի բարեխօս բոնելով՝ կը խնդրեմ քեզմէ, որ աղաչանացս լսես: — Եւ ինչպէս որ քու սիրելի ծառաներուդ՝ մարմնոյ, աշխարհքի ու սատանայի վրայ յաղթանակել տուիր, անանկ ալ ինձի շնորհք տուր, որ մարմնոյս չար ցանկութիւնները զսպեմ, ու աշխարհքիս ունայն թելաղբութեանց չհետեւիմ: Զօրութիւն տուր ինձի որ դրած առաջադրութիւնս գործքով ալ կատարեմ, որպէս զի ես ալ սիրելի ծառայիցդ հետ արքայութեանդ մէջ զքեղ յաւիտեանս օրհնելու արժանի ըլլամ:

Սուրբ Աստուած :

Մարդասէր Տէր, մեր Հողեղէն բնութիւնն այնչափ պատուեցիր որ մինչեւ աս Հրեշտակային երեքսրբեան օրՀնութիւնն ալ երգելու համարձակութիւն տուիր։ Աստուած իմ, որ բոլորովին սուրբ ես, ինծի ոյժ տուր որ սրբութեամբ ապրիմ։ Որ Հզօր ես՝ ինծի ոյժ ու զօրութիւն տուր, բարի յառաջադրութիւններս կատարելու։ Որ անմահական կենաց ու կենդանութեան աղբիւրն ես, իմ մեռեալ Հոգիս կենդանացուր։ Դու Տէր, որ իզմէ աւելի գիտես թէ ինչ շնորհքներու կարօտութիւն ունիմ, դու՝ որ միանդ ամայն աւելի պատրաստ ես տալու՝ քան թէ մենք խնդրելու, ցուցուր ինծի փրկութեանս օգտակար եղածը, որպէս զի քու պատուիրաններդ ճշդիւ պահելով՝ կարենամ յաւիտենական կենաց մէջ քու անմահական անունդ օրՀնել ու փառաւորել. ամէն:

Զի ողորմած եւ մարդասէր:

Գլթած եւ մարդասէր Տէր, որչափ  
պարտականութիւն ունինք քեզի շնոր-  
հակալ ըլլալու՝ ան բարերար աղդեցու-  
թեանց ու լուսաւորութեանց համար  
Դորոնք մարդարէներն ու առաքեալները՝  
աստուածային լուսովդ լուսաւորուելով  
մեր փրկութեան ու միսիթարութեան  
համար գրի անցուցին։ Ո՛չ Տէր, թող  
մի տար որ քու սուրբ աղդեցութիւն-  
ներդ լսենք միայն ու չկատարենք։ Դու-  
Աստուած իմ, որ ինձի շնորհք տուիր  
սուրբ յորդորներդ ու աղդեցութիւն-  
ներդ լսելու, զանոնք ի գործ դնելու  
աւ զօրութիւն տուր. որպէս զի սիրտս  
պարարտ երկրի նմանելով՝ Աստուածոյ  
բանին սերմն իր մէջն ընդունի, եւ չէ  
թէ միայն ծլի ու գեղեցիկ ծաղիկներ  
տայ, այլ նաև վալթսնաւոր ու հարիւ-  
րաւոր պտուղներ բերէ. որով հոգիս  
անմահ տեսութեանդ արժանի ըլլայ.  
ամէն։

Աւետարանին:

Սեղի ունեցած սէրգ, աստուածային  
Փրկիչ իմ, այնչափ սաստիկ է, որ  
նոյն իսկ երկինքէն իջնալ ու մեղի վար-  
դապետ եւ ուսուցիչ ըլլալ ուղեցիր:  
Սեղի աւանդած վարդապետութիւնդ  
երկինքէն բերած շնորհքներուդ ամե-  
նէն մեծն է: Այնչափ մարդիկ աս սուրբ  
վարդապետութեամբ՝ Ճշմարտութեան,  
առաքինութեան ու յաւիտենական ե-  
րանութեան հասան: Որչափ երջանիկ  
պէտք եմ ուրեմն ինք զինքս համարիլ,  
որ ես ալ անոնցմէ եմ, զորոնք քու  
Ճշմարտութիւններդ ճանչնալու, քու  
չքնաղ առաքինութիւններդ ի գործ  
գնելու եւ քու յաւիտենական երա-  
նութեանդ ճաշակն առնելու կոչած ես:  
Շնորհէ ինձի, բարերար Փրկիչ իմ, որ  
քարոզած անսուտ Ճշմարտութիւններդ  
յօժարութեամբ լսեմ, Աւետարանին  
իզմէ պահանջած առաքինութիւնները  
գործադրեմ, եւ իմ վարուքս՝ խոստա-

ցուած երանութեան միշտ աւելի արժանի ըլլամ. ամէն:

Հաւատամքին:

Կը հաւատամ յԱսուած՝ ի Հօյր,  
որ ամէն բան ստեղծած է, զամէնքն իր  
անշափի իմաստութեամբն ու բարերա-  
րութեամբը կը պահէ եւ ամէն արա-  
րածոց հոգ կը տանի։ Կը հաւատամ ի  
Յիսուս Քրիստոս, յաւիտենական Հօր  
միածին Որդւոյն, որ մարդ եղաւ մեր  
սիրոյն համար, եւ հաշտարար խաչի  
մահուամբ մեռաւ զմեղ յաւիտենական  
դատապարտութենէ ազատելու համար.  
որ ի մեռելոց յարեաւ ու երկինք համ-  
բարձաւ՝ ուր Հօր հետ զամէնքը կը  
կառավարէ, եւ օր մը դարձեալ պիտի  
գայ զամէնքն իրենց գործոցը համեմատ  
դատելու։ Կը հաւատամ ի Հոգին սուրբ,  
որ Հօր եւ Որդւոյ հետ նոյն էութիւնն  
ու գոյութիւնն ունի. որ իւր ամենազօր  
շնորհօքն զմեղ կը լուսաւորէ, բարիք

ընելու կը դրգէ ու տկարութիւննիս  
կը զօրացընէ: Աը հաւատամ ամէն  
բանի՝ զոր Աստուած մեղի յայտնած է,  
ու Փրկչէն դրուած եւ ի Հոգւոյն սըր-  
բոյ առաջնորդուած ուղղափառ սուրբ  
Եկեղեցին առջեւնիս կը դնէ: Գիտեմ,  
Տէր իմ, որ եթէ աս հաւատոյ համե-  
մատ ապրիմ, կը լլամ սրբոց ընկերու-  
թեան անդամ, եւ եթէ Ճշմարիտ սրտիւ-  
զղջամ, ամէն մեղացո ներումն կը շնոր-  
հես եւ օր մ'ալ յաւիտենական կենաց  
ժառանգորդ կ'ընես. ամէն:

Հաւագոյն կ'ըլլայ եթէ ընթերցուածին ու  
Աւետարանին միտ դնէ հասկըցողը: Խակ հաւա-  
տամիքը կրնայ քահանային հետ մէկտեղ ըսուիլ-  
աղացելով Աստուծոյ՝ որ հաւատոյ խորհուրդ-  
ներն աղեկ ըմբռնել չկըցող մէր ընութեան  
տկարութեամնը ներէ:

Հաւատամք ի մի Աստուած Հայրն  
ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի,  
երեւելեաց եւ աներեւութից: Եւ ի մի  
տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստու-  
ծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ, միածին,  
նախ քան զամենայն յաւիտեանս: Աս-

տուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աս-  
տուած Ճշմարիտ, յԱստուծոյ Ճշմարտէ,  
ծնունդ եւ ոչ արարած։ Նոյն ինքն հա-  
մագոյակից Հօր, որով ամենայն ինչ  
եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝  
երեւելիք եւ աներեւ ոյթք։ Որ յաղագո-  
մեր մարդկան եւ վասն մերոյ փրկու-  
թեան իջեալ ի յերկնից, մարմնացաւ,  
մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի  
Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբ-  
ով։ Որով էառ մարմին, հոգի, միտո  
եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝ Ճըշ-  
մարտապէս եւ ոչ կարծեօք։ Զարչա-  
րեալ, Խաչեալ, Թաղեալ, յերրորդ  
աւուր յարուցեալ, Ելեալ ի յերկինս  
նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։  
Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր  
ի գատել զկենդանիս եւ զմեռեալս,  
որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախ-  
ճան։ Հաւատամք եւ ի սուրբ Հոգին  
յանեղն եւ ի կատարեալն, որ ի Հօրէ  
եւ յՈրդւոյ բղիսի։ Որ Խօսեցաւ յօրէնս

եւ ի մարդարէս եւ յաւետարանս. որ  
էջն ի Յորդանան, քարոզեաց զառա-  
քեալն, եւ բնակեցաւ ի սուրբսն:  
Հաւատամբ եւ ի մի միայն յընդհան-  
րական եւ յառաքելական սուրբ Եկե-  
ղեցի: Ի մի մլրտութիւն, յապաշխարու-  
թիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն  
մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի դա-  
տաստանսն յաւիտենից հոգւոց եւ մար-  
մնոց: Յարքայութիւն երկնից: Եւ ի  
կեանսն յաւիտենականս. ամէն:

Խաղաղութեամբ քով Քրիստոս:

Մարդասէր Փրկիչ, տուր ինծի աշա-  
կերտացդ խոստացած խաղաղութեան  
պարգեւը, որ աշխարհքիս խաղաղու-  
թեան պէս չէ: Տուր որ նախ մարմնոյս  
եւ հոգւոյս մէջ խաղաղութիւն հաս-  
տատեմ, այս ինքն ապստամբ մարմինս՝  
հոգւոյս հնաղանդեցընեմ. որ ա՛լ սուրբ  
պատուիրաններուդ գէմ կարող չըլսայ  
գործել: Երկրորդ՝ տուր որ մենք քու

արարածներդ, զքեղ ամէն բանի մէջ  
մեր ստեղծիչն ու արարիչը ճանչնանք:  
Հեռացուր մեղմէ ամէն խաղաղութեան  
թշնամի ախտերը. հեռացուր մեղմէ  
կոիւ, հակառակութիւն, նախանձ ու  
հերձուած. որպէս զի սէրն ու խաղաղու-  
թիւնը մեր մէջը ծաղկելով՝ քու անունդ  
հիմայ եւ ընդ միշտ փառաւորենք. ամէն:

Երբ սկիհը կը բացոի:

Բարերար Տէր, որ զիս գժոխական  
թշնամոյն գերութենէն փրկելու հա-  
մար փշէ պսակով պսակուիլ ու իմ սի-  
րոյս համար այնչափ ցաւեր կրել ու զե-  
ցիր, խոցէ կ'աղաչեմ՝ բորբոքեալ սի-  
րոյդ նետերովն իմ քարացած սիրտս,  
որպէս զի նորէն կենդանանալով, աւելի  
եռանդեամբ փրկութեան պսակին ե-  
տեւէն ըլլամ. ամէն:

Երբ քահանան ձեռուըները կը լուայ:

Որդի յաւիտենական Հօր, եւ մար-  
դասէր Տէր իմ Յիսուս Քրիստոս, Դուն

թէպէտ ռիղատոսէն անմեղ վկայեցար,  
այսու ամենայնիւ կատաղի հրէից ամէն  
նախատինքներուն ու ատելութեանցն  
համբերեցիր, շնորհք տուր ինծի որ աս  
աշխարհքիս խաբէական որոգայթներէն  
ազատելով՝ մինչեւ ցմահ անմեղ կեանք  
մ'անցընեմ եւ ամէն թշնամեացս ու զիս  
ատոզներուն նախատանացը համբերե-  
լով՝ երկնից արքայութեան արժանի ըւ-  
լամ. ամէն:

Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն:

Սիրելի Փրկիչ, ահա հոգւոյս աչուր-  
ներովը կը տեսնեմ որ հրեշտակաց բաղ-  
մութիւնը, հրեշտակապետք, սերովբէք  
ու քերովբէք երկինքէն կ'իջնան, աս  
փրկագործութեան պատարագիննուիր-  
մանը ներկայ գտնուելու: Կը տեսնեմ,  
որ անձամբ Աստուծոյ Հօր կը մատու-  
ցուիս, որպէս զի կրած գառն չարչա-  
րանքներուդ յիշատակը, արեանդ հե-  
ղումն ու գառն մահը սրտերնուս մէջ

գարձեալ նորոգես: «Նոյն իսկ հրեշտակք,  
երբ մեզի ցուցըցած աս սէրդ կը մտա-  
ծեն, կը զմայլին ու երեքսրբեան օրհ-  
նութեամբ զքեղ անդադար կը փառա-  
բանեն ըսելով. Առւրբ, սուրբ, սուրբ,  
Տէր զօրութեանց: Վերացուր իմ սիրտս  
ալ, Աստուած իմ, վառէ քու սիրոյդ  
հուրն անոր մէջ. արձակէ լեզուս, որ-  
պէս զի ես ալ հրեղէն սերովքէից ու  
քերովքէից փառատրութեանցը հետ  
միանալով՝ քու աթոռոյդ առջեւ զքեղ  
անդադար փառաւորեմ: Բայց գիտեմ,  
Տէր իմ, թէ ոչ մեր սիրտը կրնայ զքեղ  
ըստ պատշաճի սիրել, եւ ոչ ալ մեր  
լեզուն ինչպէս որ պէտք է՝ փառաւորել.  
անոր համար կը խնդրեմ քեղմէ որ պա-  
կաս եղածը դուն լեցընես, ու սիրտս  
անանկ վառես ինչպէս հրեշտակացն, երբ  
զքեղ՝ մեր ամենուն արարիչն անդադար  
կ'օրհնեն ու կը փառաւորեն. ամէն:

Սրբադործութեան ատենը:

Յիսուս Որդի յաւիտենական Հօր,  
Կ'երկրպագեմ քեզի ու բոլորով սրտիւ  
կը հաւատամ որ հոս հացի կերպարա-  
նաց տակ կը գտնուիս իբրեւ Ճշմա-  
րիտ Աստուած ու Ճշմարիտ մարդ, եւ  
քեզմէ շնորհք ու ողորմութիւն կը  
խնդրեմ: Շնորհակալ կ'ըլլամ քու  
յաւիտենական սիրոյդ, որ մեզի համար  
Խաչին վրայ մեռնելէդ զատ՝ աս սեղանին  
վրայ դարձեալ քու աստուածային ներ-  
կայութեամբդ զմեզ կ'ուրախացընես եւ  
մեր փրկագործութիւնը կը նորոգես:  
Յիսուս, քեզի համար կ'ուզեմ՝ ապրիլ  
ու մեռնիլ. սիրելի Փրկիչ, քուկդ ըրէ  
զիս հիմայ եւ յաւիտեան:

Կ'երկրպագեմ քեզի, ով պատուա-  
կան արիւն Յիսուսի Քրիստոսի, որ  
սուրբ Խաչին վրայ մարդկան փրկու-  
թեան համար թափեցար: Ո՛չ, մաքրէ,  
օրբէ հոգիս ամէն արատէ. շնորհք  
տուր ինծի որ բոլոր սրտանց իմ ամէն

մեղացս վրայ զղջամ։ Ալ յուսամ, բարերար Փրկիչ, որ ամենակարող շնորհք-ներովդ իմ մեղքերս բոլորովին կը ջնջես։ Յիսուս իմ, ողորմէ ինձի. սիրելի Յիսուս, թող իմ անթիւ մեղքերս. Յիսուս փրկիչ, գլժա վրաս. ամէն։

Եւ դքոյս ի քոյոց։

ՈՂօրմելի աղքատ մը՝ մեծ թագաւորի մը ի՞նչ բան կրնայ ընծայել։ Խոկ ես աստուածային մեծվայելչութեանդ առջեւ եւ ոչ աղքատ ըսուելու արժանի եմ։ Ի վերայ այսր ամենայնի, ով թագաւոր փառաց, դուն զմեղ այնպէս պատուեցիր, որ նաեւ արքայութեանդ ժառանդ ըրիր։ Հիմակ ալ մեր ձեռքը արժանի ընծայ մը տուիր, քու միածին Արդիդ, իր պատուական մարմինն ու իր անգին արիւնը, որ զանոնք քեզի ողջակէղ ընենք։ Ո՛չ, որչափ պարտական ենք դքեղ օրհնելու, դքեղ գովելու եւ քեզի շնորհակալ ըլլալու,

երբ մտքերնիս բերենք, թէ մեր մի-  
ջնորդն ու բարեխօսը՝ քու Որդւոյդ  
ամենասուրբ մարմինն ու պատուական  
արիւնն է։ Կարելի բա՞ն է՝ որ այսպիսի  
մեծագին ընծայ մը, այսպիսի պատարագ  
մը քեզի ընդունելի չըլլայ։ Այսպիսի  
պարգեւի մը հրեշտակք ալ արժանի  
չեղան. եւ ոչ ալ հրեշտակային միտք  
մը Աստուծոյ այնչափ բարերարութիւնն  
ու մարդասիրութիւնը կընայ օրհնել  
ու փառաւորել։ Անոր համար միայն կը  
խնդրեմ քեզմէ, Աստուած իմ, որ  
վրայէս շնորհքներդ չպակսեցընես, որ-  
պէս զի ես ալ ասանկ գերազանց խոր-  
հըրդէ մը մաս ընդունելով՝ գոնէ  
արքայութեանդ մէջ կարենամ զքեզ  
արժանապէս փառաւորել. ամէն։

### Մինչեւ Հայր մեր։

Հայր երկնաւոր, խոնարհութեամբ  
առջեւդինկած, կ'աղաչեմ, որ առաջի-  
կոյ սուրբ պատարագին զօրութեամբը

ողորմիս բոլոր աշխարհքի: Կայէ խաչին  
վրայ, Տէր իմ, եւ տես թէ ինչեր կրեց  
միածին Որդիդ մեր փրկութեանը հա-  
մար: Յիշէ անոր գառնակսկիծ չարչա-  
րանքները, թափած անգին արիւնը,  
պատուական մահն, ու մեր տկարու-  
թեանն օգնէ եւ մեզի ողորմէ:

Աս անարիւն զոհին շնորհիւր տուր  
աշխարհքի խաղաղութիւն, եկեղեցւոյ  
հաստատութիւն, մեղաւորաց շնորհք,  
բանտարկելոց աղատութիւն, հիւանդաց  
առողջութիւն, ու հոգւոյ եւ մարմնոյ ա-  
մեն փորձանքներէն աղատութիւն. ամէն:

Յիշէ գթութեամբդ, մարդասէր  
Աստուած, արքայութեանդ համար ո-  
րոշուած քաւարանի հոգիներն ալ, եւ  
աղատէ զիրենք առժամանակեայ տան-  
ջանքներէն: Յիշէ աս սուրբ պատարա-  
գին ներկայ եղողները, եւ իրենց հո-  
գւոյն օգտակար եղած շնորհքները պար-  
գեւէ: Յիշէ ծնողքս, աղգականներս,  
եղբարքս, քոյրերս ու բարեկամներս. եւ

իրենց սրտին բարի փափաքները կատարէ: Ի մասնաւորի ինձի բարիք ընողներուն հաղարապատիկ հատուցում ըրէ, թշնամեացս ալ ներէ: Աս աստուածային կենարարին հաշտարար արեան պատարագաւը՝ ջնջէ ամենուն մեղքերն, եւ մասնակցուր զիրենք քու արքայութեանդ. որպէս զի սուրբ ու սիրելի ծառայիցդ հետ ընդ միշտ զքեզ օրհնեն ու փառաւորեն:

Վերջապէս խոնարհութեամբ կը խնդրեմ քեզմէ, ով Տէր իմ, որ ողորմելի մեղաւորիս ալ ողորմիս եւ մեղացս թողութիւն տաս:

Հեղ քու սուրբ շնորհքներդ ամենուն վրայ. ուղղէ զմեղ սուրբ կամացդ համեմատ, որպէս զի միշտ ան ընենք՝ որ քու աստուածային մեծվայելչութեանդ առջին բարի, սուրբ ու կատարեալ է. ամէն:

Ե սրբութիւն սրբոց :

Ո՞վ կենդանի մարմին եւ արիւն  
Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, սըր-  
տանց կը հաւատամ ու կը խոստովանիմ  
որ առջեւս կը կատարուի այն մեծ խոր-  
հուրդը, որ ատեն մը Գողգոթա լեռան  
վրայ կատարուեցաւ : Հաւատոյ աչուր-  
ներով զքեղ խաչին վրայ կը տեսնեմ,  
իբրեւ Աստուծոյ արդարութեանն ու  
ողորմութեանը միջնորդ : Գթած Փրկիչ  
իմ, զմեղ սիրելուդ համար՝ զքեղ օրհ-  
նելու որչափ պարտական ենք : Անոր  
համար օրհնեն ու փառաւ որեն ամէն  
արարածք Աստուծոյ անսահման մեծու-  
թիւնը : Օրհնեալ ըլլայ Հայր, որ զմեղ  
փրկելու համար իւր Միածինն աշխարհ  
խաւրեց : Օրհնեալ ըլլայ Որդին, որ մե-  
զի համար մարմին առաւ եւ իր սուրբ  
ու պատուական արեամբն զմեղ փրկեց :  
Օրհնեալ ըլլայ Հոգին սուրբ, որ զմեղ  
իր անբաւ շնորհքներովը կը լուսաւորէ :  
Ո՞վ ամենասուրբ Երրորդութիւն, ըն-

դունէ անարժանիս օրհնութիւնն ու զիս  
երկնից արքայութեան մէջ հրեշտա-  
կացդ հետ զքեղ անդադար օրհնելու  
եւ փառաւորելու արժանի ըրէ. ամէն:

Մինչեւ ճաշակում:

Ովսիրելի Յիսուս, դուն մեզի ըսիր-  
ենէ ու ժաբառէ իցէ, եկեցէ առ իս:  
Ահա հոգիս արարածական բաներու  
հետ զբաղած ըլլալով՝ միշտ ծարաւի  
ու անհանդիստ է: Թող տուեր է քու-  
կողդ, ուսկից իրեն համար յաւիտենա-  
կան կենաց աղբիւր մը վազցուցիր, եւ  
գնացեր աշխարհքիս անցաւոր ուրա-  
խութիւններովն ու պղտոր ջրերովը իր  
ծարաւն անցընել կ'ուղէ: Արդ մար-  
դասէր Փրկիչ, գթա հոգւոյս խեղճու-  
թեանը, լուսաւորէ միտքս ու փոխէ  
սիրտս, որ այսուհետեւ միայն զքեղ  
փնտուելու ետեւէ ըլլայ: Հեղ վոաս  
քու ամենակարող շնորհքներդ, որ  
քաղցր հրաւերդ ընդունելով՝ ծարաւ-

ած եղջերուի պէս ողորմութեանդ աղբիւրին դիմեմ։ Մեզի ցուցըցած սէրդ որչափ մեծ ու որչափ սաստիկ է, որ աս սեղանը պատրաստելու համար դառն մահուամբ մեռնիլը յանձն առիր։ Ան, Փրկիչ իմ, աս ի՞նչ մեծ սէր է, ի՞նչ մեծ շնորհք է։ Ես արժանի էի որ գործած անօրէնութիւններուս համար բիւր անդամ մեռնէի. բայց իմ մեղքերս դուն վրադ առիր ու ինծի համար չարչարուեցար։ Արտանց կը ցաւիմ, կը զղջամ անոնց վրայ. եւ հաստատութեամբ միտքս գրի հազար անդամ մեռնիլ, քան թէ քեզի դէմ մեղանչելով՝ մէյ մ'ալ քու բարերար սիրտդ վշտացընել։ Ողորմած Փրկիչ իմ, վառէ աստուածային սիրոյդ կայծովը սիրտս, եւ ամենասուրբ սրտիդ հետ միացուր։

Յիսուս իմ, որչափ կը ցանկայի հիմայ զքեղ իմ սիրտս ընդունելու. որչափ կը բաղձայի աս քու սուրբ սեղանոյդ մասնակից ըլլալու։ Բայց որով-

Հետեւ անթիւ ու ծանր մեղացս հա-  
մար քեզի մերձենալու արժանի չեմ,  
անոր համար կը խնդրեմ քեզմէ, որ  
ինձի թոյլ տաս, զքեզ գոնէ հոգեւ-  
որապէս սիրտս ընդունելու: Մի մերժեր  
զիս աղքատս ու ողորմելիս, որ մաքսաւ-  
որին հետ հեռուանց կը կենամ ու  
քեզի կը փափաքիմ: Զօրացուր ու  
հաստատէ սիրտս, որպէս զի աս հոգեւ-  
որական հաղորդութեամբ չէ թէ միայն  
այսօր, հապա բովանդակ կեանքս քու  
շնորհացդ մէջ անցընեմ. առաքինու-  
թեանց մէջ ինք զինքս կըթեմ եւ հաս-  
տատութեամբ դէմ դնեմ ամէն փոր-  
ձութեանց: Աս շնորհքը պարգեւէ ինձի,  
Յիսուս իմ, մեզի ունեցած անչափ սի-  
րոցդ ու ողորմութեանդ համար. ամէն:

Ճաշակմանէն ետքը:

Հետեւեալ աղօթքն ընողը ներողութիւն կը  
վաստըիի:

Հոգի Քրիստոսի, ո՛չ սրբէ զիս.

Մարմին Քրիստոսի կերակրէ զիս.

Պատուական արեամբդ արբեցուր զիս:  
Քու կողիդ ջուրը զիս մաքրէ.

Դառն չարչարանքդ զիս զօրացընէ,  
Ով բարի Յիսուս, ինծի լսէ:

Քու սուրբ վիրացդ տակ ծածկէ զիս.  
Քու քաղցը սրտիդ մէջ պահէ զիս.

Մի թողուր որ բաժնուիմ քեզմէ:  
Չար թշնամիէն զիս պաշտպանէ.

Մահուանս ատեն զիս կանչէ,  
Որ զքեղ սրբոց եւ հրեշտակաց հետ՝  
Փառացդ մէջ օրհնեմ, գովեմ ի յաւի-  
տեան:

Վերջին Եւետարանին:

Բան յաւիտենական Հօր, լսս աշ-  
խարհի, որ երկինքէն իջար, որպէս զի  
մեղի արքայութեան ճամբան ցուցընես.  
Թող մի տար որ այն տառապեալ ազգին

պէս ըլլամ, որ զքեղ Փրկիչ ճանչնալ  
չուղեց: Մի թողուր որ անոնց կուրու-  
թեանը հետեւիմ, որոնք աւելի ուղե-  
ցին մասնակից ըլլալ սատանային գե-  
րութեան՝ քան Աստուծոյ փառաւոր  
որդեղրութեան:

Մարդացեալ Փրկիչ, Խորին յար-  
գութեամբ քեզի երկրպագութիւն  
կ'ընեմ: Բոլոր վստահութիւնս վըագ  
կը դնեմ. եւ կը յուսամ թէ որովհե-  
տեւ իմ Աստուածս ես ու մարդկան  
փրկութեան համար մարդ եղար, նաեւ  
իմ փրկութեանս հարկաւոր եղած  
շնորհներն ինծի կը պարգեւես, որպէս  
զի բոլորովին քու հաճոյիցդ համեմատ  
կեանք մ'անցընելով՝ կարող ըլլամ  
զքեղ մշտնջենաւոր փառացդ մէջ  
օրհնել, ամեն:

Պատարագէն ետքը:

Ավսիրելի Փրկիչ, շնորհակալ կ'ըւ-  
լամ ինծի ըրած բարերարութեանդ,

որով զիս աս սուրբ զոհին ներկայ  
դանուելու արժանի ըրիր։ Արտանց նե-  
րումն կը խնդրեմ աս սուրբ խորհրդոյն  
ժամանակ ըրած զանցառութեանցս հա-  
մար։ Ճնորհէ ինծի, Տէր, հոգւոյս փըր-  
կութեանն օդտակար եղած բաները։  
Ամէն բան քու սուրբ հաճոյիցդ հա-  
մաձայն կարդագրէ. և եղիր այսօր ու  
միշտ իմ Տէրս ու փրկիչս։ Քու վար-  
դապետութիւնդ, ով Յիսուս, ըլլայ  
իմ առաջնորդս, քու գործքերդ՝ իմ  
օրինակս, քու չարչարանքներդ՝ ինծի  
հայելի, մահդ՝ ինծի կեանք։ Օրհնէ  
զանոնք՝ որ զիս կ'անիծանեն. ողորմէ  
անոնց՝ որ զիս կը չարչարեն։ Արթնու-  
թեանս ատենը զիս լուսաւորէ. քնա-  
ցած ժամանակս պաշտպանէ. վշտացած  
ատենս միսիթարէ. ամէն։

Ի Թ Ի Կ Ո Ւ Ե Ն

## Ա Ղ Օ Թ Ֆ Ն Ե Ր

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ օրդ Աստուծով սկսար, անանկ ալ Աստուծով պէտք ես լմնցընել: Անոր համար երբեք հանգչելու մ'երթար, մինչեւ որ խորհուրդներդ առ Աստուծ չվերցընես: Սրտանց շնորհակալ եղիր Աստուծոյ, որ քեզի օրն աղէկ անցընելու եւ իր շատ բարերարութիւններովն զքեզ լեցընելու շնորհք ըրաւ:

Քննէ ինք զինքդ, եւ տես թէ Աստուծոյ շնորհքներն ինչպէս գործածեցիր. թէ ինտոր վարուեցար ընկերիդ ու անձինդ նկատմամբ:

Իրիկուան աղօթքդ այս մասերն ունենայ: «Սախ. պէտք ես Աստուծոյ գոհութիւն մատուցանել, օրւան մէջ քեզի ըրած բարերարութեանց համար: Երկրորդ. քննելու ես խղճմտանքդ: Միտքդ բեր, թէ ինչպէս անցուցիր ատենդ: Ի՞նչ բանի մէջ պակսեցար

մոքով, խօսքով ու գործքով։ Թէ որ աղեկ  
բան մըրած ես, չնորհակալ եղիր Աստուծոյ։  
Իսկ պակառութեանցդ ու մեղացդ վրայ սրտանց  
ցաւէ. եւ հաստատուն առաջադրութիւն  
դիր, առաջին յարմար առթին խոստովանե-  
լու, Երրորդ. հաստատուն կամք ունեցիր,  
որ Աստուծոյ օգնութեամբ պահես ինք զինքո  
մեղքերէն, եւ զգոյշ կենաս այն տեղերէն,  
անձինքներէ ու յարաբերութիւններէ, որոնք  
քեզի դայթակղութեան առիթ ու մեղաց  
պատճառ եղած են։

Օրական խղճի մտաց քննութիւնը շատ  
հարկաւոր է. վասն զի անհնարին է որ մարդ  
սխալներն ուղղէ, թէ որ զանոնք չի ճանչնար։  
Եւ ինչպէս կրնայ ճանչնալ, եթէ որ սրտին  
ծածուկները չի քններ։ Ասկէ զատ՝ օրական  
խղճի քննութիւնը՝ խոստովանութեան պատ-  
րաստուելու ալ մեծ դիւրութիւն կու տայ։  
Բաց ասկէ, չենք դիտեր թէ արդեօք Տէրն  
այս դիշեր իր դատաստանական աթոռին  
առջին չի կանչեր մեր հոգին։ — Ուստի լաւ  
քննէ խիղճդ ամէն իրիկուն։ Ցաւէ սրտանց,  
եւ առաջադրութիւն դիր։ Աղաչէ Աստուծոյ,  
որ ասկէ ետքն ալ զքեզ իր հովանաւորու-  
թեանը տակ առնէ, եւ անպատրաստ զքեզ  
այս կեանքէն իրեն չկանչէ։ Խնդրէ պահա-

պան հրեշտակէդ ու պաշտպան սուրբէդ, որ  
Աստուծոյ առջին քեզի համար բարեխօսեն  
ու վրադ հսկեն: Վերջապէս նուիրէ Աստու-  
ծոյ մարմինդ հոգիդ ու անանկ հանգչէ:

Միտքդ ըեր Ս. Յովհաննու Ոսկեբերանի  
խրատը, որ ասանկ կը լսէ: «Երբ որ իրիկունը  
հանգչիւ կ'ուզես, ասանկ լսէ հոգւոյդ. Ահա  
այս օրն անցաւ. ինչ բարիք կամ չարիք ըրած  
ենք: Եթէ բարիք մ'ըրիր, տուր փառք Աս-  
տուծոյ. Եթէ մեղանչեցիր, լաց մեղքերուդ  
վրայ եւ ճշմարտապէս յառաջադրէ վարդդ  
ուղղելու: Անկէ ետքը հոգիդ Աստուծոյ  
յանձնելով՝ հանգչէն:

Երբ անկողինդ ես, միտքդ ըեր մարմնոյդ  
վերջին խշտիկը, դադաղո. ու այն ատեն աւ-  
ելի դիւրաւ կը զսպես մարմնոյդ ցանկու-  
թիւններն ու սատանային գրգռութիւնները:

# Ա Պ Օ Բ Ք

շնորհակալու-  
թեան:

ԱՄԵՆԱԶՈՐ Աստուած,  
ՔԵՂԻ ԵՐԿՐԱԳՈՒԹԻՒՆ  
ԸՆԵԼՈՎ, բոլոր սրտէս  
ՇՆՈՐՀԱԿԱԼ Կ'ՐԱՍԱՄ ամէն  
ՀՈՎԵՍ Եւ մարմնոյ պար-  
գեւներուդ, բարեացդ ու  
ՇՆՈՐՀԱՑԴ՝ որոնց զիս այս-  
օր մասնակից ընելու հաճեցար: ՇՆՈՐ-  
ՀԱԿԱԼ Կ'ՐԱՍԱՄ բարի աղդեցութեանցդ,  
պաշտպանութեանդ, այնչափ լուսաւո-  
րութեանցդ եւ ուրիշ ամէն պարգեւացդ  
համար, զորոնք ես տկար մոքովս ըստ  
բաւականի ըմբռնելու կարող չեմ: Ով  
Հայր բարեգութ, աս ամէն պարգեւաց  
համար՝ քու սիրելի Որդիդ զՅիսուս եւ  
զՄարիամ, հզօր պաշտպանս ինձի բա-  
րեխօս բռնելով՝ ՇՆՈՐՀԱԿԱԼ Կ'ՐԱՍԱՄ:

Բայց կրնամ արդեօք ըսել թէ ամէն  
բարութեանդ որդիական սիրով հա-  
տուցում ըրի: Արդեօք քու ամէն  
շնորհքներդ եւ բարութիւններդ՝ սուրբ  
կամացդ համաձայն գործածեցի:

Անոր համար, ով Ամենագէտ Աս-  
տուած իմ որ ամէն քայլերս կը համրես,  
որուն առջեւ ամենածածուկ խորհուրդ-  
ներն ալ յայտնի են, լուսաւորէ միտքս որ  
կարենամ քեզի դէմ ըրած ամէն յան-  
ցանքներս ճանչնալ: Վառէ սիրտս ու  
կամքս, որ ամէն մեղացս վրայ կատարե-  
լապէս ցաւիմ, եւ վարքս ուղղելով՝ քու  
սուրբ հաճոյիցդ համեմատ կեանք ան-  
ցընեմ:

Քննէ հոս թէ ինչպէս անցուցիր օրդ. թէ  
ըրի՛ր եւ ինչպէս աղօթքներդ. թէ կատարե-  
ցի՛ր վիճակիդ պահանջած պարտքերը. թէ գոր-  
ծոցդ մէջ, կերակրոյ ժամանակ, ընկերացդ եւ ու-  
րիշ անձանց հետ կենցաղավարելու առեն՝ ինչպէս  
վարուեցար: —

## Ա Վ Ո Բ Ա Ք

Զ Պ Հ Մ Ա Ն Ե Ւ Ա Պ Ա Ճ Ա Պ Ր Ո Ւ Թ Կ Ա Ն :

Ով բարերար Աստուած, այսօր ալ  
զքեղ վշտացուցի, այսօր ալ քեզի դէմ  
մեղանչեցի: Աս է ահա այնչափ բարե-  
րարութեանցդ փոխարէնը: Մեղայ, Տէր  
իմ. կը խոստովանիմ յանցանքներս. որ-  
դիդ կոչուելու արժանի չեմ: Բայց որով-  
հետեւ դուն անսահման բարի Աստուած  
ես, որդիական վստահութեամբ դար-  
ձեալ քու գիրկդ կը դիմեմ. ու թէ  
այսօր եւ թէ իմ բոլոր կենացս մէջ  
զքեղ վշտացընելուս համար սրտանց  
թողութիւն կը խնդրեմ: Կը ցաւիմ՝ չէ  
թէ վասն զի յաւիտենական պատժոց  
արժանի եմ, հապա վասն զի դուն ա-  
մենաբարի ես: Ուստի եւ հաստատու-  
թեամբ կ'առաջադրեմ, ով Աստուած  
իմ, զքեղ ասկէ ետքն ամենեւին  
չվշտացընելու, ամէն մեղաց առիթնե-  
րէն փախչելու եւ ամէն պարտքերս ճըշ-

դիւ կատարելու։ Աւելի կ'ուզեմ հա-  
զար անգամ մեռնիլ՝ քան թէ զքեղ  
իմ ամենաբարի հայրս բարկացընել։  
Թողութիւն տուր ինծի, Աստուած ողոր-  
մութեան. քու հզօր օգնականութիւնդ  
ինծի մի զլանար, որպէս զի կարող ըլլամ  
քու ամենասուրբ կամացդ համաձայն՝  
սրբութեամբ կեանք անցընել եւ մին-  
չեւ ցմահ աս առաջադրութեանս մէջ  
հաստատուն մնալ. ամէն։

---

### Ա Պ ① Բ ռ Վ

Ինք դինք Ս. Աստուածածնի պաշտպա-  
նութեան յանձնելու։

Ավ կոյս Մարիամ, Մայր Աստուծոյ,  
թէպէտ քեղի ծառայելու արժանի չեմ,  
բայց քու գթութենէդ եւ քեղի ծա-  
ռայելու սաստիկ յօժարութենէս ստի-  
պուելով՝ պահապան հրեշտակիս եւ  
ամէն սրբոց առջին զքեղ ինծի թա-  
գուհի, բարեխօս, մայր եւ պաշտպան

կ'ընտրեմ. Եւ հաստատութեամբ կ'ա-  
ռաջադրեմ զքեզ միշտ սիրելու եւ ա-  
մենայն հաւատարմութեամբ քեզի ծա-  
ռայելու. Նաեւ ջանալու որ ուրիշներն ալ  
քեզի ծառայեն: Կ'աղաչեմ, ով Մայր  
իմ Մարիամ, քու Որդւոյդ թափած ա-  
րեանն արդեանցը համար ընդունէ զիս  
քեզի հաւատարմութեամբ ծառայողնե-  
րուն կարգը: Կենացս ամէն ժամանակը  
քովս կեցիր, որ ամէն քայլերս, միայն  
Աստուծոյ փառացը եւ քու պատուոյդ  
համար ըլլան: Պաշտպանէ զիս, սիրելի  
Մայր, որպէս զի չըլլայ թէ իմ սիրելի  
Յիսուսս վշտացընեմ, հապա զինքը  
սրտանց սիրեմ. Եւ վերջապէս կարենամ  
յաւիտեանս յաւիտենից երկինքն զձեզ  
փառաւորել. ամէն:



## Ա Պ Ո Բ Ա Ք

առ Ա. Յովսէփ Աստուածահայր:

Սուրբ Հայր Յովսէփ Հղօր բարեխօս,  
շնորհակալ եմ քեզի, որ պաշտպանու-  
թիւնդ այսօր ալ վրայէս պակաս չընե-  
լով՝ ազատեցիր զիս ամէն կերպ չա-  
րիքներէ։ Իսկ եթէ կը տեսնես որ մե-  
ջօք Յիսուսի շնորհքն ու բարեկամու-  
թիւնը կորսնցուցի եւ սիրտս աղտեղա-  
ցուցի, ընդունէ ինձի զեղջ ու ցաւ՝ նման  
այն ցաւերուն զոր կրեցիր զՅիսուս տա-  
ճարին մէջ կորուսած ատենդ։ Միան-  
գամայն օդնէ ինձի որ զինքն ու իւր  
շնորհքը դտնելու Համար քեզի պէս  
փութով աշխատիմ։ Հսկէ վրաս այս  
գիշեր այնու սիրով՝ որով կը հսկէիր  
միշտ մանուկ Յիսուսի վրայ. եւ ազատէ  
զիս աշխարհի, մարմնոյ եւ սատանոյի  
դարաններէն՝ ինչպէս որ զՅիսուս չե-  
րովդէսի որոդայթներէն փրկեցիր։ Թէ  
քնոյս եւ թէ արթնութեանս ատեն

զիս քու ամուր հովանաւորութեանդ  
ներքեւը պահէ, որպէս զի անփորձ  
կեանք մանցընելով՝ մահուանս ատեն,  
իբրեւ քու հաւատարիմ որդիդ, զօ-  
րաւոր օգնութիւնդ վայելեմ եւ վեր-  
ջին շունչս տամ ըսելով՝ Յիսուս, Մա-  
րիամ եւ Յովսէփ:

Ողջոյն քեզ Յովսէփ: (Տես Էջ 11.)

Յիսուս, Մարիամ եւ Ա. Յովսէփ, ձեզ  
աւանդեմ զհոգի եւ զմարմին իմ\*:

---

## ԱՎՈՐԵՔ

յանկարծական մահուանէ աղատելու  
համար:

ԱՎ բարեգութ Տէր իմ Յիսուս  
Քրիստոս, ոգեսպառ տագնապիդ ու  
արիւնահոս քրտանցդ եւ մահուանդ  
համար պահէ զմեզ յանկարծական  
մահուանէ:

\* Աս աղօթքն ընողին Պիռոս է. (1807. Ապրիլ 28)  
100 օրւան ներողութիւն շնորհած է:

Ով ամենողորմ Յիսուս, Նախատական ու դառնակսկիծ ձաղանքիդ ու պսակմանդ եւ խաչելութեան եւ ամենասուրբ չարչարանացդ ու մեծ գթութեանդ համար, մի թողուր զիս կ'աղաւեմ որ յանկարծամահ ըլլամ, եւ առանց սուրբ խորհրդոցդ այս աշխարհքէս ելլեմ:

Ով ամենասփիրելի Յիսուս, Տէր իմ եւ Աստուած, ամէն տնօրինական կրիցդ եւ ամենասուրբ վիրացդ եւ ետքի խօսքիդ համար, ով քաղցր Յիսուս իմ, զոր խաչին վրայ ըսիր “Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս” . եւ մեծ գումանդ համար, թէ “Հայր, ի ձեռս քուաւանդեմ զհոգի իմ”, թախանձանօք կ'աղաւեմ, մի հաներ զիս յանկարծակի այս աշխարհքէս: Քու ստեղծուածդ եմ, Փրկիչ իմ, բոլորովին քու ձեռացդ գործքը: Տուր ինծի կ'աղաւեմ, ապաշխարութեան ժամանակ, որպէս զի քաղցրութեամբ եւ քու շնորհացդ մէջ այս

աշխարհքէս մեկնելով՝ բոլոր սրաւէ սիրեմ, օրհնեմ ու գովեմ զքեղ յաւիտեան. ամէն:

Տէր իմ Յիսուս Քրիստոս, հինգ վիրացդ համար, որոնցմով վիրաւորեցար մեր սիրոյն համար խաչին վրայ, օգնական եղիր քու ծառայիցդ, զորոնք պատուական արեամբդ փրկեցիր. ամէն:

Հայոց մեր. Ողջոյն քեղ. փառք Հօր:



Աշօթք

## ԱՐ Ս. ԱՍՏՈՒԱՆԱՄԻՆ

ԾԵՐԹՈՒԱՆ ՕՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ\*

ԿԻՐԱԿԻ

Աղօթք մեղաց թողու-  
թեան համար:

**Ք**ԱՆՑՐԱԳՈՒԹ Տիրու հի իմ,  
աչուըներդ մեղաւորիս  
դարձուր, որ ոտուընե-  
րուդ առջեւ ինկած բոլոր  
յոյսը վրադ գրեր է։ Ար-  
ժանի չեմ իրաւ որ ինծի  
նայիս ու ողորմիս. բայց  
գիտնալով որ Աստուածորդիդ մեղաւո-  
րաց փրկութեան համար մեռաւ, մեծա-

\* Պիոս Լ. Քահանայապետը՝ 1808 ին ամէն անգա-  
ման 300 օրուան ներողութիւն կը շնորհէ առ Աղօթքները  
ջերմեռանդութեամբ ըստզներուն։ Իսկ ամիս մը ամէն օր ըստդ-  
ներուն՝ լիակատար ներողութիւն շնորհուած է՝ եթէ ամ-  
այն որ եւ իցէ օրը զզջացեալ սրաիւ խոստովանակը ըլլալով՝  
պատշաճ ջերմեռանդութեամբ։ Ս. Հաղորդութեան մերձե-  
նան եւ Ս. Եկեղեցւոյ գիտման աղօթ են։



J. Benedict sc.



պէս կը բաղձաս անոնց օգնութեան հաս-  
նելու: Ով Մայր ողորմութեան, խեղ-  
ճութեանս նայէ ու գթա վրաս: Կը լսեմ  
որ ամենքն զքեղ՝ մեղաւորաց աղատու-  
թիւն, յուսահատելոց յոյս ու անօդնա-  
կաններուն օգնութիւն կը կոչեն: Ուրեմն  
իմ աղատութիւնս, յոյսս ու օգնականս  
Գուն ես: Փութա՝ Յիսուսի սիրոյն հա-  
մար՝ ինծի օգնութեան հասնելու: Գթած  
ձեռուըներդ խեղճ մեղաւորի մը երկըն-  
ցուր, որ մեղաց տակ ինկած՝ օգնութիւնդ  
կը խնդրէ: Գիտեմ, ողորմած մայր, որ  
սրտիդ մեծ մխիթարանք է, երբ կարե-  
նաս մեղաւորի մը օգնութեան հասնիլ:  
Օգնութեան հասիր ուրեմն ինծի, վասն  
զի կրնաս: Ես մեղքերովս աստուածային  
շնորհքներն ու հոգիս կորսընցուցի:  
Բայց հիմայ ինք զինքս բոլորովին քեզի  
կը յանձնեմ: Ըսէ միայն թէ ինչ պէտք  
եմ ընել՝ Աստուծոյ շնորհքը նորէն ըն-  
դունելու համար: Պատրաստ եմ ամեն  
բան ընելու, որ կը հրամայես: Որդւոյդ

Խօսք մը միայն ըսէ որ մեղացս թողութիւն շնորհէ, ան ժամանակ ստուգիւներումն կ'ընդունիմ։ Յուցուր թէ ինչպէս պատրաստ ես բարիք ընելու անոնց՝ որոնք վստահութիւննին վրադ կը դնեն. ամէն։

Երեք ողջոյն։

## Ե Բ Կ Ո Ւ Ծ Ա Բ Թ Ո Ւ

Ազօթք յարատեւոթիւն ընդունելու համար։

Ով թագուհի երկնից, ես որ դժունոց խեղճ գերին եղած էի, հիմայ ինք զինքս բոլորովին քեզի կը նուիրեմ, ու կ'առաջադրեմ բոլոր կենացս մէջ զքեզ պատուելու եւ քեզի հաւատարմութեամբ ծառայելու։ Ընդունէ նուերս ու մի մերժեր զիս, ինչպէս որ արժանի եմ։ Սիրելի Մայր, Յիսուսէն ետքը յոյսս ու ապաւինութիւնս դուն ես։ Քեզմէ կը յուսամ իմ փրկութիւնս։ Կ'օրհնեմ զԱստուած որ իր ողորմութեամբն ինձի

Հնորհք տուաւ բոլոր յոյսս քու վրագ  
դնելու, զոր յաւիտենական փրկութեան  
մեծ ապացոյց կը համարիմ: Հաստատու-  
թեամբ կը յուսամ որ Աստուած՝ Յի-  
սուսի արդեանցն եւ քու բարեխօսու-  
թեանդ համար՝ մեղացս թողութիւն ու  
Հնորհք կու տայ: Բայց ով սիրելի Մայր,  
այս Հնորհքը դարձեալ կրնամ կորսըն-  
ցընել, դարձեալ իմ առջի ճամբուս  
դառնալ. վասն զի վտանգները կեցած են,  
եւ թշնամին չի քնանար: Անոր համար,  
ով բարեգութ Մայր, դուն ինծի պաշտ-  
պան կեցիր եւ թող մի տար որ նորէն  
մեղաց գերի ըլլամ: Գիտեմ որ եթէ  
Վստահութեամբ քեզի դիմեմ, ինծի  
օգնութեան հասնելէն չես դադրիր. քու  
գթութիւնդ՝ քու մայրենի սիրտդ այս  
բանս չի թողուր: Բայց անկէ կը վախ-  
նամ որ փորձութեան ժամանակ՝ քեզի  
ապաւինելու անփոյթ կը ըլլամ, եւ ասով  
կրնամ կորսուիլ: Անոր համար, ով Ա-  
Աստուածածին, քեզմէ աս Հնորհքը կը

խնդրեմ, որ փորձութիւն մը վրաս  
գալու ժամանակ՝ զքեղ օգնութեան  
կանչելու ինծի շնորհք տաս։ Ով Մա-  
րիամ, ընդունէ ինծի համար շնորհք՝ որ  
դժոխին ոգիքը վրաս յարձակած ատեն՝  
քեղի գիմեմ ու ըսեմ. Մայր իմ Մա-  
րիամ, օգնէ ինծի, թող մի տար որ Աս-  
տուծոյս անհաւատարիմ ըլլալով զինքը  
կորսընցընեմ. ամէն։

Երեք ողջոյն։

## Ե Բ Ե Ք Յ Ա Յ Թ Ի

Աղօթք երջանիկ մահ խնդրելու համար։

Ով Մարիամ, Երբ կը մտածեմ ան-  
թիւ մեղքերս ու այն ահագին վայր-  
կեանը, որ յաւիտենական փրկութիւնս  
կամ դատապարտութիւնս պիտի որոշէ,  
վախէս կը դողամ։ Ամենասիրելի Մայր,  
յոյսս քու սիրելի Որդւոյդ անդին ա-  
րեան եւ քու բարեխօսութեանդ վրայ  
կը դնեմ։ Ով մսիթարիչ վշտացելոց, ան-

զարհուրելի վայրկենին մէջ օգնութիւնդ  
ինծի մի զլանար: Եթէ գործած մեղացս  
համար՝ խղճի անհանդստութիւնը, եթէ  
անոնց թողութեանը նկատմամբ եղած  
անստուգութիւնը, եթէ նորէն մեղաց  
մէջ իյնալու երկիւղը, եւ Աստուծոյ  
Դատաստանին ահաւորութիւնը՝ հիմայ  
զիս այնպէս սաստիկ կը նեղեն, ի՞նչափ  
աւելի պիտի տանջեն զիս այն ժամանակ:  
Ո՞չ, առանց քու օգնութեանդ իմ բանս  
լմնցած է: Արդ, մայր Աստուծոյ, քանի  
որ մահուանս ահագին ճգնաժամն եկած  
չէ, մեղացս վրայ մեծ ցաւ, Ճշմարիտ դարձ  
եւ Աստուծոյ ծառայութեանը մէջ հաւ-  
ատարմութեամբ յարատեւելու շնորհք  
ընդունէ ինծի: Եւ երբ մեռնելու ժա-  
մանակս մօտենայ, երբ դժոխական ոգին  
իմ անթիւ մեղքերս առջեւս բերե-  
լու ըլլայ, օգնէ ինծի, դթած Տիրուհի,  
որ յուսահատութեան մէջ չիյնամ:  
Շնորհք ընդունէ որ այն սոսկալի վայր-  
կենին զքեղ ստէպ օգնութեան կան-

չեմ. եւ վերջի շունչս տալու ատեն՝ քու  
եւ սիրելի Որդւոյդ անունն իմ լեզուիս  
վերջին բառերն ըլլան։ Դարձեալ կը  
խնդրեմ քեզմէ, (Ներէ յանդգնու-  
թեանս) ով սիրելի թագուհի. որ գեռ  
չմեռած՝ մահուան դառն վայրկենին չհա-  
սած՝ զիս քու քաղցր մօտաւորութեամբդ  
միսիթարելու արժանի ընես։ Աս շնորհքը  
ճշմարիտ ծառաներէդ շատերուն ըրիր։  
Կը խոստովանիմ որ ողորմելի մեղաւոր  
մըն եմ, եւ աս մեծ շնորհքին արժանի  
չեմ. սակայն ես ալ քու ծառաներէդ  
մէկն եմ, որ ճշմարտիւ զքեզ կը սիրեմ։  
Իսկ եթէ իմ անարժանութեանս հա-  
մար այսպիսի շնորհքի մը արժանի չեմ,  
այն ատեն գոնէ երկինքէն օգնութեան  
հասիր ինծի, որպէս զի Աստուծոյ շնոր-  
հաց մէջ աս աշխարհքէս ելլելով՝ ան-  
դիի աշխարհք զքեզ ամենասուրբ Եր-  
բորդութեան հետ յաւիտեանս տեսնե-  
լու արժանի ըլլամ. ամէն։

Երեք ողջոյն։

## ՀՈՐԵՔԸԸԲԹԻ

Աղօթք դժոխքէն աղատելու համար :

**Բ**իւր գոհութիւն կը մատուցանեմ քեզի, բարեգութ Տիրուհի իմ, որ զիս բարեխօսութեամբդ դժոխքէն աղատեցիր, որուն մեղացս մեծութեան համար շատ անգամ արժանի եղայ: Դատապարտութեանս վճիռը գուցէ շատոնց կատարուած կ'ըլլար, եթէ դուն, սիրելի Մայր, քու բարեխօսութեամբդ ինձի օգնութեան հասած եւ զիս Աստուծոյ արդարութեան ձեռքէն աղատած չըլլայիր: Խստասրտութեանս յաղթեցիր, սիրտս շարժեցիր եւ յորդորեցիր որ բոլոր ապաւինութիւնս վրադ դնեմ: Ո՛հ, այսչափ վտանգներու ժամանակ որչափ մեղաց մէջ կ'իյնայի՝ եթէ դուն, սիրելի Դշխոյ, Աստուծմէ ընդունած շնորհքներովդ ինձի պաշտպան կեցած չըլլայիր: Ո՛վ հզօր թագուհի, ասկից վերջն ալ աղատէ զիս դժոխքէն. վասն զի ի՞նչ

օգուտ կ'ունենայ մինչեւ հիմայ ինձի  
ցուցըցած ողորմութիւնդ, եթէ այսու  
ամենայնիւ յաւիտեան դատապարտուե-  
լու ըլլամ։ Թող մի տար որ երբեք  
բաժնուիմ քեզմէ եւ իմ Աստուծմէս,  
որմէ քու բարեխօսութեամբդ այնչափ  
շնորհքներ ընդունեցայ։ Թող մի տար  
որ զքեզ ու Աստուածորդիդ գժոխին  
մէջ յաւիտեանս ատեմ եւ հայհոյեմ։  
Կրնաս արդեօք անտարբեր աչօք տես-  
նել՝ որ հաւատարիմ ծառաներէդ մէկը,  
որ զքեզ այսպէս կը սիրէ, յաւիտեան  
դատապարտուի։ Ով Մարիամ, ի՞նչ կ'ը-  
սէր ասոր քու գթած ու մայրենի սիրտդ։  
Անշուշտ է կորուստս, եթէ որ զքեզ  
թող տամ։ Բայց զքեզ ի՞նչպէս կրնամ  
թողուլ. ինձի ցուցըցած սէրդ ի՞նչպէս  
կրնամ մոռնալ։ Ով մայր իմ, Գուն որ  
ինձի այսչափ բարիքներ ըթիր, այս  
շնորհքնալը ըթէ, եւ օգնութիւնդ վրայէս  
մի վերցըներ։ Կ'ուղես ինձի օգնել։ Բայց  
ի՞նչ կ'ըսեմ. եթէ ան ժամանակն իսկ

որ վրադ ամենեւին չէի մտածեր, զքեզ  
չէի սիրեր, ինծի այնչափ շնորհքներ ը-  
րիր, որչափ աւելի եւս կրնամ յուսալ,  
որ հիմայ որ զքեզ կը սիրեմ եւ ինք  
զինքս բոլորովին քեղի կը նուիրեմ,  
պիտի օգնես, եւ զիս ինք իրենս չժո-  
ղուս պիտի։ Զէ. քեղի ապաւինողը, իր  
յոյսը վրադ գնողն անկարելի է որ կոր-  
սուի։ Անիկայ միայն կը կորսուի, որ  
զքեզ օգնութեան չի կանչեր, որ իր  
վստահութիւնը վրադ չի գներ։ Տա-  
րածէ վրաս քու հզօր բազուկդ ու ա-  
զատէ զիս դժոխքէն. բայց աւելի եւս  
ազատէ մեղքէն, վասն զի ասիկայ միայն  
կրնայ զիս դժոխք տանիլ. ամէն։

Երեք ողջոյն։

## ՀԻՆԳԵԱԲՈՒ

Ազօթք յաւիտենական երանութեան  
համար։

ԱՎ հզօր թագու հի երկնից, որ ամեն  
սերովքէներէն վեր, Աստուծոյ ամենէն

մօտ կը գտնուիս, գթած աչուրներդ  
մեղաւորիս դարձուր՝ որ այս աքսորանաց  
վայրէն քեզի կը դիմեմ։ Տես, ով Ա.  
Կոյս, որչափ վտանգաց մէջ կը գտնուիմ,  
հոգիս եւ միանգամայն յաւիտենա-  
կան կեանքը կորսնցընելու ցորչափ այս  
աշխարհքիս վրայ եմ։ Յոյսս քու վրադ  
դնելէն չեմ դադրիր։ Կը սիրեմ զքեզ  
եւ կը ցանկամ ան երանելի վայրկենին՝  
որուն մէջ զԱստուած ու զքեզ յաւի-  
տեան պիտի օրհնեմ ու փառաւորեմ։  
Ով Մայր, Ե՞րբ պիտի դայ այն երանելի,  
ցանկալի օրը, որ քու ոտուըներդ ին-  
կած՝ տեսնելու արժանի պիտի ըլլամ  
զքեզ՝ Աստուծոյս ու իմ Մայրս, որ յաւ-  
իտենական փրկութեանս համար այն-  
չափ աշխատեցաւ։ Ե՞րբ պիտի համբու-  
րեմ այն օրհնեալ ձեռքը, որ զիս այն-  
չափ անգամ յաւիտենական դատա-  
պարտութենէն աղատեց։ Ով մեծաղօր  
թագուհի, աս աշխարհքիս վրայ քեզի  
շատ անգամ ապերախտ դտնուեցայ,

բայց անդիի աշխարհք անհաւատարիմ  
չեմ ըլլար. Հոն բոլոր զօրութեամբս  
զքեղ պիտի սիրեմ, եւ զքեղ միշտ  
սիրելով, իմ անհաւատարմութեանս  
հատուցում պիտի ընեմ: Ճնորհակալ  
կըլլամ Աստուծոյ գթութեանը, որ  
ինձի շնորհք տուաւ Քրիստոսի անդին  
արեան եւ քու հզօր բարեխօսութեանդ  
ապաւինելու: Քու գործքդ է, սիրե-  
լի Մայր, զիս փրկել, մեղացս համար  
թողութիւն ընդունել, զիս Աստուծոյ  
հետ հաշտեցընել, իր սուրբ կամքը կա-  
տարելու համար՝ լցու ու զօրութիւն  
խնդրել եւ վերջապէս զիս արքայու-  
թիւն հասցընել: Քու հաւատարիմ ծա-  
ռաներդ աս ամէն բան քեզմէ կը յու-  
սային եւ երբեք մէկը չխաբուեցաւ, ով  
Մարիամ. ես ալ չեմ խաբուիր: Աղաչէ  
ուրեմն Աստուծոյ ինձի համար, որ քու  
վրադ ունեցած վստահութիւնս միշտ  
շատնայ, եւ այս կեանքէն ետեւ ցուցուի  
ինձի որովայնիդ օրհնեալ պտուղն. ով

բարեգութ, ով քաղցր կոյս Մարիամ.  
որպէս զի զինքը քեզի հետ յաւիտե-  
նականութեան մէջ միշտ փառաւորեմ.  
ամէն:

Երեք ողջոյն:

---

## Ո Ւ Թ Բ Ա Թ

Աղօթք Յիսուսի եւ Մարեմայ սէրն  
ընդունելու համար:

Լաւ գիտեմ, ով ամենասուրբ կոյս,  
որ Աստուծոյ արարածներուն մէջ ամե-  
նէն ազնիւը, ամենամաքուրը, փառաւ-  
որը, գեղեցիկը, գթածը, սուրբն ու  
ամենասիրելին ես: Երանի թէ ամեն  
մարդ զքեզ ճանչնար, եւ ըստ արժա-  
նւոյն՝ սիրէր: Այսու ամենայնիւ շատ  
կ'ուրախանամ ու կը մսիթարուիմ,  
գիտնալով որ Երկինքն ու Երկրիս վրայ  
գտնուած այնչափ արդար ոգիք՝ քու  
անպատում շնորհքներդ կը գովեն եւ

շքեղ կը սիրեն։ Բայց ամէնէն աւելի  
անոր կ'ուրախանամ, որ Աստուած զքեղ  
ամէն հրեշտակներէն ու մարդիկներէն  
աւելի կը սիրէ։ Սիրելի թագուհի, ես  
ողորմելիս ալ, թէպէտ շատ նուազ՝ բայց  
մասնաւոր սէր ունիմ քեզի, եւ կը բաղ-  
ձամ որ աս սէրս աւելի եւս վառի սըր-  
տիս մէջ։ Ընդունէ ուրեմն Աստուծմէ-  
ինծի համար այն մասնաւոր շնորհքն ու  
յաւիտենական երանութեան հասնե-  
լու ստոյգ նշանը, զոր Աստուած անոնց  
միայն կը պարգեւէ՝ զորոնք փրկութեան  
համար որոշած է։

Կը ճանչնամ դարձեալ, ով հզօր  
Մայր, թէ որչափ պարտականութիւն  
ունիմ նաեւ քու սիրելի Որդիդ սիրե-  
լու։ Գիտեմ թէ դուն բանի մը այնչափ  
չես բաղձար՝ որչափ տեսնել թէ քու  
Որդիդ ամէն մարդիկներէն սիրուած  
է։ Անոր համար ընդունէ Որդիեդ աս  
շնորհքն՝ որ զինքն ըստ պատշաճի կա-  
րենամ սիրել եւ իրեն հաւատարմու-

թեամբ ծառայել։ Ես երկրաւոր բարիք, մեծութիւն ու հարստութիւն չեմ ինդրեր։ Հապա քեզմէ ինդրածս է որ Աստուածս սիրեմ։ Կարելի բա՞ն է որ չկատարես աս ցանկութիւնս՝ որ քեզի այնչափ հաճելի է։ Զէ, չէ. դուն միշտ ամէն բանի մէջ ինծի օգնութեան կը հասնիս, ինծի համար կ'աղաչես։ Ո՛հ, աղաչէ, աղաչէ, եւ աղաչելէն մի դադրիր՝ մինչեւ որ ամէն վտանգներէն ազատած՝ զիս արքայութեան մէջ չտեսնես, ուր զինքն եւ զքեզ յաւիտեանս սիրեմ ու օրհնեմ. ամէն։

Երեք ողջոյն։

## Յ Ա Բ Ա Թ

Աղօթք Մարեմայ բարեխօսութիւնը  
ինդրելու համար։

Աղորմած Մայր իմ Մարիամ, կը  
ճանչնամ մէկ կողմանէ բարեխօսու-  
թեամբդ Աստուծմէ ընդունած անթիւ  
բարիքներդ. կը խոստովանիմ մէկալ

կողմանէ որ աս ամէն շնորհքներուն դէմ  
մեծ ապերախտութիւններով հատու-  
ցում ըրած եմ: Թէպէտ ողորմութեան  
արժանի չեմ. բայց վստահութիւնս  
մայրենի գթութեանդ վրայ դնելէն  
չեմ դադրիր: Ասոն զի գթութիւնդ  
աւելի է քան թէ իմ ապերախտու-  
թիւնս: Ով հզօր բարեխօս, ողորմէ ին-  
ձի: Դուն ես Աստուծոյ շնորհաց գան-  
ձապետը: Աստուած քեզի անոր հա-  
մար այնչափ կարողութիւն, անսպառե-  
լի գանձ ու գթած սիրտ մը տուած է,  
որ նեղութեան ժամանակը մեր վրայ  
գթաս ու մեզի օգնութեան հասնիս:  
Դուն՝ քեզի գիմող ամենէն ողորմելի  
մեղաւորներուն պատսպարանն ես. եղիր  
ուրեմն իմ ապաստանս ալ՝ որ քեզի կը  
դիմեմ: Փրկութիւնս Աստուծմէ ետքը  
քու ձեռքդ կը յանձնեմ. քեզի կը  
նուիրեմ խեղճ հոգիս. դուն փրկէ  
զանիկայ: Առ զիս քու պաշտպանու-  
թեանդ տակ, եւ ասիկայ ինծի բաւական

է. որովհետեւ ան ժամանակ բանէ մը  
չեմ վախնար. ոչ մեղքերէս, վասն զի  
աս չարեաց դէմ ինծի զօրաւոր գեղ  
կը գտնես. ոչ գժօխային թշնամինե-  
րէս, որովհետեւ քու զօրութիւնդ բո-  
լոր գժոխին ուժէն աւելի է. եւ ոչ  
ալ Յիսուսէն, իմ արդար դատաւորէս,  
ինչու որ մի միայն աղաչանքդ անոր ար-  
դար բարկութիւնը կ'իջեցընէ : Բանէ մը  
միայն կը վախնամ, այս ինքն որ չըլայ  
թէ անհոգութեամբս զքեղ օգնու-  
թեան կանչելու մոռնամ եւ ասով կոր-  
սուիմ:

Սիրելի Մայր, ընդունէ ինծի համար  
մեղաց թողութիւն, Յիսուսի սէր, բա-  
րեաց մէջ յարատեւութիւն, երջանիկ  
մահ եւ վերջապէս արքայութիւնը. բայց  
ամէն բանէն աւելի ինք զինքս քեզի  
նուիրելու շնորհք: Իրաւ ասոնք անանկ  
բաներ են, որոնց ես արժանի չեմ.  
բայց Աստուած՝ որ զքեղ անչափս կը  
սիրէ, աղաչանքդ կատարելու անփոյթ

Հըլլար։ Բաւական է թէ որ խօսք մը  
միայն ըսես Յիսուսի, ինք այն բանն ան-  
շուշտ կը կատարէ։ Աղաչէ ուրեմն ին-  
ծի համար։ Ըսէ իրեն որ պաշտպանս  
կ'ուզես ըլլալ, եւ ինք ստուգիւ վրաս  
կը գիտայ։ Մայր իմ Ա. Աստուածածին,  
բոլոր յոյսս վրադ կը դնեմ. աս յու-  
սոյն մէջ կ'ուզեմ ապրիլ ու մեռնիլ.  
ամէն։

Երեք ողջոյն։



ՕՐՈՒԵՆ ՄԵԶ ԲՆԵԼՈՒ

ԶԱՆԱԶԱՆ ԱՂԹԹԻՆԵՐ

Ա Չ Օ Բ Ա Ք

ՃՆՈՂԱՑ՝ ԻՐԵՆց  
ՈՐԴւոցը Համար:



Աստուած իմ, ՃՆՈՂԱԿԱՆ  
ԱԷՐՆ՝ ԲՆԽԱԼԷՍ ՆԱԵՒ ՔՈւ  
ԱՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԴ ՂԻՍ ԿԸ  
ԱՊԱՐՏԱւՈՐԵՆ ՈՐ ԻՄ ՈՐ-  
Դւոցս ԿՐԾՆԻ ՀԱՄԱՃԱՅՆ  
ԿՐԺՄՈՒԺԻՒՆ ՄԱՄ ԵՒ Ի-  
ՐԵՆց ՓՐԿՈՒԺԵԱՆԸ ՀՈԳ  
ՄԱՆԻՄ: Ասոր ՀԱՄԱՐ ԿԸ  
ԽՆԴՐԵՄ ՔԵՂՄԵ, ԱՍՏՈՒ-  
ԱԾ ԻՄ, ԱՊԱՐԴԵՒԵ ԻՐԵՆց ՀԼՈՒ ՍԻՐՄ ՄԸ:  
ՏՈՒՐ ԻՐԵՆց ԱՇԽԱՄԵԼՈՒ ԲԱղձանիք, ՈՐ

ըստ պատշաճի եւ վայելչապէս իրենց  
կոչման համաձայն կեանք անցընեն։ Պա-  
հէ զիրենք ցանկութեանց դառն լծէն.  
պահէ իրենց անմեղութիւնն աշխարհի  
որոգայթներէն։ Մի թողուր որ Ճանչնան  
մեղքը, բայց եթէ զանիկայ ատելու հա-  
մար։ Տուր իրենց առաջնորդներ, որոնց  
օրինակէն յորդորուելով՝ զերմեռանդ  
ու առաքինի ըլլան։ Ճնորհէ որ չարերէն  
փախչին եւ առաքինիներուն հետեւին։  
Տէր իմ, եթէ կը տեսնես որ ժամանակ մը  
վարքերնին չարացընելով զքեզ պիտի  
վշտացընեն ու քու մեծվայելչութիւնդ  
պիտի անարգեն, աւելի կ'ուզեմ որ  
անմեղութիւննին կորսնցընելէն յառաջ  
զանոնք քեզի կանչես։ Իսկ եթէ կը տես-  
նես որ բարի վարք պիտի ունենան, այն  
ժամանակ կեանքերնին երկնցուր, որ-  
պէս զի քեզի՝ ամենագլժած Հօրդ հաւ-  
ատարիմ ու սիրելի որդիք ըլլան։ Եթէ  
քեզի հաճոյ է՝ ինծի ալ կեանք տուր,  
որ իրենց աղէկ կը թութիւն տամ. իսկ

եթէ քու կամբդ այլազգ որոշած է, օրհնեալ ըլլաս. բայց դուն զանոնք քու պաշտպանութեանդ տակ առ: Ես կ'ուզեմ ջանալ քու շնորհօքդ իրենց սըրտին մէջ հաւատքի ու առաքինութեան սերմը ցանելու: Տէր իմ, տուր ինծի շնորհք՝ որ օր մը կարենամ ըսել թէ ինծի տուածներէդ եւ ոչ մէկը կորսընցուցի. ամէն:

---

## Ա Զ Ո Բ Ա Գ

ծնողաց համար :

Հայր երկնաւոր, դուն հրամայեցիր որ ծնողքնիս պատուենք ու սիրենք: Ահա աս պատուէրդ կատարել բաղձալով՝ կ'աղաչեմ մեծվայելլութեանդ որ ծնողացս բարօրութեանը համար մատուցած աղօթքս ընդունիս: Ամէն բանէն յառաջ շնորհակալ կ'ըլլամ, քեզի բարերար Աստուած, որ ինծի անանկ

ծնողք տուիր, որ չէ թէ միայն իմ մարմնաւոր կարօտութիւններս կը հոգան, հապա հոգւոյս կըթութեանն ալ փոյթ կը տանին։ Որչափ մեծ է իրենց ասինսամբը, այնչափ ալ կը ստիպուիմ քեզի միշտ աղաչելու որ զիրենք պահես, որ կարենան հոգւոյս ու մարմնոյս յառաջադիմութեան օգնական ըլլալ։ Լուսաւորէ զիրենք, որ կարող ըլլան ասկէ ետքն ալ իրենց պարտքը քու հաճոցիցդ համաձայն կատարել։ Իսկ ես կը խնդրեմ քու հայրական օրհնութիւնդ, որ ծնողացս սէրը սրտէս երբեք չպաղի, իրենց պարտական եղած յարդութիւնս ու շնորհակալութիւնս ամենեւին չմունամ. իրենց երբեք անհանգստութիւն ու տհաճութիւն չպատճառեմ, եւ չէ թէ միայն իրենց պատուէրները կատարեմ, եւ տուած յանդիմանութեան համբերութեամբ տանիմ, հապա նաեւ հլու հպատակութեամբ ու միամտութեամբ իրենց ամէն բաղձանքն ալ

անմիջապէս կատարեմ: Ո՛վ ամենայն  
բարեաց Տէր, հայրական հովանաւո-  
րութեանդ կը յանձնեմ ծնողքս: Տուր  
իրենց առողջութիւն, երկայն կեանք,  
վիճակնուն մէջ՝ յաջողութիւն եւ օր-  
հնութիւն, կրած վշտերնուն մէջ՝ միսի-  
թարութիւն, տարակոյսներնուն մէջ՝  
խորհուրդ: Ազատէ զիրենք ամէն  
գժբախտութիւններէ, վտանգներէ,  
թշնամոյն որոգայթներէն, հոգւոյ եւ  
մարմնոյ ամէն փորձութիւններէ: Աս  
ամէն բան կը խնդրեմ քեզմէ Յիսուս,  
քու սուրբ մօրդ եւ սնուցիչ Հօրդ  
սրբոյն Յովսեփայ ամէն բանի մէջ հնա-  
զանդ ըլլալուդ համար: Արդ՝ անոնց  
արդեանցը նայելով՝ լսէ իմ որդիական  
սրտիս ջերմ աղաչանքներն. ամէն:

## ԱՎՈԹՔ

Եղբարց ու քերց համար:

Յիսուս Քրիստոս, ողորմած Փրկիչ  
իմ, զմեզ չափեն աւելի սիրելուդ աշ-  
խարհք եկար ու մեր եղբայրն ըլլալ  
ուղեցիր. եւ մեզի սորվեցուցիր որ մէկ-  
ղմէկ, մանաւանդ մեր մարմնաւոր եղ-  
բայրներն ու քոյրերը սիրենք, եւ իրա-  
ռու միշտ բարիք ընենք: Քու շնորհօգդ  
աս պատուիրանիդ ետեւէն երթալով՝  
կը խնդրեմ որ տաս քու սուրբ շնորհքդ  
եղբայրներուս ու քոյրերուս, որ զքեզ  
ու երկնաւոր Հայրդ ամէն ժամանակ  
սիրեն: Հեռացուր իրենց սրտէն աշ-  
խարհքիս սնոտի սէրն ու անկարգ բաղ-  
ձանքները. եւ անօնց տեղ՝ իրենց լցու  
ու զօրութիւն տուր, որ ամէն բանի մէջ  
կամքդ կատարելով՝ աստուածային պա-  
տուիրաններուդ համեմատ կեանք ան-  
ցընեն: Հեռացուր իրենցմէ վեասակար  
ու աշխարհասէր ընկերները, որ չըլ-

լայ թէ գէշ ճամբայ բռնելով՝ հոդինին կորսնցընեն։ Տնկէ իրենց սրտին մէջ աստուածային դատաստանիդ վախն ու արքայութեան փառքը, որ կարենան ամէն դժուարութեանց դէմ դնելով՝ միայն քեզի ծառայել։ Պահէ զամէնքս մարմնաւոր փորձանքներէն ու ցաւերէն, որ սուրբ մտքով ու առողջ մարմնով քեզի ծառայելով՝ արքայութեան մէջ արժանի ըլլանք յաւիտեան դքեզ օրհնելու եւ փառաւորելու. ամէն։

---


## Ա Դ Օ Բ Ա Ք

ամէն հաւատացելոց համար։

Ամենակարող Աստուած, ստեղծիչ եւ հայր ամէն մարդկան, որ հայրական աչքով միշտ մեր վրայ կը նայիս ու մեր ամէն հարկաւոր բաները կը պարգևեւես. կը խնդրեմ քեզմէ խոնարհութեամբ, որ բարերար կամօքդ ամէնուն վրայ ա-

ոատապէս հեղուս քու աստուածային  
շնորհքներդ, որպէս զի զքեղ ամէն բա-  
նէն աւելի սիրեն, քու սուրբ կամքդ կա-  
տարեն, պատուիրաններդ ճշդիւ պահեն,  
չար ճամբէն ու մեղքէն հեռու կենան  
եւ արքայութեան ճամբուն վրայ քա-  
լեն: Մի թողուր, ամենաբարի Արարիչ  
իմ, որ արարածներդ մեղքի մէջ ապ-  
րելով, քեզի ատելի ու չար սատանայ-  
ին սիրելի ըլլան: Լուսաւորէ ամէնքը  
սուրբ հաւատքի ու քրիստոնէական  
ուսման լուսովը, որ զքեղ աղէկ ճանչ-  
նան, սիրեն ու քեզի սրտանց ծառայեն:  
Հեռացուր, մեղմէ ամէն չար թշնամի-  
ներն ու նեղինները. պահէ զամէնքնիս  
ալ ամէն չարիքներէն ու դժբախտ պա-  
տահարներէն: Տուր ամենուն հար-  
կաւոր ապրուստը, որպէս զի քու պար-  
գեւներդ վայելելով՝ օր քան զօր ծա-  
ռայութեանդ մէջ աւելի հաստատուին:  
Սուրբ Կոյս Աստուածածնի, սուրբ հրեշ-  
տակաց, մեր հօրը՝ սուրբ Գրիգոր Լու-

սաւորչին եւ ամէն սրբոց բարեխօսութեամբը՝ պահէ զամէնքը սովէն, կրակէն, ժանտամահէն, ուրիշ հիւանդութիւններէն եւ ամէն տեսակ փորձութիւններէն։ Օրհնէ ամէն մէկուն գործքն ու աշխատանքը, որ օդտակար ըլլայ թէ իրենց հոգւոյն ու թէ իրենց մարմնոյն։ Եւ ասանկ քու պարգեւներդ ընդունելով՝ զքեզ աս աշխարհքիս վրայ ու ետքն ալ արքայութեան մէջ յաւիտեանս սիրեն ու օրհնեն. ամէն։



## Ա Պ Ո Բ Ա

քաւարանի հոգւոց համար։

Մարդասէր Փրկիչ իմ, որ խաչին վրայ մեռնելով՝ զմեղ յաւիտենական մահուանէ ազատեցիր, կ'աղաչեմ ողորմէ ննջեցեալ հոգւոց, որ իրենց մեղաց թողութիւն ընդունած՝ բայց կատարեալ ապաշխարանք ըրած չըլլալով՝ հիմայ

անդիի աշխարհք աստուածային արդա-  
բութեանդ հատուցման համար զանազան  
տանջանքներ կը կրեն: Յիշէ, Տէր իմ,  
քաշած չարչարանքներդ, եւ կարճե-  
ցուր անոնց զօրութեամբն իրենց պատ-  
ժոյն ժամանակը: Մի զբկեր զիրենք եր-  
կայն ատեն քու արքայութենէդ, հապա  
վրանին գթալով՝ լեցուր իրենց սուրբ  
փափաքը: Ընդունէ, Տէր իմ Յիսուս,  
ան սուրբ պատարագները, աղօթքներն  
ու ողորմութիւնները, զորոնք հաւատա-  
ցելներդ աս բարի հոգիներուն հա-  
մար ամէն օր կը մատուցանեն: Ընդունէ  
միանդամայն անարժանիս աղօթքն ալ-  
եւ եթէ քեզի հաճոյ է՝ շուտով ազա-  
տէ զանոնք ան պատիժներէն կամ ա-  
պաշխարանքներէն: Մի յիշեր իրենց  
անցած մեղքերը, հապա նայէ իրենց հի-  
մակուան ջերմեռանդութեանն ու սուրբ  
բաղձանքին, որով զքեղ կը սիրեն ու կը  
փափաքին սուրբերուդ հետ զքեղ եր-  
կինքը փառաբանել: Ամէնէն աւելի կ'ա-

ղաչեմ քեզի, ամէնողօրմ Փրկիչ իմ,  
ողօրմէ իմ հանգուցեալ ծնողացս, եղ-  
րարցս, քերցս, աղգականներուս եւ  
բարեկամներուս. եւ հասցուր զիրենք  
իրենց պատրաստած փառքիդ, որպէս զի  
քեզի գոհութիւն մատուցանեն յաւի-  
տեանս. ամէն:

### Ա Պ Օ Բ Ա Յ

մաղձայուղի եւ որիշ հիւանդութեան  
ժամանակ:

Մարդասէր եւ բազումողօրմ Աս-  
տուած, սուրբերուդ բերնովը մեզի  
սորվեցուցիր, թէ ինչ նեղութեան կամ  
փորձանքի որ հանդիպինք, երբ հաս-  
տատուն հաւատքով ու յուսով քե-  
զի գիմելու ըլլանք, զմեղ այն փորձանք-  
ներէն աղատելու եւ մեր սիրտը հանգ-  
չեցընելու պատրաստ ես: Տես, ամէն-  
ողօրմ Տէր, ծանր հիւանդութիւն մը  
մեր մէջը տարածուելով՝ սրտերնիս վա-

Խով կը լեցընէ, եւ տուած կեանքդ  
մեզմէ յափշտակել կ'ուզէ։ Գիտենք  
որ աշխարհքիս մէջ առանց քու ամե-  
նասուրբ կամքիդ բան չըլլար։ Գիտենք  
որ քու թոյլտուութեամբդ աս չարիքը  
մեր վրայ եկած է ու զմեզ կը նեղէ.  
բայց յոյսերնիս անսահման ողորմու-  
թեանդ ու հայրական դթութեանդ  
վրայ դնելով՝ կ'աղաչենք որ եթէ քու  
կամքդ է՝ աս նեղութիւնը մեզմէ հեռա-  
ցընես ու աս հիւանդութենէն զմեզ  
աղատես։ Աը խոստովանինք որ մեր  
մեղքերովն՝ ասանկ մեծ պատիժներու  
արժանի ենք. բայց դուն մեղաւորին  
մահը չես ուզեր, հապա կ'ուզես որ  
քեզի դառնայ ու ապրի։ Անոր համար  
պահէ զմեզ աս մահուան վտանդէն  
ալ։ Լսէ սուրբ Կոյս Աստուածածնի, ա-  
մէն սրբոց եւ մանաւանդ մեր սուրբ  
հօրը Գրիգոր Լուսաւորչին, սուրբ Յա-  
կովքայ, սրբու հի Հոկիմիմեի եւ սրբոյն  
Թոքոսի խնդրուածքները, որոնք մեզի

Համար երկինքը կ'աղաւեն։ Լսէ, Տէր՝  
իրենց արժանաւոր աղօթքներն ու զմեղ  
ամէն վտանգներէն աղատէ, որպէս զի  
տուած կեանքդ ծառայութեանդ մէջ  
անցընելէն ետքը՝ սուրբ ու խաղաղա-  
կան մահուամբ այս աշխարհքէս ելլե-  
լով, քեզի յաւիտեանս գոհութիւն  
մատուցանենք. ամէն։

---

## Ա Զ Ո Բ Ք

Նեղութեան կամ հիւանդութեան ատեն։

Ճայր գթութեանց եւ Աստուած  
ամենայն մխիթարութեանց, նայէ խեղ-  
ճութեանս ու լսէ սրտիս հեծութիւն-  
ները։ Աչուրներս քեզի կը վերցընեմ,  
ինչու որ քեզմէ զատ՝ մէկէ մը մխի-  
թարութիւն չունիմ։ Նեղութիւնները  
զիս պաշարեր են ու քու բարերար  
ձեռքդ միայն կրնայ աս վէրքը բժշկել։  
Դուն լաւ կը ճանչնաս սիրտս ու կը  
տեսնես տկարութիւնս. անոր համար

ամենասիրելի Որդւոյդ հետ կ'աղաքեմ,  
Հայր, անցո շնուժակո զայս յինէն : — Բայց,  
ով Աստուած իմ, քեզի դեմ գանգատ  
ընելու իրաւունք չունիմ, որովհետեւ  
մեղանչելուս համար դժոխիքի ալ ար-  
ժանի էի: Աս աշխարհիս վրայ որչափ  
ալ դառն վիշտեր ու նեղութիւններ  
խաւրես, ամէնն ալ քիչ են. մանաւանդ  
թէ շնորհք են, վասն զի անոնցմով՝  
ըրածներուս թողութիւն կու տաս ու  
պատիժներս կը շնորհես: Անոր համար  
օրհնեալ ըլլաս, բարեգութ Աստուած  
իմ, որ աս նեղութիւնը (հիւանդու-  
թիւնը) վրաս խրկեցիր. շնորհակալ եմ  
ու կ'օրհնեմ մարդասիրութիւնդ. եւ  
անմիսիթար սիրտս քու ձեռքդ կը յան-  
ձնեմ: Բայց ոյժ տուր ինծի, Տէր իմ,  
որ սիրով համբերեմ: Յիսուսին չար-  
չարանքներուն հետ քեզի կը նուիրեմ  
աս փոքր նեղութիւնս, որ քեզի հաճոյ  
ու ընդունելի պատարագ ըլլայ. ամէն:


## Ա Դ Օ Բ Ք

Եկեղեցւոյ վերահաս տառապանացն առ-  
ջեւն առնելու համար\*:

Ամենաքաղցր Յիսուս, աստուածային  
վարդապետ մեր, որ այնչափ անդամ  
Փարիսեցւոց չարահնար նենգութիւն-  
ներն ի գերեւ հանեցիր, ցրուէ ամպա-  
րիշտներուն խորհուրդները, որոնք նեն-  
գաւոր հնարքներով քու ժողովուրդգի  
իրենց որոգայթիցը մէջ ձգել կ'ուզեն:  
Լուսաւորէ շնորհացդ լուսովն՝ զմեզ,  
քու աշկերտներդ, որ չըլայ թէ աշ-  
խարհքիս իմաստնոցը խաբէութեամբը  
մոլորինք, որոնք իրենց վեասակար ու  
խաբէական սկզբունքն ամէն տեղ տա-  
րածել եւ զմեզ ալ իրենց մոլորու-  
թեանց անդունդը կործանել կ'ուզեն:  
Հեղ առատութեամբ մեր վրայ քու  
սուրբ հաւատքիդ լցուը, որ ամպարշտաց

\* Պիսոս թօ. որբազնն Քահանացապետը 1866 Հոկտեմբերի 22-ին առ աղօթքը ջերմեռանդութեամբ ընողներուն 100 օրուան ներտղութիւն շնորհած է:

մեզի լարած որոգայթները ճանչնանք,  
սուրբ Եկեղեցւոյ վարդապետութեան  
հաւատարիմ մնանք եւ անդրդուելի  
հաստատութեամբ աշխարհի խարդախ  
սկզբունքները մերժենք. ամէն:



## Ա Պ Օ Ֆ Ք

Ս. Թռվմայի՝ առաքինութիւններն ստա-  
նալու համար:

Ծնորհէ, մարդասէր Տէր, հաճոյքդ  
սիրով փնտուել, իմաստութեամբ քննել,  
Ճշդութեամբ ճանչնալ, եւ լիով կա-  
տարել ի գովեստ եւ ի փառս քու ա-  
նուանդ: Կարդադրէ ընթացքս, եւ ինչ  
որ կ'ուզես որ ընեմ՝ ճանչնալ եւ ար-  
ժանապէս կատարել տուր: Ծնորհէ  
ինծի, Տէր, որ գժբախտութեանց եւ  
վշտաց մէջ անյօղդողդ ըլլամ, յաջո-  
ղութեանց մէջ չհպարտանամու վշտաց  
մէջ չվհատիմ: Տուր, որ այն բանին  
միայն ուրախանամ, որ քեզի կ'առա-

Ծնորդէ, եւ ան բանին միայն տրտմիմ,  
որ քեզմէ կը հեռացընէ. քեզի միայն  
հաճոյ ըլլամ եւ սպառնալիքներէդ  
միայն վախնամ։ Տուր որ անցաւոր բա-  
ները ոչինչ համարիմ, քուկիններդ՝  
քեզի համար, եւ զքեզ՝ ամէն բանէն  
վեր սիրեմ։ Ծնորհէ որ չախորժեմ ան  
ուրախութիւններն, որոնք առանց քե-  
զի են. եւ քեզմէ զատ բան մը չուզեմ  
ու չփնտուեմ։ Քեզի համար եղած աշ-  
խատութիւնները սիրով կատարեմ, եւ  
ընդ հակառակն ձանձրանամ՝ առանց  
քեզի եղած ամէն հանգստէն։ Ծնորհք  
տուր որ սիրտս միշտ քեզի վերացընեմ  
եւ ինկած ատենս՝ ուղղուելու յառա-  
ջադրութեամբ զղջամ՝ ու ապաշխարեմ։  
Տէր, ըսէ զիս հնազանդ՝ առանց հա-  
կառակութեան, աղքատ՝ առանց լքման,  
ողջախոհ առանց ապականութեան, համ-  
բերող՝ առանց տրտընջման, իսոնարհ  
առանց կեղծաւորութեան, զուարթ՝ ա-  
ռանց ցոփութեան, տրտում՝ առանց

Վշատութեան, հանդարտ՝ առանց դանդաղանաց, երագ՝ առանց թեթեւութեան, երկիւղած՝ առանց յուսահատութեան, ճշմարիտ՝ առանց նենգութեան։ Տուր որ բարիք ընեմ՝ առանց յանդգնութեան, ընկերս խրատեմ՝ առանց ամբարտաւանութեան, ընկերս շահիմ՝ առանց կեղծաւորութեան։ Ինծի միտք տուր՝ զքեզ ճանչնալու, բաղձանք՝ զքեզ փնտոելու, իմաստութիւն՝ զքեզ գտնելու, առաքինի վարք՝ քեզի հաճոյանալու, համբերութիւն՝ հաւատարմութեամբ քեզի սպասելու, եւ յոյս՝ մինչեւ վերջը քեզի փարելու։ Ընորհէ որ ապաշխարութեամբ չարչարանացդ մասնակից ըլլամ, երախտիքդ վայելեմ աս աշխարհիս վրայ, եւ հանդերձեալ կենաց մէջ տեսութեամբդ զմայլիմ. ամէն։

## ԱՎՈԲԱՔ

առ սիրտ Յիսուսի:

Ով երկրպագելի Յիսուս, սրբազան  
սիրտ զմեղ ողորմելի արարածքս ան-  
չափելի սիրով սիրեց. իսկ մենք ան-  
շնորհակալուք՝ ասոր փոխարէն զքեղ  
անդադար կը վշտացընենք: Քու բոլոր  
կեանքդ ու մահդ կը ցուցընեն մեզի՝  
բորբոքեալ սրտիդ անօրինակ սէրը.  
իսկ մենք աս սիրոյն փոխարէն քեզի  
դէմ միշտ կը մեղանչենք: Դու կը բաղ-  
ձաս մարդկան որդւոց հետ ըլլալու, եւ  
հացի կերպարանաց տակ ծածկուած՝ մեր  
խորաններուն վրայ մնալու, որպէս զի ինք  
զինքդ երկնաւոր Հօրդ նուիրես եւ զմեղ  
թանկագին մարմնովդ ու արեամբդ  
սնուցանես. իսկ մենք գթած սիրտդ  
որչափ կը վշտացընենք:

Ով սիրելի Յիսուս, աս մտածմունքը  
ցաւով կը լեցընէ սիրտս: Անոր համար  
մեծվայելըութեանդ առջին ինկած՝ բո-

Ըոր սրտէ կը ցաւիմ քեզի դէմ ըրած  
ամէն մեղացս վրայ. կ'ատեմ մանաւանդ  
կամաւոր ցրութերս, անվայելչութիւն-  
ներս, ցրտութիւնս ու սրբապղծութիւն-  
ներս: Հաստատութեամբ կ'առաջադրեմ  
ալ զքեզ չվշտացընել, քու ամենա-  
գիթած սիրտդ ալ չտրտմեցընել: Ով  
գիթած Յիսուս, օրհնէ առաջադրու-  
թիւնս:

Սրտիս այս ցաւէն եւ հաստատուն  
առաջադրութենէն յորդորուած՝ սաս-  
տիկ կը բաղձամ հատուցում ընել ա-  
մէն անպատուութեանց, որոնցմով մար-  
դիկ ամենասուրբ խորհրդեան մէջ  
չքեզ վշտացընելով կը մեղանչեն:  
Երանի թէ տէր ըլլայի մարդկան սրտե-  
րուն, որ անոնք քեզի նուիրելով՝ մեր  
ցրտութիւններուն ու մեր անշնորհա-  
կալութիւններուն գոնէ ըստ մասին հա-  
տուցում ընէի: Ընդունէ սիրով այս  
բարի բաղձանքս, որով քու առջիդ  
խոնարհած՝ կը խնդրեմ աստուածային

բարութենէդ, որ սրբազան սրտիդ ան-  
չափելի սիրոյն համար ներես մեր ամէն  
մեղքերը: Տուր բարւոյն մէջ յարա-  
տեւութիւն: Տուր որ ասկէ ետքը սուրբ  
սիրտդ խորին հպատակութեամբ, եռան-  
դուն ջերմեռանդութեամբ ու վառեալ  
սիրով պաշտենք: Տուր որ արտաքին  
բարեպաշտութեամբ ու ներքին սրտի  
մաքրութեամբ, ամենասուրբ հաղոր-  
դութեան յաճախ այցելութեամբ, ջեր-  
մեռանդութեամբ պատարագ լսելով,  
եւ սուրբ մարմինդ ու արիւնդ արժանա-  
պէս ընդունելով, ըստ մասին փոխա-  
րէն ընենք ամէն անշնորհակալութեանց  
ու անպատուութեանց: Մի թողուր, սի-  
րելի Փրկիչ, որ օր հնութիւնաբեր սըր-  
տէդ անջատինք. հապա ընդ հակառակն  
միշտ աւելի անոր յարինք, սիրենք ու  
փառաւորենք: Ծնորհէ որ հոն դժնենք՝  
ամէն հակառակութեանց դէմ՝ մեր ու-  
րախութիւնը, մսիթարութիւնն ու օգ-  
նութիւնը: Ծնորհէ վերջապէս որ մեր


սիրտն ըստ ամենայնի նմանելով քու  
սրբազան սրտիդ, երկնաւոր Հօրդ հա-  
ճոյանանք, եւ ասանկ ընտրելոց կարգը  
դասուելու արժանանանք. ամէն:

Ուրիշ աղօթք առ ամենասուրբ սիրտ  
Յիսուսի:

Ով կենարար սիրտ Յիսուսի իմց,  
կերկրպագեմ քեզի. կը սիրեմ զքեզ  
ի բոլոր սրտեւ. կը նուիրեմ քեզի ամեն  
մտածմունքներս, խօսքերս, գործքերս  
եւ արտաքին ու ներքին վշտերս: Ճնոր-  
հէ, ով անսպառ աղբիւր ողորմութեան,  
որ աս ամեն բան քու մեծագոյն փա-  
ռացդ եւ իմ փրկութեանս ծառայեն:  
Ով աստուածային սիրտ Յիսուսի իմց,  
երանի թէ այնպիսի երկրպագութեամբ  
ու սիրով կարենայի քեզի ծառայել,  
ինչպէս հրեշտակները կը ծառայեն քու  
աստուածութեանդ՝ ամենասուրբ հա-  
լորդութեան մէջ: Ով գթած սիրտ, ո-  
չորմէ ինձի այն օրն. երբ ամեն մեղքերն

ի լցս գան: Եղեր ապաւէնս այս տառ  
ուապանաց վայրը, բայց մանաւանդ մա-  
հուանս ճգնաժամին: Սփռէ, կ'աղա-  
չեմ, քու ողորմութիւնդ մերձաւորացս,  
բարեկամացս, թշնամեացս, բարերա-  
րացս, մօլորելոց, խստասրտաց, որբոց ու  
այրեաց, հիւանդաց ու հոգեւարաց, մէկ  
խօսքով այն ամենուն վրայ՝ որոնք այս  
արտասուաց վայրը կը պանդիսին: Քու  
թանկագին արեանդ գինն՝ ըլլայ ամե-  
նուս համար փրկութեան աղբիւր: Այս  
գանձին մասնակցուր նաեւ այն վշտա-  
ցեալ հոգիներն՝ որ աստուածային ար-  
դարութեանդ բաւական հատուցում  
ըրած չըլլալով, իրենց մեղաց պատիժը  
գեռ կը կրեն. որպէս զի անկէ շուտ  
աղատելով՝ զքեզ երկինքը փառաւո-  
րեն. ամէն:

Ով ամենասուրբ սիրտ Յիսուսի, լսէ  
ողորմութեամբ մեր պաղատանքն. ամէն:



## Ա Պ Օ Թ Ք

Առտուանց, կէսօր ու իրիկուն ըսելու\*:

Հրեշտակ Տեառն աւետեաց սրբոյ  
կուսին Մարիամու. որ յղացաւ ի Հո-  
գոյն սրբոյ: Ողջոյն քեզ Մարիամ, լի  
շնորհօք. եւ այն.

Ահաւասիկ կամ աղախին Տեառն,  
եղիցի ինձ ըստ բանի քում: Ողջոյն:

Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց  
ի մեզ: Ողջոյն:

Զշնորհս քո՝ աղաչեմք, Տէր, հեղի ի  
միտս մեր, զի որ աւետեօք հրեշտակին  
ծանեաք զմարդեղութիւն Քրիստոսի  
Արդւոյ քոյ, չարչարանօք նորին ժամա-  
նեսցուք ի փառս. Տերամք մերով Յի-  
սուսիւ Քրիստոսիւ. ամէն:

Յինանց ատեն\*:

Աւրախ լեր Թագուհի Երկնից. Ալէ-  
լուիա.

\* Աս աղօթքն ընողը ամէն անգամուն 100 օրուան նե-  
րողութիւն կը վաստրկի: Խակ ով որ ամբողջ ամիս մը  
կը զրուցէ, լիակատար ներողութիւն: Բննեդ. Ժ. 1724.  
Անպատ. 14:

Քանզի զոր դու ի քեզ կըել ար-  
ժանի եղեր. Ալէլուիա.


Յարեաւ ահա որպէս ասացն. Ալէ-  
լուիա.

Աղաչեա վասն մեր զԱստուած. Ալէ-  
լուիա.

Խնդա եւ ուրախ լեր, Կոյս Մարիամ.  
Ալէլուիա.

Զի ճշմարտապէս յարեաւ Տէրն.  
Ալէլուիա.

Աստուած, որ յարութեամբ Որդոյ  
քոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի  
արժանի Համարեցար ուրախ առնել  
զաշխարհ, տուր մեղ աղաչեմք զի ի  
ձեռն ծնողի նորին Կուսին Մարիամու,  
Հասանիցեմք յաւիտենական ուրախու-  
թեանցն յերկինս. Տերամբ մերով Յի-  
սուսիւ Քրիստոսիւ. ամէն :



## ԹԱՂԹԱՆՔ

առ սրբուհի Կոյսն Մարիամ\*:

Ողջ լեր թագուհի, մայր ողորմութեան. կեանք, քաղցրութիւն եւ յոյս մեր, ողջ լեր: Առ քեզ դոչեմք աքսորեալ որդիքս Եւայի. առ քեզ հառաչեմք հեծելով եւ ողբալով յայսմարտասուաց վայրի: Արդ ով բարեխօս մեր, դարձո առ մեզ զաչս ողորմութեան քոյ, եւ զՅիսուս՝ զօրհնեալ պտուղն որովայնի քոյ, յետ այսր աքսորանաց ցոյց մեզ. ով գթած, ով բարեգութ, ով քաղցը Կոյս Մարիամ: — Աղաչեա վասն մեր սուրբ Աստուածածին. զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի. ամէն:

Օրհնեսցէ զմեզ սրբուհի Կոյսն Մարիամ, հանդերձ գթած որդւովն իւրով ամէն:

\* Առ աղօթքը հասարակ օր մը զրուցողը 100 օրուաններողութիւն կը վաստըկի. իսկ Ս. Աստուածածնի տօներուն օրերը լիակատար ներողութիւն: Պիոս Զ. 1786. Ապր. 5:

## ԼՅԻՐԵՏԵՆԵԱՆ ՎԻԹԱՆԻԸ

ի պատիւ ամենասուրբ կուսին\*:

### Տէր ողորմեաց.

Քրիստոս ողորմեաց. Տէր ողորմեաց.

Քրիստոս լուր մեզ. Քրիստոս անսա մեզ:

Հայր Երկնաւոր Աստուած. ողորմեաց մեզ.

Որդի Փրկիչ աշխարհի Աստուած. ող.

Հոգիդ սուրբ Աստուած. ողորմ.

Սուրբ Երրորդութիւն մի Աստուած. ող:

Սրբուհի Մարիամ. աղօթեա վասն մեր.

Սուրբ Աստուածածին. աղօթեավասն մեր.

Սուրբ Կոյս կուսանաց. աղ.

Մայր Քրիստոսի. աղ.

Մայր աստուածային շնորհաց. աղ.

Մայր մաքուր. աղ.

Մայր սուրբ. աղ.

Մայր անարատ. աղ.

Մայր անբիծ. աղ.

Մայր սիրելի. աղ.

Մայր սքանչելի. աղ.

\* Աս աղօթքը չերևուանդութեամբ ըստզն ամէն անգամնւն 200 օրւան ներողութիւն կը վաստըկի: Բննեդ. ձ.դ. 1728. Յունուար 12:

Մայր արարչին.	աղ.
Մայր փրկչին.	աղ.
Կոյս իմաստուն.	աղ.
Կոյս յարդոյ.	աղ.
Կոյս քարոզելի.	աղ.
Կոյս հզօր.	աղ.
Կոյս գթած.	աղ.
Կոյս հաւատարիմ.	աղ.
Հայելի արդարութեան.	աղ.
Ամոռ իմաստութեան.	աղ.
Պատճառ մերոյ խնդութեան.	աղ.
Անօթ հոգեւորական.	աղ.
Անօթ պատուելի.	աղ.
Անօթ ընտիր աստուածպաշտութեան.	աղ.
Վարդ խորհրդական.	աղ.
Աշտարակ դաւթեան.	աղ.
Աշտարակ փղոսկրեայ.	աղ.
Տուն ոսկեղէն.	աղ.
Տապանակ ուխտի.	աղ.
Դուռն երկնից.	աղ.
Աստղ առաւօտեան.	աղ.

Առ ողջութիւն հիւանդաց .	աղ .
Ապաստան մեղաւորաց .	աղ .
Միսիթարիչ վշտացելոց .	աղ .
Օգնական քրիստոնէից .	աղ .
Թագուհի հրեշտակաց .	աղ .
Թագուհի նահապետաց .	աղ .
Թագուհի մարդարէից .	աղ .
Թագուհի առաքելոց .	աղ .
Թագուհի մարտիրոսաց .	աղ .
Թագուհի խոստովանողաց .	աղ .
Թագուհի կուսանաց .	աղ .
Թագուհի ամենայն սրբոց .	աղ .
Թագուհի յղացեալ առանց արաւոյ մեղաց .	աղ .
Թագուհի ամենասուրբ վարդարանի .	աղ .
Գառն Աստուծոյ , որբառնաս զմեղս աշխարհի . խնայեա ի մեղ Տէր :	
Գառն Աստուծոյ , որբառնաս զմեղս աշխարհի . անսա մեղ Տէր :	
Գառն Աստուծոյ , որբառնաս զմեղս աշխարհի . ողորմեաց մեղ :	
Յիսուս լուր մեղ . Քրիստոս անսա մեղ :	

### Աղօթք:

Աստուած անձառելի ողորմութեան,  
որ ոչ միայն մարդ, այլեւ որդի մարդց  
լինել հաճեցար. եւ ծնանելով ի կուսէ՝  
զմայր ի յերկրի ստացար, որ զԱստուած  
ունէիր հայր ի յերկինս. տուր մեզ ա-  
ղաչեմք՝ զյիշատակ նորա յօժարու-  
թեամբ կատարել, զմայրութիւն նորա  
գերագոյն յարգանօք պատուել, գերա-  
զանցագոյն վսեմութեան նորա զմեզ  
խոնարհութեամբ հպատակել, որ զքեզ  
Հոգւով սրբով յղացաւ, զքեզ կու-  
սութեամբ ծնաւ եւ զքեզ ի յերկրի  
ինքեան հնազանդ կալաւ, զՏէրդ մեր  
Յիսուս Քրիստոս, որ կենդանի ես եւ  
թագաւորես ընդ Հօր եւ ընդ սրբոյ  
Հոգւոյն ի յաւիտեանս. ամեն:

Ընդ հովանեաւ պաշտպանութեան  
քս ապաւինիմք, սուրբ Աստուածածին,  
մի անտես առներ զաղաչանս մեր ի կա-  
րիս մեր. այլ փրկեա զմեզ յամենայն

վտանգից, փառաւորեալ եւ օրհնեալ  
միշտ կոյս\*:

Ողջոյն թագուհի երկնաւորաց, մայր  
թագաւորին հրեշտակաց, ով Մարիամ  
ծաղիկ կուսանաց, որպէս զվարդ եւ<sup>1</sup>  
զշուշան սփռեա զաղաչանս մեր առաջի  
Որդւոյ քոյ եւ Աստուծոյ մերոյ. ամեն:


Վասն սրբուհւոյ անարատ Մօր քց  
եւ կուսի, Տէր, ընկալ զաղաչանս մեր  
եւ կեցո զմեզ:

Սուրբ զԱստուածածինն եւ զամե-  
նայն սուրբս բարեխօս արասցուք առ-  
չայր ի յերկինս, զի կամեցեալ ողոր-  
մեսցի եւ դժացեալ կեցուսցէ զարա-  
րածս իւր: Ամենակալ տէր Աստուած  
մեր կեցո եւ ողորմեա:

Ընկալ Տէր զաղաչանս մեր, բարե-  
խօսութեամբ սուրբ Աստուածածին՝  
անարատ ծնողի միածնի Որդւոյ քոյ, եւ

\* Աս աղօթքն ալ Ողջ լեր թագուհին ներազու-  
թիւններն ունի:

աղաչանօք ամենայն սրբոց քոց։ Լուր  
մեղ, Տէր, եւ ողորմեա, ներեա, քաւեա  
եւ թող զմեղս մեր։ Արժանաւորեա  
գոհութեամբ փառաւորել զքեղ ընդ  
Որդւոյ եւ ընդ սրբոյ Հոգւոյդ։ այժմ։



**ՄԱՅՐ** սուրբ սքանչելի լուսոյն, որ  
զԱստուածն ամենայն յաւիտեանց յորու-  
վայնի քում կրեցեր, եւ ցնծութիւն  
աշխարհի ծնար զբանն Աստուած, աղա-  
չեմք։ — Մայր սուրբ բարեխօսեա։

Աղաչեա վասն մեր զառ ի քէն  
զմարմնացեալն Աստուած, որ խօնարհե-  
ցաւ ի հայրական ծոցոյ, էառ մարմին  
ըստ մարդկային բնութեանս՝ առնել խա-  
լաղութիւն յերկինս եւ յերկրի. աղաչ։

Աղաչեա։ Կերել մեղ՝ անտես առ-  
նել զյանցանս մեր, եւ տալ օգնակա-  
նութիւն ընդդիմակաց լինել հակառա-  
կամարտիցն ի պատերազմի. աղաչ։

Աղաչեա։ Զի լոեսցեն պատերազ-  
մունք, դադարեսցին յարձակմունք

թշնամեաց. տնկեսցի սէր եւ արդարութիւն ի յերկրի. աղաչ:

Աղաչեա: Աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բղխումն աղըերաց, զառատ պտղաբերութիւն բուսոց եւ տընկոց՝ առ ի զուարձալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց. աղաչ:

Աղաչեա: Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ՝ շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարդարէից՝ պահել անարատ մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ. աղաչ:

Աղաչեա վասն մեր Սրբուհի զմիածին քո զմլրդին: Եւ վասն հոգւոցն հանգուցելոց ընդունել յարքայութիւն երկնից եւ տալ մասն եւ բաժին ընդ սուրբս ամենայն. աղաչ:

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեղինդրեմք: Տուր մեզ, Տէր Աստուած մեր:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն

Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր,  
Ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա. Մայր սուրբ բարեխօսեա առ Տէր վասն մեր:

Անկանիմք առաջի քո, Աստուածածին, եւ աղաչեմք զանարատ զկոյսդ:  
Բարեխօսեա վասն անձանց մերոց, եւ  
աղաչեա զմիածին Որդիդ: Փրկել զմեզ  
ի փորձութենէ եւ յամենայն վտանգից  
մերոց:

---

Ե Բ Գ

Մարիամու Աստուածածնին:

Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ  
ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ  
իմով:

Այց արար ի վերայ խոնարհութեան

աղախնոյ իւրոյ . այսուհետեւ երանիցեն  
ինձ ամենայն ազգք :

Արար ընդ իս մեծամեծս Հզօրն . եւ  
սուրբ է անուն նորա :

Ողորմութիւն արար յաղգաց յաղգս  
երկիւղածաց իւրոց . եւ արար զօրու-  
թիւն բաղկաւ իւրով :

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց  
սրտից , եւ քակեաց զհզօրս յաթոռոց :

Զխոնարհս բարձրացոյց , զկարօտս  
ելից բարութեամբ . եւ զմեծատունս  
արձակեաց ունայնս :

Պաշտպանեաց Խորայէլի ծառայի  
իւրոյ . յիշելով զողորմութիւն իւր :

Որպէս խօսեցաւ առ հարս մեր , ընդ  
Աբրահամու եւ զաւակի նորա յաւի-  
տեան :

## ԱՊԱՇԽԱՐԱՒԻԹԵԱՆ

### ԵՕԹՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԸ

Ա. Սաղմոս (Զ.):

**Տէր,** մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի բարկութեամբ քով խրատեր զիս:

Ողորմեա ինձ, **Տէր,** զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խոռովեցան ոսկերք իմ:

Անձն իմ յցի խոռովեցաւ, եւ գու **Տէր,** մինչեւ յերբ:

Դարձ, **Տէր,** եւ փրկեա զանձն իմ. կեցո զիս, **Տէր,** ըստ ողորմութեան քում:

Զի ոչ ոք է որ ի մահու յիշելքեղ, կամ ի դժոխս խոստովան առնիցի առ քեղ:

Վաստակեցայ ես ի հեծութեան իմում. լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ. եւ արտասուօք իմովք զանկողինս իմ թացի:

Խռովեցաւ ի սրտմտութենէ ակն իմ.

եւ մաշեցայ ես ի վերայ ամենայն  
թշնամեաց իմոց:

Ի բաց կացէք յինէն ամենեքեան,  
ոք դործէք զանօրէնութիւն:

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ  
Տէր աղօթից իմոց. եւ Տէր զիսըն-  
դրուածս իմ ընկալաւ:

Ամաշեսցեն, եւ խոռվեսցին յոյժ  
ամենայն թշնամիք իմ. դարձցին յետս  
եւ ամաշեսցեն յոյժ վաղվաղակի եւ  
խոռվեսցին:

Բ. Սաղմոս (ԼԱ.):

Երանի որում թողութիւն եղեւ մե-  
ղաց, եւ ծածկեցան ամենայն յանցանիք  
նորա:

Երանի առն, որում ոչ համարի Տէր  
զմեղս նորա. եւ ոչ դոյ նենդութիւն  
ի բերան նորա:

Լոեցի ես, եւ մաշեցան ամենայն  
ոսկերք իմ, առ աղաղակել ինձ առ Տէր  
զօրհանապաղ ի տուե եւ ի գիշերի:

Ծանրացաւ ձեռն քո ի վերայ իմ.  
Դարձայ ի թշուառութիւն իմ, զի հա-  
րան յիս փուշք:

Զմեղս իմ ցուցի քեզ. Եւ զանօրէ-  
նութիւնս իմ ոչ ծածկեցի ի քէն:

Ասացի՝ թէ պատմեցից ինձէն զմեղս  
իմ. Եւ դու թողցես զամենայն ամբա-  
րըշտութիւնս մեղաց իմոց:

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ  
քեզ ամենայն սուրբք ի ժամ ընդու-  
նելի:

Բայց միայն ի ջուրցն հեղեղաց բաղ-  
մաց, որք առ նոսա ինչ ոչ մերձենան:

Դու ես ապաւէն իմ ի նեղութենէ  
յայսմանէ, որ շուրջ եղեւ զինեւ:

Ցնծութիւն իմ, փրկեա զիս յայն-  
ցանէ, ոյք պաշարեցին զիս:

Իմաստուն արարից զքեզ, եւ խելա-  
մուտ ի ճանապարհի յոր գնասցես, եւ  
հաստատեցից ի վերայ քոյ զաս իմ:

Մի լինիք որպէս զձիս եւ զջորիս, զի  
ոչ գոյ ի նոսա իմաստութիւն, ի սանձա

եւ ի դանդանաւանդս ճմլեսցես զկզակս  
նոցա, որք առ քեզ ինչ ոչ մերձեսցին:  
Բազում տանջանք եւ մեղաւորաց.  
բայց ոյք յուսան ի Տէր՝ ողորմութիւն  
տեառն շուրջ եղիցի զնոքօք:

Ուրախ լերուք եւ ցնծացէք արդարք  
ի Տէր. պարծեցարուք ամենեքեան, ոյք  
ուղիղ էք սրտիւք:

Գ. Սաղմոս (ԱԵ.):

**Տէր,** մի սրտմտութեամբ քով յան-  
գիմաներ զիս, եւ մի բարկութեամբ  
քով խրատեր զիս:

Զի նետք քո հարան յիս. եւ յիս  
հաստատեցաւ ձեռն քո:

Ոչ դո բժշկութիւն մարմնոյ իմոյ՝  
յերեսաց բարկութեան քո:

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց՝  
յերեսաց մեղաց իմոց:

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան  
զգլուխ իմ, որպէս զքեռն ծանր ծան-  
րացան ի վերայ իմ:

Նեխեցան եւ փոտեցան վերք իմ  
յերեսաց անզգամութեան իմոյ:

Տառապեցայ եւ խոնարհ եղէ մին-  
չեւ յոյժ. զօրհանապաղ տրտում գը-  
նայի, զի անձն իմ լի եղեւ չարչարանօք,  
եւ ոչ դոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ:

Չարչարեցայ եւ խոնարհ եղէ մին-  
չեւ յոյժ. մռնչէի առ հեծութեան  
սրտի իմոյ:

Տէր, առաջի քո է ամենայն ցանկու-  
թիւն իմ, եւ հեծութիւն իմ ի քէն  
ոչ ծածկեցաւ:

Սիրտ իմ խռովեցաւ յիս, եւ եթող  
զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց, եւ  
այս ոչ եղեւ ընդ իս:

Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ  
առաջի իմ մերձեցան եւ կացին. եւ  
մերձաւորք իմ հեռի եղեն յինէն:

Բռնադատէին զիս, եւ խնդրէին  
զանձն իմ, ոյք խորհէին չար ի վերայ իմ.  
Խորհեցան զանօրէնութիւն. եւ զնեն-  
գութիւն զօրհանապաղ խորհեցան:

Այլ ես որպէս խռով՝ որ ոչ լսէ. եւ  
որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր:

Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ, եւ  
ոչ գոն խօսք ի բերան նորա:

Ես ի քեզ, Տէր, յուսացայ, եւ գու  
լուիցես ինձ, Տէր Աստուած իմ:

Ասացի, թէ մի ուրախ եղիցին յիս  
թշնամիք իմ. ի սասանել ոտից իմոց,  
ի վերայ իմ մեծամեծս խօսեցան:

Ես ի տանջանս պատրաստ եմ, եւ  
ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Զանօրէնութիւնս իմ պատմեցից, եւ  
հոգացայց վասն մեղաց իմոց:

Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են,  
եւ զօրացեալք են քան զիս. եւ բազումք  
են ոյք ատեն զիս ի տարապարտուց:

Ոյք հատուցին ինձ չար փոխանակ  
բարւոյ, չարախօսէին զինէն, զի ես եր-  
թայի զհետ արդարութեան:

Մի թողուր զիս, Տէր Աստուած իմ,  
եւ մի ի բացեայ առնիր յինէն. հայ-  
եաց յօգնել ինձ Տէր փրկութեան իմոց:

ԴԱՍԱՂՄՈՒ (Ծ.):

Աղորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի  
ողորմութեան քում. եւ ըստ բազում  
դժութեան քում քաւեա զանօրէնու-  
թիւնս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ  
իմմէ, եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս:  
Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գի-  
տեմ, եւ մեղք իմ առաջի իմ են յա-  
մենայն ժամ:

Քեզ միայն մեղայ, Տէր, եւ զշար ա-  
ռաջի քո արարի:

Որպէս արդար եղիցես ի բանս քո,  
եւ յաղթեսցես ի դատելն քո:

Անօրէնութեամբ յղացայ. եւ ի մեղս  
ծնաւ զիս մայր իմ:

Դու, Տէր, զՃշմարտութիւն սիրե-  
ցեր. զանյայտս եւ զՃածկեալս իմաստու-  
թեամբ քով յայտնեցեր ինձ:

Ցողեա յիս մշտկաւ, եւ սուրբ եղէց.  
Լուա, եւ քան զձիւն սպիտակ եղէց:

Ասելի արա ինձ, Տէր, զցնծութիւն եւ  
զուրախութիւն. Եւ ցնծասցեն ոսկերք  
իմ տառապեալք:

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց,  
եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւ-  
եա յինէն:

Զսիրտ սուրբ հաստեա յիս Աս-  
տուած, եւ զհոգի ուղիղ նորոգեա ի  
փորի իմում:

Մի՛ ընկենուր զիս, Տէր, յերեսաց  
քոց. եւ զհոգի քո սուրբ մի հաներ  
յինէն:

Տուր ինձ զցնծութիւն փրկութեան,  
եւ հոգւով պետութեան քո հաստա-  
տեա զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս  
քո. եւ ամպարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա զիս յարենէ Աստուած, Աս-  
տուած փրկութեան իմոյ. եւ ցնծասցէ  
լեզու իմ յարդարութեան քում:

Տէր, եթէ զըրթունս իմ բանաս-  
բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս  
մատուցանէաք. բայց դու ընդ ողջա-  
կէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ, հոգի խոնարհ.  
Դսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աս-  
տուած ոչ արհամարհէ:

Բարի արա, Տէր, կամօք քովք Սիով-  
նի. եւ շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատա-  
րագս արդարութեան, ուխտից պատա-  
րագս հանցեն ի սեղան քո զուարակս:

Ե. Սաղմոս (ՃԱ.):

**Տէր,** լուր աղօթից իմոց, եւ աղա-  
ղակ իմ առ քեզ եկեսցէ. մի՛ դարձու-  
ցաներ զերեսս քո յինէն:

Յաւուր նեղութեան իմոյ խոնար-  
հեցո առ իս զունկն քո. յորում աւ-  
ուր կարդամ առ քեզ, վաղվաղակի  
լուր ինձ:

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ,  
եւ ոսկերք իմ որպէս խոխւ չորացան:

Հարայ ես որպէս խոտ, եւ ցամաքեցաւ սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ:

Կցեցաւ ոսկը իմ ի մարմին իմ. նմանեցայ ես հաւալսան անապատի:

Եղէ ես որպէս բու աւերակի, տքնեցայ, եւ եղէ ես որպէս Ճնճղուկ միայն ի տանիս:

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապաղ, եւ գովիչք իմ ինեւ երդնուին:

Զմոխիր որպէս զհաց կերայ, եւ զըմպելին իմ արտասուօք խառնեցի:

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քոյ. զի դու բարձրացուցեր եւ խոնարհեցուցեր զիս:

Աւուրք իմ որպէս հովանի անցին. եւ ես որպէս խոտ ցամաքեցայ:

Դու, Տէր, յաւիտեան կաս, եւ յիշատակ քո յազգէ մինչեւ յազգ:

Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիովնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ:

Հաճեցան ծառայք քո լնդ քարինս նորա, եւ ի հողս նորա գթասցին:

Երկիցեն հեթանոսք յանուանէ քումէ. եւ ամենայն թագաւորք երկրի ի փառաց քոց:

Ծինէ Տէր զԱխովն, եւ երեւեսցի փառօք իւրովք ի նմա:

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, եւ ոչ արհամարհեաց զինդրուածս նոցա:

Դրեսցի այս յազդ յայլ ժողովուրդ որ ստացեալ է, օրհնեսցէ զՏէր:

Հայեցաւ նա իբարձանց իսրբութենէ իւրմէ. Տէր յերկնից յերկիր հայեցաւ:

Լսել զչեծութիւն կապելոց. եւ արձակել զորդիս մահապարտաց:

Պատմել ի Սիովն զանուն Տեառն, եւ զօրհնութիւնս նորա յԵրուսաղէմ:

Ժողովել ժողովրդոց ի միասին, եւ թագաւորաց ծառայել Տեառն:

Պատասխանի ետ նմա ի ճանապարհի զօրութեան իւրոյ. զնուազութիւն աւուրց իմոց ասա ինձ, եւ մի հաներ

զիս ի կես աւուրց իմոց, զի յաղեւ յաղեւ են ամք քո:

Ի սկզբանէ, Տէր, զհիմունս երկրի հաստատեցեր. եւ դործք ձեռաց քոց երկինք են:

‘Նոքա անցանեն, եւ դու կաս եւ մնաս յաւիտեան:

Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին. եւ որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա, եւ փոխեսցին:

Բայց դու նոյն ես, եւ ամք քո ոչ անցանեն. որդիք ծառայից քոց բնակեսցին ի նմա, եւ զաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի:

Զ. Սաղմոս (Ճիթ.)<sup>\*</sup>:

Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր. Տէր, լուր ձայնի իմում:

\* Աս սաղմոսն, եթէ արեւուն մոնելէն ետեւ ծունկ ինկած ըստուի եւ վրան այս պզոթիկ ազօթքն աւելցուի, ոՉհանգիստ յաւիտենական պարզեւեա նոցա Տէր. եւ ըստ մշտիչնաւուր ծառեսցի նոցան. ամէն անգամուն 100 օրւան ներազութիւն կայ: — Խակ ով որ խոստավանեւ լով առը հազարդութեան մերձենաց, եւ եկեղեցւոյ գիտաւորութեան ազօթէ, տարւոյ մէջ հեղ մը, լիակատար ներազութիւն կը վաստըկի:

Եղիցին ականջք քո, ի լսել զձայն  
աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիւնս քննես, Տէր.  
Տէր, ո՛ կարէ կալ առաջի քո, զի ի  
քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի, Տէր.  
Համբեր անձն իմ բանի քում. յուսա-  
ցաւ անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչեւ յերե-  
կց, ի պահէ առաւօտու յուսացաւ  
իսրայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում.  
Եւ ի նմանէ է փրկութիւն, եւ նա  
փրկեաց զիսրայէլ յամենայն նեղու-  
թեանց նորա:

Ե. Ապօմնս (ՃԽԲ.):

Տէր, լուր աղօթից իմոց, ունկն դիր  
խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ  
քով:

Լուր ինձ արդարութեամբ քով, եւ  
մի մտաներ ի դատաստան ընդ ծառայի

քում, զի ոչ արդարանայ առաջի քո  
ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ. խո-  
նարհ արար յերկիր զկեանս իմ. եւ  
նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ  
յաւիտենից:

Չանձրացաւ յիս հոգի իմ, եւ սիրո  
իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խոր-  
հեցայ յամենայն գործս քո. յարարածս  
ձեռաց քոց խորհեցայ, եւ համբարձի  
առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է  
առ քեզ. վաղվաղակի լուր ինձ, Տէր,  
զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի գարձուցաներ զերեսս քո յի-  
նէն. նմանիցիմ այնոցիկ, ոյք իջանեն ի  
գուբ:

Լսելի արա ինձ յառաւօտու զողըր-  
մութիւնս քո, զի ես ի քեզ, Տէր,  
յուսացայ:

Ցցց ինձ ճանապարհ, յոր գնացից.

զի առ քեզ, Տէր, համբարձի զանձնիմ:

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց, Տէր,  
զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՞ ինձ առնել զկամն քո. զի դու  
ես Աստուած իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ  
յերկիր ուղիղ:

Վասն անուան քո, Տէր, կեցուսցես  
զիս. արդարութեամբ քով հանցես ի  
նեղութենէ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեսցես  
զթշնամիս իմ. եւ կորուսցես զամե-  
նայն նեղիչս անձին իմց, զի ես ծառայ  
քո եմ:

---

## Ա Դ Օ Բ Ք

Մանասէի թագաւորին:

Տէր ամենակալ, Աստուած Աբրա-  
համու, Խսահակայ, Յակոբայ եւ զաւ-  
ակի նոցա արդարոց. ամենակալ Տէր,  
թով զմեղս իմ:

Որ արարեր զերկինս եւ զերկեր  
եւ զամենայն զարդ նոցա, ամենակալ  
Տէր, թող զմեղս իմ:

Որ կապեցեր զծով բանիւ հրա-  
մանի քռ. փակեցեր զխորս, կնքեցեր  
ահաւոր եւ փառաւորեալ անուամբ  
քով սրբով. ամենա:

Որ ամենայն ինչ սարսի եւ դողայ  
յերեսաց ահի զօրութեան քռ. ամենա:

Անբաւ է մեծվայելսութիւն փա-  
ռաց սրբութեան քռ, եւ սաստիկ է  
բարկութիւն սպառնալեաց քոց ի վե-  
րայ մեղաւորաց. անչափ եւ անքնին են  
ողորմութիւնք աւետեաց քոց. ամենա:

Դու Տէր բարձրեալ, գթած, երկայ-  
նամիտ, բազումողորմ, եւ զղջանաս ի  
վերայ չարեաց մարդկան. ամենա:

Դու Աստուած, ոչ եղիր ապաշխա-  
րութիւն վասն արդարոցն Աբրահամու,  
իսահակայ եւ Յակոբայ, որք ոչ մեղան  
քեղ. ամենա:

Այլ եղիր ապաշխարութիւն վասն

իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան  
զաւազ ծովու, եւ բաղմացան անօրէ-  
նութիւնք իմ. ամենա:

Չեմ արժանի հայել եւ տեսանել  
զըարձրութիւնս երկնից ի բաղմութենէ  
անօրէնութեան իմց. ամենա:

Այրացեալ եմ ես ի բռնութենէ  
կապանաց երկաթից, եւ ոչ գոյ ինձ  
հանգիստ. ամենա:

Բարկացուցի զսրտմտութիւն, եւ  
զշար առաջի քո արարի. կանգնեցի  
պատկեր եւ բաղմացուցի զցասումն.  
ամենա:

Եւ արդ, Տէր, խոնարհեցուցանեմ  
զծունր սրտի իմց, եւ հայցեմ ի քաղ-  
ցրութենէ քումէ. ամենա:

Մեղայ, Տէր, մեղայ. եւ զանօրէնու-  
թիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենա:

Աղաչեմ եւ խնդրեմ ի քէն, թող  
ինձ, Տէր, թող ինձ. եւ մի կորուսա-  
ներ զիս ըստ անօրէնութեան իմց. ա-  
մենա:

Մի յաւիտեան բարկանար ինձ, Տէր.  
Եւ մի յիշեր զչարիսն իմ, եւ մի պար-  
տաւորեր զիս ընդ իջեալս ի ներքոց  
երկրի չարեօք. ամենա:

Զի դու, Աստուած, Աստուած ա-  
պաշխարողաց ես, եւ յիս ցոյց զբարե-  
րարութիւնդ քո որ անարժան եմ. ա-  
մենա:

Կեցուսցես զիս ըստ բաղում ողոր-  
մութեան քում. եւ ես օրհնեցից զքեզ  
զամենայն աւուրս կենաց իմոց. ամենա:

Զքեզ, Տէր, օրհնեն ամենայն զուար-  
թունք երկնից. եւ քո են փառք յաւ-  
իտեանս. ամէն:

Փառք Հօր եւ Որդւոյ: Այժմ եւ  
միշտ:

---

Եղաչեմ եւ խնդրեմ ի քէն, Տէր,  
թող ինձ զմեղս իմ:

Բաղումողորմ Տէր, ողորմեաց ինձ:

Աստուած, քաւեա զիս զմեղաւորս:  
Արարիչ իմ եւ յոյս Աստուած,

Գթա յիս ի մեղուցեալ ծառայս. եւ  
ողորմեա ինձ բազմամեղիս:

Ամենօրհնեալ Սրբուհի եւ միշտ  
կոյս Աստուածածին Մարիամ, բարեխօ-  
սեա առ Տէր վասն իմ մեղաւորիս:

Ամենայն սուրբք Աստուծոյ, բարե-  
խօսեցէք առ Հայր յերկինս վասն մեր  
մեղաւորացս:

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ,  
ընկալ զաղաչանս մեր, զի ի քեզ են  
ապաւինեալ անձինք մեր:

Յաղթող զօրութեամբ սուրբ եւ  
կենդանարար եւ պատուական խաչիւ  
քով, Տէր, պահպանեա զմեզ:

Առաքեա, Տէր, զհրեշտակ խաղա-  
ղութեան քո. որ եկեալ պահեսցէ  
զմեզ անխոռվս ի տուե եւ ի գիշերի:

Եւ մարդասիրութեամբ քո յիշեա  
զմեզ, Տէր, յիշեա զմեզ, յորժամ-  
դաս արքայութեամբ քով, եւ ողոր-  
մեաց մեզ:

## Ա. ՆԵՐՍԻ ՍԻ ՑՆՈՐՀԵԼԻՈՑ

### Ա Ղ Օ Թ Ք

Առ ամենասուրբ Երրորդութիւն։

Հաւատով խոստովանիմ եւ Երկիր  
պագանեմ քեզ, Հայր եւ Որդի եւ  
սուրբ Հոգի, անեղ եւ անմահ բնու-  
թիւն, արարիչ հրեշտակաց եւ մարդ-  
կան եւ ամենայն եղելոց. եւ ողորմեա  
քո արարածոցս։

Հաւատով խոստովանիմ եւ Երկիր  
պագանեմ քեզ, անբաժանելի լոյս, մի-  
ասնական սուրբ Երրորդութիւն եւ մի  
աստուածութիւն, արարիչ լուսոյ եւ  
հալածիչ խաւարի. հալածեա ի հոգւց  
իմմէ զիսաւար մեղաց եւ անգիտութեան.  
եւ լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս  
յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս եւ  
ընդունել ի քէն զիսնդրուածս իմ. եւ  
ողորմեա ինձ բազմամեղիս։

Հայր Երկնաւոր՝ Աստուած Ճշմարիտ,

որ առաքեցեր զԱրդիդ քո սիրելի ի  
խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յեր-  
կինս եւ առաջի քո. ընկալ զիս որպէս  
զանառակ որդին. եւ զգեցո ինձ ըզ-  
պատմուճանն զառաջին, զոր մերկացայ  
մեղօք. եւ ողորմեա քո արարածոցս եւ  
ինձ բաղմամեղիս:

Որդի Աստուծոյ՝ Աստուած Ճշմարիտ,  
որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, եւ  
առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ  
վասն մերոյ փրկութեան, խաչեցար եւ  
թաղեցար եւ յարեար ի մեռելոց, եւ  
համբարձար առ Հայր. մեղայ յերկինս  
եւ առաջի քո. յիշեա զիս որպէս զաւ-  
ազակն յորժամ գաս արքայութեամբ  
քով. եւ ողորմեա:

Հոդի Աստուծոյ՝ Աստուած Ճշմարիտ,  
որ իջեր ի Յորդանան եւ ի վերնա-  
տունն, եւ լուսաւորեցեր զիս մկրտու-  
թեամբ սուրբ աւազանին. մեղայ յեր-  
կինս եւ առաջի քո. մաքրեա զիս վերըս-  
տին աստուածային հրով քով, որպէս

Հրեղէն լեզուօք զառաքեալսն. եւ ո-  
ղորմեա:

Անեղ բնութիւն, մեղայ քեղ մտօք  
իմովք, հոգւով եւ մարմնով իմով. մի  
յիշեր զմեղս իմ զառաջինս վասն ա-  
նուանդ քում սրբոյ. եւ ողորմեա:

Տեսող ամենայնի, մեղայ քեղ խոր-  
հըրդով, բանիւ եւ գործով. ջնջեա  
զձեռագիր յանցանաց իմոց, եւ գրեա  
զանուն իմ ի գպրութեան կենաց. եւ  
ողորմեա:

Քննող գաղտնեաց, մեղայ քեղ կա-  
մաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ ան-  
գիտութեամբ. Թողութիւն շնորհեա  
մեղաւորիս, զի ի ծննդենէ աւազանին  
մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի  
աստուածութեան քո՝ զգայարանօք ի-  
մովք եւ ամենայն անդամօք մարմնոյս.  
եւ ողորմեա:

Ամենախնամ Տէր, գիր պահապան  
աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ եւս  
հայել յարատ, եւ ականջաց իմոյ՝ ոչ

ախորժել լսել զբանս չարութեան, եւ  
բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն,  
եւ սրտի իմոյ՝ ոչ խորհել զշարութիւն,  
եւ ձեռաց իմոց՝ ոչ դործել զանիրաւ-  
ութիւն, եւ ոտից իմոց՝ ոչ դնալ ի  
ճանապարհս անօրէնութեան. այլ ուղ-  
ղեա զշարժումն սոցա լինել ըստ պա-  
տուիրանաց քոց յամենայնի. եւ ողոր-  
մեա:

Հուր կենդանի քրիստոս, զհուր սի-  
՞ս քո՝ զոր արկեր յերկիր, բորբոքեա  
յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ  
իմոյ, եւ սրբեսցէ զիսիղձ մտաց իմոց,  
եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, եւ  
վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի  
իմում. եւ ողորմեա:

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ  
զիմաստութիւն զբարիս խորհել եւ խօ-  
սել եւ դործել առաջի քո յամենայն  
ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի  
դործոց փրկեա զիս. եւ ողորմեա:

Կամեցող բարեաց Տէր կամարար,

մի թողուր զիս ի կամս անձին իմց  
գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել  
միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. եւ  
ողորմեա:

Արքայ Երկնաւոր, տուր ինձ զար-  
քայութիւն քո՛ զոր խոստացար սիրե-  
լեաց քոց, եւ զօրացո զսիրտ իմ ատել  
զմեզս եւ սիրել զքեզ միայն եւ առ-  
նել զկամս քո. եւ ողորմեա:

Խնամող արարածոց, պահեա նշա-  
նաւ խաչի քոյ զհոգի եւ զմարմին իմ  
ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց  
դիւաց եւ ի մարդոց անիրաւաց, եւ  
յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ.  
եւ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ  
քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուե  
եւ ի գիշերի, ի նստել ի տան եւ ի  
գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի  
յառնել, զի մի երբեք սասանեցայց. եւ  
ողորմեա:

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո

Եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմՀետէ մինչեւ յաւիտեան. եւ ողորմեա:

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն, եւ բեւեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ գեհենին եւ զսէր արքայութանն, զի զշջացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմեա:

Աղբիւր անմահութեան, աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. եւ ողորմեա:

Պարգեւիչ ողորմութեան, պարգեւեա ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով, եւ սուրբ մարմնոյ եւ արեան քոյ հաղորդութեամբ դալ առ քեզ. եւ ողորմեա:

բարելրար Տէր, Հրեշտակի բարւոյ  
յանձն արասցես զիս քաղցրութեամբ  
աւանդել զհոգի իմ, եւ անխռով ան-  
ցուցանել ընդ չարութիւն այսոցն, որք  
են ի ներքոյ երկնից. եւ ողորմեա:


Այս ճշմարիտ Քրիստոս, արժանաւ-  
որեա զհոգի իմ ուրախութեամբ տե-  
սանել զլոյս փառաց քոց ի կոչման  
աւուրն. եւ հանգչել լուսով բարեաց  
յօթեվանս արդարոց մինչեւ յօր մեծի  
գալստեան քո. եւ ողորմեա:

Դատաւոր արդար, յորժամ գաս  
փառօք Հօր դատել զկենդանիս եւ  
զմեռեալս, մի մտաներ ի դատաստան  
ընդ ծառայի քում, այլ փրկեա զիս ի  
յաւիտենական Հրոյն, եւ լսելի արա  
ինձ զերանաւէտ կոչումն արդարոց  
յերկնից արքայութիւնդ. եւ ողորմեա:

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն  
հաւատացելոց ի քեզ, իմոց եւ օտարաց,  
ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց  
եւ մեռելոց. շնորհեա եւ թշնամեաց

իմաց եւ ատելեաց՝ զթողութիւն որ առ  
իս յանցանաց, եւ դարձո զնոսա ի չա-  
րեացն զոր ունին վասն իմ, զի ողոր-  
մութեան քում արժանի եղիցին. եւ  
ողորմեա:

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղա-  
չանս ծառայիս քոյ, եւ կատարեա ի  
բարի զիսնդրուածս իմ, բարեխօսու-  
թեամբ սրբուհւոյ Աստուածածնին, եւ  
Յովչաննու մլրտչին, եւ սրբոյն Ստե-  
փանոսի նախավկային, եւ սրբոյն Գրի-  
գորի մերոյ լուսաւորչին, եւ սրբոց  
առաքելոց եւ մարդարեից եւ վարդա-  
պետաց եւ մարտիրոսաց եւ սրբոց հայ-  
րապետաց եւ ճգնաւորաց եւ կուսանաց  
եւ ամենայն սրբոց քոց երկնաւորաց եւ  
երկրաւորաց: Եւ քեզ փառք եւ եր-  
կրսպագութիւն անբաժանելի սուրբ  
Նըրորդութեանդ յաւիտեանս յաւի-  
տենից. ամէն:



## ԱՎ ՕԲ Ք

Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին,  
երբ մէկը սատանային որովայթին մէջ ին-  
կած է:

**Ո**րհնեալ է անբաւ մարդասիրու-  
թիւն քո, Տէր իմ Յիսուս Քրիստոս.  
ընդէր Հքանես զիս. Եթէ վասն մեղաց,  
դու միայն ես առանց մեղաց. Եւ անուն  
քո զանոխակալութիւն եւ զմարդասի-  
րութիւն ցուցանէ: Գթա յիս, վասն  
զի դու միայն ես մարդասէր: Ապրեցո  
զիս զանկեալս ի մեղս. վասն զի դու  
միայն ես առանց մեղաց: Հան զիս ի  
տղմոյ անօրէնութեան իմոյ, զի մի  
ընկղմեցայց յաւիտեան: Փրկեա զիս ի  
թշնամոյ իմոյ, քանզի ահա իբրեւ  
զառիւծ մռնչէ կամելով կլանել զիս:  
Արդ Տէր իմ, փայլատակեա զփայլա-  
տակունս քո եւ կործանեա զզօրութիւն  
նորա. Երկիցէ եւ խաւարեսցի յերեսաց  
քոց, քանզի տկար է եւ ոչ ունի զօ-

ըութիւն կալ առաջի քո եւ ոչ առաջի  
սիրողացն զքեզ: Տեսանէ զզօրութիւն  
նշանի խաչի քոյ եւ զարհուրի, եւ ա-  
մաչելով ի բաց հալածի յայնցանէ՝ որ  
կարդան առ քեզ: Այժմ Տէր, կեցո  
զիս եւ ապրեցո, վասն զի ի քեզ ա-  
պաւինեցայ. հան ի նեղութենէ զանձն  
իմ, զի մի իսպառ կորուսցէ զիս նեն-  
գաւորն՝ որ մարտնչի ընդ իս ծածուկ  
հնարիւք: Որ խորհրդոց ես տէր եւ  
քննես զսիրտս եւ զերիկամունս, սրբեա  
զսիրտ իմ եւ զխորհուրդս ի զազեր  
եւ ի պիղծ խորհրդոց, զի մի իսպառ  
կորեայց զյաւիտենական կորուստն: Որ  
կարողդ ես յամենայնի, ողորմեա ինձ,  
Աստուած իմ. տուր զշնորհս արտա-  
սուաց մեղուցեալ ոգւոյս, որպէս զի  
լուացից զբազմութիւն մեղաց, զի ա-  
պրեցայց ի ձեռաց անողորմ հրեշտա-  
կաց՝ որք արկանեն զամբարիշտն ի  
հուր գեհենին: Երանի թէ լայի հանա-  
պաղ, աղաչելով զքեզ Աստուած, զի

մի անարժան գտայց ի ժամուն՝ որ գալոց  
 ես։ Մի լուայց զահաւոր ձայնն եթէ  
 Երթ ի բաց, մշակդ անօրէնութեան,  
 ոչ գիտեմ ուստի ես։ Աստուած բար-  
 ձրեալ՝ միայն առանց մեղաց, շնորհեա-  
 ինձ մեղաւորիս յաւուր յայնմիկ զբա-  
 զում գթութիւն քո. զի մի յայտնես-  
 ցին ծածուկ ամբարշտութիւնք իմ ա-  
 ռաջի տեսանողաց հրեշտակաց եւ հրեշ-  
 տակապետաց, մարդարէից, առաքելոց  
 եւ արդարոց սրբոց։ Ապրեցո զիս զամ-  
 բարիշտս շնորհօք ողորմութեան քոյ։  
 Ընկալ զիս ի դրախտն փափկութեան  
 ընդ կատարեալ արդարսն. ընկալ զա-  
 զօթս մեղուցեալ ծառայիս քոյ բարե-  
 խօսութեամբ սրբոցն քոց՝ որք հաճոյ  
 եղեն քեզ. Յիսուս Քրիստոս Տէր մեր,  
 որ ես օրհնեալ ընդ Հօր եւ սուրբ Հո-  
 գոսոյդ յաւիտեանս յաւիտենից. ամեն։

---

## Ա Գ Օ Բ Ք

Ա. Գրիգորի Նարեկացւոյ առ Ս. Աստուածածին:

Եւ արդ՝ ի վերայ այսքանեաց յուսահատութեանց եւ ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց, աստուածային բարկութեանց, տագնապեալ ոգւով թախծութեան իսպառ, աղաչեմ զքեղ սուրբ Աստուածածին, հրեշտակ ի մարդկանէ. մարմնատեսիլ քերովքէ. երկնաւոր արքայուհի. անխառն իբրեւ զօդ. մաքուր որպէս լոյս. անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան. գերազանց քան զբնակութիւն անկոխելին սրբութեանց. երանաւոր խոստմանն տեղի. Եդեմ շնչական, ծառ կենացն անմահից՝ բոցեղէն սրովն պարունակեալ: Ի բարձրեալն չօրէ զօրացեալ եւ հովանացեալ. հանգըստեամբ չոգւոյն հանդերձեալ եւ մա-

քրագործեալ. բնակութեամբ Որդւոյն  
յարդարեալ եւ տաղաւարեալ։ Միա-  
ծինն Հօր, եւ քեզ անդրանիկ. որդի  
քո ծնընդեամբ, եւ տէր արարչու-  
թեամբ։ Ընդ անաղտ մաքրութեանդ՝  
եւ անբիծ բարի. ընդ անարատ սրբու-  
թեանդ՝ եւ խնամակալ բարեխօս։ Ըն-  
կալ զմաղթանս այսր աղերսանաց քում  
դաւանողիս, եւ մատո՛ ընծայեա ընդ  
սմին խառնեալ զբանն իմ'նախնի՝ մեծիդ  
ներբողի՝ ի քսդ պաղատանս։ Հիւսեա  
միացո զմեղուցելոյս դառն հեծութիւն  
ընդ քումդ երջանիկ եւ խնկաւորեալ  
հայցուածոց, տունկդ կենաց պտղոյն  
օրհնութեան։ Զի ի քէն միշտ օգնեալ  
եւ բարեգործեալ. եւ ի մաքրական քո  
ծնելութիւնդ ապաւինեալ եւ լուսաւո-  
րեալ՝ կեցից Քրիստոսի Որդւոյն քս  
եւ Տեառն։

Օժանդակեա թեւոցդ աղօթիւք,  
խոստովանեալ մայրդ կենդանեաց, եւ  
յելիցնիմ յերկրէս հովտէ, առանց լլկա-

նաց հետեւել ի կեանս օմեւանացդ  
պատրաստութեան. զի թեթեւասցի  
կատարածն իմ՝ ինձ ծանրացելցյս անօ-  
րէնութեամբ։ Արասցես տօն ինձ բեր-  
կըռութեան՝ զօրն իմ տագնապի, ողջա-  
ցուցիչ երկանցն Եւայի։ Բարեխոսեա,  
խնդրեա, աղաչեա. զի ըստ անձառելի  
մաքրութեանդ՝ եւ ահա զբանիդ հաւա-  
տամ զընդունելութիւն։ Արտասուօք  
օգնեա վտանգեցելցյս, գովեալդ ի կա-  
նայս. ծունդ խոնարհեցո առ իմ հաշ-  
տութիւն, ծնողդ Աստուծոյ. ընդ իմում  
թշուառիս հոգա, խորան բարձրելոյն.  
ձեռն տուր անկելցյս, տաճար երկնային։  
Փառաւորեա զԱրդիդ քո ի քեզ՝ աս-  
տուածօրէն ինձ հրաշագործել քաւու-  
թիւն եւ ողորմութիւն, աղախին Աս-  
տուծոյ եւ մայր. բարձրասցի պատիւ  
քո ինեւ, եւ ցուցցի փրկութիւն իմ  
քեւ։ Եթէ զիս գտցես, տիրամայր. թէ  
ինձ ողորմեսցիս, սրբուհի. թէ զկորու-  
սեալս շահեսցիս, անարատ. թէ զհար-

թուցեալս յանձանձեսցես, երջանիկ.  
թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես,  
բարեշնորհ. թէ յուսահատելոյս ինձ  
միջնորդեսցես, միշտ սուրբ կոյս. թէ  
զմերժեալս ընտանեցուսցես, մեծարեալդ  
յԱստուծոյ. թէ յիս ցուցցես զդթա-  
ծութիւն, լուծիչդ անիծից. թէ զծը-  
փեալս հաստատեսցես, հանդիստ. թէ  
ի խոօվութեանցս յուզմանց փոխեսցես  
զիս, խաղաղարար. թէ վօխպելոյս ինձ  
հնարաւորեսցես, գովեալ. թէ վասն  
իմ մացես ի հանդէս, մահու նահան-  
ջիչ. թէ զդառնութիւնս իմ անուշես-  
ցես, քաղցրութիւն. թէ զբաժանմանն  
իմ խտրոց քակտեսցես, հաշտութիւն.  
թէ զանմաքրութիւնս իմ բարձցես,  
եղծման ընդոտնիչ. թէ զմատնեալս  
մահու փրկեսցես, կենդանի լոյս. թէ  
զլալեացս ձայն հատցես, բերկրութիւն.  
թէ զխորտակեալս կաղդուրեսցես, դեղ  
կենաց. թէ ի կործանեալս յիս ակնար-  
կեսցես, հոգելից. թէ ողորմութեամբ

ինձ պատահեսցես, կտակ նուիրեալ.  
օրհնեալդ միայն ի շրթունս անբիծս  
լեզուաց երջանկաց։ Ահա կաթիլ մի  
կաթին քումդ կուսութեան յանձն իմ  
անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ։ մայրդ  
բարձրելոյ Տեառն Յիսուսի՝ արարչին  
երկնի եւ բնաւին երկրի։ Զոր անձա-  
ռապէս ծնար բովանդակ մարմնովն եւ  
համայն աստուածութեամբն. որ փա-  
ռաւորեալն է ընդ Հօր եւ Հոգւոյն  
սրբոյ՝ Էութեամբ եւ անքննութեամբ  
մերոյին բնութեամբ միացելով՝ ամե-  
նայն եւ յամենայնում, մի յերրորդու-  
թենէն. Նմա փառք յաւիտենից յաւի-  
տեանս, ամէն։

ԽԱՍՏԱՎԵՌԻԹԵԸՆ

## Ա Ղ Օ Թ Ք Ն Ե Ր

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Յաւիտենական երանութեան հասնելու<sup>1</sup>  
անմեղութենէ ու ապաշխարութենէ ու բիշ  
ճամքայ չկայ։ Առաջինը կորսնցընողը՝ եր-  
կրորդին պէտք է որ դիմէ։

Ապաշխարութեան խորհուրդը՝ մահացու-  
մեղաց մէջ ինկողին հարկաւոր է փրկուելու  
համար։ Այսպիսի ապաշխարութեամբ մա-  
քրուեցաւ Գաւիթթ ու Նինուեացիք։ Առ այս  
կը յորդորէին ամէն ատեն Մարգարէք զիւ-  
րայէլացիները։ Ասիկայ քարոզեցին Ա. Յովհ.  
Մկրտիչ ու Տէրն մեր։

Ա. Հարք ապաշխարութեան խորհուրդը  
նաւարեկութենէ ազատող տախտակի մը կը  
նմանցընեն։ Ալասն զի ինչպէս որ նաւարե-  
կութիւն կրողը կը կորսուի, եթէ տախտակի  
կտոր մը չի գտներ, ասանկ ալ անիկաց որ

մլրտութեամբ կամ խոստովանութեամբ ստացած արդարութիւնը կորսնցուց՝ զանիկայ նորէն վաստրկելու համար, ուրիշ միջոց չունի, եթէ ոչ՝ այս ապաշխարութեան տախտակին Դիմել, զոր Աստուած մեր աղատութեան համար դրած է:

Ապաշխարութեան խորհրդոյն հարկաւոր են՝ Քննութիւն խղճի մոտց, Զղջում, Առաջադրութիւն, Խոստովանութիւն եւ Ապաշխարութիւն:

Խոստովանելու երթալէն յառաջ հարկ է Խղճերնիս քննել: Ասիկայ կ'ըլլայ, երբ Հոգւոյն սրբոյ լուսաւորութիւնը խնդրելէն ետեւ՝ լաւ մը կը մտածենք թէ վերջին խոստովանանքէն ետքը՝ ինչ մեղքեր ըրեր ենք մտօք, խօսքով ու գործքով. Աստուծոյ տասնաբանեայ օրինացը, Եկեղեցւոյ հինգ պատուիրանացը Դէմ եւ այլն:

Խղճի քննութենէն ետեւ՝ մեղքերնու և Վրայ պէտք ենք ցաւիլ ու սրտանց վշտանալ, թէ ինչու մեր ամենաբարի Տէրը վշտացուցինք:

Ճշմարիտ զղջումէն կը բխի առաջադրութիւնը որով մեղաւորը հաստատութեամբ միտքը կը դնէ՝ որ ալ զԱստուած չվշտացընէ, երեն դէմ չմեղանչէ, եւ ըստ հետեւորդի իր Վարքն ուղղէ:

Խոստովանութիւնը մարդկային գիւտ չէ։  
Հապա Աստուծմէ դրուած է։ — Խոստովանահօր տուած խրատներուն, դրած ապաշխարանքին միտ դիր ու ճշդիւ կատարէ։ Բայց կը սխալիս եթէ կարծես որ բաւական հատուցում ըրած կ'ըլլաս, երբ խոստովանահօր դրած ապաշխարանքը միայն կը կատարես. դուն քուկողմանէդ ալ ապաշխարութեան գործքերը ընելու ես։

Քրիստոս Տէրն մեր շատ օրինակներով ցուցուց, թէ երկնաւոր Հայրն ինչ սիրով ու գորովով կը վարուի զղջացեալ մեղաւորաց հետ։ Փրկիչն ինք զինք բարի հովուի մը կը նմանցընէ, որ ամայի դաշտերը կը պտրտի. լեռները կ'ելլէ, որ կորսուած ոչխարը գտնէ ու դարձեալ փարախը բերէ։ Ասիկայ կը ցուցընեն կորսուած դրամին ու անառակ որդւոյն առակները։ Յիսուս՝ այս վերջինին մէջ՝ այնպէս ազդու կերպով կը ստորագրէ երկնաւոր Հօր սէրն ու ողորմութիւնը, որ նոյն իսկ յամառեալ մեղաւորն առ Աստուած դառնալու կը յորդորուի։ Աս նմանութեան մէջ յայտնի կը տեսնուին նաեւ ապաշխարութեան գործողութիւնները։ — Անառակ որդին՝ հայրը թող տալով ամէն բան կորսնցընելէն ետեւ մեծ կարօտութեան մէջ ինկա։ Այն ատեն

ԽԵՂՔԸ ԳԼՈՒԽԸ ԳԱԼՈՎ՝ ՄԵՍԱՅ ՅԵԿ ՀԱՅՐԸ ՀԱՄ  
ԱՐԴԻՂԾՈՒՑԵՐ Ե. Ուստի Եւ ԽՄԱՋԱՅ ԻՐ ՈՂՈՐ-  
ՄԵԼՈՒՅԹԻՒՆԸ (ՔՆՆԵց ԻՐ ԽՂՃՄՆՈՎՔԸ): ՀԱՅՐԸ  
ՅԵԿ ՄԱԼՈՒՆՎՐԱՅ ԱԿՍԱՅ ՋԱՆԻԼ (ԱՀԱ ՊՂՃՈՒՄ):  
ՄԻՄՔԸ ԴՐԱՅ ՈՐ ՀՕՐԸ ԴԱռնայ (ՀԱՍՏԱՏՈՒՆ Ա-  
ՆԱՋԱԴՐՈՒՅԹԻՒՆ): ՀՕՐՆ ԵՐՅԹԱԼՈՎ՝ ԾՆԿԱՆ ՎՐԱՅ  
ԵԿԱՅ. «ՀԱՅՐ. ԴՈՀԵց, ՔԵՎԻ ԴԵՄ ՄԵՂԱՆ-  
ՀԵցի (ԱՀԱ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՅԹԻՒՆ). ԱՐԺԱՆԻ ՀԵՄ  
ՈՐԴԻԴ ԸՍՈՒԵԼՈւ. զիս քու ծառայիցդ կարգը<sup>1</sup>  
ԴԱՍԵ՞ն. (ԱՍՈՎ ԱՊԱՉԽԱՐԱՆՔ ԸՆԵԼՈւ ԻՆՔ ՊԲՆՔ  
ՊՎԱՏՐԱՍԹ ՋՈՒՑՈՒՅ): — ԲԱՐԻ ՀԱՅՐՆ ԱՄԷՆ  
ՔԱՆ ՄՈՌՆԱԼՈՎ՝ պարարտ Եղը մորթեց (ՊԲՐԻՍ-  
ՄՈՒ ՏԵՐՆ ՄԵՐ, ԱՄԵՆԱՍՈՒՐԸ ՀԱՂՄՈԴՈՒՅԹԵԱՆ  
մէջ) Եւ մեծ ուրախույթեամբ խնջոյք ըրին:


---

# Ա Պ Օ Թ Ա



Խղճի մոտաց  
քննութենէն  
յառաջ:

ԱրԱՐԻՉ Երկնի եւ Երկրի, թագաւոր թագաւորաց եւ Տէր տերանց. Դուն զիս ոչնչէ՝ քու պատկերիդ նման ստեղծեցիր ու պատուական արեամբդ փրկեցիր: Թէպէտ զքեզ անունովդ կոչելու եւ քեզի դիմելու արժանի չեմ, սակայն մեղաց տակը ընկճած՝ քեզի կը դիմեմ, եւ ոտուըներուդ առջեւ ինկած՝ խոնարհութեամբ կ'աղաչեմ որ գթութեամբ նայիս ինձի՝ ինչպէս Քանանացի կնկան նայեցար, գթաս վրաս՝ ինչպէս Մագդաղենացւոյն վրայ գթացիր,





Եւ ողորմիս ինծի՝ ինչպէս որ ողորմեցար  
մաքսաւորին ու աջակողմեան աւազակին։  
Ալ խոստովանիմ որ չէ թէ միայն տղայ-  
ութենէս՝ հապա վերջին խոստովանու-  
թենէս վեր ալ մեծվայելըութիւնդ շատ  
հեղ գիտութեամբ ու անգիտութեամբ  
վշտացուցի եւ հոգիս բազմապատիկ  
վէրքերով արատաւորեցի։ Շատ անգամ  
քու հրամաններդ ու Եկեղեցւոյդ օ-  
րէնքները ոտքի տակ առի. հոգիս գժոխք  
տանող մահացու մեղքերէն չզգուշա-  
ցայ։ Ծառայութեանդ մէջ գաղջ եղայ.  
Քեզի դէմ մեղանչեցի մտօք, խօսքով  
ու գործքով, ծածուկ ու հրապարակաւ։  
Անխոհեմութեամբ եւ թեթեւամոււ-  
թեամբ՝ զքեղ իմ ամենաբարի Տէրս  
մոռնալով, ինք զինքս աշխարհի, մարմնոյ  
եւ սատանայի ձեռքը տուի։ Քրիստո-  
նէական կոչումն մոռցայ. ծանր մեղքե-  
րովս ինք զինքս աղտեղեցի։ Բայց Դու  
Փրկիչ իմ, Դուն ես իմ յօյստ ու զօ-  
րութիւնս, կեանքս ու փրկութիւնս.


ուստի կը պաղատիմ, օգնէ ինծի՝ որ  
փրկուիմ. բժշկէ հոգիս, վասն զի քեզի  
դէմ մեղանչեր է։ Մի մերժեր զիս, Տէր  
իմ, վասն զի ծառադ եմ։ Աղտեղի եմ՝  
մաքրէ զիս. կոյր եմ՝ լուսաւորէ զիս.  
Հիւանդու ամէն տեսակ վէրքերով լե-  
ցուն եմ՝ բժշկէ զիս. մեռած եմ՝ ողջա-  
ցուր զիս։ Քու մարդասիրութիւնդ աւելի  
մեծ է՝ քան թէ իմ անօրէնութիւններս.  
Քու սէրդ աւելի է՝ քան թէ իմ չարու-  
թիւնս։ Քու սէրդ անչափ աւելի կրնայ  
շնորհել, քան որչափ կորսընցուց իմ  
մեղքս։ Մի մի մերժեր զիս, Աստուած  
իմ. մի նայիր մեղացս ծանրութեանն ու  
բազմութեանը, հապա քու գթու-  
թեանդ ու ողորմութեանդ։ Քեզի կ'ա-  
պաւինիմ, ով բարեգութ Յիսուս, շնոր-  
հէ ինծի ապաշխարութեան հոգի, պար-  
դեւէ միանգամայն սաստիկ ցաւ ու  
զղջում, գարձեալ կատարեալ խոստո-  
վանութիւն եւ արդիւնաւոր ապաշխա-  
րանք, ամէն։

## Ե Վ Ո Ւ Թ

մտաց լուսաւորութեան համար:

Կայր բարեգութ, փարատէ այցելութեամբդ մտացս մթութիւնն ու խաւարը. եւ լուսաւորէ հոգիս, որ ճանչնամթէ քեզի՝ իմ ամենաբարի Աստուծոյս, առաջնորդներուս, ընկերացս եւ իմ անձինս դէմ՝ ինչ մեղքեր ըրեր եմ խորհրդով, բանիւ, գործքով եւ զանցառութեամբ: — Աստուած իմ, որ ամենուն սիրտն ու երիկամունքը կը քննես, որ ամէն ճամբաներս տեսար եւ ամէն ոտիցս քայլերը համբեցիր, լուսաւորէ միտքս, եւ ցուցուր ինծիթէ ինչպիսի եւ որչափ մեղքերով թշնամանեցի քուբարութիւնդ:

(Քննէ խիղճդ, եւ դիւրութեանդ համար քեզի օդնական առ հոստեղս դրուած խղմանաց քննութիւնը:)



## ՔՆՆՈՒԹԻՒՆ ԽՂՃԻ ՄՑԱՅ

ԱՍՏՈՒԺՈՅ

ՏԱՄՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐՈՒՆ

Առաջինին դեմ հեղանչեցիր. Եթէ հաւատքի բաները սորվելու փոյթ շունեցար, կամ սորվելեն ետեւ ծուլութեամբ մոռցար: Եթէ իշխանութեանդ տակ եղողներուն զանոնք սորվեցընելու անփոյթ եղար: — Եթէ հաւատքի մասունքներուն վրայ երկմտեցար կամ կարծեցիր որ ամէն մարդ իր հաւատքովը կրնայ փրկուիլ: — Եթէ մարդկային նկատման կամ վախու համար ուղղափառութիւնն ուրացար: — Եթէ կախարդութիւններու եւ հմայութիւններու մտիկ ըրիր: — Եթէ գիտութեամբ հերետիկուներու գրքեր քովդ պահեցիր ու կարդացիր: — Եթէ Աստուծոյ ողորմութենէն յուսահատեցար, եւ կամ Աստուծոյ գիտութեանը վրայ անկարդ կերպով վստահանալով՝ չար բաները շարունակեցիր: — Եթէ հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ ներգործութիւններ ընելու անփոյթ եղար: — Եթէ սուրբ խորհուրդներու մօտեցած ատենդ լաւ պատրաստութիւն չտեսար: — Եթէ սուրբ կարդ ունեցողի զարկիր, կամ ինչ կերպով ըլլայ՝ կարգին պատիւն ոսքի տակ առիր: — Եթէ ջերմեռանդներն ու բարեպաշտները ծաղը ըրիր:

Երիբորդ պատուինին դեմ հեղանչեցիր. Եթէ Աստուծոյ եւ սրբոց անունը պարապ տեղ բերանդափիր, եւ մանաւանդ՝ Եթէ զԱստուծոծ ու սուրբերը բարկացընելու եւ նախատելու համար ըրիր: — Եթէ պէտք չեղած ժամանակ երդում ըրիր: կամ սուտ երդում ըրիր, եւ ուրիշին ալ սուտ երդուըննալու պատճառ եղար, կամ չար բան մ'ընելու եւ աղեկ բան մը չընելու երդում

ըրիր: — Եթէ առանց մտածելու պէսպէս ուխտեր ըրիր ու չկատարեցիր կամ չուզեցիր կատարել: — Եթէ քու վրադ կամ ուրիշին վրայ Աստուծոյ անէծքն ու պատիժը խնդրեցիր:

Երբորդ պատուիրանին դեմ մշղանչեցիր: Եթէ տօն օրերը չպահեցիր, այսինքն՝ գործեցիր կամ ուրիշին գործել տուիր: — Եթէ գիտնալով որ բանադրանաց եւ կամ մահուչափ մեղքի մէջ ես՝ Եկեղեցւոյ խորհուրդ մ'առիր: — Եթէ Եկեղեցւոյ մէջ գէլ մեղք մը գործեցիր:

Չորրորդ պատուիրանին դեմ մշղանչեցիր. Եթէ գործով կամ խօսքով ծնողքդ արհամարհեցիր, բարկացուցիր ու ծաղը ըրիր. բամբասեցիր եւ անոնց պակսութիւնները մէկուն մէկալին պատմեցիր: — Եթէ անոնց մահուան ցանկացար, կամ իրենց վեսաս հասցընելու ետեւէ եղար: — Եթէ իրենց հրամանէն դուրս տնէն բան վեր. ցուցիր կամ գողցար: — Եթէ հոգեւոր կամ վարպետներուդ անհնազանդ եղար. զանոնք արհամարհեցիր ու սրդողցուցիր եւ կամ ուրիշի մը այսպիսի բաներ ընելու խրատ տուիր: — Եթէ ծնողք իրենց որդիքն անիծեցին կամ հայհոյեցին. զանոնք լաւ ու պարկելու չմեծցուցին, կամ աղօթք ու քրիստոնէական վարդապետութիւն սորվեցընելու անփոյթ եղան:

Հինգերորդ պատուիրանին դեմ մշղանչեցիր. Եթէ մէկը զարկիր կամ վիրաւորեցիր եւ կամ սպաննեցիր, կամ ուրիշին յանձնեցիր ասանկ բան մ'ընելը: — Եթէ քէն պահեցիր: — Եթէ մէկն ատեցիր ու հաշտուիլ չուզեցիր: — Եթէ խռովութիւն ու թշնամութիւն սերմաննեցիր: Աս մեղքը շատ կրնայ մեծնալ, անոր համար պէտք է մէկիկ մէկիկ պատմել ինչ չարիք որ ասկէ հետեւեցաւ: — Եթէ չար օրինակ կամ խրատ տուիր, գայթագեցընելով՝ գէլ բաները գովե-

լով ու լաւերը վար զարնելով : — Եթէ մէկը գինովցուցիր : — Եթէ աղքատաց դէմ անգիթութիւն ըրիր : — Եթէ դատողութեամբ երրորդի մը գործքը ծուռ մէկնեցիր եւ կամ շար կարծիքի դացիր . իրաւ կամ սուտ անունն աւրեցիր , բամբասեցիր կամ զրալարասեցիր :

Ա կ ց ե բ ո ր դ ո ւ ի ն ն ե բ ո ր դ ո ւ ի ր ա ն ն ե բ ո ր դ ո ւ ն դ է յ շ ա տ տ ե ս ա կ մ է ղ ք ե ր կ ր ն ա ն ը լ լ ա լ , ո ր ո ն ք ի ր ա ր մ է շ ա տ կ ը տ ա ր բ ե ր ի ն . բ ա ց ց չ ի վ ա յ լ ե ր այ ն չ ա փ մ ա ն ր ա մ ա ս ն խ օ ս ի լ : Ո ւ ր ե մ ն մ տ ա ծ է ը ն դ հ ա ն ր ա պ է ս . Ե թ է գ է շ ու ա ղ տ ե ղ ի բ ա ն ե ր մ տ ա ծ ե ց ի ր . Ե թ է կ ա մ ա ւ ա ս ա ն կ բ ա ն ե ր ու մ է ջ կ ե ց ա ր կ ա մ հ ա ճ ե ց ա ր ե ւ կ ա մ ա ն ո ն ց հ ա ւ ա ն ե ց ա ր : — Ե թ է գ ո ր ծ ք ո վ կ ա տ ա ր ե ց ի ր : — Ե թ է կ ա մ ա ւ մ է ղ ք ը ն ե լ ու ց ա ն կ ա ց ա ր ե ւ ա ն փ ա փ ա ք ո վ մ է կ ու ն վ ր այ ա չ ք ձ գ ե ց ի ր : Ե թ է ա ն պ ա ր կ ե լ ու գ ր ք ե ր կ ա ր դ ա ց ի ր : — Ե թ է շ ա ր մ ո ք ո վ տ ե ղ մ ը գ ա ց ի ր կ ա մ տ ե ղ է մ' ա ն ց ա ր , կ ա մ ի ն ք զ ի ն ք դ մ է ղ ա ն չ ե լ ու ո ր ո գ ա յ թ ի ն մ է ջ ձ գ ե ց ի ր :

Ե օ ն ն ե բ ո ր դ ո ւ ի ն ն ե բ ո ր դ ո ւ ի ր ա ն ն ե բ ո ր դ ո ւ ն դ է յ դ պ ա ն չ ե ց ի ր . Ե թ է բ ա ն մ ը գ ո ղ ց ա ր : Ա ս ո ր պ ա ր ա գ ա ն ե ր ը պ է ս պ է բ ա ց ա ր ե լ թ է ո ր չ ա փ է ր , կ ա մ ս ո ւ ր ի տ ե ղ է է ր : — Ե թ է գ ն ա ծ կ ա մ ծ ա խ ա ծ ա տ ե ն դ ի ս ա ր ե ց ի ր : — Ե թ է խ ա ր դ ա խ կ ա մ ա ն ի ր ա մ ա ր դ ու ը ն կ ե ր ե ւ ա ն ո ր շ ա հ ու ն մ ա ս ն ա կ ի ց ե ղ ա ր : — Ե թ է ծ ա ռ ա յ ու թ ի ւ ն դ ո ւ ի ս ո ր ու ն հ ա մ ա ր վ ա ր ձ ք կ ա ռ ն է ի ր , լ ա ւ չ կ ա տ ա ր ե ց ի ր : — Ե թ է ա ն ի ր ա մ գ ա տ ե ր հ ա ն ե ց ի ր ե ւ կ ա մ ա ր դ ա ր դ ա տ ի մ է ջ խ ա ր է ո ւ թ ի ւ ն ը ր ի ր : — Ե թ է ա ն պ ա տ շ ա ճ մ ի ջ ո ց ո վ բ ա ն մ ը ս տ ա ց ա ր : — Ե թ է գ ո ղ ու թ ե ա ն ը ն կ ե ր ե ղ ա ր : — Ե թ է շ ա տ ա ժ ա ն գ ն ո վ բ ա ն ե ր գ ն ե ց ի ր , կ ա մ վ ա ս ն զ ի գ ո ղ ու ն ի է ր ե ւ կ ա մ ծ ա խ ո ղ ը կ ա ր օ տ ու թ ե ա ն մ է ջ է ր : — Ե թ է գ տ ա ծ բ ա ն ի դ տ է ր ը չ փ ն տ ո ւ ե ց ի ր : — Ե թ է ծ ա ռ ա ն ե ր ու դ վ ա ր ձ ք ե ր ը կ տ ր ե ց ի ր : — Ե թ է շ ա փ է գ ո ւ ր ս վ ա ր ձ ք ու —

զեցիր ծառայութեանդ համար : — Եթէ անիրաւ կերպով ուրիշին առուտուրին վեաս հասցուցիր : Ա-նիբար պատուիրանին դեմ մեղանչեցիր . Եթէ գատաստանի մէջ կամ անկէ դուրս սուտ վկայութիւն տուիր : — Եթէ մահուչափ մեղք մ'ըրիր ընկերիդ վեաս հասցընելու համար : — Եթէ զուրիշը զբարտեցիր՝ չըրած չարութիւնն ըրածի պէս հասկըցընելով : — Եթէ ուրիշին վրայ եղած բամբասանքը սիրով մտիկ ըրիր : — Եթէ ուրիշին մեծ ու ծածուկ մեղքը յայտնեցիր :

### ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՆԴ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐՈՒԻՆ

Ա-ն-ջինին դեմ մեղանչեցիր . Եթէ կիրակի ու տօն օրերը պատարագ չտեսար , կամ կիսկատար եւ առանց մտադրութեան տեսար : — Եթէ միայն ինք զինքդ ցուցընելու համար պատարագ տեսնելու գացիր : — Եթէ քու իշխանութեանդ տակն եղողներուն փոյթ չտարիր որ պատարագ տեսնեն . — կամ ուրիշին չտեսնելուն պատճառ եղար :

Երիբար պատուիրանին դեմ մեղանչեցիր . Եթէ հրամայեալ պահքերն ու ծոմերը չպահեցիր : — Եթէ ուրիշին պատճառ եղար կամ փոյթ չտարիր որ պահէ՝ երբ կրնայիր եւ պարտքդ եր :

Երբար իւ չըրբար պատուիրանին դեմ մեղանչեցիր . Եթէ խոստովաննք չեղար կամ Ալբարութիւն շառիր , գոնէ տարին անդամ մը Զատկին օրերը : — Եթէ եղար խոստովաննք , բայց մահուչափ մեղք մը պահեցիր եւ խոստովաննքդ փութ ըլլալով՝ պարտքդ կատարած չեղար : — Եթէ իշխանութեանդ տակն եղողներուն աս տարեկան խոստովաննութեան եւ Սրբութիւն առնելու պարտքը կատարել տալու անփոյթ եղար :

Հինգիւրորդ պատսահքանին դեմք մէսանչեցիր.  
Եթէ ըստ կարողութեանդ աղքատաց ողորմու-  
թիւն չտուիր: — Եթէ հոգեւոր բաներէն եւ  
կեցար ստըկի խնայելու համար:



### ԵՕԹԸ ՄԱՀՈՒՁԱՓ ՄԵՂԵՐԸ

Հզորոսո-իւն ըրէր. Եթէ չճանչցար որ ու-  
նեցած ամէն բարիքդ Աստուծմէ է: — Եթէ  
մեղք մ'ընելուդ վրայ պարծեցար. կամ բարի  
գործք մը գործելուդ համար մեծամտեցար: —  
Եթէ ինք զինքդ ան աստիճանի հաւնեցար, որ  
զուրիշներն արհամարհեցիր: — Եթէ քու խել-  
քիդ հաւնելով՝ ծնողաց, հոգեւոր հարց եւ այլն  
բարի խրատներուն հետեւիլ չուզեցիր:

Նոհանչո-մուժ ըրէր. Եթէ ուրիշին հոգւոյ  
եւ մարմնոյ բարիքին վրայ տրտմեցար ու անոր  
մվասին ցանկացար: — Եթէ ուրիշին բարիքը  
խափանել ջանացիր:

Բարիսո-իւն ըրէր. Եթէ սրդողած ատենդ՝  
թէ սրտով, թէ բերնով զԱստուած ու սուր-  
բերը կամաւ հայհոյեցիր, նախատեցիր կամ  
անիծեցիր: — Եթէ ան աստիճանի այլայլեցար՝  
մինչեւ ըրածդ, ըսածդ չէիր գիտեր:

Ադահո-իւն ըրէր. Եթէ գնած կամ ծա-  
խած կամ փոխած ատենդ, կամ իրաւ ու անի-  
րաւ դաշնադրութեան մէջ մէկը խարեցիր: —  
Եթէ ստըկի խնայելով աղքատներու ողորմու-  
թիւն չտուիր:


Դու-լո-իւն ըրէր. Եթէ ծուլութեան հա-  
մար բարի աղքեցութիւններն արհամարհեցիր:

— Եթէ ժամանակդ պարապ անցուցիր : — Եթէ առտու իրիկուն առանց աղօթքի անցուցիր , պարզապէս չաշխատելու եւ ծուլութեան համար :

Որիբահութենիւն ըսէր . Եթէ վերջին վախճանդ ուտելու խմելու վրայ դրիր , եւ անով մահուչափ մեղքի մը մէջ ինկար : — Եթէ այնչափ խմեցիր , որ գինովեալով ինք զի՞նքդ կորսընցուցիր : — Եթէ ուտելու խմելու չափէ դուրս բաղձանք ունեցար կամ կերար խմեցիր :

Բայանահութենիւն ըսէր . Եթէ մարմնական մեղքով մը հեշտացար , ինչ կերպով ո՞ր ըլլայ թողը ըլլայ , թէ մտքով , թէ խօսքով եւ թէ գործքով : Ամէն մեծ ու պղտիկ մարմնական հեշտութիւն աս մահուչափ մեղքին տակն է . ուստի եւ լաւ պիտի քննես խղճմտանքդ , ու պիտի յայտնես խոստովանութեան մէջ ամէն պարագաներով մէկտեղ :

Ասկէ զատ՝ ամէն վիճակ իր առանձինն պարտքերն ունի . մանաւանդ եթէ ամուսնացեալ ես , պէտք է որ նայիս թէ ինչ պարտականութիւն կայ ամուսնացելոց մէջ : Դարձեալ եթէ տէր կամ տիկին ես , եթէ սպասաւոր կամ աղախին ես , ըստ քու վիճակիդ քննէ զքեզ :



## Ա Դ Ր Թ Ք

ԽՂԾԻ ՄՑԱՅ ՔՆՆՈՒԹԵՆԻՆ ԵՑԵԻ

Ամենակարող Աստուած , կը տեսնեմ ահա խղճի մտաց քննութենէն ետեւ՝ որ շատ կերպով քեզի դէմ մեղանչեր

եմ։ ԱՌ որդիդ ըսուելու արժանի չեմ։  
Կը խոստովանիմ այո՛ յանցանքներս. բայց  
կը խնդրեմ միանգամայն խոնարհու-  
թեամբ որ զիս երեսէ չձգես։ Դարձուր,  
Տէր իմ, սուրբ աչուշներդ իմ անօ-  
րէնութիւններէս։ Տես սրտիս ցաւն ու  
հոգւոյս դառնութիւնը. ողորմէ ինծի  
քու մեծ ողորմութեանդ համեմատ, եւ  
ընդունէ զիս դարձեալ բազկացդ մէջ՝  
ուսկից հեռացուց զիս մեղքը։ Թող  
որ դառնամ նորէն երկնաւոր Հօրդ  
տունը՝ ցնծութեան ու խաղաղութեան  
բնակարանը, ուսկից աքսորեցին զիս  
մեղքերս։ Հաստատութեամբ կ'առաջա-  
դրեմ ալ եւ եք քեզի դէմ չմեղան-  
չելու եւ քու գթած սիրտդ ամենեւին  
չվշտացընելու։ Ոհ, որչափ դժբախտ է  
հոգի մը, որ զքեզ՝ ամենայն շնորհաց  
աղբիւրը կը թողու, եւ կ'երթայ պղտոր  
ջրերով իր ծարաւն անցընել կ'ուզէ։  
Աստուած իմ, բոլորովին ձեռքդ կը  
յանձնեմ ինք զինքս։ Հեռանայ իզմէ այն

ամէն բան՝ որ զիս քեզմէ բաժնեց։  
Ով բարեգութ Հայր, օրհնէ առաջա-  
դրութիւնս. պաշտպանէ տկարութիւնս,  
որ այսուհետեւ բան մը, ոչ աշխարհքիս  
շար օրինակները, ոչ մեղքի դրդող ա-  
ռիթները, ոչ նեղութիւն, ոչ մահ եւ  
ոչ ուրիշ բան մը կարենայ զիս քու-  
սէրէդ բաժնել, ով իմ գանձս, մի-  
միայն սէրս ու միսիթարութիւնս. ամէն։

---

## Ա Զ Օ Բ Ա Ք

առ Յիսուս փրկիչ։

Քեզի կ'ապաւինիմ, ով աստուա-  
ծային Փրկիչ իմ, Յիսուս Քրիստոս, եւ  
քեզմէ ողորմութիւն ու թողութիւն կը  
խնդրեմ։ Դու խաչին վրայ բազկատա-  
րած կեցեր ես, որպէս զի քեզի դիմող-  
ները գրկես ու մեղաւոր մարդկութիւնը  
երկնաւոր Հօրդ հետ հաշտեցընես։  
Գլած աչուըներդ ինձի դարձուը

ուրեմն, ով հովիւ բարի: Ես ալ մեծա-  
գին արեամբդ փրկուած հօտիդ մոլո-  
րեալ մէկ ոչխարն եմ: Առ զիս ու-  
սոցդ վրայ ու Հօրդ բնակարանը տար:  
Բազուկներդ տարածած՝ ինծի կը սպա-  
սես. ուրեմն ոտուըներուդ կը փարիմ,  
որ զիս գնելու համար այնչափ յոգնե-  
ցան: Գիտեմ, Փրկիչ իմ, որ զիս քեզ-  
մէ չես վոնտեր, ձեռնունայն չես ար-  
ձակեր: Կենդանի հաւատքով կը հաւա-  
տամ որ ինծի համար մարդացար, ինծի  
համար վիրաւորուեցար, ինծի համար  
խաչափայտին վրայ մեռար: Անոր հա-  
մար որդիական վստահութեամբ քեզի  
կը դիմեմ: “Նայէ գթած աչուըներովդ  
ինծի, ինչպէս Պետրոսի ու աջակողմեան  
աւազակին նայեցար: Լսեցուր, աստուա-  
ծային փրկիչ իմ, լսեցուր սրտիս մէջ  
ան երկնային մխիթարութեան խօսքերը,  
թէ Որդեակ, նոոչեալ լիշին ուղ մոռ  
ամէն:

## ԱՎՈԲՔ

առ Հոգին Սուրբ:

Սուրբ Հոգի, արտասուալից աչուր-  
ներս քեզի վերցընելու կը համարձա-  
կիմ: Ես ապերախտս սուրբ տաճարդ  
աղտեղեցի. մաքուր չպահեցի այն ան-  
մեղութեան հանդերձը՝ որով զարդա-  
րեցիր զիս մկրտութեան վերստին ծնըն-  
դեան աւազանաւը: Շատ հեղ ականջ-  
ներս քու փրկաւէտ ազդեցութեանցդ  
գոցեցի եւ աւելի մտիկ ըսի չար ոգւոյն,  
զգայականութեան, անցաւոր աշխարհ-  
քի: Աւելի հետեւեցայ ունայնութեանց՝  
քան քու բարի խրատներուդ: Աւելի մեծ  
համարեցայ աշխարհքիս ինծի տուած  
առերեւոյթ քաղցրութեամբ լեցուն  
դառն բաժակը՝ քան թէ քու աստուա-  
ծային մխիթարութիւններդ: Ո՛հ, ցաւով  
ու դառնութեամբ կը լեցուի սիրտս՝  
երբ ասոնք կը մտածեմ: Կու լամ, կ'ող-  
բամ թեթեւամտութեանս վրայ: Բայց

աս ցաւոց գարման գտնելու համար քեզի  
կը դիմեմ, ով աստուածային միսիթա-  
րիչ: Մի նայիր իմ անթիւ մեղքերուս,  
հապա ճշմարիտ ցաւիս ու արցունքնե-  
րուս: Հանէ զիս մեղացս անդնդէն. տուր  
կամացս զօրութիւն եւ առաջադրու-  
թեանս հաստատութիւն. ամէն:

---


## Ա Վ Ո Թ Գ

Պղջման ու առաջադրութեան:

Հայր ողորմութեան, անառակ որ-  
դւոյն հետքոլոր սրտանց կը ցաւիմ գոր-  
ծած անօրէնութիւններուս վրայ: Դու  
գթած հայր, զիս ոչնչէ ստեղծելէն ե-  
տեւ՝ որդեգիր ալ ըրիր: Այս բաւական  
չէ. զիս սիրալիր հօր պէս պահպանեցիր.  
Հայրական գթով խնամեցիր, շատ դըժ-  
բախտութիւններէ ազատեցիր ու ան-  
համեմատ շնորհքներով զարդարեցիր:  
Ասոր փոխարէն՝ ուրիշ բան չուզեցիր  
իզմէ, բայց եթէ որ ըրած շնորհքներդ

Ճանչնամ, քեզի շնորհակալ ըլլամ ու  
զքեզ որդիական սիրով սիրեմ։ Իսկ  
ես ըսածդ չէ թէ միայն չըրի, հապա  
նաեւ զքեզ վշտացուցի ու անարգեցի.  
Զքեզ սիրելու տեղ՝ ատեցի, հաւա-  
տարիմ մնալու տեղ՝ քեզի դէմ դաւ-  
աճանութիւն ըրի. ապերասան որդւոյ  
մը պէս, քեզի՝ իմ բարերար Հօրս դէմ  
ելայ, եւ իմ բազմապատիկ անօրէնու-  
թիւններովս հայրական սիրտդ տրտմե-  
ցուցի։ Բայց կը ցաւիմ, ամենասիրելի  
Հայր, սրտանց կը ցաւիմ որ զքեզ  
վշտացուցի, քեզի դէմ անհաւատա-  
րիմ եղայ ու գթած սիրտդ վիրաւո-  
րեցի։ Կը ցաւիմ, Տէր իմ, կը ցաւիմ.  
Եւ խոնարհութեամբ քեզմէ թողու-  
թիւն ու ողորմութիւն կը խնդրեմ։  
Ներէ, ով գթած Հայր, ներէ ինծի.  
անառակին հետ ի խորոց սրտէ կը գո-  
չեմ. Հայր Աւայ յերկնու եւ ասազի +.  
ալ որդիկո իւղեւը որժանի չէմ, զիս +  
ծառաներէդ մէն ըսէ։

Աստուածային մեծվայելչութեանդ  
առջեւ հաստատութեամբ կ'առաջա-  
դրեմ վարքս ուղղելու, եւ զքեզ իմ  
ամենաբարի Տէրս ալ չվշտացընելու:  
Կը խոստանամ ահա ասկից ետքը նաեւ  
աւելի մահ յանձն առնուլ, քան գի-  
տութեամբ եւ կամօք մահացու մեղք  
մը գործել: Բայց թէ որ անզգուշու-  
թեամբ աստուածային կամացդ դէմբան  
մը մտածեմ, խօսիմ կամ գործեմ, հի-  
մակուընէ կ'աղաչեմ որ իմ կամացս դէմ  
եղած համարիս. ամէն:



## Ա Զ Ո Ւ Ա Ք

առ Ա. Աստուածածին:

Արբուհի կոյս Մարիամ, մայր գե-  
ղեցիկ սիրոյ եւ ողօրմութեան, քաղցր  
պաշտպանութեանդ կ'ապաւինիմ: Կեր-  
կայացուր զիս քու Որդւոյդ, որ գնուած  
եմ իր պատուական արեամբը: — Քեզի  
ալ մեծ փառք, մեծ ուրախութիւն է,

իրեն զղացեալ մեղաւորներ տանիլ:  
 Դու, գթած Մայր, ոչ առկայծեալ  
 լապտերը կը մարես, եւ ոչ ալ ջախ-  
 ջախեալ եղեգը կը կոտրես. Հապա կը  
 վառես հուրն ու կը դարմանես մեղքե-  
 րով վիրաւորուածը: Կը մերձենաս վի-  
 րաւորեալ սրտին, ու կը կաթեցընես  
 անոր վրայ մայրական պաշտպանու-  
 թեանդ զովացուցիչ ձէթը: Ցուցուր  
 ուրեմն, ով միսիթարիչդ վշտացելոց,  
 ցուցուր իմ վրաս ալ բարեխօսութեանդ  
 ոյժը. որպէս զի առաջադրութեանս մէջ  
 հաստատուած, մինչեւ վերջին շունչս  
 անոր մէջ յարատեւեմ. ամէն:


Զօրաւոր աղօթք զղջման:

Բոլոր սրտանց կը զղջամ ու կը  
 ցաւիմ ըրած մեղքերուս վրայ. մեղայ  
 Տէր իմ, վասն զի դու ամենաբարի ես  
 եւ սիրուելու արժանի ու մեղքէն կը  
 գարշիս. ես ալ ի բոլոր սրտէ կը գար-  
 շիմ ու կ'առաջադրեմ քու շնորհքովդ

մէյ մ'ալ մեղքի մէջ չիյնալու: —  
 Յիսուս իմ, դուն զիս սիրելուդ համար  
 այնչափ չարչարուեցար. անգին արիւնդ  
 թափեցիր ու ինք զինքդ խաչին վրայ  
 զոհ ըրիր. իսկ ես ապերախտս՝ խոր-  
 հրռդով, բանիւ գործով եւ զգայու-  
 թիւններով շատ անգամ զքեզ խաչ  
 հանեցի ու մեռցուցի. մեղայ Տէր իմ  
 Յիսուս, ասկէ վերջը աւելի կ'ուզեմ  
 մեռնիլ՝ քան թէ մեղանչել:



Խոստովանիմ առաջի Աստուծոյ ա-  
 մենակարողի եւ երանուհի Մարիամու  
 միշտ կուսին, երանելոյն Միքայէլի  
 հրեշտակապետին, երանելոյն Յովհան-  
 նու Մկրտչին, սրբոց առաքելոցն Պե-  
 տրոսի եւ Պօղոսի եւ սրբոյ Հօրն մե-  
 րոյ Գրիգորի Լուսաւորչին եւ ամենայն  
 սրբոց եւ առաջի քո Հայր սուրբ. քանզի  
 մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով.  
 վայ ինձ, վայ ինձ եւ յաւետ վայ ինձ:



## Ա Ղ Օ Թ Ք

շնորհակալութեան խոստովանութենէն  
ետեւ:

Որչնէ անձն իմ զԱստուած, իր  
սուրբ անունն ու իր բարերարութիւն-  
ները: — Դուն ամէնողորմ Աստուած  
եւ Տէր իմ, զղջման արցունքներս ըն-  
դունեցար, ցաւերս չմերժեցիր: Երբ  
քեզի դառնալս տեսար, Հայրական  
գթութեամբդ առջեւս ելար. բարերար  
բազկացդ մէջ առիր ու մեղքերս ջնջե-  
ցիր: Մոլութեանց գերի ընող շղթա-  
ներս խորտակեցիր ու նորէն Աստուծոյ  
որդւոց ազատութեանը բարձրացուցիր:  
Վերջապէս պարգեւեցիր սրտիս այն  
խաղաղութիւնը՝ զոր աշխարհք չի կրնար  
տալ: — Ողորմած ես, Տէր. մեծ է  
Համբերութիւնդ՝ որ այնչափ ժամանակ  
մեղաւորին դարձին կը սպասես: Դուն  
մեր մեղաց Համեմատ չես վարուիր մեզի  
հետ: Որչափ երկինք երկրէս հեռու է,

այնչափ է ողորմութեանդ ընդարձակութիւնն անոնց վրայ՝ որ քեզմէ կը վախնան։ Ինչպէս հայր մը կը գթայ իր որդւոցը՝ այնպէս ալ կը գթաս դուն ստեղծուածոցդ վրայ։

Ո՛վ անըմբոնելի սէր, թափանցէ մտիր սիրտս, եւ բորբոքէ անոր մէջ սիրոյդ հուրը, որպէս զի կարենայ սիրոյդ՝ սիրով հատուցում ընել։ Ճշմարիտ ուղղութեամբ սրտի ու հաստատութեամբ մտաց կ'ուզեմ շիտկել մինչեւ հիմայ գործած ամէն յանցանքներս։ Դուն կը ճանչնաս սիրտս ու գիտես թէ որչափ կը բաղձամ վարքս ուզել։ Անոր համար օգնէ տկարութեանս։ Զօրացուր զիս անյաղթելի սպառազինութեամբ մը մեղաց յարձակմանց դէմ։ Ամրացուր զիս, որ անձինս վրայ յաղթանակելով՝ արքայութեանդ արժանի ըլլամ։ Տուր որ հոգիս երկրաւոր իրերէն քակելով, զքեզ միայն փնտուեմ։ Տուր որ իբրեւ սիրելի որդի մը ի քեզ միայն ապրիմ,

ի քեզ մեռնիմ եւ միշտ քուկո ըլ-  
լամ. ամէն:

**Ա Վ Օ Թ Ք**

Խոստովանանքին ընդունելութեանը  
համար:

Աստուածային Փրկիչ իմ, գթած ա-  
չուըներովդ եղած խոստովանքիսնայէ  
ու սրտիս զղջումն ընդունէ, Եթէ մարդ-  
կային տկարութեամբ աս սուրբ Խոր-  
հըրդոյն մէջ սխալմունք մ'ըրի, դուն  
թափած արեանդ մէկ կաթիլով իմ  
ակամայ պակասութիւններս լեցուր:  
Դուն՝ զքեզ խաչ հանողներուն հա-  
մար երկնաւոր Հօրմէդ ներումն խնդրե-  
ցիր. Ես ալ զքեզ շատ անգամ մեղքե-  
րովս խաչ հանեցի, ու սուրբ արիւնդ  
ոտքի տակ առի: Կ'աղաչեմ գթած ա-  
չուըներովդ ինծի ալ նայէ ու ողորմէ:  
Աստուած իմ, եթէ ընկերս ինծի դէմ  
բան մ'ըրած կամ ըսած է, սրտանց


թողութիւն կու տամ. եւ թէ որ ես ալ  
ուրիշին բան մ'ըրած, ըսած կամ գայ-  
թագղութիւն մը տալով մէկու մը հո-  
գւցն վեաս հասցուցած եմ, սրտանց  
ներումն կը խնդրեմ: Ահա, Տէր, ասկէ  
ետքը քուկդ եմ բոլորովին: Վստա-  
հութիւնս սուրբ խաչիդ ու մահուանդ  
վրայ կը դնեմ. եւ հոգիս, մարմինս ու  
ամէն կարողութիւններս քեզի կը նուի-  
րեմ: Դու գթած բժիշկ, հիւանդները  
բժշկելու եկար. ահա ես ալ շատ տե-  
սակ չար սովորութիւններով հիւանդա-  
ցած եմ. բժշկէ զիս ու ամէն տեսակ  
գէշ սովորութիւնները վրայէս վերցուր:  
Ով Յիսուս, ըսէ հոգւցս այն միսիթա-  
րական խօսքը՝ թէ Այսօք Եղեւ Քիունէն  
որոնս այսմէկ. ամէն:

## ԱԴՐԻՔ

յարատեւութեան շնորհք ընդունելու  
համար :

Սուրբ Հոգի, որ ապաշխարութեան  
դարձած մեղաւորաց սիրելի բարեկամն  
ու զղացեալ սրտից մսիթարիչն ես,  
գոհութիւն ու երկրպագութիւն կը  
մատուցանեմ քեզի՝ որ գթութեամբ  
իմ վրաս նայեցար ու մեղօք աղտեղած  
հոգիս դարձեալ Աստուծոյ տաճար  
ըրիր: Զօրացուր զիս մարմնոյ, աշխարհի  
ու չար ոգւոյն ամէն փորձութեանցն ու  
թելագրութեանց դէմ: Եղիր իմաս-  
տուն խորհրդովդ տարակուսանացս մէջ  
առաջնորդ: Զօրացուր զիս փրկաւէտ  
շնորհքներովդ, որ Աստուծմէ վախնամ,  
զինք ամէն բանէ վեր սիրեմ, ընկերացս  
հետ խաղաղութեամբ ապրիմ, անմեղ  
կեանք անցընեմ, աղօթքով ու բարե-  
պաշտ գործքերով՝ առաքինութեան  
ճամբուն վրայ յառաջանամ եւ Աստու-


ծոյ շնորհաց մէջ յարատեւեմ միշտ.  
ամէն:



## Ա Զ Օ Բ Ա Ք

առ Ս. Աստուածածին:

Ով երանելի եւ քաղցր կցս Մարիամ, Մայր ողորմութեան, գթութեանդ կը յանձնեմ հոգիս, մարմինս,  
խորհուրդներս, ամէն գործքերս ու  
կեանքս: Օգնէ ինծի, հզօր կցս, եւ  
պահէ զիս սատանային որոգայթներէն:  
Տուր ինծի ճշմարիտ ու կատարեալ սէր,  
որ քու սիրելի Որդիդ՝ իմ Տէրս, եւ  
իրմէ ետքը ամէն բանէ աւելի զքեզ  
սիրեմ: Ամրացուր սրտիս մէջ այս բարի  
առաջադրութիւնը: Պահէ զիս այս սուրբ  
սիրոյս մէջ մինչեւ ցմահ. որպէս զի այս  
սիրով երանելեաց հայրենիքը մտնելով:  
զԱստուածս եւ զքեզ յաւիտեանս սիրեմ ու օրհնեմ. ամէն:



## ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆ

ԱՍՏՈՒԱԺԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆՈՒԹԵԱՆՑ\*

Ներգործութիւն Հաւատոյ: — Կը  
Հաւատամ ի մի Աստուած կենդանի եւ  
Ճշմարիտ, իմ արարչիս ու փրկչիս: Կը  
Հաւատամ ի Հայր անծին, յՈրդին ծնեալ,  
եւ ի Հոգին Սուրբ՝ որ երկուքէն կը բխի:  
Կը Հաւատամ թէ Որդին Աստուած մե-  
զի Համար չարչարուեցաւ, խաչին վրայ  
մեռաւ. եւ ամէն մարդու իր գործոցը  
Համաձայն Հատուցում պիտի ընէ. ար-  
դարոց՝ յաւիտենական կեանք եւ մեղա-  
ւորաց մշտնջենաւոր պատիժ պիտի տայ:  
Կը Հաւատամ որ Հոգիս անմահ է, եւ  
թէ առանց Աստուծոյ շնորհացը կարե-  
լի չէ յաւիտենական երանութեան Հաս-

\* Երեք գլխաւոր առաքինութեանց ներգործութիւնը  
Ներմեռանդութեամբ կատարողներուն եօթը տարւան եւ  
եօթը քառասուն տրուան ներողութիւն շնորհուած է: —  
Խոկ ամիս մը ամէն օր ըսողը եւ նոյն ամսուան մէջ հեղ  
մը խոստովանանք եղողն ու եկեղեցւոյ դիտման աղօ-  
թողը լիակատար ներողութիւն կ'ընդունի: Բնեղդ. ԺԴ.  
1728, Յունվ. 5. — Բնեղդ. ԺԴ. 1756, Յունվ. 28:

նիլ։ Կը հաւատամ ու կը խոստովանիմ  
ան Ա. հաւատքը, զոր Յիսուս Քրիստոս  
մեղի սորվեցուց, զոր Առաքեալք քա-  
րոզեցին եւ հռովմէական Ա. Եկեղեցին  
կը դաւանի ու կը վարդապետէ։ Աս  
ամէն բան կը հաւատամ, վասն զի դուն,  
Աստուած իմ, անոնք ինձի յայտնեցիր,  
որ յաւիտենական Ճշմարտութիւն ու  
անըմբոնելի իմաստութիւն ես, որ ոչ  
կրնաս խաբել եւ ոչ խաբուիլ։

Ներգործութիւն Յուսոյ։ — Կը յու-  
սամ, ով Աստուած իմ, քու անսպառ  
բարութեանդ եւ ողորմութեանդ վրայ։  
Կը յուսամ որ միածին Որդւոյդ, Յի-  
սուսի Քրիստոսի անգին արժանեացը  
Համար ամէն մեղացս ներումն կը շնոր-  
հես, եւ վարուցս ուղղութեանը Հա-  
մար Հարկաւոր եղած շնորհքներն ինձի  
կը պարգեւես։ Կը յուսամ որ քու  
օգնութեամբդ ամէն փորձութիւններու  
կը յաղթեմ եւ առաքինութեանց ճամ-  
բուն վրայէն կ'երթամ։ որով մահ-

կանացու կեանքէս ետեւ յաւիտենա-  
կան արքայութեան արժանի կ'ըլլամ,  
ուր զքեղ յաւիտեան կը ժառանգեմ:  
Կը յուսամ որ հայրական սիրով զիս  
կը սիրես, վասն զի ստեղծեցիր զիս՝  
փրկելու համար: Աս ամեն բան կը յու-  
սամ, որովհետեւ դուն, ամենաբարի  
Աստուած, ասոնք ինձի խոստացար, որ  
ամենազօր ես եւ խոստմունքդ կատարե-  
լու մէջ հաւատարիմ: Աս յուսոյն մէջ  
կ'ուզեմ ապրիլ ու մեռնիլ:

Ներգործութիւն Սիրոյ: — Կը սիրեմ  
զքեղ, Աստուած իմ, վասն զի անչափ  
բարութիւն ես: Երանի թէ օրէ օր աւելի  
կարենայի զքեղ ճանչնալ, որ ամեն  
բանէ աւելի սիրուելու արժանի ես:  
Երանի թէ ամեն արարածներն ին-  
ձի յորդոր ըլլային զքեղ աւելի եւս  
սիրելու: Երջանիկ կը համարէի զիս՝ ե-  
թէ այնպէս կարենայի զքեղ սիրել,  
ինչպէս կը սիրեն ամենասուրբ Կոյսն  
Մարիամ, հրեշտակք, երկնից երանելի

Հոգիներն ու երկրիս արդարները։ Աս  
սէրէն յորդորուելով՝ սրտանց կը ցաւ-  
իմ որ զքեզ վշտացուցի. կ'ատեմ մեղ-  
քերը՝ որոնցմով զքեզ մինչեւ հիմայ  
զայրացուցի։ Այսուհետեւ աւելի կ'ու-  
ղեմ ամէն բան յանձն առնուլ, նաեւ  
մեռնիլ, քան կամաւոր մեղքով զքեզ  
վշտացընել, որ ամէն բանէ վեր սիրելի  
ես։ Ողորմէ ինծի մեղաւորիս։ Դարձեալ  
կը սիրեմ, Տէր, ընկերս նաեւ թշնա-  
միս, անձիս պէս. վասն զի քու ստեղ-  
ծուածդ, քու պատկերդ է, եւ գնուած  
է սիրելի Որդւոյդ պատուական արեամ-  
բը։ Ծնորհք տուր՝ որ յառաջադրածս  
ի գործ դնեմ, ամէն։

# ՍՈՒՐԲ ՀԵՂՋԻԴՈՒԹԵԱՆ

## Ա Դ Օ Թ Ք Ն Ե Ր

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵՆԱՐԱՐՆ ԻՆՔ ՊԻՆՔ ԵՐԲԵՔ բանի  
մը մէջ այնպէս խանդակաթ ու խնամոտ չէ  
ցուցուցած՝ ինչպէս ամենասուրբ Հաղորդու-  
թեան մէջ : “ՄԵՐԸ, ԿՐՈՒ ԳԻՒՆ . Արիսպա-  
դացի, ամէն բանէ աւելի միաւորութեան մէջ  
կ'երեւայ : Եթէ ասիկայ ճշմարիտ է, “Որ  
ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ,  
նա յիս բնակեցէ եւ ես ի նմառ խօսքէն աւելի  
անձուկ միաւորութիւն չի կրնար մտածուիլ :  
— Եթէ ամէն օր աս խորհրդոյն կը մերձե-  
նաս, Յիսուս միշտ քեզի հետ կը մնայ, եւ  
դուն անոր սիրոյն մէջ կը յառաջանաս : Աս  
ահաւոր խորհրդուրդը՝ մեր հոգեկան հիւանդու-  
թեանց դէմ ազգու դեղ է, որով ամէն օր-  
ւան պակասութիւններէն կ'ազատինք ու մա-  
հուչափ մեղքերէն կը զգուշանանք :

Բայց ինչէն է որ այնչափ անգամ Հա-  
ղորդութեան մերձենալէն ետեւ ալ՝ օգուտ

շենք տեսներ ու յառաջուան պէս պակսութեանց մէջ կ'իյնանք: — Կերակուրը չէ որ մարդուն կը վնասէ, հապա զանիկայ ճաշակողին տրամադրութիւնը: «Միթէ ծրարիցէ ոք հուր ի գոգ, կ'ըսէ Սողոմոն, եւ զհանգերձոն ոչ այրիցէ»: Աստուած հուր ծախիչէ, որ Գոհութեան խորհրդոյն ձեռքով մեզի կը մօտենայ՝ որպէս զի աստուածային սիրոյ կրակը սրտերնիս վառէ: Գիտնանք որ աս բանը մեր թերահաւատութենէն, մեր քիչ պատրաստութենէն է: Կրակը՝ չոր փայտը շուտ կ'այրէ, բայց ոչ զդալարը, վասն զի ասիկայ՝ անոր պէս այրելու տրամադրութիւն չունի:

Լաւ պատրաստութեան համար՝ մանաւանդ երկու բան պէտք է. Նախ, սրտերնէս ամէն երկրաւոր իղձերը հեռացընենք: Օր մը հարցուց Սրբուհի Գելլրուտա Յիսուսի թէ ինչ պատրաստութիւն կը պահանջէ իրմէն՝ որ անարատ մարմնոյն արժանապէս մերձենալ կարենայ: Ուրիշ բան չեմ ուղերքեզմէ, պատասխանեց Փրկիչը, բայց եթէ՝ որ քու անձէդ բոլորովին մերկացած, զուրկ ամէն բանէ մերձենաս ինծի: Երկրորդ, սաստիկ բաղձանք ունենանք զՅիսուս մեր սիրտն ընդունելու, որովհետեւ անվայել է աստուածային կերակուր տալ այնպիսւոյն՝ որ

սրտին մէջ զՅիսուս ճաշակելու սաստիկ բաղձանք չի զգար։ Եթէ Յիսուս այնչափ կը յօժարի մեզի հետ միանալու, կը վայելէ սր մենք ալ սաստիկ բաղձանք ունենանք՝ զինք ընդունելու։

Բայց մարդիկ ինչ պիտի ըսեն, երբ տեսնեն որ հաղորդութեան կը մերձենամ։ — Լսենք, ինչ կըսէ Ս. Փրանկ. Սալէզացին. Եթէ աշխարհիս որդիքը քեզի հարցրնելու ըլլան թէ ինչու այնպէս յաճախ Հաղորդութեան կը մերձենաս, ըսէ իրենց. Երկու տեսակ մարդիկ կան, որոնք պէտք են յաճախ հաղորդուիլ. Կատարեալներն ու անկատարները։ Կատարեալներն՝ անոր համար որ կատարելութեան մէջ մնան, իսկ անկատարներն՝ որպէս զի կատարեալ ըլլան, զօրաւորները՝ որ չտկարանան, տկարներն՝ որ զօրանան, հիւանդներն՝ որ բժըշկուին, առողջներն՝ որ չհիւանդանան։ — Դուն ալ ստէպ հաղորդուէ. վասն զի կամ մեղաւոր, հիւանդ, տկար ես, եւ կամ բարեպաշտ, առողջ ու զօրաւոր։ Եթէ առաջինը՝ գնա զՅիսուս սիրտդ ընդունէ՝ որ կատարեալ ըլլաս. իսկ եթէ երկրորդը՝ որպէս զի կատարելութեան մէջ զօրանաս։

ԱՄԵՆԱՍՈՒՐԱ  
ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԵՐՉԵՆԱԼԵՆ ՅԱՌԱԶ



Ներգործութիւնն  
հառատոյ :

**Ս**ԻՐԵԼԻ ՓՐԿԻԾ, որչափ  
դժուարին ու խիստլեռ-  
ներ անցնելու պարտաւ-  
որեցար, որպէս զի դաս  
եւ այս սրբազան խոր-  
հըրդոյն ձեռքովն  
ինծի հետ միա-  
նաս : Աստուած  
էիր՝ մարդ ըլլա-  
լու հարկադրեցար. անչափ էիր՝ տղայ  
եղար. յաւիտենական Հօր ծոցէն՝ կու-  
սի մը ծոցն եկար. երկինքէն՝ ախոռ ի-  
ջար. փառաց գահէն՝ արդարութեան  
կախաղանը խօնարհեցար : Աս առտու ալ  
երկնաւոր աթոռէդ պիտ'որ իջնաս եւ  
բնակութիւնդ սրտիս մէջ պիտի հաս-  
տատես :

Անձն իմ, ահաւասիկ քուցանկալիդ  
Յիսուս՝ այն սիրով բորբոքած, որով  
քեզի համար խաչին վըայ մեռած ա-  
տեն՝ զքեզ կը սիրէր, հիմակ ալ Ա. Հա-  
ղորդութեան մէջ հացի կերպարանաց  
տակ ծածկուած կեցեր է: Սիրովդ վա-  
ռուած՝ կ'ուզէ որ զինքը սիրես. Նշխար-  
քի կերպարանաց տակ՝ քեզի կը նայի,  
եւ կեցեր կը դիտէ զքեզ՝ որ կը պատ-  
րաստուիս իր աստուածային մարմինը  
ճաշակելու: Կը դիտէ որ ինչ կը սի-  
րես, ինչ բանի կը բաղձաս, ինչ ըն-  
ծաներ կ'ուզես իրեն մատուցանել:

Անձն իմ, պատրաստուէ զՅիսուս  
սիրով ընդունելու: Կախ ըսէ իրեն  
լի հաւատով ու ամենայն վստահու-  
թեամբ. Ուրեմն սիրելի Փրկիչ, քիչ մը  
ետքը սիրոս պիտ' որ գաս: Ով ծած-  
կեալ եւ մարդկան մեծ մասին անծանօթ  
Աստուած, կը հաւատամ եւ իրեւ  
Տիրոջս ու Փրկչիս՝ քեզի կը մերձենամ:  
Աս խորհրդեան մէջ քեզի երկրպագու-

թիւն կընեմ, եւ այս ճշմարտութիւնը  
խոստովանելու համար կեանքս ալ ա-  
մենայն յօժարութեամբ տալու պատ-  
րաստ եմ: Դուն կու գաս շնորհքներովդ  
զիս հարստացընելու եւ բոլորովին ին-  
ծի հետ միանալու. ուրեմն որչափ մեծ  
պէտք է որ ըլլայ իմ վստահութիւնս՝  
քու աս սիրալիր եկաւորութեանդ վրայ:

Ներգործութիւն յուսոյ: — Անձն  
իմ, ընդարձակէ սիրտդ. քու սիրելի  
Յիսուսդ քեզի ամէն բարիք կրնայ տալ:  
Եւ որովհետեւ զքեղ սաստիկ կը սիրէ՝  
մեծ բաներ յուսայ աս Տիրոջմէդ, որ ի  
սիրոյ շարժած եւ բոլորովին քու սի-  
րովդ բորբոքած, քեզի կու գայ: Այո՛,  
սիրելի Յիսուս իմ, այո՛, քու անսահման  
բարութեանդ վրայ վստահացած՝ կը  
յուսամ որ աս առտու զքեղ ինծի տա-  
լովդ, միանգամայն իմ ողորմելի սըր-  
տիս մէջ քու հաճոյքդ ընելու գեղեցիկ  
բոցը կը վառես. այնպէս որ ալ քու ու-  
ղածէդ զատ բան չուզեմ ու չբաղձամ:

Ներգործութիւն սիրոյ: — Աստուած  
իմ, հոգւոյս ճշմարիտ ու մի միայն սէ-  
րը, ինծմէ սիրուելու համար աւելի ի՞նչ  
կրնայիր ընել: Բաւական չհամարեցար,  
Տէր, ինծի համար մեռնիլք. ուղեցիր  
նաեւ աս մեծ խորհուրդը հաստատել,  
որպէս զի ինք զինքդ բոլորովին ինծի  
տաս եւ ինծի պէս անպիտան ու ապե-  
րախտ արարածի մը հետ սերտիւ միա-  
նաս: Բայց ասկէ աւելի զարմանալին  
այն է, որ անձամբ զիս կը հրաւիրես  
ու սաստիկ կը բաղձաս որ զքեղ ըն-  
դունիմ: Ո՛չ անչափ սէր, ով անըմբո-  
նելի սէր, ով անսահման սէր. Աստուած  
մը կ'ուզէ ինք զինքը բոլորովին ինծի  
տալ:

Անձն իմ, կը հաւատաս ասոր: Ի՞նչ  
կընես, ի՞նչ կ'ըսես: Ով Աստուած, ո՛  
անչափ սիրելի Աստուած, եւ մի միայն  
արժանի իմ բովանդակ սիրոյս: Բոլոր  
սրտէս, ամէն բանէն վեր, նաեւ անձէս  
ու կեանքէս ալ աւելի կը սիրեմ զքեղ:

Ո՛հ, երանի թէ ամէն մարդիկներէն  
զքեղ սիրուած տեսնէի: Կը սիրեմ  
զքեղ, ով ամենասիրելի փրկիչ իմ, եւ  
սիրտս կը միացընեմ սերովըէից, Ա.  
Աստուածածնի եւ Ա. Յովսեփայ սրտին  
հետ: Ոհ անբաւ բարութիւն, կը սիրեմ  
զքեղ ան սիրով՝ որով կը սիրեն զքեղ  
երկնից սուրբերն եւ անոնց թագուհին:  
Կը սիրեմ զքեղ՝ վասնզի արժանի ես:  
Ելէք, ելէք սրտէս ամէն երկրաւոր յօ-  
ժարութիւնք. վասն զի դուք Աստուծոյ  
համար չէք: Դուն Մայր գեղեցիկ սիրոյ  
Մարիամ, օդնէ ինծի որ սիրեմ այն Աս-  
տուածը՝ զոր այնչափ կը բաղձաս սի-  
րուած տեսնել:

Ներգործութիւն խռարիութեամ: —  
Ուրեմն, անձն իմ, Յիսուսի Քրիստոսի  
մարմինը ճաշակելու կ'երթաս... բայց  
արդեօք արժանի՞ ես: Աստուած իմ,  
ով եմ ես, եւ ով ես դուն: Ես աղէկ  
գիտեմ ու կը խոստովանիմ թէ դուն  
ով ես՝ որ ինք զինքդ ինծի կու տաս.

բայց արդեօք դուն ալ գիտես թէ ես  
ով եմ՝ որ զքեզ ընդունելու կը հա-  
մարձակիմ։ Կարելի՞ բան է, Յիսուս իմ,  
որ անսահման սրբութիւն ըլլալով՝  
բաղձաս իմ սրտիս մէջ բնակելու.  
այնպիսի սրտի մը մէջ, որ այնչափ ան-  
գամ քու թշնամոյդ բնակութիւն  
եղած ու այնչափ մեղքերով աղտեղած  
է։ Կը ճանչնամ, Տէր, քու մեծվայել-  
չութիւնդ ու իմ խեղճութիւնս. անոր  
համար ալ կ'ամչնամ քու առջեւդ ե-  
րեւնալու։ Կ'ուզէի մեծարանաց համար  
քեզմէ հեռանալ. բայց թէ որ քեզմէ  
հեռանամ, ով կեանք իմ, ուր երթամ,  
որուն գիմեմ. իմ վիճակս ինչ կ'ըլլայ:  
Չէ, չէ. չեմ ուզեր քեզմէ բաժնուիլ,  
մանաւանդ թէ միշտ քեզի մօտենալու  
կը բաղձամ։ Դուն յանձն կ'առնուս՝ որ  
զքեզ կերակրոյ պէս ընդունիմ, մանա-  
ւանդ թէ կը հրաւիրես ալ։ Արդ կու  
գամ, սիրելի Փրկիչ, կու գամ զքեզ  
ընդունելու. բոլորովին խոնարհած ու

ամչցած իմ պակասութեանցս համար.  
բայց միանգամայն կատարեալ վստահ՝  
քու ինձի ունեցած գթութեանդ ու  
սիրոյդ վրայ:

Կերպործութիւնն զղջիւան: — Աը  
ցաւիմ, Աստուած իմ, որ մինչեւ հի-  
մայ զքեզ չսիրեցի. մանաւանդ թէ փո-  
խանակ զքեզ սիրելու, կամացս հաճու-  
թիւնները կատարելով՝ անսահման բա-  
րութիւննդ վշտացուցի, քեզմէ ետ կե-  
ցայ, շնորհքներդ ու բարեկամութիւնդ  
արհամարհեցի. մէկ խօսքով, ով Աս-  
տուած իմ, զքեզ կամօք կորսընցընել  
ուզեցի: Աը զղջամ, Տէր, եւ բոլոր  
սրտանց կը գարշիմ մեղքերէս: Կ'ա-  
տեմ՝ քեզի հասցուցած թէ ծանր եւ  
թէ թեթեւ վշտացուցումներս. եւ  
սրտանց կը ցաւիմ որ զքեզ՝ անբաւ սի-  
րոյ արժանիդ զայրացուցի: Աը յուսամ  
որ արդէն ինձի թողութիւն տուած ըլ-  
լաս. բայց թէ որ դեռ թողութիւն չես  
տուած, զքեզ ընդունելէս յառաջ թո-

Ղութիւն տուր։ Լուա իմ սիրտս, ուր  
քիչ մը ետքը պիտի գաս բնակութիւնդ  
հաստատես։

Ներգործութիւնն փափաքանաց։ —  
Անձն իմ, ահաւասիկ հասաւ այն երաւ-  
նելի ժամը՝ որուն մէջ քու Յիսուսդ  
պիտի գայ տառապեալ սիրտդ բնակի։  
Ահա երկնից թագաւորը, ահա քու  
Փրկիչդ ու Աստուածդ, որ քեզի գալու  
վրայ է. պատրաստուէ զինք սիրով ըն-  
դունելու։ Գոչէ փափաքանօք, ըսէ.  
Եկուր, ով Յիսուս իմ, եկուր հոգւոյս  
մէջ՝ որ քեզի կը բաղձայ։ Դուն ինք  
զինքդ ինծի չտուած, կուզեմ ես իմ ո-  
զորմելի սիրտս քեզի նուիրել։ Ընդունէ  
զանիկայ եւ եկուր բնակութիւնդ շուտ  
մը անոր մէջը դիր։

Եկուր Աստուած իմ. շուտով եկուր.  
Մ'ուշանար։ Իմ մի միայն ու անսահման  
բարիքս, գանձս, կեանքս, դրախտս, սէրս  
ու ամեն բանս։ Կ'ուզէի զքեզ ընդու-  
նիլ այն սիրով, որով ընդունած են ա-

մենէն աւելի սուրբ եւ զքեզ սիրող հոգիները. որով ընդունեցաւ սուրբ Կոյս Մարիամ Աստուածածին։ Անոնց հաղորդութեանը հետ կը միացընեմ իմ այս հաղորդութիւնս։

Ամենասուրբ Կոյս եւ Մայր իմ Մարիամ, ահա քու Որդիկ ընդունելու կը մերձենամ։ Կը բաղձայի քու սիրտդու ան սաստիկ սէրն ունենալ, որով դուն կը հաղորդուէիր։ Տուր ինծի աս առտու քու Յիսուսդ՝ ինչպէս տուիր հովուաց եւ սուրբ մոդերուն։ Իբրեւ քու ամենասուրբ ձեռքէդ կ'ընդունիմ զանիկայ։ Ըսէ իրեն թէ ես քու ծառագ եւ քու ջերմեռանդդ եմ. ասանկով անիկայ հիմակ սիրտս եկած ատեն, աւելի սիրալիր աչուըներով ինծի կը նայի եւ աւելի սերտիւ զիս իրեն հետ կը միառոք։

---

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ  
ՀԱՂՈՔԴՈՒԹՅՈՒՆԻՆ ԵՑՔԸ

Կերպործութիւնն հաստատոյ: — Ահա  
այց ըրաւ ինձի Աստուածս ու Փրկիչս,  
եւ հոգւոյս մէջ բնակեցաւ: Հիմայ իմ  
ներսս է Յիսուս. եկաւ ինք զինք իմն  
ընելու, միանգամայն զիս իրենն ընելու:  
Ուրեմն Յիսուս իմն է, ես ալ Յիսուսինն  
եմ. Յիսուս բոլորովին իմն է, ես ալ  
բոլորովին իրենն եմ: Ոչ անսահման  
բարութիւն. Աստուած մը եկաւ ինձի  
հետ միացաւ եւ ինք զինք բոլորովին իմն  
ըրաւ: Իսկ դու անձն իմ, որ հիմակ  
ասանկ Յիսուսին հետ սերտիւ միացած  
եւ սնոր հետ մէկ եղած ես, ի՞նչ կ'ը-  
նես. իրեն բան մը չես ըսեր. չես խօ-  
սիր քու Աստուծոյդ հետ՝ որ քեզի  
հետ է: Քաջալերուէ, զօրացիր. նորէն  
հաստատէ հաւատքդ. մտածէ որ հրեշ-  
տակները չորս գիդ կեցած՝ երկրպա-  
գութիւն կ'ընեն իրենց Աստուծոյն՝ որ  
քու ներսդ կը գտնուի: Դուն ալ քու

Տիրոջդ երկրպագութիւն ըսէ։ Ժողովէ  
ինք զինքդ, միտքդ ամփոփիէ. եւ ուրիշ  
ամէն մտածմունքները վոնտէ։ Բոլոր  
յօժարութիւններդ ու իղձերդ միացուր,  
եւ ըսէ քու Աստուծոյդ.

Ներգործութիւն լնդունելութեամ։ —  
Ոչ Յիսուս, իմ սէրս, իմ անսահման  
բարիքս ու իմ ամէն բանս. կ'ողջունեմ  
իմ աղքատ ու ողորմելի տանս ըրած  
սյցելութիւնդ։ Տէր իմ, ուր եկած ես.  
իմ աս տառապեալ սիրտս, որ վատ-  
թարագոյն է ան ախոռէն ալ՝ որուն մէջ  
ծնար, եւ լի ամէն տեսակ անձնա-  
սիրութեամբ ու անկարգ բաղձանքնե-  
րով։ Եւ ինչպէս, Տէր, ինչպէս կրցար  
գալ ու բնակութիւնդ հոս հաստատել։  
Կ'ուղէի քեզի ըսել Ա. Պետրոսին հետ.  
Ի բաց գնա յինէն, Տէր, զէ այր մեղաստը եմ  
ես։ Իզմէ հեռու գնա, վասն զի խիստ  
անարժան եմ անսահման բարի Աստու-  
ծոյ մ'ընդունելութիւն ընելու։ Գնա,  
գնա հանգչէ ան սուրբ հոգիներուն

մէջ, որոնք մեծ սիրով քեզի կը ծառայեն: — Բայց չէ, Փրկիչ իմ, ինչ կըսեմ. մ'երթար՝ մի բաժնուիր իզմէ. վասն զի եթէ դուն հեռանալու ըլլաս, կորսուած եմ: Կը գրկեմ զքեղ, կեանք իմ, եւ քեզի հետ սերտիւ կը միանամ: Կը խոստովանիմ որ շատ անմիտ գտնուեցայ, որ մինչեւ հիմայ արարածոց սիրոյն համար քեզմէ բաժնուեցայ ու ապերախտութեամբ զքեղ իզմէ վոնտեցի: Բայց այսուհետեւ ալ քեզմէ բաժնուիլ չեմ ուզեր, ով իմ գանձս. կ'ուզեմ քեզի հետ միացած ապրիլ ու մեռնիլ:

Ամենասուրբ Կոյս Մարիամ, դուք սերովք եւ ամենայն երանեալ հոգիք, որ սաստիկ սիրով զԱստուած կը սիրէք, ձեր իղձերն ու յօժարութիւնները ինծի տուէք, որպէս զի ձեր եւ իմ Աստուծոյս աղէկ ընկերութիւն ու կենակցութիւն ընեմ. ամէն:

Կերպործութիւն շնորհակալութեան:  
— Աստուած իմ, Տէր իմ, շնորհակալ

եմ աս առտու սիրտս գալով ու բնակելով՝ ինծի ըրած շնորհացդ։ Կը բաղձայի քեզի եւ ըրած մեծ պարգեւիդ արժանի շնորհակալութիւն մ'ընել։ Բայց ի՞նչ կ'ըսեմ. ես ողորմելիս ու խեղճ մեղաւորս քեզի ի՞նչ շնորհակալութիւն կրնամ ընել։ Դաւիթիթ կ'ըսէր. Զի՞ւ տաց որի տուր Տեսուն ընդ ամենայնէ լը եւ ինչ։ Հապա ես ի՞նչ տամ քեզի, Յիսուս իմ, որ այնչափ բարիքներ տալէն ետեւ՝ աս առտու նոյն իսկ զքեզ ինծի պարգեւեցիր։ Ուրեմն անձն իմ, այսուհետեւ ձեռքէդ եկածին չափ օրհնէ զԱստուած. անոր շնորհակալ եղիր։ — Իմ Մայրս Մարիամ, դուք պաշտպան սուրբերս, պահապան հրեշտակս եւ ամէն երանեալ ոգիք, որ Աստուծոյ սիրով զմայլած էք, եկէք եւ զարմացէք Աստուծոյ ինծի ըրած մեծ շնորհացը վրայ. եւ իմ տեղս զինքն օրհնեցէք ու իրեն շնորհակալ եղէք։

Ներգործութիւնն նոհիրման։ — Թէ

որ թագաւոր մը գայ եւ խեղճ աղքատ  
հովուի մը այցելութիւն ընէ, հովիւն  
անոր ի՞նչ կրնայ ընել, բայց եթէ իր  
բոլոր հիւղն անոր նուիրել: Արդ՝ իմ  
աստուածային թագաւորս, Յիսուս, ո-  
րովհետեւ հոգւոյս ողորմելի տան այ-  
ցելութեան եկար, քեզի կը նուիրեմ  
եւ կու տամ ան տունն ու ինք զինքս  
իմ բոլոր ազատութեամբս ու կամքս  
մէկտեղ: Դուն զքեզ բոլորովին ինծի  
տուիր. ես ալ զիս բովանդակ քեզի  
կը նուիրեմ: Յիսուս իմ, այսուհետեւ  
չեմ ուզեր իմն ըլլալ. կ'ուզեմ քուկդ  
եւ բոլորովին քուկդ ըլլալ: Իմ ամէն  
զգայարանքներս քուկդ ըլլան, որպէս  
զի միայն քեզի հաճութիւն տալու հա-  
մար ինծի ծառայեն: Քեզի հաճու-  
թիւն պատճառելէն զատ ի՞նչ աւելի  
երանութիւն կրնայ ունենալ մէկը, ով  
ամենասիրելի, ամենագութ եւ բարե-  
րար Աստուած: Քեզի կու տամ բոլոր  
կարողութիւններս եւ կ'ուզեմ որ ամէնն

ալ քուկդ ըլլան։ Կը բաղձամ որ  
յիշողութիւնս ուրիշ բանի չծառայէ,  
բայց եթէ քու բարերարութիւններդ  
ու ինծի ցուցըցած մեծ սէրդ յիշելու.  
միտքս իր ծառայութիւնն ինծի ուրիշ  
բանի համար չմատուցանէ, բայց եթէ  
միայն վրադ մտածելու։ Քեզի կը նուի-  
րեմ կամքս, եւ կը ցանկամ որ ան ալ  
ինծի ուրիշ բանի չծառայէ, Աստուած  
իմ, բայց եթէ զքեղ միայն սիրելու,  
եւ այն ուզելու՝ զոր գուն կ'ուզես։

Արդ, ով սիրելի Փրկիչ իմ, աւասիկ  
քեզի կը նուիրեմ ու կ'ընծայեմ ինչ  
որ ունիմ ու ինչ որ եմ. զգայարանք-  
ներս, խորհուրդներս, հաճութիւններս,  
միտութիւններս, ազատութիւնս, մէկ  
խօսքով՝ մարմինս ու հոգիս։ Ընդունէ  
աս նուէրը՝ զոր երկրիս վրայ գտնուող  
մեղաւորներուն ամենէն ապերախտը՝  
ինք զինքը մատուցանելով՝ կ'ընէ քեզի.  
եւ նուիրածն ուրիշ բան չէ, բայց եթէ  
իր բոլոր անձը։ Այսուհետեւ վարուէ

ինծի հետ, ինչպէս որ կ'ուզես, ինչպէս  
որ կը հաջիս: Եկուր, ով հուր սպա-  
ռիչ եւ աստուածային սէր, եկուր սպա-  
ռէ այն ամենայն որ Յիսուսիս սուրբ  
աշացն աղէկ չերեւար, որպէս զի այս-  
օրուընէ բոլորովին իրենն ըլլամ. եւ  
չէ թէ միայն իր հրամաններուն ու  
պատուէրներուն՝ հապա նաեւ իր ամէն  
սուրբ բաղձանացն ու խորհուրդներուն  
հետեւելու համար միայն ապրիմ. ամէն:

Ամենասուրբ Կոյս Մարիամ, քու ձեռ-  
քովդ ամենասուրբ Երրորդութեան առ-  
ջեւ հանէ իմ աս նուէրս եւ բարեխօս  
եղիր որ զանիկայ ընդունի, եւ մինչեւ  
ցմահ անոր մէջ հաւատարիմ մնալու  
ինծի շնորհք տայ. ամէն:

Ներգործութիւն աղաչանաց: — Անձն  
իմ, ինչ կընես, հիմա կորսընցընելու-  
ատեն չէ: Աս ժամանակը պատուական  
ժամանակ է, որուն մէջ կրնաս ընդու-  
նիլ ինչ շնորհք որ կ'ուզես: Չե՞ս տես-  
ներ յաւիտենական Հայրը, որ սիրոյ

Հայեցուածքով կը նայի քեզի՝ սրտիդ  
մէջ տեսնելով իր սիրելի Որդին, որ  
իր սիրոյն ամենէն պատուական առար-  
կան է: Մերժէ, հեռացուր քեզմէ ա-  
մէն օտար խորհուրդները. դարձեալ զօ-  
րացուր հաւատքդ, ընդարձակէ սիրտդ  
եւ խնդրէ ինչ որ կ'ուղես:

Չես լսեր որ նոյն իսկ Յիսուս քեզի  
կ'ըսէ. Զինչ էտիս, չե որաբեց եւ. Ըսէ,  
ինչ կ'ուղես, ինչ կը բաղձաս: Ես եկած  
եմ զքեզ հարստացընելու եւ բաղ-  
ձանքներդ լեցընելու: Խնդրէ վստա-  
հութեամբ, եւ ուղածդ կ'ընդունիս:

Ով քաղցր Փրկիչ իմ, որովհետեւ  
դուն եկած ես ինծի շնորհք տալու,  
եւ շատ կը բաղձաս որ խնդրեմ, ահա  
խնդրածս աս է. Չեմ ուղեր քեզմէ  
ոչ երկրաւոր բարիք, ոչ հարստութիւն,  
երկրիս բարիքներէն եւ ոչ մէկը: Տուր  
ինծի, կ'աղաշեմ, քեզի պատճառած  
տհաճութեանցս վրայ մեծ ցաւ մը:  
Տուր ինծի լցո՞ւ որ աս աշխարհիս ու-

նայնութիւններն ու քու որչափ սիրոց  
արժանի ըլլալդ ճանչնամ։ Փօխէ սիրտս,  
անջատէ զանիկայ ամեն երկրաւոր հա-  
ճութիւններէն, եւ սուրբ կամացդ հա-  
մեմատ սիրտ մը տուր ինծի, որպէս զի  
ուրիշ բան չփնտռեմ, բայց եթէ քու  
մեծագոյն հաճութիւնդ, ուրիշ բանի  
չբաղձամ, բայց եթէ քու սուրբ սիրոյդ։  
Սիրո սուրբ հաստեա յէս Աստուած։ Կը  
խոստովանիմ որ ես ասոր արժանի չեմ.  
Բայց դուն արժանի ես, Յիսուս իմ. վասն  
զի չդանդաղեցար գալ եւ բնակութիւնդ  
իմ սրտիս մէջ հաստատել։ Ուստի կա-  
ղաչեմ, տուր ինծի աս շնորհքը քու  
արժանեացդ, ամենասուրբ Մօրդ ար-  
դեանցը եւ յաւիտենական Հօրդ ու-  
նեցած սիրոյդ համար։

(Հոս խնդրէ Յիսուսէն քեզի եւ քու մեր-  
ձաւորներուդ համար հարկաւոր եղած շնորհքնե-  
րը։ Մեղաւորներն ու քաւարանի հոգիներն ալ  
մի մոռնար։)

Հայր յաւիտենական նոյն ինքն միա-  
ծին Որդիդ, Յիսուս Քրիստոս, մեզի

ըսաւ. Զոր ինչ եւ ինտենցէտ է Հօրէ իմէ  
յանուան իմ, ուղիւ յեւ։ Արդ աս Որ-  
դոյդ սիրոյն համար, որ հիմայ իմ  
սրտիս մէջն է, լսէ աղազանացս եւ  
խնդրածս տուր։ — Իմ սէրս՝ Յիսուս  
ու Մարիամ, ձեզի համար կ'ուզեմ չար-  
չարուիլ ու մեռնիլ. կ'ուզեմ բոլորովին  
ձերն ըլլալ եւ ոչ երբեք իմս։

Միշտ օրհնեալ ու գովեալ ըլլայ  
չաղորդութեան ամենասուրբ խոր-  
հուրդը։ — Օրհնեալ ըլլայ երանելի  
կուսին Մարիամու սուրբ եւ անարատ  
յղութիւնը. ամէն։

---

### Ա Պ Օ Բ Ա Ք

առ Ա. Աստուածածին, չաղորդութենէն  
ետեւ։

Անբաւ շնորհակալութիւն կը մա-  
տուցանեմ քեզի, ով ամենասուրբ կցյս,  
ան մեծ շնորհին համար, զոր ըրիր ին-  
ծի քու սուրբ որովայնիդ ամենօրհնեալ

պտուղն զՅիսուս, իմ Աստուածս ու  
Փրկիչս, ընդունելու շնորհք առնելովդ:  
Կը խնդրեմ քեզմէ, ով Մայր գթու-  
թեան, որ քու եւ սիրելի Որդւոյդ ար-  
դեանցը համար՝ ամէն մեղքերուս թո-  
ղութիւն ընդունիս, մոլութիւններս  
մաքրես, բարւոյն մէջ յառաջադիմու-  
թիւն տաս, վշտացս մէջ՝ համբերու-  
թիւն, փորձութեանցս ժամանակ՝ յաղ-  
թութիւն, բարի յառաջադրութեանցս  
մէջ՝ հաստատութիւն, աշխարհային ու  
զգայական իրաց ատելութիւն ու  
զգուում. հոգեւոր բաներու սէր ու  
բորբոք, մէկ խօսքով ամէն բանի մէջ  
քու սիրելի Որդւոյդ աստուածային կա-  
մացը կատարեալ համակերպութիւն:

Աս շնորհքները կը խնդրեմ քեզմէ,  
Յիսուս, ամէնօրհնեալ Մօրդ ինն ամիս  
զքեզ իր սուրբ արգանդին մէջ կրելովն  
ունեցած արդեանցը, զքեզ դիեցու-  
ցած ու սնուցած կուսական կաթին, եւ  
իր սուրբ ու ողջախոհ փեսային, Ա.

Յովսեփիայ հետ քեզի մատուցած հա-  
ճոյական ծառայութեանցը համար. որ-  
պէս զի միշտ վրաս փառաւորուի քու  
ոուրբ անունդ. ամէն:

Հաղորդութենէ ետեւ խաչելութեան պատ-  
կերի մ'առջին հետեւեալ ազօթքն ընողը՝ լիա-  
կատար ներողութիւն կը վաստըկի: Պիոս Ե. 10.  
Ապրիլ. 1821:

Ո՛վ բարի Յիսուս, ահա քու մեծ-  
վայելութեանդ առջին երեսի վրայ ին-  
կած՝ բոլոր սրտանց կ'աղաչեմ ու կը  
խնդրեմ քեզմէ, որ իմ սրտիս մէջ  
տպաւորես կենդանի հաւատք, յոյս ու  
սէր. դարձեալ իմ մեղացս վրայ ճշմարիտ  
ցաւ եւ հաստատուն յառաջադրութիւն  
ալ զքեզ չքարկացընելու: Եւ ցաւագին  
սրտիւ քու հինդ վէրքերդ կը մտածեմ՝  
Դաւիթ մարդարէին այն խօսքը յիշելով,  
թէ Ծակեցին շներս իմ եւ լոռս իմ, ե-  
նուեցին պատենայն սոկերս իմ:

ՅԵՐԱՒՆԱԿԱՆ ՏԵՂԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱԼՈԹ ՔՆԵՐ

Քրիստոսի Ծը-  
նընդեան:



Աստուածային Փրկիչ իմ,  
այսօր կը տօնենք քու հրա-  
շալի ծնունդգ, որով  
այնչափ անձկութեամբ  
ու այնպէս փափաքանօք  
սպասող աշխարհքիս ե-  
րեւցար մարմնով։ Ան-  
չափ ողորմութեանդ վը-  
րայ զարմանալով՝ միտքս  
կու գայ հրաշալի ծննդեանդ ատեն  
երկնային զօրաց գովասանքները, թէ  
Փառ+ ի բարձունս Աստութոյ։ Ով սիրոյ  
Աստուած, ինձի համար ալ փառացդ

գահը թողուցիք, եւ անչափ բարձրութենէդ խոնարհեցար, աղքատացար եւ աշխարհքիսնեղութիւնները յանձն առիր։ Ասոր փոխարէն քեզի ինչ կրնամընել, եթէ ոչ խորին խոնարհութեամբ ու մեծարանօք՝ մնրոյդ առջին իյնալ, եւ հովուաց հետ եռանդեամբ ու աստուածպաշտութեամբ երկրպագութիւն ընել։ Քու մնուրդ, քու աս աստիճանի խոնարհիլդ՝ կը սորվեցընեն ինծի մանաւանդ խոնարհութիւն։ Դուն անմեղ տղու մը կերպարանքով առջեւէս կ'երթաս, եւ կ'ուզես որ ես ալ քեզի հետեւիմ։ Ուրեմն սրտանց կը բաղձամ ասանկ ընել, Փրկիչ իմ։ Կ'ուզեմ քեզի պէս խոնարհ ու հեղ ըլլալ։ Կ'ուզեմ աշխարհքիս վշտացը համբերել. որովհետեւ դուն՝ սուրբդ սրբոց, մանկութենէդ ինծի համար չարչար ուեցար ու վշտացար։ — Բան՝ որ մարմին եղար եւ ի մեղ բնակեցար, կը յուսամ որ օր մը ինծի ալ փառքդ տես-

նել ու վայելել կու տաս: Ով մանուկ  
Յիսուս, կատարէ իմ փափաքս եւ զիս  
մարդեղութեանդ պտուղներէն մի զըր-  
կեր. ամէն:

‘Եսր տարւոյ:

Ով մշտնջենաւոր անփոփոխելի Աս-  
տուած, շնորհակալ կ'ըլլամ քեզի որ  
աս նոր տարւոյս ալ զիս հասցուցիր:  
Դուն ստեղծեցիր ցորեկն ու գիշերը.  
Քու հրամանաւդ եղան օրերն ու տա-  
րիները: Թէպէտ մտայ առաջիկայ տա-  
րին, սակայն չեմ գիտեր թէ պիտի  
լմընցընեմ: Ով ծածկագէտ Աստուած.  
Քու առջեւդ խաւարը՝ լոյս, հազար տա-  
րին իբրեւ մէկ օր է: Դուն միայն գի-  
տես մեր սկիզբն ու կատարածը: Թեեւ  
չգիտնամ որ այս տարի գլխէս ինչեր  
պիտ' որ անցնին, սակայն հաւատոյ լու-  
սով գիտեմ թէ զքեզ սիրողներուն  
ամէն բան իրենց փրկութեանը գործա-  
կեց կ'ըլլայ: Թէ որ ծառայութեանդ

մէջ յարատեւեմ, եթէ ճշմարտապէս  
զքեղ սիրեմ, ամէն նեղութիւն քաղցը  
կ'ըլլայ, ամէն չքաւորութիւն՝ հարըս-  
տութեան, ամէն աշխատութիւնները՝  
հանգստեան, ամէն նեղութիւն՝ ուրա-  
խութեան կը դառնայ: Ցաւերն ու ար-  
տասուքները կ'ըլլան միսիթարութիւն  
ու ցնծութիւն. վասն զի չկայ բան մը՝  
որ զքեղ սիրողներուն բարիք գործելու  
օգնական չըլլայ: — Ուրեմն շնորհէ ին-  
ծի, Հայր յաւիտենական, որ աս սկսած  
տարիս ու բոլոր կեանքս շնորհացդ մէջ  
անցընեմ եւ զքեղ միայն սիրեմ: Մի  
թողուր որ բան մը զիս այս սէրէն բաժ-  
նէ. վասն զի այն ժամանակ ինչ որ պա-  
տահի՝ սիրոս խաղաղ ու հանգիստ կ'ըլլ-  
այ: ամէն:

Ասառածայայտնութեան:

**Ա**մենազօր Աստուած ու գիշած Փըր-  
կիչ իմ, այսօր ցուցուցիր քու բարու-  
թեանդ անըմբոնելի խորհուրդը, որով

ի քեզ բովանդակ մարդ կու թիւնը պիտի  
օրհնուէր: Այսօր յայտնեցիր քու մարդ-  
կու թիւնդ երեք մոգերուն, որ ամենա-  
զօր Աստուծոյդ՝ իբրեւ նորածին տղու-  
մը ոտքն ինկած՝ ընծանին քեզի նուի-  
րեցին, եւ ճանչցան զքեզ իրենց Աս-  
տուածը, թագաւորն ու տէրը:

Քու բարու թիւնդ զմեզ ալ ճշմարիտ  
լուսոյն եւ քեզմէ խրկուած Միածնիդ  
կը կոչէ: Ասոր միջնորդու թեամբը մեզի  
խաղաղութիւն, ուրախութիւն, լոյս,  
եւ առաքինութեանց մէջ յառաջանա-  
լու զօրու թիւն կը պարգեւես: Բայց ես  
մեղօք որչափ մոռցայ աս սէրը: Ներէ,  
Տէր, եւ ծառայիդ հետ դատաստան  
մի մտներ, հապա հաստատէ նորէն  
սրտիս մէջ հաւատքը, եւ պայծառա-  
ցուր քու աստուածային շնորհացդ  
լոյսը սրտիս մէջ. որպէս զի աշխարհքիս  
ունայնութենէն հրաժարելով, զքեզ  
միայն գտնելու ջանամ, գտնելէն ետեւ՝  
պահեմ: Իսկ դու, ամենասիրելի Փրկիչ

իմ, շնորհք տուր որ զքեղ բոլոր աշխարհքիս առջեւ ճանչնանք, որպէս զի դուն ալ զմեղ երկնաւոր Հօրդ առջին ճանչնաս, եւ մեզի խոստացած յաւիտենական պարգեւը տաս. ամեն:

Տեառնընդառաջին:

**Ա**մենախոնարհ Կոյս, Երուսաղեմ սրբուելու կու գաս, որպէս զի մէկը չմտածէ թէ դուն Աստուծոյ Մայրն ես, հապա ամէնքն անանկ կարծեն որ հասարակ կանանց պէս՝ մարդ աշխարհք բերիր: Ասանկ փառքդ անհետ ըլլալով՝ կը փայլի քու խոնարհութիւնդ: Բայց երանելին Սիմեոն ի Հոգւոյն սրբոյ առաջնորդուած՝ չէր կրնար խաբուիլ: Բաղձանացը համեմատ իր Փրկիչը տեսնելու երանութիւնն ունեցաւ. գիրկն առաւ, եւ ճանչցաւ զանիկայ աշխարհքիս լոյս ու իր ժողովրդեանը փառք: — Կոյս սուրբ, քու հոգիդ հասարակ մարդիկներու հոգիէն տարբեր է ու

բոլորովին նման քու սիրելի Որդւոյդ  
հոգւոյն։ Մարդիկ մինակ բարձրութիւն  
կը փնտռեն, իսկ Յիսուս ու դուն՝ մի-  
նակ խոնարհութիւն։ Ինծի շնորհք  
ընդունէ, որ ես ալ իմ հոգիս Յիսուսի  
հոգւոյն նմանցընեմ։ Ընծայէ միանդա-  
մայն սիրտս ալ անոր, որպէս զի ինք զա-  
նիկայ սրբելով՝ կարենամ ամէն գործ-  
քերս սուրբ դիտաւորութեամբ եւ միայն  
եր մեծագոյն փառաց համար ընել. ամէն։

Աւետման։

**Սի** խռովիր, անհամեմատ կոյս, որով-  
հետեւ Աստուծոյ հրեշտակն է՝ որ կու  
գայ քեզի իմացընելու թէ բոլոր երկրի  
ուրախութեան առիթ տուող, մինչեւ  
հիմայ քու փափաքանացդ նպատակն  
եղող ու քու խոնարհութիւնդ պսա-  
կող երջանիկ օրը հասաւ։ Կու գայ քե-  
զի ըսելու՝ թէ Որդի մը պիտ'որ յղա-  
նաս, այնպիսի կատարեալ աստուածային  
զօրութեամբ ու ներգործութեամբ՝ որ

ամենեւին կուսութեանդ ուխտին վեաս  
պիտի չհասնի. եւ աս Որդին պիտ'որ  
քաւէ իր ժողովուրդն ամէն անօրէնու-  
թիւններէն ու պիտի հանէ սատանային  
գերութենէն, որուն մէջ անհնազան-  
դութեամբ ինկած էր: — Ամենամաքուր  
կոյս, աշխարհքէ քաշուած այն առան-  
ձնական կեանքդ, որ մարդիկներու հա-  
ղորդութենէն հեռու կ'անցընէիր, ար-  
ժանի ըրաւ զքեզ աս պատուական այ-  
ցելութեան եւ զքեզ պատրաստեց մա-  
քուր արդանդդ ընդունելու ամենակալ  
Աստօւծոյ Որդին: Ես ալ կ'ուզեմ աս  
ճամբով զՅիսուս իմ սիրտս բերել ու  
սրտիս մէջ պահել. ամէն:

Զատկին:

Ավ թագաւոր փառաց, ամէն ա-  
րարածները փառաւոր յարութեանդ  
ունեցած ուրախութիւննին կը յայտ-  
նեն՝ թէ Փառական յարունեան + + Տէր: Փառք  
եւ երկրպագութիւն աստուածային ա-

մենակարողութեանդ, որ զքեզ գերեզմանէն յարոյց եւ տրտմազգած աշխարհքը մեծ ուրախութեամբ լեցուց: Փառք քեզի, անմահութեան պարգեւատու, որ մարդկութիւնը յարութեամբդ փառաւորեցիր եւ մահուան վրայ յաղթանակեցիր: Երկրպագութիւն քեզի, ով կենդանացուցիչ մահկանացու բնութեանդ, որ կատարեցիր սիրոյ ամենէն մեծ գործքը. վասն զի խաչափայտին վրայ մեռար, եւ մեղաց վրայ յաղթութեան դրօշը կանգնեցիր: Դուն ես լոյս, յարութիւն եւ կեանք: — Ծնորհէ ուրեմն որ աս Ճշմարտութեանց համեմատ ապրիմ ու մեղաց մեռնելով՝ յառնեմ հոգեպէս: Ծնորհէ որ մարմինս հոգւոյս հնազանդեցընեմ. որպէս զի մահկանացու մարմինս վերջին դատաստանին օրը ապականութեան սերմէն փառաւորապէս ելլելով, կարենայ ձայնակցիլ երկնային զօրաց բազմութեան. ամէն:

Համբարձման:

**Տէր** Յիսուս Քրիստոս, դուն հիմայ  
մեղմէ կը բաժնուիս ու երկինք կը վե-  
րանաս: Բայց մի դադրիր ասկէ ետքն  
ալ ըլլալու առաջնորդս ու օգնականս:  
Սորվեցուր ինծի քեզի նմանելու եղա-  
նակը. տուր որ խաղաղութեամբ համ-  
բերեմ այս կենաց նեղութեանցն ու  
վշտացը: Պշուցեալ աչօք ետեւէդ կը  
նայիմ դէպ ի երկինք, որպէս զի՞ զօրա-  
նալով՝ առաքինութեանց դժուարին ու  
փշալից ճամբուն վրայէն ուրախու-  
թեամբ ընթանամ: Մեզի համար ալ  
բաց է երկնային Հօրդ օթեւանին դու-  
ռը: Ուստի հաստատութեամբ կ'առա-  
ջադրեմ, փրկիչ իմ, շնորհացդ օգնու-  
թեամբը կոռոիլ կենաց ամէն դժուա-  
րութեանցը հետ, որպէս զի երանու-  
թեան արժանի ըլլամ: Տոգորէ այսօր՝  
քու հրաշալի համբարձմանդ օրը՝ սրտիս  
մէջ այն Ճշմարտութիւնը՝ թէ ան կրնայ

միայն քեզի հետ երջանկանալ, ան մի-  
այն երկինքը վայելել, որ քեզի պէս  
միայն երկնից համար կեանք անցուցած  
է. ամէն:

Հոգեգալստեան:

Աղորմած Աստուած իմ, դուն սուրբ  
Հոգիդ առաքելոց խաւրելով՝ զինք նաեւ  
մեզի պարգեւեցիր: Աս ինչ մեծ շնորհք  
է, ինչ մեծ միսիթարութիւն է: Կը  
զգամ տկարութիւնս, գիտեմ նաեւ որ  
առանց քու օգնութեանդ բան մը չեմ  
կրնար ընել: Աստուած իմ, դուն գի-  
տես թէ ինչպէս դիւրին է փորձու-  
թեանց մէջ իյնալ ու մեղաց տակ ընկ-  
ճիլ: Եթէ սուրբ Հոգիդ ինծի զօրու-  
թիւն չի տար պատերազմելու եւ յաղ-  
թելու, եթէ պարտքերս սիրով կատա-  
րելու միսիթարութիւն չի պարգեւեր,  
ես իզմէ բանի մը կարող չեմ: Արդ՝  
հեղ ամենուս վրայ սուրբ Հոգիդ,  
Ճշմարտութեան, իմաստութեան, սիրոյ,

աստուածային երկիւղի, քաղցրութեան  
ու խոնարհութեան հոգին, զօրութեան  
եւ սրբութեան հոգին. որպէս զի քու  
Հոգւովդ՝ մարմնոյ գործքերը մեռու-  
ցանենք, մեղանչական ցանկութիւններն  
ու կրքերը սանձենք, եւ բարձրանանք  
Աստուծոյ որդւոցը կատարեալ ազա-  
տութեան: Զօրացուր զմեզ փորձու-  
թեան ու վշտաց ժամանակ: Տուր մեզի  
որդիական սէր: Ճնորհէ որ մէջերնիս  
թագաւորեն արդարութիւնը, խաղա-  
ղութիւնն ու եղբայրսիրութիւնը. որպէս  
զի տեսուի որ չէ թէ աշխարհքի՝ հապա  
Քրիստոսի, չէ թէ ծառայութեան՝ հա-  
պա Աստուծոյ որդեգրութեան հոգին  
վրանիս կը կրենք: Դու միսիթարիչ սուրբ  
Հոգի, դու Աստուած ընդ Հօր եւ ընդ  
Որդւոյ, դու Հոգի լուսոյ եւ ճշմարտու-  
թեան, տուր մեզի զօրութիւն, որպէս  
զի օր քան զօր մեղաց մեռնելով՝ սրտեր-  
նիս քեզի նուիրեալ տաճար ըլլայ, եւ  
կենդանւոյն Աստուծոյ բնակարան մնայ

մինչեւ որ հասնինք երանելի լրման,  
յաւիտենական փառաց. ամէն:

Սուրբ Երրորդութեան:

**Ա**մենասուրբ Երրորդութիւն, Աս-  
տուած մշտնջենաւոր, խորին ոչնչու-  
թեանս մէջ՝ անչափ զօրութեանդ ու  
ամենակարողութեանդ առջեւ՝ իբրեւ  
բարձրելոյ ու ամենազօր արարչի՝ եր-  
կրպագութիւն կ'ընեմ ու շնորհակալ  
կ'ըլլամ որ ինք զինքդ ինծի ճանչցուցիր:  
Անչափս կ'ուրախանայի եթէ բոլոր կե-  
նացս մէջ կարենայի միշտ աստուածային  
մեծվայելչութիւնդ օրհնել ու փառա-  
ւորել սուրբ հրեշտակացդ ու ընտրե-  
լոցդ պէս: Իսկ հիմակ ոչնչութեանս  
մէջ ընկղմած՝ խոնարհութեամբ կը խըն-  
դրեմ որ սրտիս շնորհակալութիւնը  
քեզի հաճոյ ու ընդունելի պատա-  
րագ ըլլայ: Արդ, ով ամենասուրբ  
Երրորդութիւն, բոլորով սրտիւ շնոր-  
հակալ կ'ըլլամ այն անչափ շնորհացդ

ու բարերարութեանցդ՝ որոնց զիս մաս-  
նակից ըրիր ծննդենէս մինչեւ հիմայ:  
— Ծնորհակալ եմ քեզի, Հայր Աս-  
տուած, որ զիս պատկերիդ նման ստեղ-  
ծելէն ետեւ, ամենակարողութեամբդ  
կը պահպանես, որպէս զի զքեզ եւ  
զօրդիդ եւ զսուրբ Հոգիդ հրեշտակաց  
ու սրբոց հետ յաւիտեանս օրհնեմ:  
Ծնորհակալ եմ քեզի, Որդի Աստուծոյ,  
որ մեզի համար մարմին առիր, արիւնդ  
թափեցիր ու դառն մահուամբ մեռար,  
որ զմեզ յաւիտենական մահուանէ ա-  
զատես: Ծնորհակալ եմ քեզի, ով  
սուրբ Հոգի, որ զիս մկրտութեամբ  
սրբեցիր ու յաւիտենական երանու-  
թեան ժառանգ ըրիր: — Ով սուրբ  
Հոգիք եւ ընտրեալք Աստուծոյ, եւ  
դու օրհնեալդ ի կանայս՝ Մարիամ,  
միացուցէք աս չնչին շնորհակալութիւնս  
ձեր փառատրութիւններուն ու շնոր-  
հակալութիւններուն հետ. ամէն:

Ա երափոխման :

Փառաւորեալ Կյս Մարիամ, Երբ  
թաղուելով մարմինդ երկրի աւանդ  
տուիր, անանկ պատուական նշխար մը  
թողուցիր անոր, որ զանիկայ երկայն  
ատեն պահելու երանութիւնը չէր  
կրնար ունենալ: Այն սուրբ տապանա-  
կը, որուն մէջ մարմնացեալ Աստուա-  
ծութիւնը բնակած էր, ուրիշ տեղ չէր  
կրնար հանգչիլ՝ եթէ ոչ անոր սրբու-  
թեան յարկին մէջ: Կը վայելէր որ  
հոգւոյդ այնչափ սքանչելի առաքինու-  
թեանց կրթութիւններուն ընկերա-  
ցող մարմինն՝ իր երջանկութեանը հաս-  
նելու համար՝ ընդհանուր յարութեան  
օրուան չսպասէ: Աս էր պատճառը,  
որուն համար այն տաճարն երկայն ա-  
տեն իր փառքէն զուրկ չմնաց: Մա-  
հուընէդ երեք օր ետքը հրեշտակները  
զանիկայ վերցուցին ու երկնաւոր Սիօն  
տարին, ուր երանելեաց դասերուն առ-

զեւ՝ Աստուծոյ Մօր եւ երկնից ու երկրի թագուհոյ մը վայել փառօք երեւցար, եւ մարմնով ու հոգւով՝ հրեշտակներէն վեր, աստուածային Որդւոյդ քով քեզի պատրաստուած աթոռը նստար պսակեալ, ուր իրեն հետ պիտի թագաւորես յաւիտեանս:  
— Ով ամենասուրբ Կոյս, կ'ուրախանամ քու աս փառացդ վրայ՝ ինձի եղած փառքի պէս, մանաւանդ թէ ալ աւելի: Կ'ուղէի քեզի վայել գովեստներով աս փառքդ օրհնել: Աը բաղձայի քեզի ընծայելու արժանի եւ կամ իմ իղձերս քեզի յայտնելու բաւական բան մ'ունենալ: Ընդունէ կ'աղաչեմ, օրինակովդ ինձի սորվեցուցած առաքինութեանցդ փունջը, զոր կ'ուղեմ հիւսել՝ Աստուծոյ եւ ընկերին սիրոյն, ապաշխարութեան, մահացուցման, հնաղանդութեան, հեղութեան եւ խոնարհութեան գործքերով: Ինչչափ երջանիկ կ'ըլլամ թէ որ ասով հզօր պաշտպանութեանդ ար-

ժանանամ։ Ասիկայ կը խնդրեմ քեզմէ  
ինծի ունեցած սիրոյդ համար։ Կը  
խնդրեմ միանգամայն ինծի ու ամէն ար-  
դարոց համար վախճանական յարա-  
տեւութիւն։ Եւ եթէ քու ողորմու-  
թեամբդ աս շնորհքն ընդունինք, Աս-  
տուծոյ անսահման ողորմութիւնն ու  
քու անչափ գթութիւնդ կ'երգենք  
յաւիտենականութեան մէջ։ ամէն։

ԾՆՆԴԻԱՆ Ա. Աստուածածնի։

Ով անհամեմատ կոյս, հասաւ այն  
ատենը, զոր Աստուած խոստացած էր,  
մարդարէները պատմած էին, եւ որուն  
նահապետք ու բոլոր հեթանոսք կը բաղ-  
ձային։ Դուն աշխարհք կու գաս եւ  
ծնանելու ատենդ իսկ՝ իբրեւ պատերազ-  
մի ճակատած բանակ մը՝ սատանաներու  
զարհուրելի կ'երեւաս, եւ ընդ հակա-  
ռակն հորիզոնին վրայ ծագած արշա-  
լցուէն ալ աւելի ուրախացուցիչ՝ սրբոց։  
Կրօք ալ՝ ինչպէս որ այն առաւօտեան

այգն արեգական ծագելը կ'աւետէ, ա-  
նանկ ալ դուն արդարութեան Արեգա-  
կան ծագելը կ'աւետես: — Եթ շնորհօք  
կոյս, ինչ կրնամ ընել ես, որ մարդկան  
վրայ ունեցած սիրալիր իղձերուդ ու  
Աստուծոյ դիտաւորութեանցը համեմատ  
ըլլայ. բայց եթէ խնդրել որ զքեղ  
ամէն բանէն վեր սիրեմ, բոլոր յոյսս  
մայրենի սրտիդ վրայ դնեմ ու քեղի  
վստահիմ: Սատանային յարձակմաւնք-  
ներէն պատերազմ կրած ատենս, քե-  
զի՝ իբրեւ գթած մօր դիմեմ, մտածե-  
լով որ դուն ես այն հզօր կինն՝ որ հին  
օձին գլուխը ջախջախեցիր եւ անոր  
բովանդակ զօրութիւնը խորտակեցիր:  
Աղաչել՝ որ ամէն մարդ, չէ թէ միայն  
իր երջանկութեանը, հապա նաեւ Աս-  
տուծոյ մեծագոյն փառացը համար, Որ-  
դիդ ու զքեղ ճանչնայ, սիրէ, պաշտէ  
հիմայ աս աշխարհքիս վրայ ու յետոյ  
յաւիտենականութեան մէջ. ամէն:

Անուան Մարեմայ:

Անարատ կոյս, քու սուրբ անուանդ  
քաղցրութիւնն ամէն սրբոց սէրը քեզի  
ձգեց, եւ իրենց՝ սէրդ բաղձալ ու  
փնտռել տուաւ: Անուանդ տարածած  
հոտը՝ զանոնք յորդորեց քու ետեւէդ  
երթալու եւ կատարելու այն առաքի-  
նութիւնները, որոնց կատարեալ օրի-  
նակը տուիր աս աշխարհքիս վրայ գըտ-  
նուած ատենդ: Ով սուրբ անուն, ով  
բաղձալի անուն. մարդ չի կրնար զքեզ  
ըստ բաւականի բարձրացընել: Մեզըի  
պէս անոյշ ես բերնի, քաղցր ջերմե-  
ռանդութիւն կը սփռես սրտից, եւ  
անպարտելի քաջութիւն կու տաս՝  
թշնամոյն հրապուրանացը դէմ կե-  
նալու, ան թշնամոյն՝ որուն վրայ  
առջի անգամ գուն յարձակեցար ու  
փառաւոր յաղթութիւն ստացար: —  
Ով Մարիամ, կ'ուզեմ ամէն ատեն  
քու սուրբ անուանդ մեծ յարդութիւն

ու սաստիկ սէր ունենալ. Եւ ասոր նշան՝  
կ'ուղեմ անունդ լսելուս պէս՝ գլուխս  
խօնարհեցընել։ Ամէն բանէն աւելի,  
ով սուրբ Կոյս, շնորհք տուր ինծի որ  
ամէն փորձութեանցս ու տառապանացս  
մէջ՝ Յիսուս անուան հետ քու անունդ  
ալկանչեմ, ըսելով. Յիսուս, Մարիամ։  
Աս երկու անուններն ըլլան իմ հզօր  
վահանս ամէն դժոխական թշնամեացս  
դէմ. ամէն։

Անարատ յղութեան։

Ավ ամէն սուրբերէ աւելի սուրբ  
Կոյս, կը խոստովանիմ՝ որ դուն առանց  
մեղաց յղացար. քու բոլոր կենացդ մէջ  
սրբութիւնդ ու անմեղութիւնդ ոչ  
միայն չնսեմացաւ, այլ եւ աւելցաւ եւ  
դքեզ աւելի եւս արժանի ըրաւ Հո-  
գւոյն սրբոյ՝ որ իրեն սիրելի հարսն  
ընտրեց։ Այո՛, դուն իրմէ ունեցար այն  
երջանիկ պտղաբերութիւնը, որով աշ-  
խարհքին՝ իր Փրկիչը տուիր, եւ զինքը

ծնանելէն ետքն ալ՝ ամէն կցյսերէ աւ-  
ելի սուրբ ու կցս մնալու փառաւոր  
առաւելութիւնդ չկորսընցուցիր: — Ով  
ամենաքաղցր ու անարատ կցս Մարիամ,  
դժած աչուըներովդ ողորմելի ոգւոյս  
սոսկալի վէրքերուն նայէ: Դուն որ ա-  
մենեւին սուրբ եւ անարատ մնալով  
սկզբնական մեղքէ, կենաց առաջին  
վայրկենէն բոլորովին գեղեցիկ երեւցար  
Աստուծոյդ առջեւը, ողորմէ ինձի՝ որ  
չէ թէ միայն մեղաց մէջ ծնած, այլ  
մկրտութենէ ետքն ալ հոգիս մեղօք  
արատաւորած եմ: Անհամեմատ կցս,  
որ շնորհքը կրնայ քեզի զլանալ Աս-  
տուած, որ իրեն դուստր, մայր ու  
հարսն ըրած, եւ թէ սկզբնական ու  
թէ ներգործական մեղքէ պահած եւ  
բոլոր արարածներէն սրբագոյն ըրած  
է: Քեզի կը դիմեմ. դուն ըրէ որ  
փրկուիմ: Տուր որ յոսս մայրական  
ինամոցդ վրայ դնեմ եւ քեզի հաճոյա-  
նալու ջանամ. ամէն:

ՔԱՆԻ ՄԷ ՍՈՒՐԲԵՐՈՒ  
Ա Լ Օ Թ Ֆ Ն Ե Ր



Ա Զ Օ Թ Ք

Առ սուրբ Յովսէփ  
Աստուածահայր:

Ավ փառաւորեալ նա-  
հապետ սուրբ Յով-  
սէփ, պաշտպան հաւա-  
տացելոց ու իմ առանձին  
փաստաբանս: Դուն որ  
Աստուծմէ ընտրուեցար  
կուսանաց կուսին փեսայ  
եւ իւր անարատութեանն  
ու անբծութեանը պա-  
հապան ու պաշտպան, դուն որ տիե-  
զերաց Տէրը բազկացդ մէջ կրելու ար-  
ժանացար, Դուն որ Յիսուսի ու Մա-  
րեմայ միսիթարական խօսքերովը զօրա-

ցած՝ հոգիդ անոնց գիրկն աւանդեցիր,  
սիրալիր աչուըներովդ ինծի նայէ եւ ըն-  
դունէ աղաջանքներս։ Խնդրէ ինծի հա-  
մար կատարեալ թողութիւն ամէն մեղ-  
քերուս, եւ հաստատուն կամք՝ ասկէ  
ետքը ճշմարտապէս Աստուծոյ ծառայ-  
ելու։ Շնորհք առ Յիսուսէն՝ որ զինք  
սիրեմ քեզի պէս, որ ինք ըլլայ միայն  
իմ ամէն մտածութեանցս նիւթը, ինչ-  
պէս էր քուկիններուդ։ Հսկէ վրաս, ինչ-  
պէս հսկեցիր Յիսուսի վրայ։ Պաշտպանէ  
զիս թշնամոյն ամէն յարձակմունքնե-  
րէն. մի թողուր մանաւանդ որ մահը  
վրաս հասնի՝ աղէկ չպատրաստուած.  
Հապա տուր որ Աստուծոյ սիրոյն ու  
շնորհացը մէջ գտնուելով՝ կարող ըլլամ  
հոգիս իր սուրբ ձեռքն աւանդել,  
ըսելով՝ Յիսուս, Մարիամ եւ Յով-  
սէփ, ձեր ձեռքը կ'աւանդեմ հոգիս ու  
մարմինս. ամէն։

## ԱՎՈԲՔ

առ սրբուհի Աննա:

Ուրախ լեր, մտերիմ դուստր Հօր  
Աստուծոյ, սրբուհի Աննա, եւ արժանի  
մայր Մարեմայ՝ մօր Յիսուսի: Որդիա-  
կան յարդութեամբ կը մեծարեմ զքեզ  
ու մեծ վստահութեամբ հզօր բարե-  
խօսութեանդ կը դիմեմ: Դուն շատե-  
րուն սրտերը միսիթարութեամբ սփո-  
փեցիր եւ ուրախութեամբ լեցուցիր:  
Դուն նեղութեան ու վշտաց մէջ քեզի  
դիմողներուն՝ Աստուծմէ շնորհք ս-  
ողորմութիւն ընդունեցար: Այնչափ  
ոգիք փորձով տեսան թէ մայրական սի-  
րով ու գորովով կը պաշտպանես ան  
ամէնքն որ զքեզ կը մեծարեն: Ասկից  
յորդորուելով ես ալ լի յուսով քեզի  
կը դիմեմ եւ օգնութիւնդ կը խնդրեմ:  
Ով Մարեմայ հաւատարիմ մայրը, գի-  
տես թէ որչափ վտանգներու մէջ եմ,

որչափ փորձութիւններէ պաշարուած,  
եւ որչափ դժբախտ պատահարներ զիս  
կը խռովեն։ Կարեկից եղիր ինծի, ու  
խնդրէ բարերար Փրկչէն, զոր դուն  
այնչափ սիրեցիր, որ ինծի զօրութիւն,  
համբերութիւն եւ իր կամացը համա-  
կերպութիւն շնորհէ։ Խնդրէ որ գթու-  
թեամբը զիս պաշտպանէ ու ամէն  
դժուարին պատահարներուն մէջ ինծի  
օգնէ, սիրտս ի բարին շարժէ ու սրտիս  
մէջ առաքինութեանց սէրը դրոշմէ.  
ամէն։

---

## Ա Վ Օ Բ Ա Գ

առ Ս. Յովհաննէս Մկրտիչ։

Ա եծ ի ծնունդս կանանց եւ նախըն-  
թաց կարապետ Յիսուսի Փրկչին՝ սուրբ  
Յովհաննէս, որ ազդու քարոզութեամբ  
ու խստամբեր վարուքդ առ Քրիստոս  
ընթանալու ճամբան ցուցուցիր, խնդրէ

Յիսուսէն որ եկեղեցւոյն աներկիւղ  
քարոզիչներ ու լաւ վարդապետներ  
շնորհէ. որպէս զի Քրիստոսի Հաւատքը  
առանց մարդկային նկատման անվեհեր  
վարդապետեն, եւ ըլլան՝ մարդարէից  
եւ առաքելոց հիման վրայ գրուած ե-  
կեղեցւոյն Հաստատուն սիւներ: — Իսկ  
ինձի Համար խնդրէ, ով երանելի Ա-  
ՅովՀաննէս, Ճշմարիտ մեռուցման Հո-  
գի, որպէս զի քու օրինակիդ Հետեւե-  
լով՝ Աստուծոյ բարկութիւնն իջեցընեմ,  
զոր գուն սպառնացիր իրենց մեղաց մէջ  
յամառութեամբ կեցողներուն: Խնդրէ  
միանգամայն բարի եւ սրբակեաց վարք,  
որ մարմինս իր ցանկութիւններովը խաչ  
Հանելով, արժանանամ ան փառաւոր  
պսակին՝ զոր Քրիստոս Տէրն մեր խոս-  
տացաւ Հաւատարմութեամբ իրեն ծա-  
ռայողներուն. ամէն:

## Ա Զ Ո Բ Ա Ք

առ Ա. Պետրոս և Պօղոս :

Կը խնդաս ու կ'ուրախանաս այսօր,  
ով գլուխ Առաքելոց Ա. Պետրոս,  
Փրկչին պէս խաչի մահուամբ մեռնե-  
լուդ համար։ Դուն վարդապետիդ պէս  
ուզեցիր խաչուիլ, բայց գլխի վայր, իբր  
թէ երկինք երթալու համար։ Եւ իրաւ-  
ամբ կրնայիր հոգիդ Յիսուսի Փրկչին  
ձեռքը յանձնել, զոր այնպէս սիրեցիր՝  
որ մինչեւ իր եկեղեցին կառավարելու  
իշխանութիւնը քեզի տուաւ։ — Դուն  
ալ օրհնեալ ըլլաս, Ա. Պօղոս։ Լեզուս  
բաւական չէ Աստուծոյ փառացը հա-  
մար կրած աշխատութիւններդ ըստ  
բաւականի գովելու։ Երանի՛ թէ կարե-  
նայի այն սուրբ վէրքերը համբուրել՝  
զորոնք Քրիստոսի սիրոյն համար մար-  
մնոյդ վրայ կրեցիր։ Երանի՛ թէ կարող  
ըլլայի պագնել ան երկիրը՝ որ պա-  
տուական արեամբդ ոռոգեցաւ։

Ով առաջնորդք սուրբ հաւատոյ, աշ-  
ղթեցէք եկեղեցւոյ խաղաղութեան  
համար։ Աղաչեցէք քահանայապետին,  
եպիսկոպոսաց եւ քահանայից դասուն  
համար։ Ցըուցէք մոլորութիւնները,  
հեռացուցէք հերձուածներն ու գայ-  
թակղութիւնները։ Շիջուցէք Աստուծոյ  
արդար դատաստանին բարկութիւնը,  
եւ ձեր արդիւնքը կենարարին առջեւ  
դնելով՝ գժութիւն ու ողորմութիւն  
ինդրեցէք. ամէն։

---

## Ա Պ Օ Բ Ա Ք

առ Ս. Ստեփանոս նախավկայ։

Այսաղթելի նախավկայ ու մարտիրոս  
նորածին եկեղեցւոյն՝ Ս. Ստեփանոս, որ  
աշխարհիս փառքն անարդելով եւ  
արարածոյ մը սիրտդ չկապելով, թշնա-  
մոյն որոգայթներն ու թակարդները  
խորտակեցիր, եւ անհնարին տանջանքը

բանի տեղ չդրիր. վասն զի սորված էիր  
թէ պէտք չէ՝ որ ոչ կեանք, ոչ մահ  
եւ ոչ ուրիշ բան զքեղ անջատէ Յի-  
սուսի սէրէն։ Թշնամիքդ զքեղ կը չար-  
չարէին, իսկ դուն կ'աղօթէիր. անոնք  
զքեղ կը քարկոծէին, իսկ դուն իբրեւ  
հարազատ աշակերտ Յիսուսի՝ ձեռուր-  
ներդ երկինք վերցուցած՝ անոնց հա-  
մար թողութիւն կը խնդրէիր։ — Աղա-  
չէ, ով նահատակ բարի, որ մեզի դէմ  
եղած ամէն հակառակութեանց ու  
թշնամանաց համբերենք, եւ Աստուծոյ  
մեզի մատուցած չարչարանաց ու նեղու-  
թեանց բաժակը սիրով մինչեւ յատակը  
պարպենք։ Բայց աղաչէ մանաւանդ որ  
մեր անձնական թշնամոյն՝ մեր սեպ-  
հական ցանկութեանց դէմ, քաջու-  
թեամբ զինինք, որպէս զի մարմնոյ ան-  
սանձ կիրքերը նուաճելով՝ օր մը քեզի  
պէս յաւիտենական փառաց արժանի  
ըլլանք. ամէն։

## ԱՎՈԲՔ

առ Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

Քահանայապետ Աստուծոյ, մեծ խոս-  
տովանող Քրիստոսի եւ քարողիչ Ճշմար-  
տութեան, երանելի Ս. Հայր Գրիգոր,  
ընտրեալ յԱստուծոյ ի լուսաւորու-  
թիւն եւ ի գիտութիւն Ճշմարտութեան:  
Երեւելի ես վարուքդ, նշանաւոր՝ իմաս-  
տութեամբդ, զարմանալի՝ հրաշագոր-  
ծութեամբդ: Զքեզ, ով երանելի ծա-  
ռայ ու առաքեալ Աստուծոյ, զքեզ  
հիմայ երկինք հզօր բարեխօս ունիմ:  
Քեզի կը դիմեմ՝ զոր Աստուծոյ ըն-  
տրելոցը մէջէն մասնաւոր ջերմեռան-  
դութեամբ կը յարգեմ, եւ խոնարհու-  
թեամբ կը խնդրեմ որ բժշկես մեղու-  
ցեալ ոգիս, որ առաքինութիւններէ  
զուրկ, շնորհքներէ կողոպտուած եւ  
բազմապատիկ մեղքերով աղտեղած է:  
Օգնէ խեղճ ոգւոյս, ով երջանիկ Սուրբդ

Աստուծոյ, որ աստուածամերձ վարուքդ, քաղցրաբուխ յորդորներովդ, առաքելաշնորհ քարոզութեամբդ այնչափներուն սիրտը հաւատքի լուսովը լուսաւորեցիր, աստուածպաշտութեան ոգւովը վառեցիր ու յաւիտենական երջանկութեան հասցուցիր։ Օգնէ ինձի, ով սուրբ հայր. Խոնարհին ականջներդ պաղատանքներուս, որ առջեւդ ինկած կը խնդրեմ քեզմէ որ հզօր բարեխօսութեամբդ՝ Աստուծմէշնորհք առնուս մեղացս տղմէն ելլելու, հոգիս բժշկելու եւ առաքինութիւններով զարդարելու։ — Խնդրէ միանգամայն Աստուծմէ, ով երանելի սուրբ Գրիգոր, որ Եկեղեցւոյ խաղաղութիւն պարգեւէ, եւ տարածուած մոլորութիւններն ու գէշ սկզբունքները ցրուէ, հերձուածները վերցընէ, Եկեղեցւոյ պաշտօնեանները Հոգւով սրբով լեցընէ, եւ իր հաւատացեալներուն սէր ու միաբանութիւն շնորհէ. ամէն։

## ԼԻԹԵՆԻԱ

Ի պատիւ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի  
Լուսաւորչին:

**Տէր ողորմեաց.**

Քրիստոս ողորմեաց.

**Տէր ողորմեաց.**

Քրիստոս լուր մեզ.

Քրիստոս անսա մեզ:

Հայր Երկնաւոր Աստուած. ողորմեաց մեզ.

Որդի Փրկիչ աշխարհի Աստուած. ողոր.

Հոգիդ սուրբ Աստուած. ողորմեաց մեզ.

Սուրբ Երրորդութիւն մի Աստուած. ող.

Սրբուհի Մարիամ. աղօթեա վասն մեր.

Սուրբ Աստուածածին. աղ.

Սուրբ կոյս կուսանաց. աղ.

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ. աղ.

Դրախտ աստուածատունկ ծաղկեալ. աղ.

Պարգեւական զաւակ նշխարացն Առաքելոյն թագեոսի. աղ.

Բարունակ ողկուզաբեր ճշմարիտ  
որթոյն Քրիստոսի. աղ.

Գարնանաբեր հողմն հալեցուցիչ  
սառին կոապաշտութեան. աղ.

Դրախտ նորազուարձ տնկեալ յաշ-  
խարհիս Հայոց. աղ.

Երկնային լոյս ծագեալ ի յերկրի. աղ.

Քահանայապետ ընտրեալ աստուա-  
ծային յայտնութեամբ. աղ.

Քաղցրաձայն հնչմամբ դարձուցիչ  
մոլորեալ հօտին. աղ.

Թագ պարծանաց արշակունեաց ա-  
ռաքելական վարուքդ. աղ.

Վայելուչ պսակ հիւսեալ սուրբ  
Եկեղեցւոյ. աղ.

Քաղցրաձաշակ արմաւենի ի տանն  
Աստուծոյ տնկեալ. աղ.

Ծնող հոգեւոր եւ գորովագութ  
Հայր պարծանաց. աղ.

Հայաստանեայց Հայր Հաւատոյ  
Հեղինակ ընտրեալ. աղ.

Նահատակ բարի Քրիստոսի ըն-

տրեալ եւ զինուոր անյաղթելի. աղ.  
շառաւիդ լուսաղարդ ճանապար-  
հին կենաց. աղ.  
Չնաշխարհիկ պարծանք հողեղէն  
բնութեանս. աղ.  
Պարակից հոգեղինաց երկնային դօ-  
րաց. աղ.  
Ցանկալի սերովըէից անմարմնական  
վարուքդ. աղ.  
Յորդառատ բանիւ լուսաւորող  
Հայաստան աշխարհի. աղ.  
Աստուածային տեսլեամբ բժշկող  
հարուածելոց ի գիւաբախ  
ախտից. աղ.  
Քահանայապետ անբիծ քարոզող  
աստուածային բանին. աղ.  
Ղեկօք հաւատոյ ընդ ծով աշխար-  
հիս անցեալ. աղ.  
Խոստովանող քրիստոսի ճշմարիտ  
վկայ, բաղմաչարչար նահատակ. աղ.  
Աստուածագութ ծնող տառապեալ  
որդեացդ ազգիս Հայոց. աղ.

Հայցեա առ Հայր Երկնաւոր, կատա-  
րել զընթացս մեր ուղղափառու-  
թեամբ. աղ.

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշ-  
խարհի, խնայեա ի մեղ Տէր.

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշ-  
խարհի, անսա մեղ Տէր.

Գառն Աստուծոյ որ բառնաս զմեղս աշ-  
խարհի, ողորմեաց մեղ.

Յիսուս լուր մեղ. Քրիստոս անսա մեղ:

Աղօթք.

**Տէր** մեր Յիսուս Քրիստոս, քան Հօր  
եւ իմաստութիւն յաւիտենական, Ճշմա-  
րիտ մարդ ու քահանայապետ յաւիտե-  
նից ըստ կարգին Մելքիսեդեկի. որ մեր  
մոլորեալ ոչխարի բնութիւնը գտնելու  
համար աշխարհ գալով՝ սուրբ խաչիդ  
հետ կենսաբեր ուսոցդ վրայ առիր, եւ  
առաջնորդեցիր քու օրինացդ քաղցր  
Լծովը, իրեն քաջ հովիւներ ու լաւ  
առաջնորդներ տալով: Կոյն գթու-

թեան խնամքը տարածեցիր նաեւ. Հայոց  
աշխարհիս վրայ, շնորհելով իբրեւ հո-  
վիւ եւ առաջնորդ՝ մեր հայրն զսուրբ  
Գրիգոր լուսաւորիչ, աստուածային օ-  
րինացդ տիրապէս քարոզողը: Որ հայ-  
ոց ազգն անսաստուածութեան խաւա-  
րէն աստուածդիտութեան լուսոյն դար-  
ձուց ու քու քաղցր օրինացդ լծին տակ  
մտցուց: Արդ այս քաջ նահատակին բա-  
րեխօսութեամքը ծագէ մեր վրայ շնոր-  
հացդ լցուը, որ անսասան մնանք քու  
օրինացդ մէջ՝ միշտ քաջ Հովուիդ ձայնին  
հետեւելով. որպէս զի մեր կենաց  
վորջը՝ այն ուղղափառ դաւանութեամք  
արժանի ըլլանք լուսոյ խորանին հասնիլ,  
ուր՝ իբրեւ մեր հօրն ոգիքը՝ իրեն հետ  
փառաւորենք զՃշմարիտ քահանայա-  
պետդ, զՃէր մեր Յիսուս Քրիստոս, որ ես  
օրհնեալ յաւիտեանս. ամէն:

## ԱՎՈԲԱՔ

առ սրբուհի Հոփիսիմէ:

Ով սիրելի հարսն, մաքուր աղաւնի,  
սրբուհի Հոփիսիմէ, դու իրեւ արշա-  
լցու երեւեցար Հայաստան, եւ սրբու-  
թեանդ ու անարատութեանդ անուշա-  
հոտութիւնն ամէն կողմ տարածեցիր:  
Կ'օրհնեմ զքեղ, ուրախութիւն ու  
փառք Հայաստանեայց: Դու որ անդըր-  
դուելի հաստատութեամբ հաւատքին  
Ճշմարտութիւնն ու կուսութեանդ ան-  
արատութիւնը պահելու համար, մար-  
մնոյ ամէն հաճոյքներն արհամարհեցիր  
ու աշխարհքիս փառքն ոտքի տակ առ-  
եր, խոնարհութեամբ կը խնդրեմ քեղ-  
մէ որ առաքինութեանցդ զօրութեամբն  
ինծի մտաց հաստատութիւն, աշխարհ-  
քի ունայնութիւններն արհամարհելու  
եւ Փրկչիս ծառայութեան մէջ հաւա-  
տարմութեամբ յարատեւելու շնորհք

ընդունիս։ Կ'աղաշեմ միանգամայն, ով  
սիրելի հարսն Քրիստոսի, խնդրէ Աս-  
տուծմէ որ ամէն ատեն՝ բայց գլխաւո-  
րաբար մահուանս ժամանակը զիս չար  
ոգւոյն յարձակմունքներէն, հաւատոյ  
ու սրբութեան դէմ ամէն փորձու-  
թիւններէն աղատէ, որ չըլլայ թէ յան-  
կարծական ու անպատճաստ մահուամբ  
մեռնիմ. այլ զղջացեալ խոստովանու-  
թեամբ, մեղաց արձակմամբ ու վերջին  
թոշակով զօրացած՝ հաւատոյ, յուսոյ  
ու սիրոյ հարսանեաց հանդերձովը  
զգեստաւորուած՝ երկնաւոր փեսացին  
առջեւ ելելու, եւ քեզի հետ անմահ օ-  
ժեւանին ուրախութիւնները վայելե-  
լու արժանի ըլլամ. ամէն։


## Ա Վ Ո Բ Ք

առ Ս. Հայրն Անտոն ճպնաւոր:

Հայր Հարանց Ս. Հայր Անտոն, մատաղ Հասակէդ մեռուցման զէնքովը զինուած՝ մարմինդ կենդանի պատարագ նուիրեցիր Աստուծոյ, եւ ներքին ազդեցութեամբ լուսաւորուած՝ ինք զինքդ բոլորանուեր Աստուծոյ յանձնեցիր: Աւետարանական կենաց ճամբուն մէջ մտնելով՝ ամէն բան թողուցիր, եւ բոլորովին մերկ ու աղքատ Յիսուսի հետեւեցար. վասն զի աւելի Համարեցար երկնից՝ քան երկինիս գանձերը: Դու զքեզ ուրանալով՝ խաչը գրկեցիր, որով նոյն իսկ գժոխական ոգւոց սարսափիելի եղար: Աստուածային եռանդով վառուած՝ ճգնաւորաց կարդ մը Հաստատեցիր, որպէս զի երկրէս բաժնուելէդ ետեւ ալ՝ Աստուծոյ փառաբանիչներ թողուս: Արձակուեցար վերջապէս

մարմնոյդ կապանքէն, որպէս զի նահաւակութեանցդ պսակն առնուս:

Արդ օգնութեան հասիր մեղի, որ առջեւդ ինկած՝ հզօր բարեխօսութիւնդ կը խնդրենք: Պաշտպանէ մանաւանդ զիս, որ Աստուծոյ շնորհացը մէջ ապրելով՝ հոգւոյս փրկութիւնն ապահովցընեմ: Աս բանս մեծաւ յուսով քեզմէ կը խնդրեմ. վասն զի կարելի չէ թէ Աստուած՝ որ զքեզ հազարներու մէջէն ընտրեց, աղաչանքդ չլսէ: Հսկէ ամենուս վրայ, որպէս զի աս արտասուաց վայրէն ելլելով՝ մեր Տէրն օրհնենք ու փառաւորենք. ամէն:



## Ա Զ Օ Բ Ո Ք

անուանը սրբոյն:

Էնտրեալ բարեկամ Աստուծոյ, Ա. Ա. դուն աշխարհիս պատերազմը յաջողութեամբ լմընցուցիր, եւ հիմայ երա-

նելեաց հայրենիքը աշխատութեանցդ  
յաւիտենական վարձքը կը վայելես։ Կը  
ճանչնաս, ով սուրբ Ա. մեծ վտանգներն  
որ աս պանդխտութեան մէջ առջեւնիս  
կ'ելլեն. անոր համար ընդունէ շնորհք  
որ չըլայ թէ մոլութեանց տակ ընկճե-  
լով՝ յաւիտենական կորուստն իյնամ։  
Խնդրէ Աստուծմէ որ ամէն բանի մէջ  
օրինակիդ հետեւիմ, եւ զդուշանամ  
մեղաց ճամբաներէն՝ որոնք յաւիտենա-  
կան դատապարտութեան կը տանին։  
Չեմ ուղեր մոլութեանց ընդարձակ  
ճամբան բռնել, հապա առաքինու-  
թեանց նեղ ճամբան. վասն զի դիտեմ  
որ դուն ալ նոյնին վրայէն երթալով՝  
հասար երկինք։ Անունդ՝ զոր վրաս կը  
կրեմ, բնծի միշտ յիշեցընէ այն դա-  
շինքը՝ զոր դրի Աստուծոյ հետ։ Քեզի  
պէս կ'ուղեմ ես ալ զՅիսուս ամէն  
բանի մէջ բնծի օրինակ ունենալ։ Եւ  
թէպէտ փորձիչը զիս անհանգիստ ընէ,  
սակայն դիտնալով որ դուն ալ ծանր

փորձութեանց տակ ինկած էիր, եւ մի-  
այն պատերազմելով երկնից արքայու-  
թիւնը կը վաստըկուի, կ'ուղեմ օրի-  
նակովդ քաջալերուիլ, որպէս զի չէ թէ  
միայն անունդ, հապա նաեւ առաքինու-  
թիւններդ կրած ըլլամ։ Ասանկով մի-  
այն կրնամ լսել արդար դատաւորին  
այն ուրախալի խօսքը, թէ Ազնիւ ծա-  
ռայ, մտիր տիրոջդ ուրախութիւնը,  
ուր Աստուծոյ անչափ փառաւորութիւնն  
օրհնենք յաւիտեանս. ամէն։



# ՄԱՍՆԵՒԹԻՈՒԹ

## ԶԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆԵՐ

Ա. ՃԱՆԱՊԱՐՀ ԽԱՂԻ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Յաւոց կամ խաչի ճամբան՝ առջեւնիս  
կը դնէ ան ցաւալի պատահարները, զորոնք  
կենարարը՝ Պիղատոսի պալատէն մինչեւ Գող-  
գոթայ լեռը կրեց, որպէս զի կատարէ մարդ-  
կային ազգին փրկագործութիւնն՝ որ իրեն  
յանձնուած էր: Հոն կը տեսնենք զՅիսուս  
նոյն իսկ անոնցմէ նախատուած, անարդուած,  
դատապարտուած ու սպաննուած, զորոնք  
փրկելու եւ ազատելու համար աշխարհք եկաւ:  
Ասկէ կրնանք իմանալ Աստուծոյ արդարու-  
թիւնն ու մեղաց մեծութիւնը:

Քրիստոսի ցաւոց ճամբան ըլլայ դպրոց մը,  
ուր սորվինք համբերութիւն, խոնարհութիւն  
ու հնազանդութիւն: — Եթէ աս աստիճանի  
մեծ նուէր ու ողջակէղ մը հարկաւոր եղաւ  
զմեղ փրկելու համար. կրնանք մտածել թէ  
Աստուծոյ սուրբ աշքին որչափ ծանր բան է

մեղքն, որ իւր սիրելի Որդւոյն նախատական խաչի մահը միայն կրցաւ քաւել: — Եւ եթէ Փրկիչն այս դառն չարչարանքներն յանձն առաւ պարզապէս զմեզ փրկելու համար, պէտք ենք մենք ալ իրեն փոխարինութիւն ընել, զինք սիրելով ու իրեն համար վեշտ ու չարչարանք կրելով:

Առաքեալն արդէն զմեզ աս խաչի ճամբռուն դպրոցը կը խաւրէ, երբ կ'ըսէ. Տեսէք, հաւատոյ զօրագլուխն զՅիսուս, որ փոխանակ ուրախութեան՝ որ իրեն պատրաստ էր, յանձն առաւ խաչն ու արհամարհեց ամօթը: Այո, մտածեցէք որ մեղաւորաց հակառակութեանն ինչպէս համբերեց, որպէս զի դուք ալ օրինակ առնէք:

Եկեղեցին՝ այս ճանապարհ խաչի կոչուած ջերմեռանդութիւնն ընող հաւատացելոց, ան ներողութիւնները կը շնորհէ, զորոնք տուած է՝ Փրկչին արեամբ ոռոգուած սուրբ տեղեաց իրօք այցելութիւն ընողներուն: — Աս ներողութիւնները կրնան քաւարանի հոգւոց ալ մերձեցուիլ: Իննովկ. ԺԱ. 1686 Սեպտ. 5: — Կղեմէս ԺԲ. 1731 Յունուար 18:



## Ա Վ Ո Բ Ա

առ Խաչեցնալ  
Փրկիչն:

ԱՎԱՐԴԱՍԵՐ Փրկիչ  
իմ Յիսուս Քրիստոս,  
կուղեմ մտօքս ինք  
զինքս ան տեղուանքը  
տանիլ՝ ուր իմ ու բո-  
լոր աշխարհքիս փրկու-  
թեան համար դառն  
վշտեր կրելով անմեղ  
կեանքդ զոհեցիր: Ի  
բոլոր սրտէ կը բաղձայի  
քու դառնակոկիծ չարչարանացդ ու մա-  
հուանդ մտածութեամբը խեղճ՝ սրտիս  
մէջ զարթուցանել մեզի ցուցըցած ան-  
չափական սիրոյդ յիշատակը: Կը խոստո-  
վանիմ, Յիսուս իմ, որ զքեղ մինչեւ  
հիմայ չսիրեցի, մանաւանդ թէ ընդ հա-  
կառակն գթած սիրոդ անթիւ մեղքե-

րովս չարաշար վիրաւորեցի. սակայն սըրտանց կը ցաւիմ եւ հաստատութեամբ կ'առաջադրեմ ալ զքեղ չվշտացընելու եւ քեղի դէմ չմեղանչելու: Կ'ուղեմ ամենակարող շնորհօքդ վարքս ուղղել: Աս առաջադրութեանս սկիզբ ընելու համար՝ եկած եմ ահա վշտակիր ճամբորդութեանդ մէջ քեղի ընկեր ըլլալու եւ տուած խրատներուդ հաւատարմութեամբ հետեւելու: Կ'ուղեմ ու կը փափաքիմ տեսնել նախատիլդ ու արհամարհուիլդ, խոնարհութիւնդ, քաղցրութիւնդ ու համբերութիւնդ, սէրդ ողօրմութիւնդ ու մինչեւ մահ ունեցած հնազանդութիւնդ: Ա. Կոյս Աստուածածնի եւ մէկալ հաւատարիմ մնացող քիչերուն պէս կ'ուղեմ մինչեւ գերեզման հետդ երթալ եւ քեղմէ սորվիլ ինք զինքս ուրանալու կերպը: Կ'ուղեմ խոնարհ, հեղ, համբերող եւ մինչեւ ցմահ յարատեւող ըլլալ, ամէն:

Թօվժափեցէք որչափ են ձեր ժանտ ախտեր .  
Որոնք խնամու Աստուծոյ սիրտն են խոցեր .  
Ընկեր եղէք կենարարին աշխարհի ,  
Որ խաշին տակ ձեզի սիրով խոնարհի :  
Իրեն վիրօքն՝ որ օրհնութիւն կը բերեն ,  
Խեղճ սրտերնիդ , ո՛հ , լուացէք մեղքերէն :  
Իսկ դուն Փրկիչ , որ քու սիրովդ փլրկարար  
Անարդ խաչ մը քեզ ընտրեցիր ու մեռար ,  
Օրինակիդ հետեւելու ինձ ոյժ տուր ,  
Որ չարչարանքդ ինձի համար չըլլան զուր :  
Օտար կապէ ըրէ աս սիրտս իմ ազատ  
Որ բան չուզեմ ու չըսիրեմ քեզմէ զատ :

### Ա · Հ Ա Ն Գ Ի Ս

Քրիստոս մահուան կը դատապարտուի :

Քեզի երկրպագութիւն կ'ընեմ , Յիսուս , եւ զքեզ կ'օրհնեմ . վասն զի սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր :

Մատածէ թէ ինչպէս Յիսուս առանց պատճառի մահուան կը դատապարտուի եւ աս անօրէն վճռոյն կը հնազանդի , որպէս զի յաւիտենական մահուան դատապարտութենէն ազատէ զքեզ :

Ով բարերար Յիսուս , դուն որ մեզի ունեցած սաստիկ սիրոյդ համար ամենադառն մահուամբ մեռար . կը խըն-

դրեմ՝ ինծի շնորհք տուր որ ճանչնամ  
ծանր մեղքերս, որոնք զքեզ մահուան  
դատապարտեցին. Եւ անոնցմէ սրտանց  
դարշելով՝ դատաստանին օրը յաւի-  
տենական մահուան չդատապարտուիմ.  
ամէն :

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:  
Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի ու  
ամէն քաւարանի հոգւոց:

Տուր, Տէր, աչացս յորդ արտասուս . . .  
Մահուան մատնած տես բզմիսուս  
կայ մէկն որուն ցուրտ սրտին մէջ  
Քրիստոսի սէրն չայրի անշեջ:  
Գերւոյ մը պէս բարձրեալն Աստուած,  
Զարչարանաց մէջ լուռ կեցած,  
Իշխաններէն անօդուտ տեղ  
Գութ կը խնդրէ Յիսուս անմեղ:

Բ. Հ Ա Կ Գ Ի Ս

Յիսուս խաչափայտն ուսերը կ'առնու:

Քեզի երկրպագութիւն կ'ընեմ, Յի-  
սուս, եւ զքեզ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր:

Մտածէ թէ ինչպես Քրիստոս Տէրն մեր՝ քեզի  
ունեցած սիրոյն համար ուսոցը վրայ կ'առնու  
խաչը, զոր քու անթիւ մեղքերդ ծանրացուցած  
են. եւ նոյն խաչին ձեռքովը քու վշտերդ ու նե-  
ղութիւններդ կը թեթեւցընէ:

Ով սիրելի Յիսուս, որ իմ սիրոյս  
համար այդ ծանր խաչափայտն ուսոցդ  
վրայ առած ես, չնորհք տուր ինծի որ  
այսուհետեւ քու սիրոյդ համար՝ չար-  
չարանաց ու նախատանաց խաչը յօժա-  
րութեամբ վրաս առնում եւ անթիւ  
մեղացս համար զանոնք համբերու-  
թեամբ տանիմ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի ու  
ամէն քաւարանի հոգւոց:

Ով քրիստոնեայ, նայէ Տէրն  
Որ ուսն արկած խաչին բեռն  
Գերւոյ մը պէս կը տանին  
Խաղ ու ծանակ խուժանին:

Տեսէք տեսէք քար սրտեր.  
Ինքն որ ձեզ է ազատեր,  
Կը հեծէ այն բեռան տակն,  
Որ դուք դրիք իր կըռնակն:



Գ. Հ Ա Ն Գ Ի Ս

Յիսուս առաջին անգամ՝ խաչին բեռան  
տակ կ'իյնայ:

Քեզի երկրպագութիւն կ'ընեմ, Յիսուս,  
եւ զքեզ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր:

Մտածէ թէ ինչպէս Յիսուս ձաղկանքէն ու  
փշէ պսակէն բոլորովին տկարացած՝ Գողգոթայի  
Ճամբուն վրայ խաչափայտին սաստիկ Ճանրու-  
թենէն դետինը կ'իյնայ:

Ով անմեղ գառն Աստուծոյ, որ  
խաչովդ մեղացս Ճանրութիւնը վերցու-  
ցիր եւ անոր սաստիկ բեռան տակ ընկ-  
ճեցար, կ'աղաչեմ՝ աս ցաւագին անկ-  
մանդ արժանեացը համար զիս ամէն  
տեսակ մեղաց անկումներէն աղատէ, եւ  
շնորհք տուր որ աւելի մեռնիմ՝ քան  
թէ Ճանր մեղքով մը զքեզ վշտացը-  
նեմ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի ու  
ամէն քաւարանի հոգւոց:

Իւր բեռան տակ ինկաւ մէկէն .  
Ոչ, ինչ սոսկում չէր այն բոսկէն :  
Ան խեղճ անկման, որ այն աչքն էր  
Որ մընայր չոր ու անտարբեր :

Բայց նայէ դեռ, սիրտ անըգդայ ,  
Մինչ լեռան ծայրն որչափ տեղ կայ : . . .  
Տուր, Տէր, աշացս արցունք տռատ,  
Ցաւերդ անլուր լամ անընդհատ :



### Դ. Հ Ա Ն Գ Ե Ս

Փրկիչն իր տրտմազին մօրը կը հանդիպի :

Քեզի երկրպագութիւն կ'ընեմ, Յի-  
սուս եւ զքեզ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր :

Մաքիդ առջին բեր մէկ կողմանէ թէ ինչ  
դառն ցաւ զգաց Մարիամ, երբ իր սիրելի Որ-  
դին նախատուած ու անարգուած տեսաւ. եւ  
տես մէկաւ կողմանէ թէ ինչպէս Յիսուսի սիրտը  
կտոր կ'ըլլար, տեսնելով որ իր ամենասուրբ  
մայրն իրեն համար այնպէս սաստիկ կը վշտանայ :

Ամենասիրելի Յիսուս, այն անտանե-  
լի ցաւին համար, զոր կրեցիր երբ սուրբ  
մօրդ հանդիպեցար, կը խնդրեմ որ ին-  
ձի ամենասուրբ մօրդ նկատմամբ որ-  
դիական սէր մը պարդեւես : — Իսկ

դուն, ցաւագին Մայր, շնորհք ընդունէ  
ինծի համար որ սիրալիր Որդւոյդ չար-  
չարանքներն երբեք մտքէս չեռացը-  
նեմ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեղի ու  
ամէն քաւարանի հոգւոց:

Կա՞ր սիրտ կապուած Յիսուսին,  
Երբեւ ըզսիրտ սուրբ կուսին.  
Կ'ելլէ կ'երթայ փութապէս  
Տանջանաց դառն ի հանդէս:  
Ոհ, այն ջերմ իր արցունքներն  
Մեղմէին մեր քար սըրտերն: —  
Խառնենք ողբոց այն սուրբ Մօր  
Մեր ձայներն ալ ամէն օր:



### Ե • Յ Ա Ն Գ Ի Ս

Սիմոն Կիրենացին Յիսուսի խաչը տա-  
նելու կ'օգնէ:

Քեղի երկրպագութիւն կ'ընեմ, Յի-  
սուս, եւ զքեղ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր:

Մտածէ թէ Յիսուս ինչպէս բոլորովին ու-  
ժամանափ եղած պիտ' որ բլաս, որ նոյն իսկ ան-

Դութ Հրեայք զՍիմոն Կիւրենացին կը բռնա-  
դատեն որ օգնէ Փրկչին խաչը տանելու:

Ով համբերող գառն, որ իմ սի-  
րոյս համար բոլորովին անօգնական ու  
ուժաթափ եղար, կ'աղաչեմ՝ շնորհք  
տուր ինծի որ քու սիրոյդ համար կե-  
նացս ամէն դժուարութեանցը համբե-  
րութեամբ տանելով՝ խաչդ կրելու քեզի  
օգնական ըլլամ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի ու  
ամէն քաւարանի հոգւոց:

Կիւրենացի Սիմոնին հետ  
Ելէք ի լեռ, մի մընաք ետ.  
Երանի քեզ, թէ որ գիտես  
Տանիլ քու խաչդ Սիմոնին պէս:  
Աշտաց խաչերն առեզք ձեր յուս,  
Ու հետս եկէք, կ'ըսէ Յիսուս,  
Թէ որ կ'ուզէք իմ տալու կեանս  
Արքայութեան մէջ յաւիտեանս:



Հ Ա Ն Գ Ի Ս §

Ա երոնիկաս Քրիստոսի թաշկինակ մը  
կու տայ:

Քեզի երկրագութիւն կ'ընեմ, Յի-  
սուս, եւ զքեղ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր:


Մտածէ թէ ինչպէս Յիսուս բռլորովին ա-  
րիւնըւայ, երեսը սրբեց վարշամակաւ զօր բա-  
րեպաշտ կին մը իրեն տուաւ, եւ իր սուրբ կեր-  
պարանքը այն թաշկինակին վրայ տպաւորեց:

Ով քաղցրագութ Փրկիչ, որ Ա ե-  
րոնիկայի վարշամակաւը քեզի մատու-  
ցած սիրոյ ծառայութիւնը՝ ցաւալից  
կերպարանքով վարձատրեցիր, կ'աղա-  
չեմ այնպէս խորունկ տպաւորէ սրտիս  
մէջ քու սուրբ չարչարանքներդ, որ  
երբեք չմոռնամ, եւ միշտ լի շնորհա-  
կալութեամբ եւ ուրախութեամբ քե-  
զի նմանելու ջանամ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի եւ  
ամէն քաւարսնի հոգւոց:

Վերոնիկա Փրկչին եկաւ,  
Մատոյց իրեն մաքուր կը տաւ:  
Կ'առնու Յիսուս Համն այն անդին  
Կը դպցընէ կերպարանքին...:  
Դրոշմեց իսկոյն հոն զիւր պատկեր,  
Որուն նըմանն աչք չէ տեսեր:  
Բայց ոչ հիմայ, լքեղ երես,  
Մեղացս համար ինչ եղեր ես:



### Ե. Հ Ա Ն Գ Ի Ս

Յիսուս խաչին տակ երկրորդ անդաս  
կ'իյնայ:

Քեզի երկրպագութիւն կ'ընեմ, Յիսուս,  
եւ զքեղ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ խաչիւդ աշխարհը փրկեցիր:

Հոգւոյդ աշուշներուն առջեւը բեր, թէ ինչ-  
պէս Յիսուս խաչափայտին բեռան տակ երկրորդ  
անդամ կ'իյնայ, եւ վերբերէն շատերը բացուելով՝  
ցաւերն անչափ կը բազմապատկուին:

Ով ամենաքաղցր Յիսուս, քանի  
քանի անդամ ինծի ներումն շնորհած  
ես. իսկ ես ապերախտ մեղաւորս որ-  
չափ անդամ նորէն մեղաց մէջ իյնա-  
լով՝ սուրբ սիրտդ դարձեալ վիրաւո-

բեցի: Քու երկրորդ անկմանդ արժա-  
նեացը համար խնդրեմ քեզմէ՝ տուր  
ինծի շնորհք որ ասկից վերջը շնորհացդ  
մէջ յարատեւեմ, եւ անցած մեղացս  
մէջ ալ չիյնամ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի ու  
ամէն քաւարանի հոգւոց:

Տէրն ուսն առած ըզքեզ, ո՛խաչ,  
Դողդոջելով կ'երթայ յառաջ,  
Ըզքեզ տանողն հոս անխափան,  
Ըստոյդ կ'երթայ երկնից ճամբան:  
Բայց ծանրութեան տակ զարմանք չէ,  
Բոլորովին ինկած ուժէ՝  
Չի դիմանար սաստիկ բեռին,  
Երկրորդ անգամ կ'իյնայ գետին:



### Է. Յ Ա Ն Գ Ի Ս

Յիսուս լացող կանանց կը խօսի:

Քեզի երկրպագութիւն կ'ընեմ, Յի-  
սուս, եւ զքեզ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր:

Մտածէ թէ ինչպէս Տէրն մեր լացող կա-  
նանց՝ որ իր դառն վշտացը վրայ կը ցաւակցէին,

ըսաւ . Մի լաք իմ վրտու , հապա ձեր անձանց ու  
ձեր որդւոցը վրայ :

Ով ցաւադին Յիսուս , դուն որ Երու-  
սաղէմի լացող կանայքը զգուշացուցիր ,  
որ չէ թէ վրադ կարեկցելով լան , հա-  
պա մանաւանդ զղջացեալ սրտիւ ողբան  
իրենց անձանց ու իրենց մեղացը վրայ ,  
կ'աղաւեմ ինծի շնորհք տուր որ աս  
վայրկենէս քու դառն չարչարանացդ  
մտածութեամբը մեղացս վրայ դառնաւ-  
ովէս լամ . ամէն :

Հայր մեր , Ողջոյն , Փառք Հօր :

Խաչեցեալ Յիսուս , ողորմէ մեզի ու  
ամէն քաւարանի հոգւոց :

Լացէք այս , դուք դառնապէս ,  
Ով սուրբ կանայք , հեղեղի ոլէս ,  
‘Աշխարեցէք , բարի սրտեր ,  
Մի զիս՝ այլ զձեզ , կը գոչէ Տէր .  
Սուրբ դէմքէս՝ որ արեամբ ներկած ,  
Ի միտ առէք թէ արտասուաց  
Ըլլան պիտի նիւթ շար մեղքեր  
Եւ ոչ թէ իմ սաստիկ վէրքերո :

ԹՅ. Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Յիսուս խաչին տակ երրորդ անգամ՝  
կ'իյնայ:

Քեզի երկրպագութիւն կ'ընեմ, Յի-  
սուս, եւ զքեզ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր:

Մտածէ թէ ի՞նչողէս Տէրն մեր, որուն ակա-  
րութիւնը քանի որ կ'երթար՝ միշտ կ'աւելնար,  
խաչին ծանրութեան շղիմանալով՝ երրորդ ան-  
գամ գետին ինկաւ, եւ թէ առ բարին ունեցած  
ակարութիւնդ ու անհաստատութիւնդ Քրիս-  
տոսի առ երրորդ անկմանը պատճառ եղաւ:

Ով աստուածային Փրկիչ, որ ինձի  
ունեցած անչափ սիրոցդ համար բոլորո-  
վին ակարանալ եւ ուժաթափ ըլլալ  
ուղեցիր, զօրացուր տկարութիւնս, որ-  
պէս զի չար թշնամնոյն փորձութեանցը  
հաստատութեամբ դէմ դնեմ եւ բա-  
րեգործութիւնները երբեք ձեռքէ չթո-  
ղում, ամէն:

Հայր մեր, Աղջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի ու  
ամէն քաւարանի հոգւոց:

Խաչին եկուր մեղաւոր անձ,  
Պադ ու ըսէ մեղայ, սրտանց: —  
Իսկ զղջացեալքդ, որոնք հիմակ  
Տեսնէք զթիսուս այն խաչին տակ.  
Աս ահագին իշնալն երրորդ,  
Մըտածելով արտասուօք յորդ,  
Եղէք խաչին ձամբուն ընկեր,  
Ուր կը հեծէ դետինն ինկեր:



### Ժ. Է. Կ. Գ. Ի. Ս

Քրիստոս կը մերկացուի:

Քեղի երկրպագութիւն կ'ընեմ, Յի-  
սուս, եւ զքեզ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր:

Քեզի մտածութեան նիւթ ըրէ թէ ինչպէս  
Գողգոթայ հասած ատեն բռնութեամբ. Փրկչին  
զգեստները վրայեն քաշեցին, որով ձաղկանքէն  
պատճառած վերքերը նորէն բացուեցան ու իրեն  
անտանելի ցաւոց պատճառ եղան:

Ով ամենամաքուր Յիսուս, որ մեր  
մարմնոյ չարաչար ախորժակները զսպե-  
լու համար, այսպիսի ցաւալի ու ամօ-  
թական մերկութիւն մը յանձն առիր,  
Հնորհք տուր ինծի կ'աղաչեմ՝ որ հին

մարդն իր ամէն մեղանչական բաղձանքներովը մերկանամ, եւ բոլոր կեանքս սրբութեամբ ու պարկեցտութեամբ անցընեմ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի եւ ամէն քաւարանի հոգւոց:

Տես, Ըզգաստը, մերկ արհամարհ. Ինքն որ կոչէ զբղջման զաշխարհ, Դառն այն լեզին կ'առնու բերան, Քացախն ըմակէ առելութեան:

Ո գաղջ ողիք, դուք պաղ սրբաեր, Յըղփութեանց մէջ կը կենաք դեռ. — Ո՛ր ցուրտ ոգւոյ մէջ սիրոյ բոց Չ'արծարծեր առ տեսիլն ողբոց:



### ԺԱԿԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՎՈՐԱԿ

Յիսուս խաչի վրայ կը դամոի:

Քեզի երկրապագութիւն կ'ընեմ, Յիսուս, եւ զքեզ կ'օրհնեմ. վասն զի սուրբ խաչիւդ աշխարհնք փրկեցիր:

Մտածէ թէ ինչպէս Յիսուսի պատուած ու վերքերով լեցուն մարմինը խաչափայտին վրայ դրուեցաւ ու ձեռուըներէն եւ ոտուըներէն գտմերով անոր վրայ հաստատուեցաւ:

Խաչեցեալ Յիսուս, որ իմ մեղացս  
ու իմ սիրոյս համար խաչին վրայ ան-  
գթութեամբ գամուիլ ուղեցիր, սրտիս  
մէջ մեղաց դէմ սաստիկ ատելութիւն,  
իսկ քեզի նկատմամբ բորբոքեալ սէր  
տնկէ. որպէս զի ապաշխարութեան  
գործքերով ինք զինքս խաչ հանեմ,  
եւ քու սիրոյդ համար զոհի մը չխնայ-  
եմ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի ու  
ամէն քաւարանի հոգւոց:

Զարթնուն ծոյլեր, խաչը գրսկեն,  
Եթէ զՅիսուս ոտքեն ձեռքեն  
Խաչ բեւեռող մրճի ձայնին  
Յամառ խըցած չեն ականջնին:  
Սիրո քարացած, չե՞ս կակըղնար . . . .  
Որդիք մարդկան, լանք անդադար,  
Զի մեր Փըրկչին ցաւոց պէս ցաւ.  
Աշխարհքիս մէջ քաշող չեղաւ:

ԺԵ. ՀԱՅ ԳԻՒՑ

Յիսուս խաչին վրայ կը մեռնի:

Քեզի երկրպագութիւն կ'ընեմ, Յիսուս, եւ զքեզ կ'օրհնեմ. վասն զի սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր:

Մտածէ թէ ինչպէս սիրելի Փրկիչը խաչին վրայ երեք ժամու հոգեւարքէ ետեւ՝ հոգին երկնաւոր Հօր ձեռքը յանձնեց, եւ գլուխը ծռելով՝ հոգին աւանդեց:

Ով սիրելի Յիսուս, որ այսպէս դառն մահուամբ մեռար, որպէս զի ինծի մահը քաղցրացընես եւ յաւիտենական կեանքը ժառանգել տաս, թոյլ տուր որ աս վսոյրկենէս միայն քեզի համար ապրիմ եւ յօժարութեամբ ընդունիմ մահը՝ որ իմ մեղացս պատիժն է եւ յաւիտենական կենաց սկիզբ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի ու ամէն քաւարանի հոգւոց:

Խնչ տեսարան աշաց առջին  
կռւ տայ տեսիլ անկած խաչին.

Տիեզերաց Փըթիշն Աստուած  
Չարչարանաց փայտէն կախուած:  
Ո՛չ, ինչպէս ես ալ իրմէն զատ  
Բան մը սիրել ըլլամ ազատ: —  
Թռղեալ, լքեալ, մերկ խաչն ելաւ,  
Որ խեղճ վիճակս իմ դառնաց լաւ:

— 200 —

### ԺԳԻ ՀԱՅ ԳԻՍ

Յիսուս խաչէն վար կ'առնուի:

Քեղի երկրպագութիւն կ'ընեմ, Յի-  
սուս, եւ զքեղ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ խաչիւդ աշխարհք փրկեցիր:

Մտածէ թէ ինչպէս Յիսուս հոգին աւան-  
դելէն ետև՝ Նիկողիմոս ու Յովուէփ Արիմա-  
թացին խաչէն վար առին ու իր կուսական Մօրը  
Դերկը դրին. եւ թէ ինչպէս աս ցաւադին Մայ-  
րը զնորդին իր բազկացը մէջ առաւ:

Ով վշտացեալ Մայր, դուն որ ցաւ-  
ոց աշագին անդնդին մէջ ընկղմեցար,  
եւ քու բազկացդ վրայ կրեցիր անբո-  
վանդակելին՝ որ ինձի համար մեռաւ.  
Կաղաչեմ իր սիրոյն համար զիս ալ  
քու մայրական բազկացդ մէջ առ, որ-  
պէս զի քու հովանաւորութեանդ տակ

ապրելով ու պաշտպանութեանդ տակ  
մեռնելով՝ ապահովութեամբ հասնիմ  
յաւիտենական երանութեան. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի ու  
ամէն քաւարանի հոգւոց:

Աստուած Մարդը, Կոյս Մարեմայ  
Գողն է, աեսէք մեռած հիմայ....  
Ինկաւ դժոխք, մահ պարտեցաւ.  
Երկիր պատէք զդշմամբ մեծաւ:  
Երբ ծոցն առած Մայրն իր Որդին՝  
Կը ցուցընէ դանձն ահապին,  
Ոհ, լըմոռնանք. մըտքերնիս գան  
Յիսուսի մահն ու գերեզման:



### Ժ. Ֆ. Ճ. Ա. Գ. Ի Ս

Յիսուս կերեզման կը դրուի:

Քեզի երկրպագութիւն կ'ընեմ, Յի-  
սուս, եւ զքեզ կ'օրհնեմ. վասն զի  
սուրբ Խաչիւդ աշխարհք փրկեցիր:

Մտածէ թէ ինչպէս Յիսուսի աշակերտները  
մեծ յարդութեամբ զինքը ժայռի մէջ փորուած  
նոր գերեզման մը դրին, ուր կեցաւ երեք օր՝ մին-  
չեւ իր փառաւոր յարութիւնը:

Ամենասիրելի Փրկիչ, ինձի համար  
կրած վշտացդ ու չարչարանացդ շնորհա-  
կալ եմ. եւ գերեզման դրուելուդ  
համար կը խնդրեմ որ անարատ մար-  
մինդ՝ ամենասուրբ Հաղորդութեան մէջ  
միշտ մաքուր սրտով ու եռանդեամբ  
ընդունելու շնորհք տաս. եւ ըլլայ ա-  
նիկայ ինձի՝ քու Փառաւոր յարու-  
թեանդ դրաւական մը. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

Խաչեցեալ Յիսուս, ողորմէ մեզի ու  
ամէն քաւարանի հոգւոց:

“Խոր վէրք, գոշէ Կոյսն, ոհ, սէր իմ...  
Որդեակ... մեռար... իջար շիրիմ.  
Մահդ արձակեց դիշերն ու ցաւ  
Փրկութեան գործն ալ լմբնցաւ...”

\* \* \*

Չարչարանացն ըզյիշատակ,  
Չոր կատարենք աս տեղս հիմակ,  
Գործով ալ թէ կը ցուցընենք  
Կ'արժանանանք անշուշտ ամէնք  
Արմաւենեացն այն յաղթութեան  
Մէկալ աշխարհք ի յաւիտեան:



## Ա Վ Օ Բ Ա Ք

շնորհակալութեան առ Յիսուս:

Ավ բարերար Փրկիչ, աս խաչի ճամբուն ջերմեռանդութիւնը լմբնցընելուժամանակս՝ կը մատուցանեմ ինք զինքսքեզի բոլորանուէր ողջակէզի շնորհակալութիւն ինծի համար քաշած դառնչարչանացդ ու մահուանդ, ի թողութիւն ամէն մեղացս ու անոնց պատժոցը, ի միսիթարութիւն եւ ի փրկութիւն քաւարանի հոգւոց: Բայց որպէս զի աս բարեպաշտ կրթութիւնը սուրբ սրտիդաւելի հաճոյ ըլլայ, կը միացընեմ քուսուրբ Մօրդ կատարեալ ջերմեռանդութեան, սուրբ առաքելոց եւ ամէն բարեպաշտ քրիստոնէից բորբոքեալ սիրոյն հետ: Մարդասէր Փրկիչ իմ Յիսուս, թող մի տար որ սուրբ արիւնդ ու անդին մահդ ինծի համար անօդուտ ըլլան. հապա անոնց ղօրութեամբն ար-

ժանի ըրէ զիս յաւիտենական արքայութեանդ, ուր զքեղ Հօր եւ Հռգւոյն սրբոյ հետ միշտ օրհնեմ. ամէն:



### Բ. ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

### ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ\*

**Ա**Յ չերմեռանդութիւնը կը կայանայ հազար ողջոյն ու նոյնչափ օրհնութիւն ըսելու վրայ, որ կը սկսի Նոյեմբերի 30ին. ու ամէն օր քառասուն Ողջոյն ու 40 օրհնութիւն կը զբուցուի, որ ծննդեան ճրագալցցին լմնայ: Քառասուն ողջոյնները չորս օրհնութիւններու կը բաժնուին, որով ամէն մէկ օրհնութեան կ'իյնայ տասնական ողջոյն: Ասոնք Հայր մերով մը կը սկսին եւ Փառք Հօրով կը լմբնան: — Ամէն մէկ ողջուննեն ետեւ ըսուելու օրհնութիւնները յաջորդներն են:

### Ա. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ:

Օրհնեալ է ժամն այն, ով կոյս Մարիամ, յորում եղեր Մայր Աստուծոյ:

\* Քառասուն ողջոյնները մէկ տնգամ զբուցողը 100 արուան ներողութիւն, իսկ 20 օր ետեւէ ետեւ զբուցելով խոստովանանք ըլլողն ու Ս. Հաղորդութեան մերձեցողը մակատար ներողութիւն կը վասորկի: Պիոս. Է. 1515 նոյ. 14:

Բ. Օրհնութիւն :

Օրհնեալ է ժամն այն, ով Կոյս Մարիամ, յորում ծնար զԱրդին Աստուծոյ:

Գ. Օրհնութիւն :

Օրհնեալ է առաջին Համբոյըն, ով Կոյս Մարիամ, զոր ետուր աստուածային շրթանց Որդւոյն Աստուծոյ:

Դ. Օրհնութիւն :

Օրհնեալ է առաջին շիխն կաթին, ով Կոյս Մարիամ, զոր դիեցաւ իստեանց քոց Որդին Աստուծոյ:

Ծննդեան ճրադալուցին՝ Ս. վարդարանին Ուրախական տնօրէնութեան մասն ըսելէն եաեւ, Հազար ողջոյններն ու օրհնութիւնները Ս. Կուսափին կ'ընծայուին, եւ իրմէ չնորհք մը կը խնդրուի: — Այսպիսի խնդրուածք կամ ազօթք մը հետեւեալ եղանակաւ կրնայ ըլլալ:

## Ա Պ Օ Թ Վ

Ով Հզօր Թագուհի Հրեշտակաց, փառաւորեալ Մայր Աստուծոյ, ողոր-

մած եւ քաղցր Տիրուհի իմ, ես քու  
անարժան ծառայդ՝ ամենասուրբ ոտիցդ  
առջեւ իյնալով՝ կը խնդրեմ քեզմէ որ  
ողորմելի մեղաւորէս ընդունիս աս սուրբ  
վարդարանին ուրախական տնօրէնու-  
թեան հինգ խորհուրդները, անարժա-  
նապէս քու մեծվայելչութեանդ մատու-  
ցած հաղար ողջոյններուս ու օրհնու-  
թեանցս հետ։ Թախանձանօք կը խըն-  
դրեմ քեզմէ, սիրելի թագուհի իմ, որ  
զասոնք նորածին Որդւոյդ առջեւը դնե-  
լով, մայրական իշխանութեամբդ իրմէն  
աս հաղարներուն փոխարէն՝ ինծի միայն  
երկու շնորհք ընդունիս. նախ՝ որ կեն-  
դանութեանս ատեն մեղացս վրայ ճշմար-  
տապէս զղջալու շնորհք տայ ինծի, եւ  
երկրորդ՝ որ մահուանս ատեն զիս փըր-  
կութեան հասցընէ. ամէն։



Գ. Ա. ՎԵՐԴԱԲԱՆԻ  
ԶԵՐՄԵՇԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ\*

Ա. Ուրախական տնօրէնութիւններ :

ԵՐԻՌ-ՀԵԲԻ, ԵՐԵՎ-ՀԵԲԻ Ե- Ը-Բ-Ա-:

ՔՐԻՍՏՈՍԻ Ուրախական տնօրէնութեան առաջին մասին մտածենք՝ թէ ինչպէս գաբրիէլ հրեշտակապետը զԱրբուհի կոյս Մարիամ ողջունեց, որ Հոգւոյն սրբոյ զօրութեամբն զՏէրն իր սուրբ արդանդին մէջ յղացաւ :

Հայր մեր, տասը Ողջոյն, Փառք Հօր :

Ուրախական անօրէնութեան երկրորդ մասին մտածենք՝ թէ ինչպէս Երանելի կոյսը լսելով որ Եղիսաբեթ ալ յղա-

\*Ամենառն որ Ա. վարդարանը չերմեռանդութեամբ կը զբացեն, 100 օրուան ներսպութիւն շնորհուած է. եւ աս հարիւր օրուան ներսպութիւնը կ'երթոյ ամեն մէկ Հոյը մերին ու ամեն մէկ Ողջունին, միայն թէ վարդարանն օրհնուած ըլլոյ: — Իսկ ով որ տարուան մէջ ամեն օր կը զբացէ ու անգամ մը խոստովանանք ըլլալով ամենասուրբ Հաղորդութեան կը մերձենայ, լիակատար ներսպութիւն կը վաստըկի: Բենեդիկտ. գ. գ. 1726 Ապր. 13:

ցեր է, շուտ մ'անոր այցելութեան  
գնաց, ու երեք ամիս քովը կեցաւ:

Հայր մեր, տասը Ողջո՞ն, Փառք Հօր:

Ուրախական տնօրէնութեան երրորդ  
մասին մտածենք՝ թէ ինչպէս Քրիստոսի  
Տեառն մերոյ ծննդեան ժամանակը հա-  
սած ըլլալով՝ Երանելի Կոյսը Բեթղե-  
հէմ գնաց. եւ հոն Յիսուս մանուկը  
ծնանելով՝ Խանձարը մէջ պատեց ու  
մսուրը դրաւ:

Հայր մեր, եւ այլն:

Ուրախական տնօրէնութեան չորրորդ  
մասին մտածենք՝ թէ Երանելոյ Կու-  
սին սրբութեան օրերը լեցուելով,  
Մովսեսի օրինաց համաձայն զմանուկ  
Յիսուսը տաճար տարաւ եւ Աստուծոյ  
Ընծայեց:

Հայր մեր, եւ այլն:

Ուրախական տնօրէնութեան հին-  
գերորդ մասին մտածենք՝ թէ Քրիստոս  
Տէրն մեր տասուերկու տարեկան եղած  
ատեն, Երուսաղէմ գնաց. եւ ծնողքն

երեք օր զինք փնտուելէն ետեւ տաճարը  
գտան, ուր օրէնսգիտաց հետ նստած՝  
զանոնք մտիկ կ'ընէր եւ անոնց հարցումներ կընէր:

Հայր մեր, եւ այլն :



Բ. Տրտմական տնօրէնութիւններ :

Չորեւշբնի եւ Ո-րբան :

**Գ**րիստոսի տրտմական տնօրէնութեան առաջին մասին մտածենք՝ թէ ինչպէս Տէրն մեր գեթսեմանի պարտէզը մտնելով՝ կ'աղօթէր ու կ'ըսէր. « Հայր, եթէ կարելի է՝ աս չարչարանաց բաժակն իղմէ վերցուի » :

Հայր մեր, եւ այլն :

Տրտմական տնօրէնութեան երկրորդ մասին մտածենք՝ թէ ինչպէս Պիղատոս զՅիսուս ձաղկել տալէն ետեւ, անդութ Հրէից մտանեց, որ զինքը խաչեն:

Հայր մեր, եւ այլն :

Տրտմական տնօրէնութեան երրորդ  
մասին մտածենք՝ թէ ի՞նչպէս զինուոր-  
ները զՅիսուս բակը տանելով՝ գլուխը  
փշէ պսակ դրին:

Հայր մեր. եւ այլն:

Տրտմական տնօրէնութեան չորրորդ  
մասին մտածենք՝ թէ ի՞նչպէս Փրկիչը  
ծանր խաչափայտը ուսն առած՝ Գող-  
դոթա լեռը կ'ելլէր:

Հայր մեր. եւ այլն:

Տրտմական տնօրէնութեան հինգե-  
րորդ մասին մտածենք՝ թէ ի՞նչպէս Տէրն  
մեր Գողդոթա լեռը հասնելով, զգ եստ-  
ները վրայէն հանեցին, խաչափայտին  
վրայ բեւեռեցին. եւ ի՞նք Հայր, հոգիս  
ձեռքդ կը յանձնեմ, գոչելով, հոգին  
աւանդեց:

Հայր մեր. եւ այլն:

Գ. Փառաւոր տնօրէնութիւններ :

Հինգը լուսնի եւ Ակրակի :

**Ք**րիստոսի փառաւոր տնօրէնութեան  
առաջին մասին մտածենք՝ թէ ի՞նչպէս  
իր սուրբ մահուանէն երեք օր ետքը  
փառաւոր կերպով յարութիւն առաւ :

Հայր մեր. եւ այլն :

Փառաւոր տնօրէնութեան երկրորդ  
մասին մտածենք՝ թէ ի՞նչպէս Քրիստոս  
տէրն մեր յարութիւն առնելէն ու քա-  
ռասուն օր իր սուրբ Մօրն եւ աշակեր-  
տացը շատ անգամ երեւնալէն ետքը  
երկինք համբարձաւ :

Հայր մեր. եւ այլն :

Փառաւոր տնօրէնութեան երրորդ  
մասին մտածենք՝ թէ ի՞նչպէս յարութե-  
նէ յիսուն օր ետքը, երբ սուրբ Կոյսն  
ու Առաքեալք վերնատունը կը կենային,  
խոստացուած Հոգին սուրբ եկաւ, եւ  
ամենն ալ Հոգւով սրբով լեցուեցան :

Հայր մեր. եւ այլն :

Փառաւոր տնօրէնութեան չորրորդ  
մասին մտածենք՝ թէ ի՞նչպէս Քրիստոսի  
Տեառն մերոյ երկինք համբառնալէն  
տասուերկու տարի ետքը՝ Մարիամ իր  
մաքուր հոգին Որդւոյն ձեռքը յան-  
ձնեց, եւ հրեշտակները զինք երկինք  
վերափոխեցին:

Հայր մեր. եւ այլն:

Փառաւոր տնօրէնութեան հինգե-  
րորդ մասին մտածենք՝ թէ ի՞նչպէս Աս-  
տուծոյ միածին Որդին՝ իր սիրելի մայրն  
անպատմելի փառօք պատուեց, պսակեց  
եւ զինք երկնից ու հրեշտակաց թա-  
գու հի ըրաւ:

Հայր մեր. եւ այլն:



Դ. Ա. ԿՈՒՍԻՆ ԵԶԹԸ ՑԵՒՈՅ

ԶԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Առաջին ցաւ :

ՅԵՒՏԱԿԻՑ ԿՇԱԼԱՄ ՔԵՂԻ, ՍԻՐԵԼԻ  
ՄԱՅՐ, այն առաջին ցաւին համար, զոր  
սիրտդ Սիմեոն ծերունոյն խօսքերէն  
զգաց, երբ առջեւդ բերիր սիրելի որ-  
դւոյդ՝ մարդիկներէն կրելու ամեն հա-  
կառակութիւններն ու թշնամանքները,  
աղէկ գիտնալով որ Փրկիչը բովանդակ  
արիւնը թափելէն ետեւ, աչուրնե-  
րուդ առջեւ խաչափայտին վրայ՝ ամէն  
մարդիկներէ թող տրուած, հոգին պի-  
տի աւանդէ, եւ դուն ամենեւին ճար  
կարող պիտի չըլլաս գտնել:

Աս դառն յիշատակներուն համար՝  
որոնք զքեզ այնչափ ատեն տրտմեցու-  
ցին ու չարչարեցին, կը խնդրեմ քեղմէ,

ով թագուհի մարտիրոսաց, որ ինծի  
շնորհք ընդունիս Քրիստոսի չարչա-  
րանքներն ու քու ցաւերդ թէ կենացս  
մէջ եւ թէ մահուանս ժամանակ աշ-  
քիս առջեւ ու սրտիս մէջ հաստատուն  
պահելու. ամեն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

### Երկրորդ ցաւ:

**Յ**աւակից կ'ըլլամ քեզի, ով սիրելի  
Մայր, այն երկրորդ ցաւոյն համար, որ  
սիրտ թափանցեց, երբ տեսար թէ  
ինչպէս նորածին Որդիդ սաստիկ կը հա-  
լածուի ան մարդիկներէն՝ զորոնք սա-  
տանային լծէն ազատելու համար եկած  
էր, որով եւ գիշերանց ու գաղտուկ  
եգիպտոս փախչելու հարկադրեցար:

Ան վշտաց համար, սուրբ Կոյս Մա-  
րիամ, զորոնք քու աքսորեալ ու վորն-  
տուած որդեկիդ հետ՝ անապատներու  
եւ անհարթ ճամբաներու մէջ կրեցիր,  
եւ օտարութեան ու սաստիկ աղքա-

տութեան մէջ՝ ամենէն մոռցուած ապրելուդ եւ ուրիշ վշտացդ արժանեացը համար, ինծի շնորհք ընդունէ որ ես ալ աս կենաց ամէն նեղութիւնները մինչեւ ցմահ համբերութեամբ տանիմ, եւ աղատիմ դժոխին սաստիկ պատիժներէն՝ որոնց արժանի եմ իմ մեղացս համար. ամէն:

Հայր մեր, Աղջոյն, Փառք Հօր:

### Երրորդ ցաւ:

**Յ**աւակից կ'ըլլամ քեզի, սիրելի Մայր, այն երրորդ ցաւին համար, որ սիրտգ ծակեց, երբ սիրելի Յիսուսդ կորսնցուցիր, որ քեզմէ բաժնուելով Երուսաղէմ մնաց: Ո՛վ սիրելի Թագուհի իմ, նոյն միջոցին գիշեր ցորեկ հանգիստ շգտար, վասն զի քու մէկհատիկ սիրելիդ քովդ չէիր տեսներ, եւ չէիր ալ գիտեր թէ ինչու զքեզ թողուցեր է:

Աը խնդրեմ՝ քեղմէ, ով Մայր, որ  
աս երեք օրուան հեծութեանց ու հա-  
ռաշանաց համար՝ ինձի շնորհք ընդու-  
նիս որ ալ երբեք Աստուածս չկորսնցը-  
նեմ, այլ աս աշխարհքիս մէջ միշտ  
առանց մեղաց ապրելով՝ զինք օր մը  
իւր փառացը մէջ տեսնելու արժանի  
ըլլամ, ամեն։

Հայր մեր, Աղջոյն, Փառք Հօր։

### Դորրորդ ցաւ։

Վ շտակից կ'ըլլամ՝ քեղի, զ իմած  
Մայր, այն չորրորդ խոցին համար, որ  
սիրտդ թափանցեց, երբ Յիսուսդ դա-  
տապարտուած, չուաններով կապուած,  
արիւնով ու վէրքերով ծածկուած,  
փշով պսակուած եւ ցաւոց ճամբուն  
մէջ խաշախայտին ծանրութեան տակ  
ինկած տեսար, որ մեր վրայ ունեցած  
անչափ սիրոյն համար անմեղ գառին  
պէս մեռնելու կ'երթար։ Ան ատեն իրար  
տեսար, եւ նոյն հայեցուածքը ձեր սըր-

տին վրայ այնչափ աւելի դառն սլաքներ  
արձակեց, որչափ իրարու վրայ ունե-  
ցած սէրերնիդ սաստիկ էր:

Աս անտանելի ցաւոց համար՝ խնդրէ  
Աստուծմէ ինծի շնորհք, որ միշտ իւր  
ամենասուրբ կամացը համաձայն կեանք  
անցընելով եւ մինչեւ կենացս վերջին  
շունչը Յիսուսին հետ միացած մնալով՝  
ինծի Խրկած խաչերը սիրով ընդունիմ.  
ամէն:

Հայր մեր, Աղջոյն, Փառք Հօր:

### Հինգերորդ ցաւ:

**Վ**շտակից կ'ըլլամ քեզի, ով սի-  
րելի Մայր, այն հինգերորդ խոցին հա-  
մար՝ որ քու սիրտդ վիրաւորեց, երբ  
Գողգոթա լերան վրայ աչուըներուդ  
առջեւ սիրելի Որդիդ սոսկալի տանջա-  
նաց մէջ ամէն մարդիկներէն նախա-  
տուած եւ վերջապէս խաչին վրայ իր  
սուրբ հոգին աւանդած տեսար: Աս  
ամէն բան տեսար առանց զինքը միսի-

թարել կարենալու, որ ամենամեծ չարագործներուն ալ կը շնորհուի:

Թագուհի մարտիրոսաց, այն մահուան անձկութիւններուն համար՝ զորոնք հոգեւարքի մօտ եղող Որդւոյդ հետ կրեցիր, եւ այն սաստիկ տրտմութեան համար՝ զոր զգացիր երբ Յիսուս վերջին անդամ քեզի հետ խօսելով՝ քեզի հրաժեշտ տուաւ եւ սիրելի Աշակերտին հետ ամենքս քեզի որդեգիր ըրաւ. Եւ միանդամայն ան սաստիկ դառն ցաւին համար՝ զոր կրելու հարկադրեցար, երբ սիրալիր Որդւոյդ դլուխը ծռած եւ, հոգին աւանդած տեսար, կը խընդիրեմ՝ խաչեցեալ Որդիեգի ինծի համար շնորհք առ, որ ես ալ աշխարհքիս մեռած ըլլալով, բոլոր կենացս մէջ միայն Աստուծոյ համար ապրիմ. Եւ այսպէս օր մը զինք երես առ երես տեսնելու արժանի ըլլամ. ամեն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

### ՎԵցԵՐՈՐԴ ցաւ:

**Ց**աւ ակից կ'ըլլամ՝ քեղի, սիրելի Մայր, այն վեցերորդ խոցին համար՝ որ սիրորդ թափանջեց, երբ Որդիդ անարդուած, արհամարհուած ու գարձեալ վիրաւ որուած տեսար ան չարագործ ու անգուխ մարդիկներէն, որոնք նաեւ իր մահուանէն ետեւ՝ զինքը նախատելէն ու հայհոյելէն չդադրեցան:

Աս սաստիկ ցաւին համար կը խընդրեմ քեղմէ, սիրելի Մայր, ինծի շնորհք ընդունէ, որ Յիսուսի խոցուած ու ինծի համար բացուած վիրաց մէջ ընակիմ միշտ, որպէս զի բոլոր կենացս մէջ Աստուծմէ ուրիշ բանի վրայ չմտածեմ, ուրիշ բան չսիրեմ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:

### ԵԹՆԵՐՈՐԴ ցաւ:

**Վ**շտակից կ'ըլլամ՝ քեղի, ով սիրելի Մայր, այն եթներորդ ցաւին համար՝

որով սիրտգ վիրաւորուեցաւ, երբ ոգեշ-  
ապառ Որդիդ բազկացդ մէջ դրին։ Ա՛լ  
ան գեղեցիկ, ան սիրուն զաւակը չէ,  
լոր Բեթղեհեմի այրին մէջ ծնար։ Բո-  
լորովին վէրքերով լեցուած, իր սուրբ  
ու անարատ մարմինը խարազաններու  
հարուածներէն պատուտած է եւ վեր-  
քերուն մէջէն ոսկրները կ'երեւան։ Ոչ  
սիրելի զաւակս, կը դոչէիր, ոչ իմ ա-  
մենասիրելի որդեակս, մարդկան ունե-  
ցած սաստիկ սէրդ զքեղ ուր տարաւ։  
Երբ զինք գերեզման դրին, ուղեցիր իր  
ետեւէն երթալ, ձեռուըներովդ զին-  
քը գերեզման տեղաւորել, ու վերջին  
հեղ իրմէն հրաժեշտ առնելէն ետեւ՝  
կոտրած եւ իր սիրովը բորբոքած սիրտգ  
հոն թողուլ, սակայն քեզի աս ալ զլա-  
ցուեցաւ։

Աս ամէն տանջանաց սիրոյն համար,  
Մայր գեղեցիկ սիրոյ, ընդունէ ինծի  
շնորհք, որ սրտանց լամ եւ ապաշխա-  
րեմ Աստուծոյ դէմ ըրած ամէն վշտա-

ցուցումներուս վրայ: Ով Մարիամ, նեղութեանցս ու փորձութեանցս ատեն ինծի օդնութեան հասիր. մահուանս ժամանակ եղիր պաշտպանս, որպէս զի այս աքսորանաց հովտէն ելլելով՝ քուցաւոցդ ու Որդւոյդ չարչարանացն արժանեօքը քեզի եւ Որդւոյդ փառք տամ յաւիտենական երանութեան մէջ. ամէն:

Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր:



## Ա Պ Օ Բ Ա Ք

Ամենօր հնեալ երանուհի Կոյս Մարիամ, Մայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, փառաւորեալ տաճար ամենասուրբ Երրորդութեան եւ հարսն Հոգւոյն սրբոյ, կը պաղատիմ ու արտասուօք քեզմէ կը խնդրեմ, որ երկնաւոր Հօր առջեւ բարեխօս ըլլաս, ինծի շնորհք ու կարողութիւն ընդունիս տառապանացս մէջ հաստատուն մնալու եւ դլուխս եկած թշուառու-

թեանց համբերութեամբ տանելու : —  
Խոնարհ սրտով քեզի կ'աղաղակեմ,  
ով ցաւագին Մայր, թշուառութեանցս  
նայէ: Դուն որ տառապելոց ապաստան  
ես, եղիք ինծի օգնական եւ պահէ զիս  
մայրենի հովանաւորութեանդ տակ, որ  
չըլայ թէ անհամբեր ըլլալով՝ մեծա-  
դոյն չարեաց մէջ իյնամ: Զօրացուր  
զիս տկարութեանս մէջ, որպէս զի Փըր-  
կչիս սիրոյն համար ամեն թշուառու-  
թեանց համբերելով՝ հասնիմ յաւի-  
տենական կեանքը, ամեն:

---

### Ե Բ Գ

**Ա**ՍՅՐ առ խաչին մայր ցաւագին,  
Արտասուալից եւ արտմագին,  
Յորժամ որդին եր խաչեալ:

Ընդ որոյ անձն հառաչալից  
Տրտմազգեցեալ եւ ցաւակից.  
Սուսերն եանց գուշակեալ:

Զիսրդ թախծեալ եւ վշտագին  
Եր օրհնեալ Կոյսն երանելին,  
Մայրն սիրոյ միածնին:

Որ մորմոքէր եւ ցաւագնէր  
Գըթած սուրբ Մայրն՝ երբ տեսանէր  
Չտանչանս որդւոյն նաղելի:

Ո՞վ էր արդեօք որ ոչ ողբայր  
Ի տեսանէլ զՔրիստոսի մայր  
Յայնչափ աղէտըս ցաւոյն:

Եւ ո՞վ կարէր ոչ տրտմակցել  
Ի Քրիստոսի մայրն յակնարկել,  
Որ ցաւակից էր որդւոյն:

Ա ասն մեղաց իւրոյ ազդին  
Ետես զՅիսուս ի տաղնապին  
Եւ մատնեալ խոշտանդ անաց:

Տեսանէր զիւր քաղցրը զորդին  
Թողեալ լըքեալ ի մահ խաչին  
Յորժամ զոդին աւանդեաց:

Աղէ սուրբ մայր աղքիւր սիրոյ,  
Տուր ինձ զդալ զաղէտ ցաւոյ,  
Զի զըսդ ընդ քեզ սկացայց:

Տուր բորբոքել սրտի իմոյ  
Ի սէր Փրկչին Տեսառն Աստուծոյ,  
Զի նմա հաճոյ դտայց:

Ցոյց ինձ Մայր սուրբ զայս գութ սիրոյ  
Զվէրս վասն իմ խաչեցելոյ  
Բեւեռեա յիմ սիրտ ուժդին:

Ա իրաւորեալ քումդ որդւոյ  
Ա ասն իմ այդչափ չարչարելոյ  
Պատժոց հանցես ինձ բաժին:

Տուր ինձ ընդ քեզ զըթովք ողբալ  
Խաչեցելոյն ցաւակից լեալ  
Յորչափ յաստիս կենցաղիմ:

Ուրձ առ խաչիդ ընդ կուսիդ կալ  
Եւ քեզ յաւետ ընկերանալ  
Յողբալ կոծոյ փափաքիմ:

Կոյս կուսանաց գերհրաշափառ,  
Արդ մի լիցիս գու առ իս դառն,  
Ինձ միշտ ընդ քեզ տուր կոծել:

Տուր զմահ փրկչին յանձին բերել,  
Չարչարանացն հաղորդ լինել,  
Չվերսն լզմ տաւ ինձ ածել:

Տուր ինձ փրօք փրաւորել,  
Տուր ինձ խաչիւ արեւալ լինել,  
Եւ սուրբ արեւամբ միաձնին:

Մի այրեցայց ըստով վառեալ,  
Քեւ կոյս եղեց պատսպարեալ  
Յաւուր մէծի առենին:

Քրիստոս փըրկիւ ի մահուս օր  
Շնորհեա ինձ գալ օդնութեամբ մօր  
Առ մրցանակն յաղթութեանց:

Ի մեռանել մարմնոյ իմոյ  
Քեւ շնորհեսցի անմահս հօդոյ  
Արշայութեան վառքն անանց:



Ե. ԻՆՆՈՐԵԱՅ ՊԵՏՐԱՍՈՒԹԻՒՆ  
ԱՆԱՐԱՑ ՅԴՈՒԹԵԱՆ  
Ս. ԿՈՒՄԱՐԵ

Առաջին օր:

Խել սուրբ Հոգի, լից զսիրտս հաւատացելոց քոց, եւ զհուր սիրոյ վառեա ի նոսա:

Առաքեա զոդի քո եւ ստանաս զնոսա:  
Եւ նորոգես զերեսս երկրի:

Աղօթք:

Աստուած, որ զսիրտս հաւատացելոց  
քոց լուսաւորութեամբ Հոգւոյն սրբոյ  
ուսուցեր, տուր մեղ նովին Հոգւովին  
զուղիղսն ճանաչել եւ միշտ ի նորա  
միսիթարութեանն վայելել, Քրիստոսիւ  
Տերամբ մերով. ամէն:

\* Պիտո Եւ. 1808 Նոյ. 24ին յիակատար Ներողութիւն  
Հնորհած է անոնց, որ Խննօրենց չերմեռանդութիւնը կատարելով, անգամ մը խստովանանք կ'ըլլան՝ ամենասուրբ Հաղորդութեան կը մերձենան ու քահանացապետին գիտման աղօթքը կ'ընեն: Օր մը միայն ընողն 300 օրւան Ներողութիւն կը վաստըկի: Աս Ներողութիւնները քաւարանի հոգւոց ալ կրնան մերձեցուիլ:

## ԱԴՅԹԻ ՊԵՏՐԵՍՈՒԹԵԼՆ

ԱՄԷՆ ՕՐ ՀՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ամենամաքուր եւ առանց արատոյ  
յղացեալ, փառաւորեալ Ա. Կոյս, լի շնոր-  
հօք եւ Մայր Աստուծոյ, հրեշտակաց եւ  
մարդկան թագուհի. ահաւասիկ խո-  
նարհութեամբ քեզի կը դիմեմ ու զքեզ  
կը յարդեմ իբրեւ Մայր Փրկչիս, որ թէ-  
պէտ Աստուած էր, սակայն քեզի ցու-  
ցուցած յարդութեամբը, մեծարանօքն  
եւ հպատակութեամբը ինձի սորվեցուց  
թէ քեզի ինչ պատիւ, ինչ հպատա-  
կութիւն ու մեծարանք ընծայելու եմ:

Կ'աղաչեմ՝ ընդունե աս իննօրեայ  
պաշտօնը՝ զոր քեզի կը նուիրեմ: Դուն  
մեղաւորաց ապահով ապաստանարանն  
ես, ուստի քեզի կը դիմեմ, որ ողորմու-  
թեան մայր ըլլալովդ՝ թշուառութիւն-  
ներուս վրայ չես կրնար գութ չունենալ:  
Յիսուսէն ետքը դուն ես իմ յոյսս, ա-  
նոր համար մայրենի սրտիդ վրայ ու-  
նեցած վստահութիւնս չես կրնար մեր-

ժել։ Արժանի ըրէ զիս քու որդիդ կո-  
չուելու, որպէս զի կարող ըլլամ ըսել։  
թէ Ցուցուր որ իմ Մայրս ես, ամէն։  
Հոս կ'ըսուի ինն Ողջոցն եւ մէկ Փառք Հօր։

### Ա Պ Յ Թ Ք

Ա հաւասիկ անարատ Կոյս, ամենա-  
սուրբ ոտքդ ինկած, կ'ուրախակցիմ  
քեզի, որ ի յաւիտենից՝ մշտնջենաւոր  
Բանին Մայր ընտրուելով՝ սկզբնական  
մեղքէն անարատ պահուեցար։ — Գո-  
հութիւն եւ օրհնութիւն կը մատու-  
ցանեմ ամենասուրբ Երրորդութեան,  
որ զքեղ յղութեանդ առեն այսպիսի  
առանձնաշնորհութեամբ հարստացուց-  
եւ խոնարհութեամբ կ'աղաւեմ որ ինձի  
շնորհք ընդունիս նոյն սկզբնական մեղ-  
քին՝ վրաս ունեցած դառն ազգեցու-  
թեանցը յալթելու։ Օդնեւուրեմն ինձի  
որ նուաճեմ զանոնք եւ իմ Աստուածո  
սիրելէն երբեք չդադրիմ։ ամէն։

Հոս կ'ըսուի Ս. Կուսին լաւրետանեան կամ  
լաւ եւս Անարատ յղութեան Վիթանիան։

**Տէր ողորմեաց.**

Քրիստոս ողորմեաց.

Տէր ողորմեաց.

Քրիստոս լուլ մեզ.

Քրիստոս անսա մեզ.

Հայր Երկնաւոր Աստուած. ողորմեաց մեզ.

Արդի Փրկիչ աշխարհի Աստուած. ողոր.

Հոգիդ սուրբ Աստուած. ողոր.

Սուրբ Երրորդ ուժիւն մի Աստուած. ողոր.

Անարատ կցյս ի մեջ համօրէն կուսանաց. աղօթեա վասն մեր.

Անարատ կցյս ի յղութեան. աղ.

Անարատ դուստր Հօր Աստուծոյ. աղ.

Անարատ մայր Արդւոյն Աստուծոյ. աղ.

Անարատ հարսն Հոգւոյն սրբոյ. աղ.

Անարատ տաճար Վմենասուրբ Երբ-  
րորդութեան. աղ.

Անարատ պատկեր իմաստութեան  
Աստուծոյ. աղ.

Անարատ արշալոյս Արեգական ար-  
դարութեան. աղ.

- Անարատ եւ կենդանի տապանակ  
ուխտի եւ տեղի հանգստեան  
Յիսուսի Քրիստոսի. աղ.
- Անարատ բողըոջ արմատոյն Դաւթի. աղ.
- Անարատ ճանապարհ որ տանիս առ  
Քրիստոս. աղ.
- Անարատ կոյս որ Ճաղթեցեր մեղաց. աղ.
- Անարատ կոյս որ խորտակեցեր  
զգլուխ վիշապին. աղ.
- Անարատ դշխոյ Երկնի եւ Երկրի. աղ.
- Անարատ դուռն Երկնային Երաւ-  
սաղեմի. աղ.
- Անարատ գանձապետ շնորհացն Աս-  
տուծոյ. աղ.
- Անարատ աստղ ծովու. աղ.
- Անարատ աշտարակ պատերազմող  
եկեղեցւոյ. աղ.
- Անարատ վարդի մէջ փշոց. աղ.
- Անարատ ձիթենի ի խորհրդաւոր  
դաշտին Աստուծոյ. աղ.
- Անարատ օրինակ ամենայն կատա-  
րելութեանց. աղ.

- Անարատ պատճառ երջանկութեան  
մերոյ. աղ.
- Անարատ սիւն հաւատոց մերոց. աղ.
- Անարատ աղբիւր սիրոյն Աստուծոյ. աղ.
- Անարատ եւ անվրէպ նշան փրկու-  
թեան. աղ.
- Անարատ կանոն կատարեալ հնա-  
զանդութեան. աղ.
- Անարատ խարիսխ աղատութեան  
մերոյ. աղ.
- Անարատ լոյս հրեշտակաց. աղ.
- Անարատ պսակ նահապետաց. աղ.
- Անարատ փառք մարգարէից. աղ.
- Անարատ ուսուցիչ առաքելոց. աղ.
- Անարատ զօրութիւն մարտիրոսաց. աղ.
- Անարատ ապաւէն խոստովանողաց. աղ.
- Անարատ մաքրութիւն կուսանաց. աղ.
- Անարատ խնդութիւն յուսացելոց ի  
քեզ. աղ.
- Անարատ փաստաբան մեղաւորաց. աղ.
- Անարատ ախոյեան յահարկութիւն  
հերետիկոսաց. աղ.

Անարատ տուն մաքրութեան եւ  
զգաստութեան. աղ.

Անարատ թագուհի յղացեալ ա-  
ռանց արատոյ մեղաց. աղ.

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս  
աշխարհի. խնայեա ի մեզ Տէր:

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս  
աշխարհի. անսա մեզ Տէր:

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս  
աշխարհի. ողորմեաց մեզ:

Ով բոլորովին սուրբ ու անարատ  
կոյս, բարեխօսէ մեզի համար, որ քու  
Որդւոյդ Յիսուսի Քրիստոսի խոստմանց  
արժանի ըլլանք:

---

Ամենակալ ու յաւիտենական Աս-  
տուած, որ քու Եկեղեցւոյդ շնորհեցիր՝  
Սիածին Որդւոյդ մօրն անարատ յղու-  
թեան փառքը տօնախմբելու, կը Խըն-  
դրենք որ Երկրի վրայ զինք մեծարող-  
ները՝ Երկինքն ալ յաւիտենական Երա-  
նութեան արժանի ըլլան. ամեն:

Կոյս մայր, որ թէ կամաւորական ու  
թէ սկզբնական արատէ միշտ մաքուր  
գտնուեցար, քեզի կը յանձնեմ սրտիս  
մաքրութիւնն. ամէն\* :

Ի յղութեան քում, Կոյս Մարիամ,  
եղեր անարատ. աղաչեա վասն մեր  
ՀՀայր, զորոյ զՈրդին՝ ի Հոգւոյն սրբոյ  
յղացեալ ծնար\*\*\*:



Տէր Աստուած, որ սուրբ կուսին  
անարատ յղութեամբը քու Որդւոյդ  
արժանի բնակարան պատրաստեցիր, կը  
ինդրենք որ ինչպէս նոյն Որդւոյն մահը<sup>1</sup>  
յառաջագոյն տեսնելով՝ զՄարիամ ա-  
մէն արատէ պահեցիր, այսպէս նաեւ  
զմեզ իր բարեխօսութեամբը մաքուր  
ու սուրբ սրտիւ քեզի ներկայանալու  
արժանի ընես:

\* Պիոս թ. Քահանայապետը 100 օրւան ներողու-  
թիւն կը չնորհէ այս աղօթքը չերմեռանդութեամբ ըսող-  
ներուն:

\*\* Աս փոքրիկ աղօթքն առանձին ըսողն ալ 100 օրւան  
ներողութիւն կը վաստըկի: Պիոս Զ. 1793. Նոյ. 21:

Տեր Աստուած՝ ամէն հաւատացելոց  
հովիւն ու առաջնորդը, գթութեամբ  
խնամէ քու ծառայդ (Ա.Ա.) Քահանայ-  
ապետը, զոր եկեղեցւոյդ առաջնորդ ու  
հովիւ դրիր: Խոնարհութեամբ կը խըն-  
դրենք քեղմէ՝ զօրութիւն տուր իրեն,  
որ իր հպատակացը բանիւ եւ գործով  
օգտակար ըլլայ. որպէս զի իրեն յան-  
ձնուած հօտին հետ յաւիտենական կե-  
նաց հասնի:

Աստուած, մեր ապաւէնն ու զօրու-  
թիւնը, լսէ եկեղեցւոյդ եռանդուն պա-  
ղատանացը: Դուն՝ որ նոյն ինքն բա-  
րեպաշտութեան տուիչն ես, օգնէ մեզի,  
որ հաւատքով խնդրածնիս՝ իրօք ըն-  
դունինք, Քրիստոսիւ Տերամբ մերով  
ամէն:

Հետեւեալ օրերն ալ դրուած աղօթքները  
աս կարգաւ կը կատարուին. միայն թէ ամէն  
մէկ օր ունի յատուկ աղօթք:

### Երկրորդ օր:

Եկ սուրբ Հոգի: Աստուած որ. էջ 284:  
Ամենամաքուր եւ առանց. էջ 285:

### ԵՂՅԹԻՔ

Ով շուշան մաքրութեան, Մարիամ,  
Խնդակից կ'ըլլամ՝ քեզի, որ յղութեանդ  
առաջին վայրկենէն՝ շնորհաց առատու-  
թեամբը լեցուեցար. մանաւանդ որ  
քեզի նաեւ մտաց կատարեալ կիրա-  
ռութիւնը շնորհուեցաւ: — Գոհիւ-  
թիւն եւ երկրպագութիւն կը մատու-  
ցանեմ ամենասուրբ Երրորդութեան,  
որ քեզի այսպիսի գերագոյն պարգեւ-  
ներ ըրաւ. եւ կ'ամչնամ առջեւդ զիս  
այսպէս շնորհքէ զուրկ տեսնելուս: Արդ  
Դուն որ երկնաւոր շնորհքներով ա-  
սանկ կատարեալ լեցուած ես, գթա  
ևեղձութեանս վրայ, եւ հոգիս անարատ  
յղութեանդ գանձերուն մասնակից ըրէ.  
ամէն.

Վիթանիա: Ով բոլորովին: Ամենակալ եւ  
այն, էջ 287—292:

## Երրորդ օր:

Եկ սուրբ Հոգի: Աստուած որ. էջ 284: Ամենամաքուր եւ առանց. էջ 285:

## Ե Պ Օ Թ Յ Ք

Ով Խորհրդական վարդ մաքրութեան՝ Մարիամ, խնդակից եմ քեզի, որ անարատ յղութեանդ ատենը՝ փառաւորապէս յաղթեցիր դժոխական օձին: — Սրտանց գոհութիւն եւ փառք կու տամ ամենասուրբ Երրորդութեան, որ քեզի այսպիսի առանձնաշնորհութիւն մը տուաւ. կ'աղաչեմ՝ ինծի զօրութիւն ընդունէ՝ որ դժոխային թշնամոյն ամէն որոդայթիցը յաղթեմ եւ հոգիս մեղօք չարատաւորեմ: Դուն ուրեմն օդնէ ինծի եւ հզօր պաշտպանութեամբդ զօրացուր զիս, որ յաւիտենական փրկութեան ընդհանուր թշնամոյն վրայ յաղթանակեմ. ամէն:

Լիթանիա: Ով բոլորովին: Ամենակալ եւ այլն, էջ 287—292:

### Զորրորդ օր:

Եկ սուրբ Հոգի: Աստուած որ. էջ 284:  
Ամենամաքուր եւ առանց. էջ 285:

### Ա Դ Յ Թ Ք

Ով հայելի մաքրութեան, անարատ  
կշս Մարիամ, սրտանց կ'ուրախանամ  
տեսնելով որ յղութենէդ սկսեալ՝ ա-  
մենէն բարձր ու կատարեալ առաքի-  
նութիւններն ու Հոգւոյն սրբոյ ամէն  
պարգեւները վրադ առատութեամբ  
զեղուեցան: — Գոհութիւն եւ փա-  
ռաբանութիւն կը մատուցանեմ ամե-  
նասուրբ Երրորդութեան, որ քեզի աս  
առանձնաշնորհութիւնները տուաւ. եւ  
կ'աղաչեմ, ով Մայր գթութեան, որ  
առաքինութեանց գործադրութիւնն  
ստանալու բարեխօս ըլլաս, որպէս զի  
կարող ըլլամ Հոգւոյն սրբոյ պարգեւ-  
ներն ու շնորհքներն ընդունիլ. ամէն:

Վիթանիա: Ով ըոլորովին: Ամենակալ եւ  
այլն, էջ 287—292:

### Հինգեր որդօր:

Եկ սուրբ Հոգի: Աստուած որ. էջ 284:  
Ամենամարուր եւ առանց. էջ 285:

### Ա Պ. Օ ԹԱ Ք

Ով լուսին մաքրութեան, ուրախակից եմ քեզի՝ որ անարատ յղութեանդ խորհուրդը բոլոր մարդկային ազգի փրկութեան սկիզբն եղաւ, եւ բոլոր աշխարհքի ուրախութեան պատճառ: — Գոհութիւն եւ փառք կու տամ ամենասուրբ Երրորդութեան, որ զքեզ այսպէս փառաւորեց. եւ քեզի կ'աղաւ չեմ, Մայր Աստուծոյ, որ ինձի շնորհք ընդունիս քու Միածնիդ չարչարանքներէն ու մահուանէն օդուտ քաղելու, որպէս զի ինձի համար խաչին վրայ թափած անդին արիւնն ու մահն ինձի անօդուտ չըլլայ. ամէն:

Լիթանիա: Ով բոլորովին: Ամենակալ եւ այլն, էջ 287—292:

## Աեցերորդ օր:

Եկ սուրբ Հոգի: Աստուած որ. էջ 284:  
Ամենամաքուր եւ առանց. էջ 285:

### Ա Պ Յ Թ Ք

Ով ամենապայծառ աստղ մաքրութեան, անարատ Սարիամ, ուրախակից եմ քեզի, որ անարատ յղութիւնդ արքայութեան բոլոր հրեշտակացը մեծ ուրախութիւն պատճառեց: — Գոհ հութիւն եւ փառք կու տամ ամենասուրբ Երրորդութեան, որ զքեզ այսպիսի գեղեցիկ առ անձնաշնորհութեամբ մը ղարդարեց: Բարեխօս եղիք, որ ես ալ օր մը այս ուրախութեան մասնակից ըլլամ, եւ կարենամ հրեշտակաց հետ զքեզ գովել եւ օրհնել յաւիտեանս, ամէն:

Աթանակա: Ով բոլորովին: Ամենակալ եւ այլն, էջ 287—292:

### Եօթներորդ օր:

Եկ սուրբ Հոգի: Աստուած որ. էջ 284:  
Սմենամաքուր եւ առանց. էջ 285:

### Ա Գ Յ Թ Ա Բ

Ով արշալոյս, ծագումն մաքրութեան,  
անարատ Կոյս Մարիամ, ուրախակից եմ  
քեզի, որ յղութեանդ վայրկենէն շնոր-  
հաց մէջ հաստատուեցար եւ անմեղան-  
չական եղար: — Գոհութիւն կու տամ  
եւ կը բարձրացընեմ ամենասուրբ Եր-  
րորդութիւնը, որ այս առանձնաշնոր-  
հութեամբ միայն զքեզ նշանաւոր ը-  
րաւ: Ով Կոյս սուրբ, ընդունէ ինձի  
համար մեղացս վրայ սաստիկ գարշում,  
որպէս զի աւելի ուղեմ մեռնիլ՝ քան  
թէ անդամ մ'ալ Աստուծոյս դէմ մե-  
ղանչել. ամէն:

Լիթանիա: Ով ըուլորովին: Սմենակալ եւ  
այլն. էջ 287—292:

### Ութերորդ օր:

Եկ սուրբ Հոգի: Աստուած որ. էջ 284:  
Ամենամաքուր եւ առանց. էջ 285:

### Ա Պ Յ Թ Ք

Ով արեգակն անբիծ Մարիամ,  
ինդակից կը լլամ քեզի եւ կ'ուրախա-  
նամ որ յղութեանդ ատեն՝ բոլոր հրեշ-  
տակներէն ու սուրբերէն մեծագոյն եւ  
առատագոյն շնորհք տրուեցաւ քեզի:  
— Գոհութիւն ու փառք կու տամ  
ամենասուրբ Երրորդութեան՝ որ իր ան-  
չափ բարերարութեամբ քեզի այս առ-  
անձինն շնորհքն ըրաւ: Բարեխօս ե-  
լիր ինծի համար, ով երանելի կցս, որ  
ես ալ Աստուծոյ շնորհքն աղէկ գոր-  
ծածեմ: Փոխէ սիրտս ու այնպէս ըրէ  
որ ինք զինքս այսուհետեւ ուղղելու  
սկսիմ. ամէն:

Նիժանիա: Ով բոլորովին: Ամենակալ եւ  
սցն, էջ 287—292:


### ԻՆՍԵՐՈՐԴ օր:

Եկ սուրբ Հոգի: Աստուած որ. էջ 284:  
Ամենամաքուր եւ առանց. էջ 285:

### Ե Պ Օ Թ Ա Ք

Ով կենդանի լոյս սրբութեան եւ  
օրինակ անբծութեան, անարատ կոյս եւ  
Մայր իմ Մարիամ, դուն յղանալուդ  
պէս՝ Աստուծոյ խորին երկրպագու-  
թիւն եւ շնորհակալութիւն մատուցիր:  
Եւ որովհետեւ քեզմով հին անէծքը  
լուծուելով՝ Աղամայ որդւոցը վրայ լի-  
ուլի օրհնութիւն իջաւ, բարեխօս եղիր  
ինծի համար՝ որ այս օրհնութիւնն իմ  
վրաս ալ գայ: Վառէ սրտիս մէջ Աս-  
տուծոյ սէրը. բորբոքէ այս սէրը, որ  
կարող ըլլամ Աստուածս հաստատու-  
թեամբ սիրել ու ետքն ալ արքայու-  
թեան մէջ զինք յաւիտեան վայելել.  
ամէն:

Ախթանիա: Ով բոլորովին: Ամենակալ եւ  
այլն, էջ 287—292:



Զ. ԶԵՐՄԵԽԱՆԴՈՒԹԻՒՆ  
Առ Ս. ԱՍՏՈՒՃԱՀԱՅՐՈՆ  
**ՅՈՎԱԿԱՓ**

Ս. Յովսեփայ ցաւերն եւ ուրախութիւնները:

Ա. ԱՄԵՆԱՄԱՔՈՒՐ փեսայ Մարիամու, փառաւորեալ Ս. Յովսէփ, որ Աստուծոյ Բանին մարդեղութեան խորհուրդը չգիտնալով՝ սաստիկ խոռվեցարերբ Մարիամու յղի ըլլալն իմացար. մինչեւ միտքդ դրիր որ նոյն ամենասուրբ Կյուը գաղտնի արձակես: Այս ցաւիդ եւ այն մեծ ուրախութեանդ համար՝ որ զգացիր երբ Աստուծոյ հրեշտակը նոյն մեծ խորհուրդը քեզի յայտնեց ու սիրտդ հանդարտեցուց, կ'աղաշենք՝ տարակուսանաց եւ երկմտութեանց մեջ գտնուած ատեննիս խնդրէ Աստուծմէ մեզի համար խորհրդոյ պարդեւը, որով ամեն որոշ-

մունքներնիս Աստուծոյ կամացը հա-  
մաձայն ըլլայ:

Փառք Հօր:

Բ. Երանելի նահապետ, փառաւո-  
րեալ Ա. Յովսէփ, որ մարմնացեալ Աս-  
տուածորդւոյն հոգաբարձու ընտրուե-  
լով՝ մեծ վիշտ զգացիր երբ ստիպուե-  
ցար զամենասուրբ Կոյսն գոմի մը մէջ  
պատսպարել ու նորածին մանուկն ան-  
արդ մսուրի մը մէջ դնել: Այս ցաւիդ  
եւ այն մեծ ուրախութեանդ համար որ  
ունեցար՝ երբ որ աստուածային ման-  
կան զմայլելով նայեցար, հրեշտակաց  
բաղմութեան ցնծութիւնը լսեցիր, եւ  
տեսար որ ոչ միայն հովիւներէն՝ այլ  
նաեւ մոգերէն երկրպագութիւն կ'ըն-  
դունի, կ'աղաչենք՝ ընդունէ մեղի Զօ-  
րութեան եւ քաջասրտութեան պար-  
գեւը, որպէս զի Աստուծոյ ծառայու-  
թեան մէջ առջեւնիս ելած ամէն ար-  
գելքներուն յաղթենք, որով քու օրի-  
նակիդ նմանելով՝ աստուածային Փրկիչը

սիրելէն եւ իր ամենասուրբ Մայրը փառաւորելէն զատ բանի վրայ չմտածենք:

Փառք Հօր:

Գ. Ամենահնազանդ կատարիչ աստուածային օրինաց, փառաւորեալ Ա. Յովսէփ, որ սիրտդ սաստիկ ցաւով խոցուեցաւ, երբ երկնաւոր մանուկն ութերորդ օրը թլիատելու ստիպուեցար: Այս ցաւիդ եւ այն ուրախութեանդ համար՝ զօր զգացիր երբ Յիսուս քաղցր անունն արտաքերեցիր եւ նոյն անունն իրեն գրիր, կ'աղաչենք՝ ընդունէ մեղի իմացութեան պարգեւը, որպէս զի փըսկագործութեան միսիթարական խորհուրդը միշտ մտածենք, ամէն բան Յիսուսի փառացը նուիրենք, եւ մեր բոլոր կենաց մէջ հաւատարմութեամբ Յիսուսի գիմելէն ետքը, մահուան ատենն ալ իր քաղցր անունը կրկնենք եւ յարատեւելով իւր սիրոյն մէջ մեռնինք:

Փառք Հօր:

Դ. Զարմանալի գործակից Աստուծոյ  
խորհուրդներուն, երանելի Ա. Յովսէփի,  
որ Աստուծոյ Որդին Երուսաղէմի տա-  
ճարը տարած ատենդ՝ անսահման ցաւ  
զգացիր, երբ Սիմեոնի մարդարէութիւնը  
լսելով՝ Յիսուսի եւ Մարիամու սաստիկ  
վշտեր կրելիքն իմացար։ Այս սաստիկ  
ցաւիդ եւ այն արտաքոյ կարգի ուրա-  
խութեան համար՝ որով սիրտդ լեցուե-  
ցաւ անթիւ Հոգիներուն՝ փրկագոր-  
ծութեան արդիւնքներուն մասնակից  
ըլլալուն պատճառաւ, կ'աղաչենք՝ ըն-  
դունէ մեզի Աստուծոյ սուրբ Երկիւղին  
պարգեւը, որով Հաւատարմութեամբ  
ու ճշդիւ Աստուծոյ պատուիրանները  
պահելով՝ կարող ըլլանք դատաստանին  
օրը երանելի կենաց յարութիւնն առ-  
նողներուն թուղյն մէջ գտնուիլ։

Փառք Հօր։

Ե. Արթուն պահապան մարդացեալ  
Որդոյն Աստուծոյ, փառաւորեալ Ա.  
Յովսէփի, որ մեծ ցաւ ու վիշտ կրեցիր

անդութ Հերովդէսին հալածանքներէն  
փախչելու եւ Եգիպտոս մեծ աշխա-  
տութեամբ Յիսուսի եւ Մարիամու կե-  
նաց վրայ հսկելու եւ հոգ տանելու  
առենդ: Այս ցաւիդ եւ այն մեծ հաս-  
տատութեանդ համար՝ որ ձեռքովդ աշ-  
խարհիս Փրկիչն ազատելուդ վրայ ու-  
նեցար, կ'աղաչեմ ընդունէ մեզի Գի-  
տութեան պարգեւը, որով սատանային  
որոգայթները, մարմնոյ հրապուրանք-  
ներն եւ աշխարհիս ունայնութիւնները  
Ճանչնանք եւ այն ամենայն առիթներէն  
հեռու կենանք, որոնք Յիսուսի շնորհը  
կը վերցընեն կամ կը նուազցընեն:

Փառք Հօր:

Զ. Ով ճշմարիտ հրեշտակ ի մար-  
մի, փառաւորեալ Ա. Յովսէփ, որ Ե-  
գիպտոսէն Հրէաստան դարձած ատենդ  
դարձեալ երկիւղէն ու տրտմութենէն  
տագնապեցար՝ իմանալով որ Արքեղայոս  
կը թագաւորէ եւ Հօրը պէս նախան-  
ձաղ ու անդութ է: Այս ցաւիդ եւ այն

սաստիկ խնդութեանդ համար՝ որ ունեցար երբոր հրեշտակէն միսիթարուելով ու քաջալերուելով՝ իր հրամանաւը նազարէթի տնակդ եկար, ուր խաղաղութեամբ կ'ապրէիր՝ երկնից թագաւորը քեզի հնազանդ ունենալով. կ'աղաչնք՝ ընդունէ մեզի Ողորմածութեան պարգեւը, որով մեր ընկերներուն, մեծերուն, հաւասարներուն եւ ստորնագոյններուն հետ միաբանութեամբ ու խաղաղութեամբ ապրինք եւ անոնց պիտոյքները յօժարութեամբ հոգանք. որպէս զի ետքէն ալ կարենանք յաւիտենականութեան մէջ երանելեաց քաղցր ընկերութիւնը վայելել:

Փառք Հօր:

Ե. Ամենապայծառ հայելի սրբութեան, փառաւորեալ Ա. Յովսէփ, որ մեծ վիշտ ու նեղութիւն կրեցիր՝ երբ որ Աստուծոյ Որդին առանց քու յանցանացդ կորսուած տեսար, եւ զինքն երեք օր անմիսիթար մինտոեցիր: Այս դառ-

նակսկիծ ցաւիդ եւ այն անպատռում ուրախութեանդ համար՝ որ զգացիր երբ զինքը տաճարը գտար վարդապետաց հետ, որ ամենուն սաստիկ զարմացում կը պատճառէր, կ'աղաչենք՝ ընդունէ մեզի իմաստութեան պարգեւը, որով աշխարհիս բոլոր հաճոյքները քաջութեամբ արհամարհելով, եւ մեր կենաց ընթացքին մէջ միայն Աստուծոյ հաճոյական բաներուն ետեւէն իյնալով՝ զԱստուած երբեք ծանր յանցանքով չկորսընցընենք. եւ եթէ դժբախտութեամբ զինքը կորսնցընենք՝ ճշմարիտ ցաւով զինքը փնտռենք, եւ գտնելէն ետեւ՝ սիրենք ու հաստատութեամբ իրեն ծառայենք, որպէս զի մահուանէ վերջն ալ զինք քեզի հետ յաւիտեանս օրհնենք եւ փառաւորենք:

Փառք Հօր:

ՀԱՄԱԴՈՏ ՄԱՎԹԱՆՔ

Ա. Ա. ՅԱՎԼՍԻՓ

Ա. **Փառաւորեալ** Ա. Յովսէփ, այն  
մեծ առաւելութեանդ համար, որով  
Աստուծոյ Մօրը փեսայ ընտրուեցար եւ  
անոր Որդւոյն ու մեր Փրկչին վրայ իշ-  
խանութիւն, պատիւ ու հօր հոգաբար-  
ձութիւն ունեցար, կ'աղաչենք՝ բարե-  
խօս եղիր մեզի, որպէս զի աշխարհիս  
մէջ միայն Աստուծոյ շնորհն ու Ա. Աս-  
տուածածնի պաշտպանութիւնը մեծ  
բանի տեղ գնելով՝ երկինքն ալ քու եւ  
անոնց ընկերութեան արժանի ըլլանք:

Փառք Հօր:

Բ. Ով ամենասիրելի Կահապետ, այն  
գեղեցիկ ու սքանչելի առաւելութեանդ  
համար, որով ի Հոգւոյն սրբոյ Արդար  
կոչուեցար, ինդրէ մեզի համար որ իբ-  
րեւ արդար ապրինք, միայն Աստուծոյ  
փառքը փնտոենք, ընկերնիս իբրեւ

Եղբայր սիրենք, եւ սրբութեան ու  
կատարելութեան ետեւէ ըլլանք:

Փառք Հօր:

Գ. Ով երջանիկ Նահապետ, այն ան-  
պատում հաճութեան համար՝ որ կե-  
նացդ վերջն ունեցար, սուրբ հոգիդ  
Յիսուսի ու Մարիամու սուրբ բազուկ-  
ներուն մէջն աւանդելու ատենդ, ըն-  
դունէ մէզի ալ նոյն շնորհքն, որով մա-  
հուան ատեն սուրբ խորհուրդներով  
զօրանանք եւ վերջին խօսքերնիս ըլլայ՝  
Յիսուս, Մարիամ ու Յովուէլի, հոգիս  
ձեզի կը յանձնեմ:

Փառք Հօր:



Է. ՓՈՔՐԻԿ ՓԱՄԵՐԴՈՒԹԻՒՆ  
Ի ՊԱՏԻՒ ԱՆԱՌԱՑ ՑՂՈՒԹԵԱՆ  
Ս. ԿՈՒՄԱԳ \*

ԳԻշերային:

ԱՆՁՈՅՆ ՔԵՂ Մարիամ, (որ ամէն  
արարածներէն վեր եւ, ) լի շնորհօք Տէր  
ընդ քեղ. եւ այլն:

Պաղատանքս իմ, սուրբ Կոյս,  
Երկինք ելեն բարձրանան,  
Որ երգեմ մեծ քու փառքդ,  
Գեղեցկութիւնդ աննըման:  
Ինձ պաշտպան լեր հըզօր,  
Ով գեղեցիկ իմ դու յոյս,  
Երբ բանակը դէմ ելեն  
Ինձ՝ մոլեգին թըլնամոյս:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
սրբոյ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից. ամէն:

\* Պիոս Ե. Քահանայապետը (1571: Ապր. 5.) 50 օ-  
րուան ներողութիւն շնորհած է Ա. Կուսին ժամերգու-  
թիւնն ըսողներուն:

Ե Ր Գ

Ողջոյն ընդ քեզ, ովք Թագուհի,  
Մայր եւ միշտ կոյս,  
Լուրջ արշալոյս արեգական,  
կեանք մեր եւ յոյս:  
Առ ընդունէ, հզօր բարեխօս  
հեք աշխարհի,  
Խեղճի մաղօթքն, որ քու առջեւդ  
աստ խոնարհի:  
Բայց այս նոր չէ. այլ եւ արդեն  
ի սկզբանէ  
Հեք մարդկութիւնն ըգքեզ յաւեժ  
գովաբանէ.  
Ըզքեզ նախ Հայրն ամենակալ  
ըստուդիւ մեծ  
Եւ անեսպառ իւր լոնորհօք  
յիւր դուստր ընտրեց:  
Հոգին՝ յիւր հարսն զանրիծ խոնարհ  
զիւր սիրելին,  
Խոկ երկրորդ անձն Երրորդութեան,  
Հօր միածին,  
Զոր սահմանած էր իւր առնուլ  
մայր հարազատ,  
Ըսկզբանական մեղքէն կացոյց  
սուրբ եւ ազատ:

Կցորդ. Եկայք եւ տեսէք զգործս Աս-  
տուծոյ, որ արար զնշանս եւ զարուեստս  
ի վերայ երկրի:

Փոխ. Զիարդ գեղեցիկ ես բարեկամ  
իմ, մերձաւոր իմ:

Կցորդ. Եւ արատ ինչ ոչ կոյ ի քեզ:

Աղօթք:

Ով ամենօր հնեալ կոյս Մարիամ, զիս՝  
զքեզ գովելու արժանի ըրէ: Ինծի  
շնորհք տուր, որ խօնարհ սրտով միշտ  
քեզի դիմեմ, զքեզ գովեմ եւ ամեն  
բանի մէջ քու մեծագոյն փառքդ ու  
պատիւդ աւելցընելու ջանամ: Աս բանս  
կը խնդրեմ քեզմէ սուրբ ու անարատ  
յղութեանդ արգեանցը համար, որ բու-  
լոր քրիստոնէութեան ուրախութիւն  
պատճառեց: Ով օր հնութիւնաբեր ար-  
մատ, որուն պտուղն ի յաւիտենից օրհ-  
նեալ է: Ով թագուհի երկնից, օգնէ  
ինծի, որ ամենօր հնեալ յղութիւնդ մե-  
ղացս թողութեան պատճառ ըլլայ: Ով  
անարատ մայր Աստուծոյ, գու մաքրու-  
թեան գեղեցիկ շուշան, Որդւոյդ առջին  
զիս մի մոռնար, ամէն:

Ով դերահրաշ ծաղիկ բուրեալ յե-  
ղեմայ. Հոտ անմահութեան ծննդոցս Եւ-  
այի, յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս,  
օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

## Առաւտեան:

**Ողջյն քեզ Մարիամ,** (որ կուսում  
թեամբ գամեն հրեշտակներն ու մարդիկ  
կը գերազանցես,) լի շնորհօք. եւ այլն:

Պաղատանքուն: — Փառք Հօր. էջ 310:

## Ե Բ Գ

**Ողջյն լնդ քեզ,** ովք Բարձրելոյն պատրաստ  
սեղան:

**Ով նըս իրեալ տուն զարդարուած եօթնասիւ-**  
**նեան:**

Կոյս գեղեցիկ, կոյս խընամուտ եւ խմաստուն,  
Երրորդութեան ըընակարան, տաճար եւ տուն:

Բարձրնչելիդ գու Մարիամ, գեռ չըծընած՝  
Սուրբ քու ոսքերդ աշխարհ չըդրած՝ արդեն մեղաց  
Վընասակար ու թիւնալից բողբոջներէ  
Աստուած ըզքեզ բոլորովին ազատեր է:

Գեղեցիկ աստղ եւ արշալոյս արեգական,  
Որ Յակոբայ ելար ցեղէն մեզ երեւան,  
Էստոյգ Եւա, կենդանեաց մայր, սըրբութեան  
դուռ,  
Հեզ եւ գըթած, քու աշուըներդ մեզի դարձուր:

Կցորդ. Ով է սա, որ երեւեալս է  
իրեւ զառաւօտ, գեղեցիկ իրեւ զլու-  
սին. ընտիր իրեւ զարեգակն, զարմա-  
նալի յօրինեալ:

Փոխ . գեղեցիկ ես բարեկամ իմ,  
մերձաւոր իմ :

Կյուրդ . Եւ արատ ինչ ոչ գո ի քեզ :

Աղօթք :

Աղջ լեռ, ով ծնողդ Աստուծոյ, գանձ  
անդին բոլոր տիեզերաց, փառաւոր  
պսակ կուսութեան, արքունական գաւ-  
ազան ողջամիտ վարդապետութեան եւ  
անքակ տաճար ամենասուրբ Երրորդու-  
թեան : Բնակարան անհասանելոյն, մայր  
եւ կօյս : Քեզի համար ըսուած է այն  
խօսքը, թէ Ո՞վ է սա որ երեւեալս է  
իբրեւ զառաւօտ, գեղեցիկ իբրեւ զլու-  
սին, ընտիր իբրեւ զարեգակն, զարմա-  
նալի յօրինեալ : Քեզմով, ով օրհ-  
նեալ թագուհի, քեզմով ամենասուրբ  
Երրորդութիւնը բոլոր աշխարհիս վրայ  
երկրագութիւնի կ'ընդունի ու կը փա-  
ռաւորուի : Քեզմով կ'ուրախանան եր-  
կինք . քեզմով կը ցնծան հրեշտակք,  
հրեշտակապետք եւ ամեն երանեալք :

Քեղմով հաւատացեալք սուրբ խոր-  
հուրդները միսիթարութեամբ կ'ընդու-  
նին եւ ուրախութեան իւղովը կ'օծուին։  
Քեղմով բովանդակ տիեզերաց եկեղե-  
ցիները կ'ուրախանան։ Գովեստ եւ փա-  
ռաբանութիւն կ'ընծայենք քեղի, փա-  
ռաւորեալ եւ միշտ յաղթող, մայր Ճըշ-  
մարտին Աստուծոյ՝ այժմ եւ յաւի-  
տեանս. ամէն։

Զքեղ ունիմք բարեխօս կօյս ամեն-  
օրհնեալ, մայր անարատ Էմմանուէլի,  
տաճար բանին Հօրն երկնաւորի. օրհ-  
նութեամբ զքեղ մեծացուցանեմք,



### Արեւագալի։

Ողջյն քեղ Մարիամ, (որ քու նշու-  
լովդ արեգական պէս զերկինս եւ զեր-  
կիր կը լուսաւորես,) լի շնորհօք. եւայլն։

### Ե Բ Գ

Քորեբ լերան ո՛ բորբոքած սուրբ մորենի,  
Որ վառեցար, բայց մընալով միշտ կենդանի,  
Կենդանարար տարապան ուխտի, դու պաշտպան մեր  
Եւ ճըշմարտին Սողոմոնի գահոյք, ողջ լեր:

Խորիսի մեղու, անըիծ գրզամժ գեղէոնի,  
Եւ գաւազան ծաղկեալ փթթեալ Ահարոնի,  
Ով ծիածան, աղբիւր կընքեալ, փակեալ պար-  
տէղ,

Ողորմութեանեւ գըթութեան զաղբիւր բաց մեզ:

Արժանի էր որ ըստուգիւ Որդիդ րընաւ,  
Որ քո ըստեանց սուրբ եւ անմեղ կամով սընաւ,  
Ըզքեղ պահէ ոչ թէ միայն մեղքէ ամէն,  
Հապա նաեւ սկզբնական ալ արատէն:

### Աղօթք:

**Մ**արիամ, աստղ պայծառ, որ սուրբ  
վարուցդ սքանչելի օրինակովը մեր առ-  
ջեւ գեղեցիկ կը փայլիս եւ մեր հոգի-  
ները կը ջերմացընես. ահա կ'օրհնեմ  
կը փառաւորեմ զքեղ եւ երանի կու-  
տամ քեզի, ինչպէս որ ինքնին գուշա-  
կեցիր՝ թէ “Երանիցեն ինձ ամենայն  
ազգք” : — Ով ամենօրհնեալ կօյս,  
Մայր Աստուծոյ եւ թագուհի երկնից,  
յիշէ քու անձառելի փառացդ մէջէն,  
թէ դուն մեր մայրն ալ եղար, ծնանե-

լով զանիկայ՝ որ մեր եղբայրն եղաւ։  
Նայէ ուրեմն գթած աչուըներովդ ա-  
մենուս վրայ, որ քու սուրբ անունդ  
ջերմեռանդութեամբ կը յիշենք։ Միտքդ  
բեր, որ ամենքնիս մեղաւոր ենք, իսկ  
դուն մեղաւորաց Փրկչին մայրն ես։  
Ուստի ողօրմէ մեղի, եւ մանաւանդ մեր  
մահուան ժամանակը զմեղ մայրենի այց-  
ելութեամբդ միսիթարէ. ամէն։

Զքեզ երկնային դուռն զոր ետես  
Եղեկիէլ, եւ ասրն զոր ծանեաւ գե-  
դէսն. սերովքէ Հողեղէն, վեհագոյն  
քերովքէից, օրհնութեամբ զքեզ մե-  
ծացուցանեմք։



### Աշու:

Աղջոյն քեզ Մարիամ, (որ ամենէն  
իրեւ Մայր Աստուծոյ եւ թագուհի  
երկնից ու երկրի կը պատուըիս,) լի  
շնորհօք. եւ այլն։

## Ե Պ Գ

Ողջոյնընդքեզ դիւցազնութեանցնիստ ու տեղի,  
Ուրախութիւն մարդկան, զուարթնոց եւ Անեղի.  
Մարդադետին, ծառ գեղեցիկ քաղցր Ադենի.  
Համբերութեան, խաղաղութեան արմաւենի:

Դու Աըրբութեան բարձրաբերձ մայր՝ ի Կիրա-  
նան,  
Դու մաքրութեան վարդանարատ, անմեղ շուշան.  
Արդարեւ դու ես այն օրհնեալն եւ սուրբ երկիր,  
Որ մեղ զԱստուած յայս մեր աշխարհ պըտուղ  
բերիր:

Ո՛վ Բարձրելոյն պայծառագեղ բընակարան,  
Փառք եւ պատիւ քեզը լնթանան մեծին մանկան:  
Անձն եղկելի, մի վրհատիր եթէ ընկար,  
Ի՞քն է յերկինք ըզքեզ տանօղ ստոյդ ճանապարհ:

Կցորդ. Հիմունք նորա ի լեառն սուրբ  
նորա: Սիրէ Տէր զդրունս Սիովեի առաւ-  
ել զամենայն յարկսն Յակոբայ:

Փոխ. Ամալ եւ մէգ շուրջ է զնովաւ:

Կցորդ. Յիրաւունս եւ յարդարու-  
թիւն ուղղեալ է աթոռ նորա:

Աղօթք:

Ամեներջանիկ եւ բոլորովին անբիծ  
կոյս, մայր Աստուծոյ եւ թագուհի լու-  
սոյ. դու հրեշտակային ու մարդկային  
հոգիներէն գերագոյն ես, պայծառա-

գոյն արեգական ճառագայթներէն եւ  
վեհագոյն երկնից սերովը էներէն։ Դու  
ես ամենայն նահապետաց յոյսը, մար-  
դարէից ակնկալութիւնը, առաքելոց  
պարծանքը, մարտիրոսաց պատիւը, ար-  
դարոց ուրախութիւնն ու կուսանաց  
պսակը։ Քեզմով, փառաւորեալ տիրու-  
հի, քեզմով մեր Արարչին ահաւոր ու  
անաշառ արդարութեանը հետ հաշ-  
տուեցանք։ — Մայր Աստուծոյ, պաշտ-  
պանէ զմեղ հզօր բարեխօսութեամբդ։  
Ողորմէ մեղի, որ խեղճ ու ողորմելի մե-  
ղաւորներ ենք, եւ մեր մոլութեանցը  
գարշութեանը մէջ թաթիսուած։ Թող  
մի տար որ գժոխային ոգին՝ մեր եր-  
դուեալ թշնամին, մեղի յաղթէ ու  
զմեղ նուաձէ, ամէն։

Դու լուծիչ երկանց, բարձող անիւ-  
ծից, ծագումն արեւու՝ լուսոյն ճշմարտի,  
որով հերքեաւ խաւարն առաջին. օրհ-  
նութեամբ զքեղ մեծացուցանեմք։

## Երեկոյեան:

**Ողջոյն քեզ Սարիամ,** (որ հզօր բարեխօսութեամբդ ամէն բան ընդունելու կարող ես,) **լի շնորհօք.** եւայլն:

Պաղատանքս: — Փառք Հօր. Էջ 310:

### Ե Բ Գ

Ողջոյն ընդ քեզ, ապաստանի ամուր տեղիք, Ամրոց դաւթեան, աշտարակ հզօր եւ գեղեցիկ, Սպառազինուք որ զարդարեալ չորս կողմանէ, Ըզմեզ աչեղ թըշնամույն գէմ ամրացընէ:

Կցս անարատ, ամենեւին առանց մեղաց, Որ Աստուծոյ սիրոյն հըրով ես բորբոքած, Օձին հընոյ խորասիկեցիր ըզզօրութիւն, Որ կանգնելոյ ալ չունեցաւ կարողութիւն:

Քան ըզչըռութ, ըզդերովքա, զըսթեր հըզօր, Դու եւ դիւցազն ես քան զՅուդիթ շատ փառաւոր: Դու Սոմնացին այն գեղեցիկն ես եւ հըլու, Որ քաջ Դաւթի մ'եր դարմանիւ եւ ըստընտու:

Կշորդ. Դու բերկրութիւն Երուսաղեմի, դու ցնծութիւն ընտրելոց, դու պարծանք ազգիս մերոյ:

Փոխ. Իբրեւ շուշան ի մէջ փշոց:

Կշորդ. Այնպէս մերձաւորդ իմ ի մէջ դստերաց:

Աղօթք:

Ով սուրբ ու սիրելի դուստր Հօր  
Աստուծոյ, դուն որ ամենուն բարեխօսն  
ես, աղաչէ ինձի համար: Երանի ինձի  
եթէ կարող ըլլամ կենացս մնացած  
տարիները բոլորովին քու ծառայու-  
թեանդ ընծայել, ինչպէս որ դուն ինք  
զինքդ բոլորանուէր Աստուծոյ պատուցն  
ու ծառայութեան ընծայեցիր: Ով սուրբ  
ու քաղցր թագուհի, ընդունէ ինձի  
համար աս շնորհքը: Այսօրուընէ սկսած՝  
ամէն արարածներէն ետ կը կենամ, եւ  
ինք զինքս իմ Երարշիս կը նուիրեմ:  
Քեզի, ով ամենասուրբ Տիրուհի, քեզի  
կ'ընծայեմ միտքս, յօժարութիւններս  
եւ հոգւցս ամէն կարողութիւնները:  
Քեզի կ'ընծայեմ լեզուս՝ զքեզ գովե-  
լու, եւ սիրտս՝ զքեզ սիրելու համար:  
Զիս քու ծառայիցդ կարդն ընդունէ.  
բայց ընդունէ մանաւանդ ինձի շնորհք  
որ քեզի ու քու Որդւցդ հաւատարիմ

միամ։ Ով Մարիամ, Աստուծոյ սիրովը  
վառէ իմ սիրտս. Եւ իմ ամէն ընթաց-  
քիս մէջ զիս այնպէս քեզի ձգէ, որ  
Աստուծմէ զատ բան մը չսիրեմ, բան  
մը չուզեմ, ով սիրելի եւ լի սիրով՝  
արժանի մայր Աստուծոյ իմոյ. ամէն։

Ուրախ լեր աղբիւր կնքեալ ջրոյն  
կենդանութեան, զոր ծարաւելոյ բնու-  
թեանս ետուրի յարբումն. զքեզ օրհ-  
նութեամբ մէծացուցանեմք։

---

### Խաղաղական։

Ողջոյն քեզ Մարիամ, (որ ամէն զքեզ  
պատուողներուն եւ քեզի դիմողներուն  
բարեխօսն ու դիմած մայրն ես,) լի շնոր-  
հոք. եւայլն։

Պաղատանքս։ — Փառք Հօք. էջ 350։

### Ե Բ Գ

Ողջոյն ընդ քեզ, ով դու ցուցիչդ արեգական,  
Որ լըջանէն դարձաւ ի յետ տասն աստիճան.  
Երբ որ Աստուած թողուց իրեն երկնից կամար,  
Եւ հրեշտակաց եղաւ դասէն քիչ մաւ խոնարհ։

Խոր անդընդէն որպէսզի հէք մարդկան այսցեղ  
Աերացընէ, անմահութեան հանէ ի տեղ,  
Անմահ Բարձրեալն երկիր իջաւ, զգեցաւ մարմին,  
Քեւ, ու սուրբ Կոյս, փառք ու պարծանք կա-  
նանց զարմին:

Այս որդին է Հռաքելայ որ ազատեց  
Զհինն Եգիպտոս սովէն. բայց չէ քան զինքը մեծ  
Ի Սլքրուհի Կոյս Մարեմայ ծնեալ Յիսուսն,  
Որ տիեզերքն ունի յիւր ձեռքն, ու կըէ յիւր ուսն:

Աշուր. Եւ ասէ Տէր ցօձն. Եդից  
թշնամութիւն ի մէջ քո եւ ի մէջ  
կնոջդ. Նա սպասեսցէ քում գլխոյ:

Փռք. Օրհնեալ ես դու ի կանայս:

Աշուր. Եւ օրհնեալ է պտուղ որո-  
վայնի քո:

### Աղօթք:

Արբուհի Մարիամ, կ'ողջունեմ ու  
կը մեծարեմ զքեզ իրեւ Աստուծոյ  
ամենակարող ձեռաց անդին ու սքան-  
չելի գործքը եւ իրեւ առաքինու-  
թեանց աղբիւր: Դուն՝ սրբութեամբդ,  
Հաւատարմութեամբդ, խոնարհու-  
թեամբդ եւ սիրովդ՝ Յիսուսի ամենա-  
սուրբ սրտին հաճելի եղար: Ի քեզ,

ով երանուհի կըս, եւ քու կուսական  
որտիդ մէջ Աստուծոյ գերակատար  
սէրն ու ցանկութիւնը կը վառի՝ ամէն  
մարդիկ Աստուծոյ Ճշմարիտ ծանօթու-  
թեան եւ յաւիտենական երանութեան  
հասցընելու: Ուրեմն մայրական ու գորո-  
վագութ սրտիդ համար ըլլայ, կ'աղա-  
չեմ՝ տուր ինծի ալ ոյժ ու զօրութիւն,  
որ սրտիս մէջէն ամէն մեղանչական,  
բաները արմատաքի հանելով՝ սուրբ ու  
մաքուր սրտիդ նմանելու ջանամ. ամէն:  
Անթառամ՝ ծաղիկ, անդատապարտ  
շառաւիդ վերաբուսեալ յարմատոյն  
Յեսսեայ, զքեղ Եսայիաս կանխաւ վե-  
րագոչեաց՝ եօթնարիթեան շնորհաց հո-  
գւոյն ընդունարան գոլ, Աստուածածին  
կըս զքեղ մեծացուցանեմք:

---

### Հանգստեան:

Ողջն քեզ Մարիամ, (որուն փառքն  
ու պարծանքը աս աշխարհիս վրայ

օր քան զօր կ'առաւելու,) լի շնորհօք,  
Տէր ընդ քեզ. եւայլն:

Պաղատանքս: — Փառք Հօր. էջ 305:

### Ե Բ Գ

Մարիամ Կոյս, գեղեցիացեալ լուսով շնորհաց,  
Անհամեմատ Արեգակամբըն լիացած,  
Իրր արշալոյս մը նորածին լրքեղ՝ ծագիս,  
Խաւար եւ մութ ձորոց, դաշտաց վերայ երկրիս:

Ինչպէս ի մեջ խայթող փըլոց վարդ գեղեցիկ,  
Ինչպէս շուշան ի մեջ հովտաց կենայ հեղիկ՝  
Ինչպէս լուսին յանթիւ աստեղս է փառաւոր,  
Այսպէս ես, Կոյս, ի մարդկութեանս նըշանաւոր:

Ով մայր շնորհաց, որ ամենուն ես ապաւեն,  
Որ ալելոծ ընդ ծով աստեացս ճամբայ հորդեն,  
Պահէ ամեն այս աշխարհիս ըզմեզ չարէն,  
Որ բիւրակերպ զհոգի, զմարմին միշտ չարչարեն:  
Վախճան բարի, դարձեալ խընդրեմք, շնորհէ  
մեզի,

Ընկերութեամբ ազնիւ Որդւոյդ քաղցր Յիսուսի,  
Որ զհայր, զհոգի եւ զինք՝ Քեզի հետ յանտի  
կեանս

Օրհնենք, գովենք յաւիտենից եւ յաւիտեանս:

Կշորդ. Առ իս են ճանապարհք շնորհաց եւ ճշմարտութեան. յինէն է յոյս  
ամենայն առաքինութեանց եւ կենաց:

Փռի. Մատիք առ իս որ ցանկալք ինեւ:

Կշորդ. Եւ ի պտղոց արմտեաց իմոց  
լցջիք:

Աղօթք :

Ավ սուրբ Կոյս Մարիամ, Մայր Աստուծոյ, քու պատուցդ նուիրուած օրւան մէջ կը մերձենամ քեզի սրտով. Եւ կը խնդրեմ հզօր բարեխօսութիւնդ Աստուծոյ առջեւ։ Խնդրէ եւ ընդունէ ինձի համար, քեզի նկատմամբ առանձինն եւ երկիւղած սէր եւ անշիջանելի ջերմեռանդութիւն, որպէս զի զքեզիբրեւ իմ ճշմարիտ, գթած, ու խնամակալ մայրս սիրեմ ու յարգեմ։ Դարձեալ խնդրէ թողութիւն իմ ամէն մեղացս, եւ հաստատուն առաջադրութիւն՝ ասկից ետքը մեղքէն հեռանալու։ Այնպէս որ չէ թէ միայն ներելի մեղքով մը սիրելի Որդիիդ չվշտացընեմ, այլ նաեւ անցած կենացս յանցանքներուն վրայ ալ միշտ ճշմարիտ զղջմամբ ապաշխարեմ։

Առանձինն կը խնդրեմ քեզմէ, կոյս Մարիամ, ընդունէ ինձի համար քու

բարեխօսութեամբ, բարւոյն մէջ յա-  
րատեւութիւն, որպէս զի Աստուծոյ եւ  
քու ծառայութեանդ մէջ հաւատար-  
մութեամբ ապրելով, եւ մահուանս ա-  
տենը սուրբ խորհուրդներին ընդունելու  
արժանի ըլլալով, մաքուր սրտիւ, հո-  
գիս Յիսուսի ու քու մայրական ձեռքդ  
աւանդեմ. ամէն:

Անկանիմք առաջի քո Աստուածածին  
եւ աղաչեմք զանարատ զկոյսդ, բարե-  
խօսեա վասն անձանց մերոց, եւ աղա-  
չեա զմիածին Արդիդ՝ փրկել զմեզ ի  
փորձութենէ եւ յամենայն վտանգից  
մերոց:



ԵՒ Ս. ԱՍՏՈՒՐՅԱՆԻՆ  
ԶԱՆԱԶԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ  
ԱՎՈՔ

ինք զինքը Ս. Աստուածածնի յանձնելու\*:

Ավ. Մայր Աստուծոյ, ես թշուառական ու ողորմելի մեղաւորս, քեզի մատուցանելու բան մը չունիմ, վասն զի լի եմ ամէն տեսակ աղտեղութիւններով: Բայց ինք զինքս բոլորովին քեզի կը նուիրեմ, որ թագուհի ես երկնի եւ երկրի: Ճնորհաց աթոռեգ՝ որուն վրայ կը հանգչիս, մի անարդեր ու մի մերժեր զիս: Աստուած զքեզ անոր համար այնպէս բարձրացուց, որ մեզի՝ կարօտելոց կարեկից ըլլաս ու ողորմիս: Օգնութեան հասիր ուրեմն, եւ մի թողուր զիս՝ մինչեւ որ ամէն մեղքերէն աղատած ու արդարութեան մէջ հաստատուած

\* Աս աղօթքին 200 օրուան ներազութիւն չնորհած է: Լեռն Ժ.Բ.:

չտեսնես։ Ար խոստովանիմ որ ողորմութեան արժանի եմ ամէն շնորհքներէն զրկուելու իմ մեծ ապերախտութեանցս համար։ Բայց դուն, հզօր թագուհի, անարժանութեանս մի նայիր, հապա խեղձութեանս՝ որ ամենէն աղքատն եմ, ուստի եւ օգնութեան ամենէն աւելի կարօտ։

Ով սիրելի Այս, առաջնորդէ ինծի եւ կարգադրէ զիս ինչպէս որ կը հաճիս. պատժէ զիս՝ երբ որ քեզի չհազանդիմ. վասն զի քու դժած ձեռքէդ եկած պատիժներն ինծի փրկութեան ճամբայ կը բանան։ Եւելի կ'ուզեմ քու ծառայդ՝ քան թէ բոլոր աշխարհքի տէրն ըլլալ։ Քուկդ եմ, փրկէ զիս։ Ընդունէ զիս եւ հոգւոյս փրկութեանը ինամ տար։ Քեզի կը նուիրեմ ամէն բանս, եւ եթէ ատեն մը ամենէն յարմար առիթները չարաշար գործածելով քեզի հաւատարմութեամբ չծառայեցի, աս-

կից ետքը ինք զինքս ուղղել կ'ուզեմ։  
Զեմ ուզեր որ ասկից ետքը մէկը զիս  
անցնի քեզի հաւատարմութեամբ ծա-  
ռայելու մէջ։ Կը յուսամ որ խոստմաւնքս  
քու հզօր օգնութեամբդ եւ Արդւցդ  
շնորհքովը կը կատարեմ. ամէն։

## Ա Վ Օ Բ Ք

Ա. Աստուածածնի առաքինութեանց  
նմանելու։

Ավ բարեգութ Կոյս Մարիամ, գի-  
տեմ որ սաստիկ կը փափաքիս թշուա-  
ռական եւ ողորմելի մեղաւորացս բա-  
րիք ընելու եւ մեր ամէն խնդրուածք-  
ները կատարելու։ Ընոր համար ես ալ  
աշխարհքիս մէջ գտնուած մեղաւոր-  
ներուն յետինը, գթութեանդ կը գի-  
մէմ, քեզի աղաչելով որ խնդրածս  
ինձի շնորհես։ Թող խնդրեն ուրիշներն  
ինչ որ կ'ուզեն, մարմնոյ առողջութիւն,  
ընչից շատութիւն, ամէն տեսակ երկ-

բաւոր բարիք. Ես ան միայն կը խնդրեմ, Տիրուհի իմ, զոր դուն ալ շատ կը բաղձաս որ քեզմէ խնդրեմ եւ որն որ աւելի եւս քեզի նմանելու կրնայ օգնել ինծի եւ քու ամեն սսուրբ սրտիդ ալ սաստիկ հաճոյ է:

Դուն ամէն մարդիկներէն աւելի խռնարհ էիր. ուրեմն խնդրէ՝ կ'աղաչեմ՝ ինծի համար խռնարհութիւն եւ ամէն մարդիկներէն անարդուելու սէր։ Դու ամէն բանի մէջ համբերող էիր. խնդրէ ուրեմն ինծի համար համբերութիւն, որպէս զի կարող ըլլամ աս աշխարհքիս նեղութեանցը սիրով ու համբերութեամբ տանիլ։ Աստուծոյ սիրովը բոլորովին լի էիր. խնդրէ ինծի համար եռանդուն աստուածսիրութեան պարգեւը։ Դուն սէր ես. խնդրէ ուրեմն ինծի համար ընկերսիրութիւն՝ մանաւանդ թշնամեացս։ Ա երջապէս դուն ամէն արարածներէն աւելի սուրբ ես. զիս ալ ամէն մեղաց արատէն սուրբ ըրէ։

Քեզի բան մը չի պակսիր. ամէն  
բանի կարող եւ եւ ամէն ուզածդ  
կրնաս ընդունիլ: Բայց աս ամէն շնորհք-  
ները քեզմէ ընդունելու խափան կրնան  
ըլլալ՝ կամ քեզի գիմելու հեղդու-  
թիւնս եւ կամ քու շնորհացդ եւ միջ-  
նորդութեանդ վրայ բաւական վստա-  
հութիւն չունենալս: Անոր համար կը  
ինդրեմ որ ինձի ընդունիս մեծ վստա-  
հութիւն առ քեզ եւ ամէն առթի մէջ  
քեզի գիմելու շնորհք. եւ անշուշտ ըն-  
դունելու յոյսն ալ կրնամ ունենալ,  
ով Մարիամ իմ Մայրս, յոյսս ու ա-  
պաւէնս, կեանքս եւ մսիթարութիւնս.  
ամէն:

### Ա Գ Օ Բ Ք

ողջախոհութեան շնորհք խնդրելու համար:

**ՈՎ** անարատ Կոյս Մարիամ, ընդունէ  
ինձի համար մաքրութեան եւ սրբու-  
թեան շնորհքը. որպէս զի չըլլայ իմէ

այնպիսի բան մը գտնուի սրտիս մէջ,  
որուն համար դուն ամենասուրբ աչուր-  
ներդ իղմէ դարձընես։ Ընդունէ ինձի  
աս սրբութիւնը, որպէս զի սկսիմ եր-  
կնաւոր բարութեանց ճաշակը հիմա-  
կուընէ առնուլ եւ երկրաւոր բաներէն  
խորշիլ ու դարշիլ։ Ընդունէ՝ կ'աղաքեմ՝  
ինձի համար ողջախոհութեան առաքի-  
նութիւնը. որպէս զի կարենամ երկինք  
դալ, եւ քու անչափ ողորմութիւնդ  
օրհնել արքայութեան մէջ, որուն մուտ-  
քը փակուած է անոնց՝ որոնք մեղաց  
տղմին մէջ շաղախած կը գտնուին։ —  
Միտքդ բեր, ով ամենասուրբ Կոյս, որ  
եթէ քու միջնորդութեամբդ աս շնորհքն  
ինձի համար չընդունիս, ասիկայ քեզի  
յաւիտենական ատելութեան առիթ  
պիտի ըլլայ՝ որով դուն քու որդիներէդ  
մէկը յաւիտեանս պիտի ատես՝ յաւ-  
իտենական հրօյն մէջ դիւաց հետ ա-  
նոր այրիլը տեսնելով։ Անոր համար, ով  
սիրելի Մայր, կ'աղաքեմ քեզի, դուն որ

այնչափ գթած եւ եւ այնպէս հզօր,  
ընդունէ Աստուծմէ ինձի համար առ  
գեղեցիկ առաքինութիւնը. ամէն:

### Ա Պ Օ Բ Ք

բարի մահ խնդրելու համար:

**ՈՎ** գուստը բարձրելցն եւ Մայր  
Յիսուսի Մարիամ, օգնական եւ պաշտ-  
պան մեղաւորաց, լի գթութեամբ եւ  
ողորմութեամբ, քաղցր աչօքդ եղիելի  
մեղաւորիս Նայէ, եւ մահուան վայր-  
կեանը Հասած՝ օգնութեան հասիր,  
որպէս զի չըլլայ թէ յանկարծական  
մահուամբ եւ կամ առանց պատրաս-  
տութեան այս աշխարհքէս ելլեմ: Կ'ա-  
ղաչեմ, Մայր ողորմութեան, սիրելի  
Որդւոյդ չարչարանաց արդեանցը համար  
ինձի միջնորդ եղիր եւ պահէ զիս, որ  
այսուհետեւ մեղքերէ հեռու ըլլամ.  
սատանայէն եւ իր ամէն չար հրապու-  
րանքներէն փախչիմ. Ճշմարիտ զղջմամբ

ու կատարեալ ապաշխարութեամբ Յիսուսի հետ հաշտուիմ։ զ.թա վրասերանելի Մայր Աստուծոյ, ան ահագին օրը, ան սաստիկ ճգնաժամը՝ երբ շունչս սպառի, լեզուս կապուի, աչուըներս մթըննան, ականջներս չլսեն, ան ժամանակ դուն, ով անարատ Մայր, զիս մի մոռնար։ Յիշէ աղաչանքս՝ որ հիմայքեղի կը մատուցանեմ, եւ աղատէ զիս դիւին փորձութիւններէն։ որպէս զիսուրբ սրտիւ՝ հոգիս անարատ ձեռքդյանձնելով, արժանի ըլլամ զԱստուածեւ զքեզ յաւիտեան սիրել։ ամէն։

---

## Ա Պ Օ Թ Ք

սատանային փորձութիւններէն աղատելու համար։

Աւասիկ ես թշուառական մեղաւորս ոտուըներուդ առջին խօնարհած՝ ներումն կը խնդրեմ յանցանացս՝ որոնց համար շատ անգամ դժոխոց գերի եւ

լայ: Գիտեմ որ շատ հեղ անոր համար  
 յաղթուեցայ փորձութիւններէն, վասն  
 զի անփոյթ եղայ քեզի դիմելու: Գիտեմ,  
 գիտեմ որ եթէ միշտ քեզի ապաւինելու  
 եւ զքեզ օգնութեան կանչելու ըլլայի,  
 չէի իյնար: Ով սիրելի Մայր. թշնա-  
 միներս վրաս յարձակելէն երբեք չեն  
 դադրիր. եւ միշտ նորանոր որոդայթներ  
 ու փորձութիւններ լարելու պատրաստ  
 են: Ուրեմն ով Տիրուհի իմ, ով յսս  
 իմ, ինծի օգնութեան հասիր. զիս հզօր  
 պաշտպանութեանդ տակն առ. եւ մի  
 թողուր որ դարձեալ իրենց ձեռքն իյ-  
 նամ: Գիտեմ որ միշտ պատրաստ ես  
 զանոնք նուաճելու համար ինծի օգնե-  
 լու. միայն թէ ես զքեզ օգնութեան  
 կանչելու չեղդամ: Անկէ միայն կը  
 վախնամ, որ չըլլայ թէ փորձութիւն մը  
 վրաս հասած ժամանակ՝ քեզի դիմելու  
 անփոյթ ըլլամ: Անոր համար կը խնդրեմ  
 որ ինծի շնորհք ընդունիս փորձութեան  
 ատեն քեզի դիմելու: Իսկ երբ կենացս

վերջին պատերազմին հասնելու ըլլամ, ով թագուհի իմ, քովս կեցիր եւ ինձի, շատ անգամ յիշեցուր որ քեզի զիմեմ. որպէս զի քաղցր ու անուշակ անունգ բերանս ունենալով՝ մեռնիմ, եւ կարող ըլլամ արքայութեան մէջ միշտ զքեզ օրհնել. ամեն:

## ԱՎ ՕԹ Ք

առ սիրտն Մարիամնու\*:

Ով անարատ սիրտ Մօր Ըստուծոյ, սիրտ ամէն բանէ վեր սիրուելու արժանի: Գուն, հաճութիւն Ա. Երրորդութեան, որուն ամէն երկրագութիւն ու ամէն տեսակ մեծարանք կը վայելէ: Սիրտ՝ բոլորովին նման Յիսուսի սրտին: Սիրտ՝ մարդասիրութեամբ լի, եւ անչափ գթած մեր խեղճութեանց ու տառապանացը վրայ: Մեր քարացեալ

\* Ով որ առ աղօթքը կ'ընէ, 60 օրուն ներողութիւն կը վաստեկի. զիսս Ե:

սրտերը կակղեցուր, եւ անանկ ըրէ որ  
 աստուածային Փրկչին սրտին նմանի:  
 Հեղ սրտիս վրայ առաքինութեանցդ  
 ոէրը. վառէ այն սուրբ սիրոյն հրովին՝  
 որով գուն միշտ կը վառիս: Պահէ զե-  
 կեղեցին. Եղիր անոր քաղցր ապաւէնն  
 ու իր թշնամեաց ամէն յարձակմանցը  
 դէմ հզօր աշտարակ: Եղիր մեր ճանա-  
 պարհը, որով կարող ըլլանք Յիսուսին  
 մերձենալ: Եղիր մեր միջնորդը, որով մեր  
 փրկութեան ամէն հարկաւոր շնորհք-  
 ներն ընդունինք: Եղիր կարօտութեան  
 ժամանակ՝ մեր օգնականը, նեղութեան  
 մէջ՝ սիրուիութիւն, փորձութեան ժա-  
 մանակ՝ խրախոյս, հալածանաց մէջ՝ ա-  
 պաւէն, վշտաց մէջ՝ օգնութիւն: Բայց  
 մանաւանդ մեր կենացը յետին վայր-  
 կեանը, մեր մահուան ժամանակը, երբ  
 բոլոր գժոխք իր շղթաները խզած՝ մեր  
 վրայ յարձակելու ըլլայ, այն ահագին  
 վայրկենին, որմէ մեր մանջենաւորու-  
 թիւնը կախուած է, զմեղ մի մոռնար,

այլ պաշտպանէ Հզօր բարեխօսութեամբդ: Այս այս, գթած Կոյս, ցուցուր այն վայրկենին մայրենի սրտիդ մեծութիւնը եւ միանդամայն զօրութիւնդու կարողութիւնդ, զոր ունիս Յիսուսի սրտին վրայ, այն ողորմութեան աղբիւրին մէջ մեզի ասլահով ճամբայ մը բանալով, ուսկից կարենանք Համնիլ Հռն, ուր բովանդակ յաւիտենականութեան մէջ զքեղ գովենք ու օրհնենք. ամէն. եղիցի, եղիցի:



## Ա Գ Օ Բ Ա Ք

Ս. Աստուածածնի սէրն ընդունելու  
համար:

ՈՎ սիրելի Դշխայ, դուն ամէն ջերմեռանդ ծառաներուդ սիրտն անթիւ շնորհքներովդ քեզի կը քաշես: Իմ տառապեալ սիրտս ալ յափշտակէ, որ սաստիկ եռանդեամբ կը ցանկայ քեզի հետ միանալ, զքեղ սիրել: Հանգիստ

չեմ գտներ՝ մինչեւ որ սէրդ չընդունիմ։ Այո՛, չեմ ուզեր հանգչիլ՝ մինչեւ որ աներկրայ չըլլամ թէ ճշմարտապէս զքեղ կը սիրեմ, որ զիս ապերախտս այնպէս սաստիկ սիրեցիր։ Ի՞նչ կըլլայի արդեօք, եթէ դռւն զիս սիրածեւ ինծի համար Աստուծմէ ողորմութիւն ընդունած չըլլայիր։ Զքեղ սիրել կը բաղձամ, եւ կ'ուզեմ այնպիսի սիրտմ'ունենալ, որ ան տառապեալերուն տեղն ալ լեցընեմ, որ զքեղ ամենեւին չեն սիրեր։ Կը բաղձամ այնպիսի լեզում'ունենալ, որով բիւրաւոր լեզուաց տեղ զքեղ գովեմ եւ բոլոր աշխարհքիս քու մեծութիւնդ ու ողորմութիւնդ յայտնեմ։ Եթէ անթիւ դանձեր ունենայի, զամենն ալ քու պատուցդ համար կ'ուզէի սպառել։ Եթէ անհամար ծառաներ ունենայի, կը ջանայի որ ամենն ալ քու սիրովդ բորբոքին։ Մէկ խօսքով՝ քու փառացդ համար նաեւ մահյանձն կ'առնուի՛ եթէ հարկ ըլլար։

Այսու ամենայնիւ կը վախնամ որ աս  
սէրս կեղծիք չըլսոյ: Վասն զի կը լսեմ  
թէ սէրը՝ սիրողը նման կ'ընէ սիրելոյն:  
Արդ կը տեսնեմ որ քեզի նմանու-  
թիւն չունիմ. ինչու որ դուն բոլորովին  
սուրբ ես, իսկ ես ամենեւին աղտեղի:  
Դուն բոլորովին խոնարհ, իսկ ես՝ ան-  
շափս հպարտ: Դուն ամենեւին անա-  
րատ, իսկ ես՝ անմաքուր: Ուրեմն յայ-  
տնի է թէ զքեզ չեմ սիրեր: Բայց ա-  
սիկայ գլուխ հանելը քու գործդ պիտի  
ըլլայ, ով հզօր թագուհի. վասն զի  
եթէ զիս կը սիրես, քեզի նմանելու  
շնորհք ալ կ'ընդունիս ինձի: Ցուցուր  
բովանդակ տիեզերաց թէ որչափ կա-  
րողութիւն ու բաղձանք ունիս անոնց  
ամենուն օգնելու, որ զքեզ սիրելու կը  
փափաքին. ամէն:

## Ա Զ Ո Բ Ք

զղջացիալ անձի մը առ Մարիամ:

Ավ հզօր թագուհի տիեզերաց եւ  
իմ Մայրս Մարիամ, ստուգիւ իմ այն-  
չափ գարշութեանցս ու աղտեղի վա-  
րուցս համար անարժան եմ քեզի մեր-  
ձենալու եւ զքեղ Մայր անուանելու:  
Բայց ինչ ընեմ. չեմ ուզեր որ չարու-  
թիւններս ան մխիթարութենէն զիս  
զրկեն՝ զոր կը զգամ զքեղ Մայր կո-  
չելու ժամանակս: Արժանի եմ որ զիս  
մայրութեանդ խնամքէն մերժես. բայց  
կ'աղաչեմ՝ սիրելի Արդւոյդ չարչարա-  
նաց արդեանցը նայէ, եւ եթէ մայրենի  
սիրտդ դիմանայ, այն ատեն մերժէ զիս:  
Կը խօստովանիմ որ թշուառական յան-  
ցաւոր մըն եմ. վասն զի Աստուծոյ մեծ-  
վայելութիւնն անարդեցի, զքեղ վշտա-  
ցուցի: Բայց հիմայ զղջացեալ սրտիւ քեզի  
կ'ապաւինիմ: Դուն ինձի կրնաս օգնել.  
ուրեմն օգնէ, սիրելի Մայր: Մի ըսեր

թէ օգնութեան հասնիլ չես կրնար.  
վասն զի գիտեմ որ ամենազօր ես եւ ու-  
ղածդ կ'ընդունիս Աստուծմէ: Իսկ եթէ  
ըսես որ չեմ ուզեր քեզի օգնել. ըսէ,  
որո՞ւն դիմեմ ու այսչափ խեղճութեանս  
մէջ ո՞ւր միսիթարութիւն գտնեմ:

Աղորմէ թշուառական մեղաւորիս.  
կամ ցուցուր թէ որմէ կրնամ ապա-  
հովութիւն գտնել: — Զկայ մէկը. ոչ  
երկրիս վրայ եւ ոչ ալ երկինքը, որ  
ինձի պէս խեղճ մեղաւորի մը վրայ այն-  
չափ գութ ու խնամք ունենայ՝ ինչպէս  
գուն: Իմ հաւատարիմ Մայրս Մարիամ,  
ցուցուր խեղճ մեղաւորիս վրայ քու-  
մայրենի գթութիւնդ եւ զիս փրկելու  
փութա: Բայց չեմ ուզեր որ գուն զիս  
փնտուեմ. ես զքեզ կը փնտուեմ, եւ կը  
յուսամ թէ չեմ ալ մերժուիր քեզմէ:  
Սիրելի Մայր, ոտքդ ինկած՝ քեզմէ թո-  
ղութիւն, շնորհք ու օգնութիւն կը  
խնդրեմ. ամէն:

## Ա Պ Օ Բ Ա Տ

զօր Մարեմայ ամէն որդին ընելու է:

Աը վայելէ, ով սիրելի թագուհի,  
որ ամենասուրբ Մայր մ'ունենամ եւ  
լի ըլլամ ամէն աղտեղութեամբ. Մայր  
մը՝ որ Աստուծոյ սաստիկ սիրովը բորբո-  
քած ըլլայ, եւ ես արարածական սիրոյ  
մէջ ընկղմիմ. Մայր մը՝ որ ամէն տեսակ  
առաքինութիւններով փայլի, եւ ես ա-  
մէն բանէն մերկ դտնուիմ: Ստուգիւ,  
սիրելի Մայր, արժանի չեմ քու որդիկ  
ըսուելու, վասն զի չար վարուքս քուկդ  
ըլլալու զիս բոլորովին անարժան ըրի:  
Բայց կը շատանամ եթէ զիս դերեացդ  
ու անարդ ծառայիցդ կարդը դասես:  
Այսու ամենայնիւ կ'աղաչեմ որ զիս՝  
զքեղ Մայր կոչելու արժանի ընես.  
ինչու որ աս անունը զիս կը միսիթարէ,  
սիրտս կը սիտիկ եւ վրաս պարտաւո-  
րութիւն կը դնէ զքեղ սիրելու: Աս  
անունը՝ զիս գթութեանդ դիմելու կը

յորդորէ. Եւ երբ մեղացս մէծութիւնն  
ու աստուածային արդար դատաստանին  
մտածութիւնը զիս կը զարհուրեցընեն,  
քաջալերութիւն կը զգամ, մտածելով  
որ դուն իմ Մայրս ես: Ուրեմն ինձի  
համարձակութիւն տուր, ով սքանչելի  
այս, զքեզ Մայր կոչելու: Աս արտա-  
սուաց հովտին մէջ Աստուծմէ ետքը  
դուն ես իմ ապաւինութիւնս. աս  
յուսով կ'ուզեմ ապրիլ, եւ կենացս  
վերջին շունչը քու սուրբ ձեռքի  
յանձնել՝ ստեղ կրկնելով. Ով Մայր  
իմ Մարիամ, ողորմէ ինձի, օդնէ ին-  
ձի. ամէն:



## ՔԱՆԻ ՄԷ ԱՐԲՈՅ

Առ ՄԱՐԻԱՄ ԱՂՕԹՀՆԵՐԸ

Սրբոյն Ալոյիսիսոի:

ԱՅԲԵՌԵԱՏՀԵ ԿՍՍ Մարիամ, առաւ  
ջնորդս ու թագուհիս, աւասիկ քու  
գիծութեանդ կ'ապաւինիմ, եւ այսօ-  
րուընէ սկսեալ՝ հոգիս, մարմինս ու  
ամէն կարողութիւններս պաշտպանու-  
թեանդ տակ կը ձգեմ ու գիծութեանդ  
կը նուիրեմ: Բոլոր յոյսս քու վրադ կը  
գնեմ եւ ամէն բանս ձեռքդ կը յան-  
ձնեմ: Դարձեալ քեզի կը յանձնեմ  
միսիթարութիւնս, ամէն տրտմութիւն-  
ներս ու վշտերս եւ բոլոր կեանքս, բայց  
գլխաւորաբար կենացս վերջին վայր-  
կեանը. որպէս զի բարեխօսութեամբդ  
եւ արժանեօքդ իմ ամէն գործքերս  
քու եւ սիրելի Որդւցդ սուրբ կամացը  
համեմատ կարգադրեմ. ամէն:

Արքյան Օպոստինոսի\* :

Երանելի Գշխց, ով կրնայ զքեղ  
ըստ արժանւոյն գովել, զքեղ՝ որ մաս-  
նաւոր հաւանութեամբդ կորուսեալ աշ-  
խարհքին օդնութեան համելու փու-  
թացիր: Ի՞նչպէս կրնայ զքեղ գովել  
անիծեալ մարդկութիւնը, որ միայն քու  
ձեռնտուութեամբդ վրկութեան ճա-  
նապարհը կրցաւ դտնել: — Ընդունէ  
մեր տկար գոհութիւնը, ընդունէ մեր  
բաղձանելներն ու առաջադրութիւն-  
ները. եւ հզօր բարեխօսութեամբդ  
աղատէ զմեղ՝ գործքով կամ զանցա-  
ռութեամբ նրգւոյդ դէմ գործած մեղ-  
քերնէս: Փառացդ աթոռէն ընդունէ  
մեր աղաչանիքն ու պաղատանիքը. եւ անկէ  
մեղի շնորհք ու գթութիւն խրկէ: Քու  
բարեխօսութեամբդ կը յուսանիք մեղաց  
թողութիւն. քու ձեռքէդ կը սպասենիք

\* Պիտոս թու Բահանացապեալ 1854 Մարտի 14 ին  
ամէն հաւատացելոց, որ առ աղօթքը շշնացեալ սրտիւ ու  
շերմեռանդութեամբդ կը զբուցեն, 40 օրւան ներողւթիւն  
կը շնորհէ:

մեր յաւիտենական երանու թիւնը. վասն  
զի չենք գտներ մէկը, որ այնպէս զիւրաւ  
արդար դատաւորին բարկութիւնն իջե-  
ցընէ, ինչպէս դուն, որ արժանի եղար  
մեր Փրկչին եւ դատաւորին մայրն ըլլա-  
լու: Սուրբ Կոյս, օգնէ տառապելոց,  
պաշտպանէ թերահաւատները, մխի-  
թարէ տրտմութեան մէջ եղողները,  
բարեխօս եղիր ժողովրդեան համար,  
աղաչէ քահանայից համար: Տուր որ  
սուրբ անունդ պատուողը՝ հզօր բարե-  
խօսութեանդ փորձն ալ առնու: Ողորմէ,  
գթա արքայութենէն խոտորողներուն  
վրայ. եւ անչափ փառքիդ մէջ զմեղ ալ  
մի մոռնար, եւ Որդւոյդ առջեւը մեզի  
համար բարեխօսէ: Դուն որ այն մեծ  
փառքը կը վայելես, մեզի պէս խեղճ  
աքսորելոց վրայ ալ գթած աչուըներդ  
դարձուր: Ցուցուր հզօր պաշտպա-  
նութիւնդ գլխաւորաբար անոնց վրայ,  
որոնք յաճախ քեզի կը դիմէն եւ քու  
օգնութիւնդ կ'ապաւինին, եւ ընդունէ

իրենց խնդրուածքը։ Երանելի Կոյս, ազաշէ ի մասնաւորի Աստուծոյ ժողովը բեանը համար. ամէն։

Ս. Յովհ. Դամասկացւոյն։

**ՈՎ** սիրելի գուստը Յովակիմայ եւ Աննայի, ինչպէս կրնաս գուն ըստ բաւականի գովուիլ, որ փառօք ամէն արարածներէն վեր ես. վասն զի աշխարհչքիս արարիչն ու Տէրը քու ձեռքովդ մեր մարդկային բնութիւնն զգեցաւ։ Ինք մարմին է քու մարմնէդ եւ ոսկը քու ոսկրէդ։ Նոյն ինքն Աստուած քու սուրբ ստեանցդ կաթը ծծեց։ Աստուած մը՝ որ ի սկզբանէ ամէն բան կը ճանչնար եւ կը նախախնամէր, զքեղ սիրեց ու զքեղ ընտրեց որ ի ժամանակի ըլլաս մայր յաւիտենական բանին։ Ասոր համար, ով ամենօրհնեալ Կոյս, մեղաւորիս աղաշանքն ընդունէ, որ սիրովդ վառուած՝ փրկութեան յօսոր վրադ կը

դնէ: Քեղմէ ունիմ, Տիրուհի, իմ բոլոր  
կեանքս. անոր համար կը խնդրեմ որ  
աղատես զիս մեղացս ահագին ծանրու-  
թենէն, փարատես մտացս մժութիւնը,  
հալածես սրտէս ամէն երկրաւոր ցան-  
կութիւնները, մերժես թշնամեացս փոր-  
ձութիւնները. որպէս զի հզօր բարե-  
խօսութեամբդ կարենամ յաւիտենա-  
կան երանութեան հասնիլ:


### Արբայն Բեռնարդոսի:

**Ով** թագուհի տիեղերաց, քեղի կը  
դարձընենք աչուրնիս. վասն զի օր մը  
մեր մեղքերուն ծանրութեանը համար  
ահագին դատաւորին առջեւը պիտ' որ  
ելենք: Արդ ով կրնայ զինք հաշտե-  
ցընել, ամենասուրբ Կոյս: Քեղմէ զատ  
մէկը չկայ, որ զինքն այնչափ սիրած եւ  
իրմէն այնպէս սիրուած ըլլայ: Բաց՝  
կ'աղաչեմ, ով Մայր ողորմութեան, բաց  
ականջներդ եւ լոէ տառապելոյս աղա-

շանքն ու հեծութիւնը։ Քու պաշտպանութեանդ տակ կը դնենք ինք զինքնիս։ Հանդարտեցուր քու Որդւոյդ ցասումն եւ հաստատէ զմեղ իր շնորհացը մէջ։ Գիտեմ որ դուն մեղաւորներէն չես դարշիր, եւ ոչ ալ կ'արհամարհես զանոնք՝ եթէ մեղքերնուն վրայ զղջալով՝ միջնորդութիւնդ խնդրեն. մանաւանդ թէ դուն զիրենիք յուսահատութենէն կը փրկես, կը քաջալերես, իրենց յոյմն ու մխիթարութիւնը կ'ըլլաս. եւ զիրենք չես թողուր մինչեւ որ Որդւոյդ հետ չհաշտեցընես։ Ով քաղցր եւ ամենասիրելի Մայր, չկայ մէկն որ անունդ յիշէ եւ սիրովդ չբորբոքի։ Զքեղ սիրովները չեն կրնար վրադ մտածել առանց քաջալերուելու եւ աւելի եւս սիրոյդ մէջ ամրանալու։ Ով ամենասիրելի Դշխոյ, օգնէ մեր տկարութեանը, բարեխօս եւ զիր մեզի համար. վասն զի Որդիդ քեզի լսելու միշտ պատրաստ է, եւ ամէն խնդրածներդ կ'ընդունիս. ամէն։

Ուրիշ Ազօթք:

**Մ**իտքդ բեր ով ամենաքաղցր Կյս  
Մարիամ, որ լսուած բան չէ, թէ մէկը  
քու պաշտպանութեանդ գիմած, քու  
օգնութիւնդ խնդրած եւ քեզմէ մեր-  
ժուած ըլլայ: Արդ այս վստահութենէն  
քաջալերուելով՝ քեզի կ'ընթանամ,  
ով Կյս կուսանաց եւ Մայր, քեզի  
կ'ապաւինիմ, եւ իբրեւ մեղաւոր՝ քու  
առջիդ կը կենամ. մի մերժեր աղա-  
շանքս, ով Մայր Աստուծոյ, հապա-  
գթութեամի լսէ պաղատանացս. ամէն:



Սրբոյն Քոնաւենդորայի:

**Ո**վ ամենաքաղցր Գշխոյ, բոլոր երկինք  
ու երկիր քու բարերարութիւններովդ  
լի է: Ինչպէս որ Յիսուս՝ մեր ամենա-  
գթած Տէրն է, ասանկ ալ դուն մեր  
ողորմած Մայրն ես, վասն զի զքեզ  
օգնութեան կանչողներուն գթութիւնդ

կը ցուցընես։ Անոր համար ես ալ  
բոլոր սրտանց քեզի կը դիմեմ, եւ կը  
միսիթարուիմ քու անչափ ողորմու-  
թիւնգ տեսնելով։ Բովանդակ մարդ-  
կութիւնը զքեզ կօրհնէ. վասն զի  
քեզմով օրհնուեցաւ։ Միշտ մեր քովը  
կեցիր, գթած Կոյս, օդնէ մեզի, որ  
Հայրն յաւիտենական իր մշտնջենաւոր  
փառացը զմեզ մասնակից ընէ. ամէն։



### Սրբոյն Եփրեմի։

Ավ անարատ եւ ամբիծ Կոյս Մա-  
րիամ, Մայր Աստուծոյ, Թագուհի Եր-  
կնի եւ Երկրի եւ գթած Դշխոյ, դու ես  
Նահապետաց յոյսն ու սրբոց ցնծու-  
թիւնը. քու ձեռքովդ Աստուծոյ հետ  
հաշտուեցանք։ Դուն ես մեղաւորացբա-  
րեխօսը, ալէկոծելոց անկասկած նաւա-  
հանդիստ, միսիթարութիւն աշխարհի,  
գերելոց աղատութիւն, հիւանդաց սփո-  
փութիւն, վշտացելոց հանդիստ եւ ա-

մենուն ապաւէն ու փրկութիւն։ Ո՛վ  
մեծազօր Դշխոյ, առ զմեղ գթութեան  
թեւոցդ պաշտպանութեանը տակ. ու-  
ղորմէ մեզի, ամենամաքուր Կոյս. վասն  
զի քեզմէ զատ ուրիշ ապաւէն չունինք։  
Ինք զինքնիս քեզի նուիրելով՝ քու ծա-  
ռայքդ կը կոչուինք. ուրեմն թող մի  
տար որ սատանան իր ետեւէն քաշելով՝  
զմեղ գժոխք տանի։ Եւ որովհետեւ մենք  
զմեղ քու հովանաւորութեանդ տակ  
դրած ենք, քեզի կը դիմենք եւ կ'ա-  
ղաչենք կը պաղատինք՝ եղիր Արդւսդ  
առջին մեզի համար բարեխօս, որ արդար  
դատաւորը՝ մեր մեղաց ծանրութեան  
համար՝ զմեղ թշնամւոյն ձեռքը չմատնէ։  
Ո՛վ լի շնորհօք Կոյս, լուսաւորէ միտքս,  
արձակէ լեզուս, որ արժանաւորապէս  
կարենամ զքեղ օրհնել ու գովել հի-  
մայ եւ յաւիտեանս. ամէն։




Ա. ԱԼՓ. ԱՐԳՈՒՐԵՍՑ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՐՈՐԴՈՒԹԵԱՆ

ԵՏ

ՄՐՅՈՅ ԿՈՒՍԻՆ



## ՊԵՏՐԱՍՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՅԱ ՀԱւատքնիս կը սորվեցընէ, եւ ամեւնեւին ալ չենք կրնար տարակուսիլ՝ թէ սրբագործուած նշխարքին մէջ, հայցին կերպարանաց տակ, Քրիստոսի մարմինն ու արխւնը ճշմարտապէս կը գտնուի: Բայց միանդամայն ան ալ պէտք չենք մոռնալ որ Յիսուս մեր սեղաններուն վրայ իբրեւ սիրոյ եւ զժութեան դահի վրայ նստածէ, որպէս զի անկէ մեզի իր շնորհքներն առատապէս բաշխէ: Գիշեր ցորեկ մեր քովը ծածկուած կը կենայ, որպէս զի իւր առ մեզ ունեցած մեծ սիրոյն յայտնի ցոյցը ասյ: Կարծեմ ըստ բաւականի ծանօթ է որ Ս. Եկեղեցին Մարմնայ եւ արեան տօնին ուժօրէքը (Սրբութիւն սրբոցը հրապարակաւ ժողովրդեան առջեւ դնելով եւ ան միջոցին մեծ հանդիսական թափօրներ կատարելով) դլխաւորաբար անոր համար հաստատած է, որ ասոր պատճառաւ մարդիկ իրենց շնորհակալութիւններովը, ջերմեռանդութեամբն ու սիրոյ ցոյցերովը Յիսուսի Քրիստոսի ամենասուրբ Հաղորդութեան մէջ ներկայ գտնուիլը հաստատուն հաւատքով խոստովանին եւ պատուեն:

Բայց ո՞րչափ վշտեր, ո՞րչափ արհամարհութիւններ կրելու ստիպուեցաւ մեր սիրելի Փրկիչն ու Հիմակ ալ այս սիրոյ խորհրդոյն պատճառաւ հարկ է որ նոյն իսկ ան մարդիկներէն կրէ, որոնց սիրոյն համար տշխարհք եկած եւ իր բնակութիւնը մեր խորաններուն վրայ հաստատած է: Ասոր նկատմամբ Տէրն մեր անդամ մը իր սիրելի աղախնոյն Մարդարիտայ Ալագոդին տրտունջ ըրաւ, ինչպէս որ Յիսուսի սուրբ սրտին ջերմեռանդութեանը վրայ դրուած գըքուկին մէջ մատենագիրը մեզի կ'աւանդէ. Օր մը երբ Մար-

դարիտա ամենասուրբ Հաղորդութեան առջեւ  
ծունկի ինկած աղօթք կ'ընէր, Յիսուս լուսաւոր  
դահի մը վրայ կեցած՝ իր սուրբ սիրտն անոր  
ցուցուց՝ բայց փշէ պատկով մը պատած, որմէ  
արիւն իր վագէր, վրան ալ խաչ մը կար: Փրկիչը  
զինք յանուանէ կոչելով. «Տես աս սիրտն, բաւ,  
որ մարդիկներն ան աստիճանի սիրեց՝ որ անոնց  
սէրը վաստըկելու համար ամեն բան ըրաւ. Եւ  
եթէ հարկ ըլլար՝ պատրաստ էր երկրորդ ան-  
դամ մ'ալ զոհուելու: Տես միանգամայն՝ թէ մարդիկներուն մեծ մատն ինչ ապերախտութիւն-  
ներով, որչափ անշնորհակալութեամբ փոխարէն  
կը հատուցանեն աս իրենց ցուցըցած սիրոյս: Տես  
ան դաղջութիւններն, անպատուութիւն-  
ներն ու անարդութիւնները, որոնցմով աս սիրոյ  
խորհրդոյն նկատմամբ կը վարուին: Եւ իմ սրտիս  
ամենէն մեծ ցաւ պատճառողն ան է, որ նոյն  
իսկ իրենք զիրենք Աստուծոյ նուիրող անձինք-  
ներն ինձի հետ այսպիսի անդժութեամբ կը  
վարուին: — Աս ըսելէն եաքը, Յիսուս յայ-  
տնեց իր բաղձանքը Մարդարիտային, որ Մար-  
մայ եւ արեան տօնին ութօրէքէն եաքը եկած  
առջի ուրբաթ օրը, ի պատիւ իր պատուական  
սրտին մատնաւոր տօն մը հաստատուի, որպէս  
զի ասով զՑիսուս Ճշմարտապէս սիրողներն իրենց  
ջերմեռանդութեան եւ սիրոյ ցոյցերովը փոխա-  
րէն ընեն ան դառնակսկիծ վշտերուն՝ զօրոնք  
Հաղորդութեան խորհրդոյն մէջ կը կրէ: Միան-  
դամայն խոստացաւ որ աս զերմեռանդութիւնը  
կատարողներուն իր չնորհքներն առատապէս կը  
հեղու եւ իրենց հետ աւելի սերտիւ կը միանայ:

Ասկէ կընանք իմանալ թէ Յիսուս Քրիս-  
տոս, ինչպէս որ մարդարէներէն մէկուն ձեռքովը  
յայտնեց, իր ուրախութիւնը մարդիկներուն հետ  
կենակից ըլլալու մէջ կը դանէ. եւ թէպէտ ա-  
նօնք զինք մերժեն, թողուն եւ արհամարհեն,  
սակայն ինք անոնցմէ չի կրնար հեռանալ, զիրենք

վի կրնար թողուլ։ Ասկից կրնանք հետեւցընել թէ որչափ Յիսուսի սիրելի են անոնք, որոնք իրեն ստեղ այցելութեան կու դան, եւ եկեղեցւոյ մէջ, ուր ինք հացի կերպարանաց տակ ծածկուած է, իրեն ընկեր կը լլան ու սրտերնին առջեւը վատահութեամբ կը բանան։ “Եսյն իսկ Քրիստոս Տէրն մեր՝ Մարիամ Մադդա Պացեանին հրամայեց որ օրւան մէջ երեսունուիրեք անգամ Հաղորդութեան խորհրդոյն այցելութիւն ընէ։ “Եսյն Կոյսը Փրկչին հրամանը կատարելով (ինչպէս իր վարուցը մէջ կը կարդանք) այնպիսի սաստիկ ներքին մղում մը կը զգար յաճախ Փրկչին մօտենալու, որ կ'աշխատեր մարմնով աւ խորանին մօտ ըլլալ։

Երանի թէ տեղուան հաւատարիմ ու քրիստոսաւեր հոգիները խօսեին, որոնք անդադար Յիսուսի հետ ամենասուրբ Հաղորդութեան մէջ կենակցելով՝ իրենց երենացին խնդութիւնն ու երանութիւնը հօն կը գտնեն։ Ոչ թէ պատմեին մեղի թէ որչափ շնորհքներ կ'ընդունին, որչափ լուսաւորութիւններու մատնակից կը լլան, ինչպիսի սաստիկ վառեալ սիրով կը բորբոքին, ինչ մեծ երանութիւն կը զգան ամենասուրբ Հաղորդութեան մէջ հացի կերպարանաց տակ ծածկուած Աստուծոյն առջին։ — Երբ որ Աստուծոյ հաւատարիմ ծառան չ. Ալյիսիոս Լանուսայ՝ Սիկիֆացւոց նշանաւոր առաքեալը՝ գեռիրեւ երիտասարդ աշխարհքիս մէջ կ'ապրեր, Յիսուսի սիրովն այնչափ բորբոքած էր, որ անմեծ ուրախութենէն՝ զոր իր սիրելի Փրկչին ներկայութեամբը կը զգար, հօնկէ բաժնուիլն ու հեռանալն անկարելի կ'երեւար։ Այս սուրբ անձին համար կը պատմուի թէ իր խոստովանահայրը հրամայած ըլլայ որ օրւան մէջ ժամ մը միայն Հաղորդութեան խորհրդոյն առջեւ կենայ։ Իր բարեկամները միտ դրին ու տեսան որ երբ որոշեալ ժամը կը լմբնար, սուրբ երիտասարդը

սաստիկ բռնութիւն մը կը զգար այն հրամանն  
ի գործ դնելու եւ Յիսուսի ընկերութենէն բաժ-  
նուելու : Եկեղեցիէն չելած՝ քիչ մը ժամանակ  
կը կենար, սեւեռեալ աշօք խորանին կը նայէր,  
երկրագութիւն կ'ընէր եւ վերջէն իբրեւ թէ  
ցաւով մը անկէ կը հեռանար, որով կը ցու-  
ցրնէր թէ որչափ գժուարութիւն եւ ընդդիմու-  
թիւն կը զգար իր սիրելի Փրկչին միմիթարա-  
կան մօտաւորութենէն բաժնուելու : Ս. Ալյի-  
սիոս Գոռնզակացին ալ պէտք եղաւ հրամացել որ  
ամենասուրբ Հաղորդութեան տուջեւ շատ ժա-  
մանակ չկենաց : Բայց քանի անգամ որ սուրբ  
պատանին այցելութեան կ'երթար, կը բռնա-  
դաառեր քիչ մ'ալ կենալու, քիչ մ'ալ Փրկչին  
մօտաւորութեամբն զմայլելու : Եւ վերջապէս իր  
անձին հետ սաստիկ կռուելով՝ հազիւ իր սիրե-  
լին կը բաժնուեր, այն ժամանակն ալ՝ եռան-  
դուն սէրէն բորբոքեալ՝ կը դոչէր . “Հեռացիր  
իզմէ, ով Աստուած, հեռացիր իզմէ” : — Միթէ  
այս տեղս չէր՝ որ Ս. Փր. Քսաւերէան իր դիւ-  
ցազնական գործոցը համար նոր զօրութիւն կը  
ժողովէր : ‘Յոյնն ի գործ կը գնէր նաև Ո. Փր.  
Ուէջիս, որ եթէ այսակիսի ժամանակ եկեղեցւոյն  
դռները դոց գտնէր, նոյն տեղը ծունկ կ'իջնար  
ու իր եռանդագին ջերմեռանդութիւնը կը կա-  
տարէր : Անձրեւի ու ցուրտ բռած ժամանակն  
ալ իր Փրկչին ունեցած եռանդուն սէրը գոնէ  
հեռու անց զգալի եղանակու մը ցուցընելուն  
վրայ կ'ուրախանար : Ս. Փր. Խսիզացին սովո-  
րութիւն ունէր իրեն բան մը պատահած տակն,  
անմիջապէս ամենասուրբ Հաղորդութեան եր-  
թալու եւ հոն իրեն պատահած ընդդիմութիւն-  
ներն ու վտուրը սիրելի Յիսուսին առջին դնե-  
լու : Բայց ամենէն սաստիկ էր Ս. Ախնկեալաւոս  
Պոչեմիացւոց թագաւորին՝ Ս. Հաղորդութեան  
ունեցած ջերմեռանդութիւնը : Աս սուրբը նոյն  
խորհրդոյն մէջ գտնուող Աստուածն ան սատի-

Ճանի կը սիրեր, որ չէ թէ միայն անձամբ իր ձեռու ըներօվը երկիրը կը մշակէր, ցորենն ու խաղղո՞ւ անձամբ կը ժողովէր կը պատրաստէր, ուսի կից Քրիստոսի մարմնոյն եւ արեան համար նշխարք եւ գինի պիտի շնուրէր, այլ նաև ձմեռ ատեն՝ գիշեր ժամանակ այցելութեան կ'ելէր: Իր բարի սիրոն այսպիսի ժամանակ Աստուծոյ սէրէն այնշափ կը բորբոքէր, որ արտաքոյ կարդի տաքութիւնը՝ նոյն իսկ իր բոլոր անդամոցը մէջ կը թափանցէր, այնպէս որ ձեան կամ սառուցի գողած ատեն կը հալէին: Ասոր վրայ իր վարուցը մէջ զարմանալի գէտք մը կը կարդանք: Իր ծառան, որ գիշերային այցելութիւններուն միշտ մասնակից կ'ըլլար, որ մը գանդատ ըրաւթէ սասատիկ ձեան մէջ ոտուըներն այնշափ կը մասին՝ որ գրեթէ սառելու պէս կ'ըլլան: Թագաւորը վրան գթալով՝ հրամայեց որ իր ոտիցը հետքերուն վրայէն քալէ: Ծառան պատուէրը կատարելով, անկից եաբը թէպէտ ձիւնը շատ բարձրացած ըլլար, եւ արտաքոյ կարդի պաղընէր, ամեննեւին եւ ոչ թէթէւ ցրտութիւն մը կը զգար:

Ոիրելի ընթերցող, աս դրբուկիս մէջ ասոնց նման օրինակներ պիտի կարդաս, որոնցմէ յայտնի կը տեսնես թէ զԱստուած սիրող ողիններն աս աշխարհիս վրայ իրենց բոլոր ուրախութիւնը ամենասուրբ խորհրդեան մէջ ծածկուած Աստուծոյն առջեւ կեցած ժամանակնին կը գտնէին: Ամեննեւին չեմ տարակուսիր որ իրօք հաղորդուելէն զատ՝ չկայ ջերմեռանդութիւն Աստուծոյ այնպէս հաճելի եւ մեզի այնշափ օդտակար, որշափ ամենասուրբ Հաղորդութեան մէջ Յիսուսի այցելութիւն ընելն ու իրեն հետ ստեղ խօսակից ըլլալը: Անոր համար աս ջերմեռանդութիւնն ի գործ դնելու մի դանդաղիք: Հրաժարէ ամեն մարդկային ուրախութիւններէն, եւ հիմակուընէ սկսեալ՝ գոնէ կէս ժամու եւ կամ քառորդի մը

շափեկեղեցի գնա եւ հոն Ա. Խորհրդեան այցելութիւնը ըրէ։ Անդամ մը միայն փորձէ, եւ շատ չ'անցնիր՝ կը տեսնես որ աս փոքր զոհը քեզի ինչ մեծ օգուտներու պատճառ կ'ըլլայ, ինչ դիւցազնական դորձքերու մէջ քեզի կ'առաջնորդէ։ Գիտնաս որ ամենասուրբ Հաղորդութեան առջեւ ջերմեռանդութեամբ անցուցած այս ժամանակէդ աւելի օգտակար բան չեիր կրնար ընել։ Աս քանի մը վայրկեանը մահուանդ ճգնաժամուն պիտոր օրհնես, աս քանի մը վայրկեանը՝ յաւիտենականութեան մէջ քեզի ամենէն մեծ ուրախութիւնը պիտոր պատճառէ։ Են ալ գիտնաս որ աս քառորդւան ժամանակը՝ քեզի առարինութեան ճամբուն մէջ յառաջադէմ ըլլալու աւելի կ'օգնէ, քան թէ ուրիշ ինչ եւ իցէ հոգեւորական կրթութիւնները, զորոնք ամեն օր առառուընէ մինչեւ իրիկուն ի դորձ կը դնես։

Սայդէ, Աստուած խոստացաւ թէ մեր ազօթքն ամեն ժամանակ ու ամեն տեղ լսելու պատրաստ է։ Խնդրեցէ, եւ բացէ նեղ Բայց ան ալ ճշմարիտ է որ Քրիստոս իր անսպառ շնորհըներն աւելի առատութեամբ կը հեղուանոնց վրայ, որոնք ամենասուրբ Խորհրդոյն մէջ իրեն այցելութեան կու գան։ Երանելին Հենրիկոս Սուզոյ սովորութիւն ուներ ըսելու՝ թէ Քրիստոս ամեն տեղէն աւելի իր խորաններուն վրայ հաւատացելոց խնդրուածքին եւ պազատանաց կը լսէ։ Միթէ սուրբերն ամենէն հաստատուն առաջադրութիւնները, մանաւանդ ան գիւցտզնական ուխտերը Հաղորդութեան խորհրդոյն առջեւ չեին ըներ։ Եւ ո՛գիտէ, սիրելի ընթերցող, արդեօք օր մը դուն ալ աս ահաւոր Խորհրդոյն առջեւ ինք զինքդ չե՞ս որոշեր բոլորովին ուրիշ կեանք մ'անցընելու։ արդեօք հաստատուն առաջադրութիւն չես դներ, ալ այնուհետեւ աշխարհքիս սնուտի սէրէն բաժնուելու, հրաժարելու եւ ինք զինքդ մի միայն Աստուծոյ

ծառայութեանց նուիրելու : Ես ալ մեծ շնորհակալութեամբ պէտք եմ խոստովանիլ, որ ամենասուրբ Հաղորդութեան պատճառաւ, իմ Յիսուսիմ՝ թէպէտ եւ ծուլութեամբ եւ շատ անկատար եղանակաւ յաճախելուս համար էր՝ որ վերջապէս թող տուի աշխարհըս, օրուն գժրախատութեամբ այնչափ տարի ծառայած էի, եւ ինք զինքս Աստուծոյ ծառայութեանը տուի: Երանի քեզի եթէ գուն աւելի կանուխ ինձի նմանիս, եւ ինք զինքդ բոլորովին Անոր նուիրես, որ ինք զինք, իր աստուածութիւնն ու իր մարդկութիւնը, քեզի բոլորանուելը ողջակեզ ըրաւ: Գարձեալ կը կրկնեմ, երանի քեզի եւ բիւրերանի, չե թէ միայն յաւիսենականութեան մէջ, հապա նաև այս աշխարհիս վրայ: Հաւատանձի, աշխարհիս ամեն ուրախութիւններն՝ ընդունայնութիւն են: Ան յաճախ զբօսանքները, խաղերը, թատրները, ընկերութիւնները, կատակներն եւ աշխարհիս ուրիշ ուրախութիւնները՝ դառնութեամբ լեցուն ու ամեն կողմանէ վշերով պատած են, որոնք մարդուս քաղցր թոյն մը կը մատակարարեն: Իմ աս բաածներուս հաւատա, վասն զի իմ փորձառութեամբս դիակմ: Միանդամայն զքեզ ապահով կրնամընկը՝ որ Քրիստոս Տէրն մեր աւելի միսիթարութիւն կը պարզեւէ ան հոգւոյն՝ որ Հաղորդութեան խորհրդոյն ջերմեռանդութենէն չի ձանձրանար, քան բոլոր աշխարհը իր ամեն հանդիսութիւններովն եւ ուրախութիւններովը:

Ո՛չ, ինչ խնդութիւն կը պատճառէ ներանձնացեալ ոգւոյ մը՝ ճշմարիտ հաւատրով սուրբ սեղանոյն առջին ծունկի իյնալ, անսպառ աղբեր առջին հարկաւոր եղած բաններուն համար սիրար վստահութեամբ բանալ: Եւ եթէ բաւական ջերմեռանդութիւն ալ չզգանք, այսու ամենայնիւնոյն գործքին մէջ յարատեւելչն պէտք չենք ձանձրանալ: Ամենայն վստահութեամբ պէտք

ենք Յիսուսի հետ խօսակից ըլլալ ու իրմէն ամենեւին շբաժնուիլ . վասն զի միշտ կը սպասէ . որպէս զի մեր աղօթքները լու ու մեր եռանդուն աղաչանքները ձեռքերնէս ընդունի : Մտածենք թէ ինչ մեծ միխթմարութիւն է իր առջին խոնարհիլ , մեղաց համար թողութիւն խընդրել , կարօտութիւննիս անոր առջեւը գնել , մեր սիրոն անոր բանալ , ինչպէս որ կ'ընէ բարեկամ մը բարեկամի հետ՝ որուն վրայ իր բոլը վատահութիւնը դրած է . եւ իրմէն շնորհք , սէր , խոնարհութիւն ... եւ արքայութիւն խընդրել : Խնչափ մեծ երանութիւն է , անոր սիրովք բորբոքիլ , որ մեզի համար խորաններուն վրայէն իր յառ խտենական Զօրն անդադար կը պաղատի , որ մեզի ունեցած մեծ սէրէն ստիպուած՝ անընդհատ մեր խորաններուն վրայ է , որուն մէջ ծածկուած , անծանօթ եւ նաեւ շատ անդամ աւարհամարհուած ըլլալն իրեն քաղցր է : Բայց ինչ այնչափ խօսիլը . Ճաշակեցեւ եւ դէռէւ : — —

Գալով երսնուհետ Կուսին այցելութեանցը , կ'ըսեմ որ ընդհանրապէս ընդունուած է Սբեռնարդոսի այն խօսքը՝ թէ “ Աստուած իր ամէն շնորհքները Մարեմայ ձեռօք հաւատացելոցը կը բաշխէ ” : Աստուած կ'ուզէ որ մենք բան մը ստանանք , բանի մը տէր բլանք Մարեմայ ձեռքովն ու բարեխօսութեամբը : Անոր համար Հ . Սուարէզ կը զրուցէ “ Ծնդհանուր կաթուղիկէ Եկեղեցւոյ կարծիքն է , եւ ամենեւին մէկէ մը հակառակութիւն չէ կրած՝ թէ Աստուածմէ շնորհք մը ընդունելու համար Մարեմայ բարեխօսութիւնը չէ թէ միայն օգտակար՝ այլ նաեւ հարկաւոր է ” : Աս բանս մեծ հաստատութիւն կ'ընդունի՝ եթէ միտ գնելու բլանք Ս . Եկեղեցւոյն Մարեմայ բերանը դրած Ս . Գրոց այն խօսքին . Աւ իս իւ իւնչւ , եւ յնին յայտ անհայտ առաջին իւնչանց . իւնչւ անհայտիւնն : Խնծի եկէք ամենքնիդ , եւ բարեխօսութեամբս ամէն խնդրուածքնիդ

ընդունելու. յոյսը կրնաք ունենալ: Անոր համար կ'աւելցընէ. Երանեալ է այս որ ըստիշե ինչ է յարդ որ զանապարհն իմ դահիցէ. ունիցի ու դրանուն իմ հանապաղ է - պահիցէ զշեմա բախ էմաց: Երանի անոր՝ որ միշտ դուրս կը զարնէ եւ ամենազօր բարեխօսութիւնս կը խնդրէ. զիս գտնազը՝ կեանք եւ յաւիտենական փրկութիւն գտած է: Ուստի ամենայն իրաւամբ Եկեղեցին զՄարիամ ամենուս յոյսը կը կոչէ, եւ զինք կ'ողջունէ ըսելով՝ Յոյ մեր, «ՊՆ Եւ:

Ս. Բեռնարդոս զԱ. Կոյսը պատճառ ամենայն յուսոյ կ'անոււանէ եւ կ'ըսէ. «Եթէ շնորհք կը խնդրենք, Մարեմայ քով փնտռենք. վասն զի առանց Մարեմայ բարեխօսութեան շնորհք ընդունիլ ուզելը, կ'աւելցընէ Ս. Անելմոս, առանց թեւոց թռչիլ ուզել է»: Հ. Աւրիեմմայի մէկ գրքուկին մէջ կը կարգանք թէ որչափ շնորհքներ ընդունեցաւ Աստուծոյ Մայրն անոնց համար, որ եկեղեցւոյ մը մէջ իրեն այցելութիւն եւ կամ իր մէկ պատկերին առջեւ ջերմեռանդութեամբ աղօթք ըրած են: Որչափ անհամար շնորհքներ շընդունեցան այսպիսի այցելութիւններու համար Մեծն Ալեքրդոս, Հռուբերդոս Արքան, Հ. Փր. Սուարեզ: Մարեմայ ձեռքով ընդունեցան ան մեծամեծ ծանօթութիւններն, իր միջնորդութեամբն ան բարձր գիտութիւնը, որով համօրէն Եկեղեցւոյն առջին այնպէս նշանաւոր անձինքներ եղան: Նոյն գրքուկին մէջ կը կարդանք դարձեալ թէ ինչ մեծ պարգևներ ընդունեցաւ Յիսուսի ընկերութեանը մէջ գտնուող երանելի պատանին Յովհ. Բերդմանս, որ սովորութիւն ըրած էր ամեն օր Հռովմայ վարժարանին մատունք մէջ Երանելոյ կուսին այցելութիւն մ'ընելու: Հոն տեղն հաստատուն առաջադրութիւն դրաւ Աստուծմէ ետքը զՄարիամ միայն սիրելու, որուն փոքրիկ մէկ պատկերին տակն ալ հետեւեալ խօսքերը գրած էր. «Չեմ հանգչիր մինչեւ որ

զՄարիամ՝ իմ Մայրս սաստիկ եռանդեամբ չսիրեմ ։ Ով կընայ ան ամէն շնորհքները հօս մէկիկ մէկիկ յառաջ բերել, զորոնք Մարիամ՝ իր սիրելի ծառային Ս. Քեռնարդինոս Սիէնացւոյն ընդունեցաւ։ Աս սուրբն երիտասարդութեան ժամանակ, քաղքին դրան մօտ եզող աղօթ արանի մը մէջ ամէն օր Երան, Կուսին այցելու թեան կ'ելլէր, եւ ինքն իսկ խոստովանեցաւ որ ամենասուրբ Կոյսն իր սիրան յափշտակիեր էր։ Մարեմայ ըրած այցելու թեամբը զգացած ուրախութենէն շզրկուելու համար՝ երբեք նոյնն ի գործ դնելու զանց շրաւ։ Մարեմայ բարեխօսութեամբն ընդունեցաւ աշխարհքէս հրաժարելու մեծ շնորհքն եւ հասած բարձր աստիճանի սրբութիւնը, միանդամայն Խոտալիսցի նշանաւոր առաքեալ ըլլալը։

Զանանք ուրեմն որ ամէն անդամ՝ օր Եկեղեցւոյ մը մէջ ամենասուրբ Հաղորդութեան այցելու թեան կ'ելլենք, Մարեմայ ալ այցելու թիւն մը ընենք, կամ զոնէ անոր պատկերին առջին ջերմեանդութեան գործը մը կատարենք։ Եթէ աս պատիկ ջերմեռանդութիւնը սիրով եւ վատահութեամբ ընելու մէջ յարատեւենք, դիւցազնական առաքինութեանց հասնելու յոյս կըրնանք ունենալ, վասն զի “իրեն եղած ամենափոքր ծառայութիւններուն ալ ամենամեծ պարգևեներով վարձահատոյց կ'ըլլայ, կ'ըսէ Ս. Անդրեաս Կրետացի։”

### Հոգեւորական Հաղորդութեան վրայ։

Հոգեւորական Հաղորդութիւնն ըստ Ս. Թոմայի Ագուինացւոյ, ուրիշ բան չէ՝ բայց եթէ բորբոքեալ ցանկութիւն մը զՅիսուս Հաղորդութեան մէջ ընդունելու եւ իրեն հետ ի ներքուստ

միանալու, իրրեւ թէ իրապէս զի՞նք սրտերնիս  
ընդունած ըլլայինք:

Տէրն մեր օր մը պատղինա Մարեսկա կու-  
սանին երեւնալով՝ իմացուց թէ իրեն որչափ  
հաճոյ է հոգեւորական Հաղորդութիւնը եւ թէ  
ինչ մեծ շնորհքներ կը պարզեւէ՝ ջերմեռան-  
դութեամբ կատարողներուն։ “Ասեւ իրեն երկու  
աման ցուցուց, մէկը սոկիէ, մէկայն ալ արծաթէ-  
ըսելով թէ Ասկիէ ամանին մէջ՝ իրական, իսկ  
արծաթէին մէջ հոգեւորական Հաղորդութիւնը  
կը պահէ:

Ասոր համար Աստուծոյ հաւատարիմ ու հա-  
ւատացեալ ոգիներն սովորութիւն ունին աս  
տեսակ Հաղորդութիւնը յաճախ ի գործ դնելու։  
Երանելին Ակամթա Խաչեան օրւան մէջ երկու  
հարիւր անդամ աս տեսակ հոգեւորական Հա-  
ղորդութեան կրթութիւնը կ'ընէր։ Աւատի խոր-  
հուրդ կու տամ որ Յիսուսի սիրոյն մէջ յա-  
ռաջացող հոգիներն ամենասուրբ Խորհրդոյն  
այցելութիւնը ըստած ատենիննին, հոգեւորապէս  
ալ Հաղորդուին, մանաւանդ թէ աւելի աղեկ  
կ'ընեն եթէ նոյնը պատարագի ժամանակ կը ըկ-  
նելու եւ երեքինելու ըլլան։ Աս ջերմեռանդու-  
թիւնը շատերուն չկարծած օգնութիւններ յա-  
ռաջ կը բերէ եւ շատ ֆրկաւէտ է, ուր թո-  
ղունք որ զասիկայ ի գործ դնելը ծանր բան չէ,  
վասն զի՝ ինչպէս որ սրբուհի Յովհաննա Խա-  
չեան կը զրուցէ, “Առանց մէկէ մը նշմարուելու,  
առանց ծում պահելու եւ առանց խոստովանա-  
հօրմեն յառաջուընէ հրաման խնդրելու՝ ամեն  
ժամու, ամեն վայրինի մէջ երբ ու զելու ըլլաս՝  
կրնաս հոգեւորապէս Հաղորդուիլ. որովհետեւ  
ի գործ դնելու համար՝ միայն բորբոքեալ ուր,  
միայն եռանդ կը պահանջուին։”



ԱՄԷՆ ԱՅՃԵԼՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ

ՀՈԴԵԽՈՐԱՊԵՍ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԼՈՒ

ԵՂԱՆԱԿ

ՅԱԽՈՒՄ իմ, կը հաւատամ որ դու  
ամենասուրբ Խորհրդեան մէջ ներկայ  
ես: Ամէն բանէ վեր կը սիրեմ զքեղ:  
Կը բաղձայի զքեղ սիրտս ընդունիլ.  
Բայց որովհետեւ հիմայ զքեղ իրապէս  
ընդունելու անկարող եմ, գոնէ հոգեւ-  
որապէս սիրտս եկուր: — Կը գրկեմ  
զքեղ. կը միացընեմ ինք զինքս քու  
սուրբ սրտիդ հետ՝ այնպէս ինչպէս թէ  
Ճշմարտապէս հոն եկած ու բնակու-  
թիւնդ հոն հաստատած ըլլայիր: Թող  
մի տար որ ասկից ետքը քեզմէ հե-  
ռանամ:

ՀՈԴԵԽՈՐԱՊԵՍ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԼՈՒ ՈՒՐԻՇ  
ԵՂԱՆԱԿ

Ո՛վ երկրպագելի Յիսուս, հաստա-  
տութեամբ կը հաւատամ, որ գուն ա-

մենասուրբ Հաղորդութեան մէջ ճըշ-  
մարտապէս ներկայ ես: Ամէն բանէն վեր  
կը սիրեմ զքեղ: շատ կը ցաւիմ որ  
զքեղ վշտացուցի ու քեզի զէմ մե-  
ղանչեցի. բայց սրտանց կ'առաջադրեմ  
ասկէ ետքն զքեղ ամենեւին չվշտա-  
ցլնելու: — Ո՛հ, ո՛րչափ կը ցանկայ  
հոգիս զքեղ ընդունելու. բայց հիմայ  
զքեղ ամենասուրբ Հաղորդութեան մէջ  
իրապէս ընդունելու անկարող ըլլալով,  
կ'աղաւեմ՝ գոնէ հոգեւորապէս սիրտս  
եկուր, սուրբ շնորհքներովդ զարդարէ:  
Քեզի կը փարիմ, Յիսուս իմ, իրբեւ  
թէ Ճշմարտապէս ներսս ըլլաս: Քեզի  
հետ կը միաւորիմ. թող մի տար որ  
այսուհետեւ քեզմէ հեռանամ:

ԿԱՄ

**Յիսուս,** Տէր եւ Փրկիչ իմ, կը հա-  
ւատամ որ դուն Աստուած եւ մարդ,  
ամենասուրբ Հաղորդութեան մէջ ճըշ-  
մարտապէս եւ իրապէս ներկայ ես: Կը

սիրեմ զքեզ, որ զիս յառաջագոյն սիրեցիր եւ իմ սիրոյս համար պատուական արիւնդ թափեցիր։ Աս տկար սէրէս յորդորուելով, սրտանց կը ցաւիմ որ զքեզ անթիւ մեղքերովս այնչափ անգամ վշտացուցի։ բայց թողութիւն կը խնդրեմ, ով աստուածային Փրկիչ իմ, թողութիւն կը խնդրեմ քեզմե, քեզմե որ երկինքն իջար աշխարհքիս մեղքերը չնցելու։ — Ոհ, եկուր սիրտս եւ լեցուր աստուածային շնորհքներովդ, մանաւանդ քու սուրբ սիրովդ։ Քեզի կը փաթթուիմ, Յիսուս իմ, սէր իմ, եւ բոլորովին քեզի կը յանձնեմ ինքզինքս, որ զքեզ բոլորովին ինձի շնորհեցիր։ Դու ցանկութիւնս, գեղեցկութիւնս, սէրս, թող մի տար որ այսուհետեւ քեզմե բաժնուիմ։ Քեզի համար կուզեմ ապրիլ ու մեռնիլ։ Բոլորովին քուկդ կը բաղձամ ըլլալ թէ աս եւ թէ անդիի աշխարհք, ամէն։

Հոգեւորապէս հաղսրդութելու աւելի համա-  
ռօտ նղանակներ:

Կը հաւատամ, Տէր իմ, որ աս ա-  
մենասուրբ Հաղորդութեան մէջ ներկայ  
կը գտնուիս իմ սիրոյս համար: Սրտիս  
ոչնչութեանը մէջ քեզի երկրպագու-  
թիւն կ'ընեմ: Աը ցաւիմ որ զքեզ  
վշտացուցի. այսուհետեւ քեզի հետ  
սերտիւ միանալու կը ցանկամ. եկուր  
ուրեմն ու զիս գոնէ հոգւով քեզի հետ  
միաւորէ:



Աը պաղատիմ քեզի, ովք Տէր իմ Յի-  
սուս Քրիստոս, եւ կը խնդրեմ որ քու  
սիրոյդ քաղցր եւ վառեալ զօրութիւնը  
զիս բոլորովին սպառէ. որպէս զի մեռ-  
նիմ քու սէրէդ, որ ինձի ունեցած  
եռանդուն սէրէդ մեռնիլ ուղեցիր:




Ով չսիրուած սէր, ո՛չ անծանօթ  
սէր, ովք քաղցր Յիսուս իմ, սիրելի

Փեսայդ իմ, երբ գայ պիտ'որ ժամանակ  
մը, որ զիս բոլորովին քեզի ձգես:

Յիսուս, քաղցր սէր իմ, գանձ իմ,  
վառէ, բորբոքէ սիրտս, որպէս զի մի  
միայն քեզի համար վառի, զքեզ միայն  
սիրէ, միայն քեզի հաճոյ ըլլալու բաղ-  
ձայ, ամէն:





ԵՄԵՆ ԱՅՑԵԼՈՒԹԵՆՔ ՅԵՒԱՀ  
Ա Դ Յ Ի Ս Ո Ւ Ի Ս Փ Ռ Կ Ի Հ Զ

**Ա Դ Օ Թ Ֆ**

ամենասուրբ Հաղորդութեան մէջ ընդու-

նած անարդա-  
նաց ու անպա-  
տութեանց  
հատուցման հա-  
մար\*:



**ՏԵՐ** իմ Յիսուս  
Քրիստոս, որ առ մար-  
դիկ ունեցած արտա-  
քոյ կարգի մէջ սիրոյդ  
համար՝ գիշեր  
ցորեկ միշտ աս  
Խորհրդոյն մէջ  
լի գթով եւ  
գորովով կը կենաս՝ կը սպասես, կը կո-  
չես, եւ ամեն քեզի այցելութիւն ընելու

Եկողները մարդասիրութեամբ կ'ընդունիս, կը հաւատամ՝ որ ամենասուրբ Հաղորդութեան մէջ ներկայ կը գտնուիս: Խոնարհութեամբ կ'երկրպագեմ քեզի, եւ ինծի ցուցըցած մեծամեծ շնորհացդ համար շնորհակալ կ'ըլլամ: Բայց գըլխաւորաբար շնորհակալ կ'ըլլամ, որ այս Ա. Խորհրդեան մէջ ինք զինքդ բոլորովին ինծի պարդեւեցիր, քու սուրբ Մայրդ ինծի բարեխօս տուիր եւ զիս այս եկեղեցին այցելութիւն ընելու կանչեցիր: Ա'ողջունեմ քու մարդասէր սիրտդ, եւ քեզի շնորհակալ կ'ըլլամ ան ամէն շնորհաց համար՝ զորոնք մինչեւ հիմայ ինծի պարդեւեցիր: Առանձինն շնորհակալութիւն կը մատուցանեմ քեզի. 'Նախ՝ որ հիմայ ինծի շնորհք տուիր քեզի այցելութիւն ընելու. Երկրորդ՝ որ աս ամենասուրբ Հաղորդութեան մէջ թշնամիներէդ կրած ամէն անպատճուռութեանց եւ անիրաւութեանց հատուցում ընեմ. եւ Երրորդ՝ որ ամէն տեղերն, ուր որ

աս սուրբ Խորհրդոյն մէջ կը դտնուիս,  
եւ մարդիկներէն արհամարհուած՝ ի-  
րենցմէ բաւական մեծարանք չես ըն-  
դունիր, երկրպագութիւն ընեմ։ Բո-  
լոր սրտանց կը սիրեմ զքեղ, Յիսուս  
իմ։ Շատ կը ցաւիմ՝ որ այնչափ անդամ  
քու աչքիդ առջին, որ անեզը բարու-  
թիւն ես, երբեմն անհաճոյ դտնուե-  
ցայ։ Բայց հաստատութեամբ կ'առաջա-  
դրեմ այսուհետեւ երբեք զքեղ չզայ-  
րացընել եւ չվշտացընել։ Եւ հիմայ ես  
հէք ու թշուառական մեղաւորս՝ բո-  
վանդակ անձս քեղի կը մատուցանեմ.  
կամքէս բոլորովին կը հրաժարիմ, եւ  
ամէն յօժարութիւններս եւ ամէն ու-  
նեցածս քեղի կը նուիրեմ։ Այսու-  
հետեւ վարուե ինծի հետ ինչպէս կ'ու-  
ղես եւ կը հաճիս։ Քու սուրբ սի-  
րոյդ միայն կը փափաքիմ. աս միայն՝  
ինչպէս նաեւ իսպառ համբերութիւն  
եւ սուրբ կամացդ կատարումը կը խըն-  
դրեմ քեղմէ։ Քեղի կը յանձնեմ քա-

ւարանի հոգիները, մանաւանդ ամենաւ-  
սուրը Հաղորդութեան եւ Մարեմայ Ա.  
Կուսին մեծ ջերմեռանդութիւն ունե-  
ցողները: Քեզի կը յանձնեմ դարձեալ  
աշխարհքիս վրայ գտնուած խեղճ մե-  
ղաւորները: Ով սիրելի Յիսուս, բոլոր  
կամքս ու յօժարութիւններս քու սուրբ  
կամացդ եւ յօժարութեանցդ հետ կը  
միացընեմ, որ գթութեամբ եւ ողոր-  
մութեամբ լի են. եւ աս ամեն բան  
յաւիտենական Հօրդ նուիրելով՝ կ'ա-  
ղաչեմ որ յանուն քո եւ քեզի ու-  
նեցած սիրոյն համար զիս ընդունի եւ  
աղաչանացս լսէ:

---

## Ա. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

ԱՀՍԻԱՍԻԿ ամենայն բարեաց եւ  
բարութեանց աղքիւրը Յիսուս, ամե-  
նասուրը Հաղորդութեան մէջէն այս-  
պէս կը գոչէ. Որ ժարանք է իշէ, եկեւցէ

առ իս\*: — Ո՞րչափ առատահոս շնորհք-  
ներ ու պարգեւներ ընդունեցան սուր-  
բերն ամէն ժամանակ այս ամենասուրբ  
Հաղորդութենէն, այս անսպառ աղքե-  
րէն, որուն մէջէն Քրիստոս իր չարչա-  
րանքներուն արժանեացը պտուղը մէզի  
կը բաշխէ, ըստ մարդարէին՝ թէ Առէ+  
Չուր ուրախունեան, յարբերացն իրէու-  
նեան \*\*:

Փերիա կոմսուհւոյն, — որ ստեղի ու  
երկայն ժամանակ ամենասուրբ Հա-  
ղորդութեան առջեւ կենալուն համար՝  
Հարսն Ա. Հաղորդութեան կոչուեցաւ,  
— Երբ օր մը հարցուեցաւ թէ ինչ  
կ'ընէ այնչափ ժամանակ Ա. Հաղորդու-  
թեան առջին. “Մինչեւ աշխարհքիս  
կատարածն, ըսաւ, հոն կ'ուզէի մնալ.  
որովհետեւ հոն դտնուողն Աստուծոյ  
էութիւնն է, որ արքայութեան մէջ  
երանելեաց վայելքն ու բաժինն է: Ես  
ձեր վրայ կը զարմանամ որ կը հարցը-

նէք՝ թէ հոն այնչափի երկայն ատեն ի՞նչ  
կրնամ ընել. մանաւանդ թէ ի՞նչ կրնամ  
չընել. սիրել, գովել, շնորհակալ ըլլալ,  
շնորհք խնդրել...: Ի՞նչ կ'ընէ աղքատը  
հարուստ մարդու մ'առջեւ կեցած ժա-  
մանակ, ի՞նչ կ'ընէ հիւանդը՝ երբ բժիշ-  
կը քովը կը տեսնէ, ի՞նչ կ'ընէ սաստիկ  
ծարաւ. մարդը՝ զինջ եւ յստակ աղ-  
քիւրի պատահած ատեն. ի՞նչ կ'ընէ  
անօթի անձն՝ ամեն տեսակ կերակուր-  
ներով պատրաստուած սեղանի մը առ-  
ջեւն:

Ո՛վ ամեն բանէ վեր սիրուելու ար-  
ժանի եւ քաղցր Յիսուս, իմ յօսս եւ  
սիրոյս մի միայն առարկան, ո՛չ որչափ  
եւ որպիսի ծանր վշտեր հարկ եղաւ  
քեզի կրել, որպէս զի մեր քով՝ աս  
ամենասուրբ Խորհրդեան մէջ կարող  
ըլլաս կենալ: Մեռնելու ստիպուեցար,  
որպէս զի մեր խորաններուն վրայ կա-  
րենաս բնակութիւնդ հաստատել: Գի-  
տէիր թէ մարմնաւոր մօտաւորութեամբ

մեր քով կեցած ժամանակդ որչափ  
անպատուութիւններ, որչափ անար-  
դութիւններ յանձն առնուլ հարկ պի-  
տի ըլլայ: Այսու ամենայնիւ մեզի ու-  
նեցած սաստիկ սէրդ, եւ ան սաստիկ  
բաղձանքը՝ որ մեզմէ սիրուիլ կ'ուզես՝  
ամէն բանի յաղթեց: — Եկուր ու-  
րեմն, Տէր, եկուր իմ սիրտս, եւ գոցէ  
անոր գոները, որպէս զի ոչ ինչ արա-  
րած կարենայ մուտ գտնել ան սրտին  
մէջ, որ քուկդ է միայն եւ զոր բոլո-  
րովին քեզի նուիրել կ'ուզեմ: Դուն  
միայն, սիրելի Փրկիչ, գուն տիրէ իմ  
վրաս. քու պաշտպանութեանդ տակ  
առ զիս. եւ եթէ կատարելապէս չչնա-  
զանդիմ, պատժէ. որպէս զի այսուհե-  
տեւ պատրաստ ըլլամ քու բաղձանք-  
ներդ՝ քու կամքդ ճշդիւ կատարելու:  
Տուր, սիրելի Յիսուս իմ, որ ամե-  
նեւին ուրիշ բան չփնտռեմ, բանի մը  
չբաղձամ, բայց եթէ միշտ քու կամքդ  
կատարելու. ուրիշ բանի չցանկամ”

բայց եթէ քեզի, ով ծածկեալ Աստուած, ստէպ այցելութիւն ընել, քեզի հետ ըլլալ եւ զքեզ Հաղորդութեան խորհրդոյն մեջ յաճախ ընդունիլ: Թող խնդրեն ուրիշները երկրաւոր բարիքներ. ես ուրիշ բան խնդրել չեմ ուզեր, ուրիշ բանի չեմ բաղձար՝ բայց եթէ քու սիրոյդ: Ահաւասիկ ասիկայ է միայն, որուն համար եկեր՝ խորանիդ առջին կը պաղատիմ: Տուր, Տէր, որ բոլորովին ինք զինքս մոռնալով, քու անհամար բարերարութեանցդ վրայ միայն մտածեմ: Ո՛վ դուք սերովեէք, չէ թէ ձեր փառացը վրայ կը նախանձիմ, հապա ձեր եւ իմ Աստուծոյս ունեցած սէրերնուդ վրայ: Սորվեցուցէք ինծի թէ ինչ ընեմ, որպէս զիկարող ըլլամ զինք արժանապէս սիրել եւ իրեն հաճոյ ըլլալ:

Յիսուս իմ, զքեզ միայն սիրել, քեզի միայն հաճոյ ըլլալ կը բաղձամ:

Հոս կը յաջորդէ Հոգեւորական Հաղորդու-  
թիւնը, տես Եջ 368: — Անկից ետքը կու գայ  
ամենասուրբ Կուսին Այցելութիւնը՝ զոր իր մէկ  
խորանին կամ պատկերին տռջին կատարելու է:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ահաւասիկ մեղի համար շնորհաց  
ուրիշ աղբիւր մըն ալ, մեր Մայրը Մա-  
րիամ, որ այնպէս հարուստ է բարու-  
թեամբք եւ շնորհօք, որ աշխարհքիս  
վրայ եւ ոչ մէկը կը դտնուի՝ որ անկէ  
մաս մը չառնու. Ի լրունենէ անորէ նորա  
մեծ առենեփին առատ+\*: Ամենասուրբ Կոյսն  
աւետաւոր հրեշտակին խօսքին համե-  
մատ՝ լցեալ է Աստուծմէ ամեն տեսակ  
շնորհքներով. “Աակայն չէ թէ միայն  
իր անձին՝ հապա նաեւ մեղի համար,  
կ'ըսէ Պետրոս Ոսկեխօս, ընդունեցաւ  
շնորհաց անչափ լիութիւնը, որպէս զի  
յետոյ ամենուն, բայց մանաւանդ իր  
պաշտպանութեանը տակ եղողներուն

մաս հանէ. աս շնորհքն ընդունեցաւ  
Մարիամ, որպէս զի աշխարհքիս փըր-  
կութիւն շնորհէ :

Պատճառ մերոյ խնդութեան Մա-  
րիամ, աղաչէ մեզի համար :

---

ԵՄԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ՎԵՐՖԸ  
ԱՌ Ս. ԱՍՏՈՒԱԺԱԺԻՆ

### Ա Զ Օ Բ Ա Ք

որպէս զի իր հզօր պաշտպանութեան եւ  
բարեխօսութեան արժանի ըլլանք\* :

Ամենասուրբ եւ անարատ կոյս Մա-  
րիամ, Մայր Աստուծոյ եւ Փրկչին իմոյ,  
Թագուհի աշխարհի, բարեխօս, յոյս,  
պաշտպան մեղաւորաց, քեզի կ'ապաւի-  
նիմ ես քան զամենեսին ողորմելի մե-  
ղաւորս: Քեզի երկրպագութիւն կ'ընեմ,  
ով դշխոյ մեծ, եւ շնորհակալ կ'ըլլամ

\* Գիոս թ. . (1854. Աեպտ. 7ին) առ աղօթքը Ա.  
Ալուանին մէկ պատկերին առջեւ ըսողներուն 300 օրուան նե-  
րողութիւն շնորհած է:

մինչեւ հիմայ ինծի ցուցըցած մեծ սիրոյդ, ինծի համար ընդունած անչափ շնորհացդ, եւ ի մասնաւորի անոր համար՝ որ զիս քու բարեխօսութեամբդ աղատեցիր դժոխքէն՝ որուն շատ անգամ իմ մեղացս ծանրութեանը համար արժանի էի: Կը սիրեմ զքեզ, ով սիրելի Մայր, եւ քեզի ունեցած սէրէս կը խոստանամ որ ասկէ ետքը միշտ քեզի ծառայեմ եւ ջանամ որ ուրիշներն ալ զքեզ սիրեն: Աստուծմէ ետքը քու վրադ կը դնեմ իմ բոլոր յսսս, քեզի կը յանձնեմ հոգւոյս փրկութիւնը: Ընդունէ զիս ծառայիցդ կարգը, ով Մայր ողորմութեան, առ զիս հզօր պաշտպանութեանդ տակ: Եւ որովհետեւ քու խօսքերդ Աստուծոյ առջին անչափ զօրութիւն ունին՝ կը խնդրեմ քեզմէ, սիրելի Մայր, պահէ զիս ամէն փորձութիւններէն, կամ գոնէ շնորհք խնդրէ Աստուծմէ՝ որ կարող ըլլամ մինչեւ կենացս վերջին շունչն անոնց դէմ պա-

տերաղմելով՝ զանոնիք նուաճել։ Դարձեալ կը խնդրեմ քեղմէ զՅիսուս սիրելու շնորհքն ու երջանիկ մահ։ Աիրելի մայր, քու առ Յիսուս ունեցած սիրոյդ համար կը պաղատիմ, որ մինչեւ կենացս վերջին կէտը իզմէ չէւանաս։ Մի թողուր զիս մինչեւ որ չտեսնես երանելեաց կարգը արքայութեան մէջ, ուր զքեզ օրհնեմ եւ քու ողորմութեանդ յաւիտեանս շնորհակալ ըլլամ։ Այսպէս կը յուսամ, այսպէս ալ ըլլայ. ամէն։



## Բ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

“**Ա**յրուշետեկ հացն ու տելիք մընէ, կ'ըսէ Հ. Եւսեբիոս Նիերեմբերգեան, որ թէ կերուելով՝ կը սպառի, եւ թէ կը պահուի՝ կը մնայ, անոր համար Քրիստոս հացի կերպարանաց տակ ուղեց աշխարհքիս վրայ մնալ, որպէս զի չէ թէ միայն զինք ճշմարտապէս սիրովներուն չետ Ա. Հաղորդութեան ձեռքով միա-

նայ, այլ նաեւ տապանակին մէջ մնալով,  
միշտ մեզի մօտ ըլլայ, եւ ասով իր մեծ  
սիրոյն վրայ ստէալ կարենանք մտածել ։  
Ո-նայնացոյց շանչն, կ'ըսէ Պօղոս առա-  
քեալ, գիտուաբանու ժառայի տուեալ\*։ Հա-  
պա մենք ի՞նչ ըսենք, երբ կը տեսնենք՝  
թէ նոյն իսկ հացի կերպարանաց տակ  
ինք զինք ծածկեր, տփին մէջ կեցեր է։  
“Աեզու չկայ, կ'ըսէ Ս. Պետր. Ալգան-  
դարեան, որ կարող ըլլայ բացատրել թէ  
ինչպիսի սաստիկ սէր ունի Յիսուս ան  
հոգիներուն՝ որ շնորհաց վիճակի մէջ  
կը գտնուին։ Եւ որովհետեւ հարկ ե-  
ղաւ որ աս սիրելի Փետան մեզմէ հե-  
ռանայ, որպէս զի չըլլայ թէ իր մար-  
մնաւոր հեռաւորութիւնը մարդկան  
պատճառ տայ զինք բոլորովին մոռնալու  
եւ իր վրայ ամենեւին չմտածելու, անոր  
համար ամենասուրբ Խորհուրդը, իբրեւ  
իր սիրոյն յայտնի ապացոյց՝ հաստատեց,  
որուն մէջ ինք անձամբ կը գտնուին։”

\* Փիլ. Բ. 7:

Եւ արդ, Յիսուս, որովհետեւ դուն  
անոր համար միայն հոս ծածկուեր կե-  
ցեր ես, որպէս զի քեզի դիմող խեղճ  
մեղաւորներուն խնդրուածոցը լսես,  
լսէ ուրեմն անշնորհակալու մեղաւորիս  
աղօթքն ալ, զոր այսօր քեզի մատու-  
ցանելու կու գամ։ Աստուած իմ, կը  
ճանչնամ սխալմունքներս. կը ցաւիմ  
որ զքեզ զամենաբարի Տէրս վշտա-  
ցուցի։ Ալ խնդրեմ նախ՝ որ թողու-  
թիւն տաս քեզի դէմ գործած մեղ-  
քերուս, որոնցմով զքեզ զայրացուցի։  
Եւ երկրորդ՝ թէպէտ գիտեմ որ ան-  
բաւ սիրոյ արժանի ես, եւ ես զքեզ  
սիրելու եւ քեզի հաճոյ ըլլալու մեծա-  
պէս կը ցանկամ, բայց որովհետեւ չեմ  
կրնար իրօք զքեզ սիրել, եթէ դուն  
շնորհօքդ ինձի օգնութեան չհասնիս,  
անոր համար կը խնդրեմ՝ տուր այսօր  
ինձի այս շնորհքը. ցուցուր երկնից քու  
մեծազօր զօրութիւնդ, քու անբաւ բա-  
րերարութիւնդ։ Շնորհէ որ ես՝ որ քիչ

մը յառաջ քու թշնամիդ էի, հիմայ  
եւ ասկէ ետքը միշտ ճշմարտապէս  
կարող ըլլամ զքեղ սիրել։ Աստուած  
իմ, դուն կրնաս աս շնորհքն ընել եւ  
կուղես ալ։ Իմ կողմէս պակսածը դուն  
լեցուր։ Շնորհք տուր՝ որ կատարելապէս  
կարող ըլլամ զքեղ սիրել, գոնէ այն-  
չափ սիրել՝ որ փոխարէն ըլլայ թշնա-  
մանաց՝ որով զքեղ զայրացուցի։ Յի-  
սուս իմ, ամէն բանէն վեր կը սիրեմ  
զքեղ, կեանքէս աւելի կը սիրեմ, Աս-  
տուած իմ, սէր իմ եւ ամենայն ինչ։  
Աստուած իմ եւ ամենայն ինչ։



### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

#### Ա. Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Մարիցու + այսուներեւ համարյակու-  
թեամբ աւազի անուոյ շնորհաց, զի ընկաւ-  
ցու + ողբանենիւն եւ բոցու + շնորհս ի ուեղ  
ժամանակի օդնականութեան։ “Աս աթոռը

Մարիամ է, կ'ըսէ Ս. Անտոնինոս, որուն  
ձեռքովին Աստուած ամէն շնորհքները  
մեղի կը մատակարարէ՞ : Ո՛չ, սիրելի  
Մայր, եթէ դուն այնչափ կը ցանկաս  
մեղաւորներուն օգնութեան հասնիլ եւ  
անոնց համար այլեւայլ շնորհքներ ըն-  
դունիլ, ահաւասիկ տես զիս, որ ստու-  
գիւ մեծ մեղաւոր մըն եմ ու քեզի կը  
դիմեմ. օգնութեան հասիր ինծի:

Մի միայն ապաստան մեղաւորաց,  
օգնէ ինծի:

---

## Գ. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

ԱՓԿՈՒԹԻՒՆ ԵՅ ՅՈՐԴԻՆ ՅՈՐԴԻԱՆ<sup>\*</sup>:  
Ահաւասիկ մեր սիրելի Յիսուսը բաւա-  
կան չհամարեցաւ աշխարհք գալ, մեղի  
համար մեռնիլ, այլ նաեւ իր մահուա-  
նէն ետեւ ամենասուրբ Հաղորդութեան  
խորհրդոյն մէջ մեղի հետ ուղեց մնալ,

որպէս զի ճանչցընէ թէ իր ուրախութիւնը մարդկան հետ կենակցելուն մէջ կը դանէ: “Ավ մարդիկ, կը դռչէ Ա. Թերեղիա, ինչպէս կրնաք Աստուած մը վշտացընել, որ յայտնապէս կը զբուցէ թէ իր ցնծութիւնը մեր մէջը կը դանէ”:

Յիսուս իր բերկրութիւնն ի մեզ կը դանէ, եւ մենք մեր ուրախութիւնը չենք դաներ ի Յիսուս, մենք՝ որ նոյն իսկ իր պալատին մէջ բնակելու պատիւն ունեցած ենք: Ինչպիսի շնորհք, ինչ մեծ փառք կը համարուէր հպատակի մը, ծառայի մը, եթէ թագաւորն իր պալատին մէջ անոր բնակութիւն տար: Միթէ ասիկայ մեր թագաւորին ապարանքը չէ: Ահա Աստուծոյ տունը, որուն մէջ Յիսուսի Քրիստոսի հետ կը բնակինք: Ճանչնանք ուրեմն թէ որչափ պէտք ենք իրեն շնորհակալ ըլլալ, եւ մեծ համարիլ ու յարգել Յիսուսին մեզի հետ տնակցութիւնը:

Ողորմութեան աչուցներդ, Յիսուս,

աս սեղանոյն վրայէն՝ որուն վրայ գիշեր  
ցորեկ իմ սիրոյս համար կեցեր ես, ինձի  
դարձուր: Դուն ես ամէն բարութեանց  
աղբիւրը, դուն՝ ամէն ցաւոց եւ հիւան-  
դութեանց բժիշկը, գանձ ամենայն աղ-  
քատաց, դարձուր աչուրներդ մէյ մը  
ողորմելի եւ խեղճմեղաւորիս, որ ոտուր-  
ներուդ առջեւ ինկած՝ ողորմութիւն ու  
շնորհք կը խնդրէ. ողորմէ, ողորմէ ինձի:  
Խեղճութիւնս թէպէտ եւ աս աստիճանի  
հասեր է, այսու ամենայնիւ քաջալե-  
րութիւնս ամենեւին չեմ կորսնցըներ,  
երբեք չեմ յուսահատիր, քանի որ  
զքեղ, ով Աստուած ողորմութեան,  
ինձի բարիք ընելու համար երկինքէն  
իջած՝ հոս ամենասուրբ Խորհրդեան մէջ  
կը տեսնեմ: Կը գովեմ, շնորհակալ կ'ըւ-  
լամ եւ կը սիրեմ զքեղ, Աստուած իմ.  
Եւ եթէ թոյլ տաս որ քեզմէ ողորմու-  
թիւն մը խնդրեմ, ահաւասիկ աս է  
միայն խնդրածս: Չեմ ուզեր այսուհե-  
տեւ վշտացընել զքեղ. եւ կ'աղաչեմ

որ ինծի լոյս ու շնորհք տաս, որ զքեզ  
ամենայն զօրութեամբ կարող ըլլամ  
սիրել: Կը սիրեմ զքեզ, Աստուած իմ.  
բոլոր սրտէս եւ ամենայն զօրութեամբս  
կը սիրեմ զքեզ: Շնորհէ որ ասիկայ  
կարող ըլլամ ամէն ժամանակ ըսել՝  
թէ աս աշխարհքիս վրայ եւ թէ ի յաւի-  
տենականութեան: — Ամենասուրբ կոյս,  
սուրբ հրեշտակք, պաշտպան սուրբս,  
օգնեցէք ինծի որ իմ սիրելի Աստուածս  
կարող ըլլամ արժանապէս սիրել:

Ո՛ հովիւ բարի, ով ճշմարիտ հաց,  
Յիսուս, ողորմէ մեղի, հովուէ զմեզ.  
զքեզ սիրողներուն ինք զի՞նքդ արքայու-  
թեանդ մէջ ցուցուր:

---

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

#### ԱՐ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Կողան+ նոր շաբ Քրիս-նեան\*: “Մա-  
րեմայ չերմեռանդութիւնը շղթայ մըն

\* Սիրաք, Զ. 31:

է, կ'ըսէ Պելքարդոս, որուն միջնորդութեամբը յաւիտենական երանութեան կը հասնինք : Խնդրենք ու րեմն մեր սիրելի Մօրմէն, մեր բարեխօսէն, որ զմեզ սիրոյ կապանօք իրեն հետ անձկագոյնս կապէ եւ իր պաշտպանութեան դիմելու փոյթերնիս աւելցընէ :

Ով գթած, ով բարեգութ, ով քաղցր Կոյս Մարիամ :

---

## Դ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ա 2 ռանէ դառնաւութիւն անականութիւն նորա եւ ու ցաւս հապորդութիւն նորա \* : Աշխարհքիս բարեկամներն այնչափ հաճութիւն կը զգան իրարու ընկերութենէն, մինչեւ երբեմն նաեւ ամբողջ օրեր մէկտեղ կ'անցընեն : Իսկ Ս. Հաղորդութութեան առջեւը կենալէն՝ միայն զՅիսուս չսիրողը կը ձանձրանայ : Առըբերն աշխարհքիս վրայ՝ աս Խորհըր-

\* Խմանա . Ը . 16 :

գեան մէջ կը գտնէին իրենց արքայութիւնը, իրենց բովանդակ ուրախութիւնը։ Արբուհի թերեզիա մահուանէն ետքը՝ որ մ'իր կուսանքներէն մէկուն երեւնալով՝ ըստ։ “ Երքայութեան մէջ եւ երկրիս վրայ եղողները պէտք են սրբութեան եւ սիրոյ մէջ հաւասար ըլլալ. այն տարբերութեամբ միայն՝ որ մենք վայելմանց մէջ ենք, իսկ դուք վըշտաց մէջ. վասն զի ինչ որ մենք արքայութեան մէջ Աստուծոյ առջին կ'ընենք, նոյնը դուք այս աշխարհքիս վրայ Ա. Հաղորդութեան առջեւ կը պարտաւորիք ընելու։ Ուրեմն մեր արքայութիւնը աս աշխարհքիս վրայ ամենասուրբ Խորհուրդն է։”

Ով անարատ գառն, որ մեզի համար խաչափայտին վրայ մեռար, միտքդ բեր որ ես ալ ան հոգիներէն մէկն եմ՝ զոր քու այնչափ ցաւերովդ եւ այնպիսի գառն մահուամբդ փրկեցիր։ Շնորհք տուր որ բոլորովին քուկդ ըլլամ. եւ

թող մի տար որ երբեք զքեզ կորսնցը-  
նեմ, զքեզ՝ որ ինք զինքդ ինծի տուիր  
եւ առ իս ունեցած սաստիկ սիրոյդ հա-  
մար ամէն օր ալ կը պարգեւես, մեր  
խորաններուն վրայ ինք զինքդ զոհ մա-  
տուցանելով։ Յիսուս, տուր որ ամբող-  
ջապէս քուկդ ըլլամ։ Բոլորովին քեզի կը  
նուիրեմ ինք զինքս, որ ուզածիդ պէս  
զիս վարես։ Քեզի կ'ընծայեմ կամքս.  
կապէ զանիկայ քու սիրոյդ քաղցր կա-  
պովը, որ ասկէ ետեւ միշտ քու սուրբ  
կամացդ կատարեալ հպատակութիւն  
մատուցանէ։ Այսուհետեւ ալ իմ բաղ-  
ձանքներս կատարելու համար ապրիլ  
չեմ ուզեր, հապա միայն քու հաճու-  
թիւնդ եւ սուրբ կամքդ ընելու համար։  
Հանէ իզմէ, Տէր, ան ամէն բան որ քեզի  
անհաճոյ է. եւ շնորհք տուր որ ամե-  
նեւին ուրիշ բան չմտածեմ, բայց միայն  
քեզի հաճոյանալ։ Ուրիշ բանի չեմ բաղ-  
ձար, բայց եթէ ինչ բանի որ կ'ուզես  
թէ բաղձամ։ Բոլոր սրտէս կը սիրեմ

զքեղ, Փրկիչ իմ. կը սիրեմ՝ զքեղ,  
որովհետեւ դռն ալ ասոր կը բաղձաս.  
կը սիրեմ՝ զքեղ, ինչու որ դռն մի միայն  
սիրուելու արժանի ես: Շատ կը ցաւիմ  
որ այնչափ չեմ կրնար զքեղ սիրել, որ-  
չափ արժանի ես. պատրաստ եմ, Տէր  
իմ, քու սիրոյդ համար նաեւ մեռնե-  
լու: Ընդունէ սրտիս աս յօժարութիւնը  
եւ ասոր փոխարէն տուր որ զքեղ սի-  
րեմ:

Ո՞՛Հ հաճութիւն կամացն Աստուծոյ,  
ինք զենքս բոլորովին քեղի կը նուիրեմ:

---

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

#### Ա. Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ե՞ս Մայր Քեշեցի միւրայ\*, կըսէ մեղի  
Մարիամ. այսինքն այն սիրոյն՝ որ հո-  
գիներուն արտաքոյ կարդի գեղեցկու-  
թիւն կը շնորհէ: Սրբուհի Մարիամ  
Մադաղենացի գլացեան տեսաւ որ

\* Ճաղ. Ե.Դ. 24:

սուրբ կոյսն ոմանց առատութեամբ  
քաղցր ըմպելիք մը կը բաշխէր, որ  
աստուածային սէրը կը նշանակէ: Առ  
աստուածային սիրոյն շնորհքը միայն  
Մարեմայ բարեխօսութեամբը կընսնիք  
ընդունիլ. ուրեմն իրմէ խնդրենք:

Մայր իմ, յոյս իմ, տուր որ բոլորո-  
վին Յիսուսին ըլլամ:

## Ե. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

Յնձնուեկ եռեա ի-ը ուսուն եւ ուսու-  
րան շբոյն՝ ու-ը ունե շյուն ի-ը\*: Ճնձղու-  
կը մեր տներուն մէջ իր բնակութիւնը  
կը հաստատէ, նոյնպէս տատրակն իր  
բունին մէջ կը պահուըտի. բայց դուն,  
թագաւոր իմ եւ Աստուած իմ, դուն  
քու բնակարանդ մեր խորաններուն վրայ  
հաստատեցիր, որպէս զի մեր մէջը  
գտնուիս եւ միշտ մեզի հետ ըլլաս: Տէր,  
պէտք ենք ըսել թէ մարդիկներն այն-

\* Սաղմ. ԶՊ. 4:

պէս արտաքոյ կարգի կը սիրես, որ իբր  
թէ ընելիքդ չէիր գիտեր՝ որպէս զի  
անոնք ալ զքեզ սիրեն։ Եւ եթէ այս-  
պէս է, աս մէկ հատիկ շնորհքն ալ ըրէ,  
ով ամենասիրելի Յիսուս, որ մենք ալ  
վառուինք քու սիրովդ. վասն զի չի վայ-  
լեր որ թուլութեամբ սիրենք Աստուած  
մը, որ այնչափ բորբոքեալ եւ եռան-  
դուն սիրով զմեզ կը սիրէ։ Քեզի քաշէ  
զմեզ. քու սիրոյդ քաղցր կապանքովը  
կապէ զմեզ, եւ աղէկ ճանչցուր մեզի  
թէ ինչպիսի սաստիկ սիրոյ արժանի եօ,  
եւ թէ ինչ է քու սիրածդ եւ ինչ բանի  
չես հաճիր։

Ո՞՛չ անչափ փառաւորութիւն, ո՞՛չ  
անբաւ բարերարութիւն, դուն այնպէս  
սաստիկ կը սիրես զմարդիկ, եւ այնչափ  
ինչ ըրիր՝ որպէս զի իրենք ալ զքեզ  
սիրեն. եւ ինչպէս կընայ ըլլալ՝ որ աս  
ամեն բան տեսնելէն ետեւ՝ այնչափ  
քիչերն զքեզ սիրեն։ Զէ. ալ այսու-  
հետեւ չեմ ուզեր ան տառապեալ եւ

թշուառ մարդիկներէն ըլլալ, որոնց մէջ  
ատեն մը կը գտնուէի: Տէր, հաստա-  
տութեամբ միտքս գրի որ ասկէ ետեւ  
ամենայն զօրութեամբ սիրեմ զքեղ եւ  
քեղմէ ի զատ ամենեւին բան չսիրեմ:  
Դուն արժանի ես ասոր, դուն զիս ասոր  
կը յորդորես. ես ալ քու բաղձանքդ  
կատարել կ'ուղեմ: Ով Աստուած սրտի  
իմց, շնորհք տուր որ կատարելապէս  
կարող ըլլամ քու ցանկութիւնդ կա-  
տարել: Աս կը խնդրեմ քեղմէ, քու  
չարչարանացդ արդեանցը համար, եւ  
կը յուսամ որ խնդրուածքս կը կատա-  
րես: Երկրաւոր բարութիւններն անոնց  
տուր՝ որ քեղմէ կը խնդրեն. ես ուրիշ  
բանի չեմ բաղձար, ուրիշ բան չեմ  
փնտուեր՝ բայց եթէ ամենամեծ գանձը՝  
քու սէրդ: Կը սիրեմ զքեղ, Յիսուս  
իմ, կը սիրեմ զքեղ, ով անբաւ բա-  
րութիւն: Դուն միայն ես իմ անգին  
գանձս, բոլոր ցնծութիւնս, բովանդակ  
սէրս:

Յի՞սուս, դուն ինք զինքդ բոլորովին  
ինձի տուիր. ես ալ ինք զինքս քեզի  
ողջակել կը մատուցանեմ:



## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ով սիրելի Մայր իմ Մարիամ,  
Յափշտակիչ սրտից ես դու. քու գե-  
ղեցկութեամբդ եւ բարութեամբդ ա-  
մենուն սիրտը կը գողնաս: Գողցիր, գող-  
ցիր՝ կ'աղաչեմ, հանէ իզմէ սիրտս ու  
կամքս. ողջ բովանդակ քեզի կը նուի-  
րեմ երկուքն ալ. որպէս զի դուն քու  
սրտիդ եւ կամացդ հետ Աստուծոյ մա-  
տուցանես:

Ամենասիրելի Մայր, մեզի համար ա-  
շաչ:



## Զ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Այս գանցն յեր է, անդ եւ սէրու յեր  
եղացին\*: Մարդ բոլոր իր մտածմունք-  
ներն, ամէն իր բաղձանքները, կ'ըսէ  
Քրիստոս, հօն կ'ուղղէ՛ ուր գիտէ թէ իր  
գանձը կը գտնուի: Ասոր Համար սուր-  
բերն՝ որ բան մը այնպէս մեծ չէին Հա-  
մարեր եւ ոչ ինչ այնպէս կը սիրէին  
ինչպէս զՅիսուս, իրենց բոլոր մտած-  
մունքն ամենասուրբ Հաղորդութեան  
վրայ էր: Ամենասիրելի Յիսուս իմ, որ  
իմ սիրոյս Համար գիշերցորեկ աս սուրբ  
տապանակին մէջ փակուած կեցեր ես,  
կ'աղաչեմ սիրտս բոլորովին քեզի քաշէ,  
որ ասկէ ետեւ միայն քու վրադ մտա-  
ծեմ, քեզմէ զատ բան չսիրեմ, բան  
չփնտուեմ: Տուր ինծի աս շնորհքը դառն  
շարշարանացդ արդեանցը Համար, որուն  
զօրութեանը վստահանալով՝ կը խըն-  
դրեմ քեզմէ:

Սիրելի Յիսուս իմ, Հաղորդութեան  
խորհրդոյն մէջ իմ սիրոյս համար ծած-  
կուած Փրկիչ, ինք զինքդ մարդկան սի-  
րելի ընելու՝ իրենց սիրտը քեզի քաշե-  
լու հնարքներդ ինչափ գեղեցիկ, որ-  
չափ հաճոյական են: Դուն, Որդի Աս-  
տուծոյ, մեզի համար մարդ ըլլալն ու  
մեռնիլը բաւական չհամարեցար, այլ  
նաեւ աս նուիրական Խորհուրդը հաս-  
տատեցիր, որպէս զի ասով մեզի ընկեր  
ըլլաս, կերակուրնիս ըլլաս, եւ զանձնդ  
մեր քովը յաւիտենական փրկութեան  
գրաւ գնես: Երբեմն տղու կերպարանք  
առած՝ ախոռի մը մէջ ինք զինքդ մեզի  
կը ցուցընես. Երբեմն աղքատի պէս՝  
հիւսնութեան խանութին մէջ նուաստ  
արուեստի կը զբաղիս. Երբեմն իրեւ  
անօրէն յանցաւոր՝ խաչին վրայ, դար-  
ձեալ՝ հացի կերպարանաց տակ մեր սե-  
զաններուն վրայ կը կենաս: Ուրիշ բան  
մնաց որ ըրած չըլլաս, միայն մեզմէ սի-  
րուելու համար: Ո՛չ անչափս սիրուե-

լու Աստուած, Երբ դայ պիտի ժամանակ մը, որ այնչափ սիրոյդ փոխարէն՝ սկսիմ ճշմարտապէս զքեղ սիրել: Տէր իմ, ասկէ ետեւ անոր համար միայն կուզեմ ապրիլ, որ զքեղ՝ միայն զքեղ սիրեմ: Վասն զի ի՞նչ օգուտ կ'ընէ ինձի կեանքս՝ եթէ զքեղ սիրելու շգործածեմ, եթէ չսպառեմ քեղի հաճոյ ըլլալու, ուր դուն բոլոր կեանքդ ինձի համար զոհեցիր: Եւ քեղմէ ուրիշ ի՞նչ բան կրնամ սիրել, որ բոլորովին գեղեցիկ, կատարեալ բարութիւն, միայն բարի, բոլորովին սուրբ, ամենեւին ցանկալի եւ նոյն իսկ սէր ես: Այս, ապրիմ՝ այլ միայն զքեղ սիրելու համար: Տուր որ քեղի ունեցած սիրոյս զօրութեամբը սիրտս ոչնչանայ՝ սպառի: Շնորհէ որ երբ քու անչափ սիրոյդ եւ մեզի ունեցած անսպառ գթոյդ վրայ մտածեմ, եւ կամ մնրոյ, խաչի եւ Ա. Հաղորդութեան խորհրդոյն անունները լսեմ, վառիմ քեղի համար մեծամեծ բաներ գոր-

ծելու, որ մեղի համար այնպէս խելքէ  
մտքէ վեր բաներ ըսիր:

Աստուած իմ, տուր ինծի շնորհք որ  
չմեռած քեղի համար գործեմ:

---

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

#### ԱՌ Ս. ԿՈՅԱՆ ՄԱՐԻԱՄ

Իբրեւ յիւնէ կայելու է դաշտէ \*: Ես  
եմ այն գեղեցիկ ձիթենին, կ'ըսէ Մա-  
րիամ, ուսկից ողորմութեան ձեթն ա-  
ռատ կը հոսէ: Դաշտի վրայ կը կենամ,  
որպէս զի ամենքը զիս տեսնեն, իմ  
պաշտպանութեանս ապաւինին: Յիշէ,  
ով գթած կոյս, յիշէ որ երբեք լսուած  
չէ՝ թէ մէկը քու պաշտպանութեանդ  
ապաւինած ըլլայ, եւ գուն իրեն օգ-  
նութեան հասած չըլլաս:

Ո՛վ Մայր ողորմութեան, ընդունէ  
ինծի՝ միշտ քեղի ապաւինելու շնորհք:

\* Ակրոպ. ՏԴ. 19:

---

## Ե. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Աշաւասիկ է ու ընդ յեղ եմ զամենայն  
աւուրս մինչեւ է կարարած աշխարհներ : Մեր  
սիրելի ու գթած Հովիւր, որ իր բովան-  
դակ կեանքն իւր ոչխարներուն համար  
զոհեց, նաեւ մահուանէն ետեւ չու-  
զեց մեզմէ բաժնուիլ: Աւասիկ, կ'ըսէ,  
ոչխարք իմ սիրելիք, ես միշտ ձեզի հետ  
եմ. ձեզի համար աշխարհքիս վրայ Ա.  
Հաղորդութեան մէջ մնացի: Հոն զիս  
ամէն ժամանակ կրնաք գտնել. միշտ  
պատրաստ եմ ձեզի օգնելու, իմ մօ-  
տաւորութեամբս զձեղ միսիթարելու,  
մինչեւ ձեր կենաց վերջին կէտը, մին-  
չեւ աշխարհքիս կատարածը զձեղ չեմ  
թողուր: “Մեր աստուածային Փեսան,  
կ'ըսէ, Ա. Պետրոս. Ալգանդարեան, չու-  
զեց որ իր սիրելի Հարսն իր հեռաւո-  
րութեան ժամանակն առանձին մնայ,  
եւ այս պատճառիս համար ամենասուրբ

\* Մասմ. Ել. 20:

Խորհուրդը հաստատեց, որուն մէջ ինք  
անձամբ կը գտնուի :

Ո՛վ մարդասէր Տէր եւ ամենասիրելի  
Փրկիչ, աւասիկ հոս աս խորանին առ-  
ջին քեզի այցելութիւն ընելու եկած  
եմ: Բայց պէտք եմ խոստովանիլ՝ որ  
դուն անհամեմատ սիրով ինծի փոխա-  
րէն կը հատուցանես՝ երբ Ա. Հաղոր-  
դութեամբ սիրոս կու գաս: Ան ժա-  
մանակ չէ թէ միայն մարմնաւորապէս  
իմ առջիս կը կենաս, այլ նաեւ իմ կե-  
րակուրս կ'ըլլաս, անձուկ միաւորու-  
թեամբ ինծի հետ կը միանաս, զքեզ  
բոլորովին ինծի կու տաս. այնպէս որ  
Ճշմարտապէս կրնամ զըսւցել թէ Յի-  
սուս բոլորովին իմն եղաւ: Եւ որովհե-  
տեւ դուն ինք զինքդ ինծի կը պար-  
գեւես, կը վայլէ որ ես ալ ինք զինքս  
բոլորովին քեզինուիրեմ: Բայց ո՛չ, ես  
չնչին որդ մըն եմ, իսկ դուն անսահման  
Աստուած: Ո՛վ Աստուած սիրոյ, ով  
սրտիս Ճշմարիտ սէրը, երբ պիտի գայ ան

ժամանակն՝ որ կարող ըլլամ տեսնել  
 զիս բոլորովին քուկդ եւ զքեզ բոլո-  
 րովին իմն՝ չէ թէ խօսքով այլ արդեամբ:  
 Դուն կրնաս աս ընել, ինձի համար թա-  
 փած արեանդ զօրութեամբը: Զօրացուր  
 յիս աս յոյսը, եւ տուր որ յառաջ քան  
 մեռնիլս՝ բոլորովին քուկդ եւ ոչինչ  
 եղանակաւ իմն ըլլամ: Դուն, Տէր,  
 ամէնուն աղօթիցը կը լսես. լսէ ուրեմն  
 այսօր տառապեալ անձի մ'աղօթքն ալ,  
 որ զքեզ ճշմարտապէս սիրել կը բաղ-  
 ձայ: Բովանդակ զօրութեամբս զքեզ  
 սիրել կ'ուզեմ. ամէն ձեռքէս եկածն ի  
 գործ դնել կը ցանկամ՝ որ քու բաղ-  
 ձանքդ կատարեմ: Ամէն բանի մէջ կը  
 հնազանդիմ քեզի՝ ինչպէս եւ երբ որ  
 կ'ուզես, առանց անձին շահը մէջը խառ-  
 նելու, առանց միսիթարութիւն գտնե-  
 լու եւ առանց վարձքի մը: Կ'ուզեմ  
 քեզի ծառայել՝ միայն ի սիրոյ, միայն  
 քեզի հաճոյ ըլլալու՝ զքեզ գոհ ընելու  
 համար, որ այնպէս վառեալ ես սիրովս:

Ով քաղցր Որդի Մարիամու, սիրելի  
Որդի յաւիտենական Հօր, առ ազա-  
տութիւնս, վերցուր կեանքս, առ իզմէ  
ինչ որ եմ եւ ինչ որ ունիմ. եւ ասոր  
փոխարէն՝ տուր զքեզ ինծի: Կը սիրեմ  
զքեզ, զքեզ միայն կը փնտուեմ, քեզի  
միայն հաճոյ ըլլալ կը բաղձամ, զքեզ  
կ'ուզեմ, ով Աստուած սրաի իմզ:

Յիսուս, քուկդ ըրէ զիս բոլորովին:



### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

#### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ով սիրելի Մայր, բոլոր Եկեղեցին՝  
Մեր յոյնը կ'անուանէ զքեզ: Այսպէս  
կ'ողջունեն զքեզ ամէն հաւատացեալք:  
Արդ որովհետեւ ամենուն յոյսն ես,  
եղիր իմ յոյսս ալ: Գիտեմ՝ որ գուն  
ամենուն յուսոյն պատճառն ես. եւ  
յուսահատութեան մէջ եղողն ալ յոյսը  
վրադ կը դնէ: Ուստի ես ալ կ'ըսեմ. ով  
կոյս Մարիամ, որովհետեւ գուն յու-

սահատութեան մէջ ինկողներն ալ կ'ա-  
զատես, բոլոր յոյսս քու վրադ պէտք  
է որ գնեմ:

Մարիամ, Մայր Աստուծոյ, աղաչէ  
Յիսուսին ինծի համար:



## Ը. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

**Ա**ՅԱՅՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴՍՆ այց-  
ելութեան եկող հոգիներուն՝ Յիսուս  
ան խօսքերը կը զրուցէ, զոր երբեմն  
Փեսան իր սիրելի Հարսին կըսէր. Առեւ,  
Քունա, բարեկամ իմ, գեղշցիկ իմ եւ եկ\*:  
Ո՛վ անձն, որ ինծի այցելութեան կու-  
գաս, քաջալերուէ, ոտք ելիր, թող  
խեղճ վիճակդ՝ որուն մէջ ինկեր ես: Կը  
տեսնես զիս. Հոս անոր համար միայն  
կեցած եմ՝ որ զքեղ շնորհօք եւ բա-  
րութիւններով հարստացընեմ: Աճա-  
պարէ, մօտեցիր, մի վախնար մեծվայ-

\* ԵՐԳ. ԿՐԴ. Բ. 13:

ելչութենէս, որովհետեւ հօս բոլորովին  
խոնարհած այս Խորհրդեան տակ ծած-  
կուած եմ անո՞ր համար միայն՝ որ վախդ  
փարատեմ, սրտիդ տագնապը ցրուեմ  
եւ զքեղ աւելի եւս ինծի մերձենալու  
խրախուսեմ։ Քարեկամ, այսուհետեւ  
ալ թշնամի չես, այլ ընկերս. որով-  
հետեւ դուն զիս կը սիրես, ես ալ  
զքեղ։ Գեղեցիկդ իմ, շնորհքս զքեղ  
գեղեցկացուց. Եկուր Եկուր փաթթուէ  
ինծի. ուղածդ խնդրէ՝ բայց լի հաւա-  
տով եւ վստահութեամբ։ Շատ աղէկ  
կ'ըսէ Ս. Թերեզիա. «Փառաց թագաւ-  
որն անոր համար իր փառաւորութիւնը  
Ս. Խորհրդեան մէջ հացի կերպա-  
րանքի տակ ծածկեց, որպէս զի զմեղ  
խրախուսէ համարձակութեամբ իր աս-  
տուածային սրտին մերձենալու»։ Մեր-  
ձենանք ուրեմն Յիսուսի աւելի վստա-  
հութեամբ. ոգեխառնինք իրեն հետ եւ  
իրմէ շնորհք խնդրենք։

Ի՞նչափ պէտք եմ ուրախանալ, ով

բան յաւիտենական, որ ինծի համար  
մարդ եղար եւ ամենասուրբ Խորհրդեան  
մէջ ինք զինքդ ինծի նուիրեցիր: Որչափ  
կը պարտաւորիմ ուրախ ըլլալու՝ երբ  
ինք զինքս քու առջիդ կը տեսնեմ, որ  
Աստուած փառաց եւ անեզը սէր ես.  
Եւ մեզի անշաώփ սէր ու գութ կը ցու-  
ցընես: Ո՛վ հոգիք, որ զԱստուած կը  
սիրէք, ուր ալ գտնուիք, թէ երկինք՝  
թէ երկրիս վրայ, ինծի համար ալ զինք  
սիրեցէք: Մարիամ, սիրելի Մայր, օգնէ  
ինծի որ զինք շատ սիրեմ: Իսկ գուն,  
ամենասիրելի Փրկիչ իմ, եղիր իմ սի-  
րոյս առարկան. իշխէ կամացս վրայ եւ  
բոլորովին քուկդ ըսէ զիս: Քեզի կը  
նուիրեմ բովանդակ միտքս՝ որպէս զի  
այսուհետեւ միշտ քու բարութիւնդ  
մտածէ. Քեզի կը ընծայեմ մարմինս՝ որ-  
պէս զի զքեզ սիրելու ինծի օգնէ.  
Քեզի կը նուիրեմ սիրտս՝ որ բոլորովին  
քուկդ ըլլայ: Աը բաղձայի, սիրելի Յի-  
սուս, որ ամէն մարդ ըստ արժանւոյն

Ճանչնար մեզի ցուցուցած սաստիկ սէրդ  
եւ միայն ապրէր զքեղ սիրելու՝ քեզի  
հաճոյ ըլլալու համար, ինչպէս դուն կը  
բաղձաս ու արժանի ես: Գոնէ շնորհք  
տուր ինծի, որ երբեք չմոռնամ քու  
արտաքոյ կարգի սէրդ: Ասօրւընէ բոլոր  
իմ կարողութիւններս կ'ուզեմ գործա-  
ծել միայն քեզի հաճոյ ըլլալու: Կ'առա-  
ջադրեմ ան ամէն բաներէն ետ կենալ,  
որ ամենափոքր եղանակաւ մ'ալ քեզի  
անհաճոյ են, թէպէտ եւ ասոր համար  
ամէն ունեցածս՝ նաեւ կեանքս ալ հարկ  
ըլլայ կորսնցընել: Ինք զինքս երջանիկ  
կը համարէի, եթէ ամէն բան կորսըն-  
ցընէի, որպէս զի զքեղ վաստըկիմ, ով  
Աստուած իմ, սէր իմ, բարութիւն իմ:

Յիսուս իմ, սէր իմ, գրաւէ զիս բո-  
լորովին, ստացիր զիս, իշխէ, տիրէ իմ  
վրաս:


## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ու մանուկ իցեւ, եկեղեւ առ իս\*: Մարիամ, որ ամէն մայրերէն աւելի գթած մայր է, մօր կարօտութիւն ունեցողներն իրեն կը կանչէ, որ իրեն իբրեւ ամենագթած մօր ապաւինին։ Հ. Նիերեմբերգ կ'ըսէ. “Ամէն մարց՝ իրենց որդւոց ունեցած սէրն ու գութը, Մարեմայ սիրոյն քով՝ զոր իր պաշտպանութեան ապաւինողներուն կը ցուցընէ, շուք եւ ստուեր է միայն”։ Մայր իմ, Մայր իմ հոգւոյս, Մայր՝ որ կը սիրես զիս, եւ Աստուծմէ ետքը քան զամենեսին իմ փրկութեանս կը ցանկաս, ցուցուր որ մայրս ես։

Սիրելի Մայր, օգնէ ինձի որ միշտ քու վրադ մտածեմ։

\* Առակ. թէ. 4:



## Թ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ԱՌՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅԱՅՄՆՈՒԹԵԱՆ  
մէջ կ'ըսէ. Տեսէ (Ղ.+) Ն. Յան Ուրդույ ճար-  
դոյ՝ ածեալ քօրի սովորվեն առ սովեամբու\*:  
Յիսուս Հաղորդութեան Խորհրդեան  
մէջ ներկայ է, կուրծքը լի ամեն տեսակ  
շնորհքներով, զոր իր ողորմութեամբը  
մեզի պարգեւելու պատրաստ է: Եւ  
ինչպէս սիրալիր մայր մը կուրծքը զաւ-  
կին կը մատուցանէ, այսպէս ալ Յիսուս՝  
Ա. Խորհրդոյն մէջէն մեզի կը գոչէ.  
Եկայ+ ուիւնիւ+ Եւ յադեցարու+ ի սովեանց  
մոխնարունեան իմայ\*\*: Հայրն Ալուարէզ  
զՅիսուս ի Ա. Հաղորդութեան տեսաւ,  
որ իբրեւ թէ կը փնտուէր թէ որուն  
պարգեւէ իր շնորհքները, Ա. Կատա-  
րինէ Սիենացւոյն վրայ կը պատմուի թէ  
Ա. Հաղորդութեան այնպէս ախորժա-  
կով կը մերձենար, ինչպէս կաթնակեր  
տղան կը մօտենայ իր մօրը ստեանցը:

\* Յայտն. Ա. 13: — \*\* Եսայ. ԿԶ. 12:

Ո՞վ յաւիտենական Հօր ցանկալի  
Միածինը, կը տեսնեմ որ ամէն արա-  
րածներէն աւելի սիրուելու արժանի ես:  
Կը բաղձայի զքեզ այնչափ սիրել, որ-  
չափ հոգի մը աս աշխարհքիս վրայ  
կրնայ զքեզ սիրել: Կը խոստովանիմ  
թէ ես՝ իբրեւ մատնիչ՝ արժանի չեմ  
զքեզ սիրելու եւ ոչ ալ քեզի մօտե-  
նալու, ինչպէս որ հիմայ եկեղեցւոյս  
մէջ առջեւդ կը կենամ. բայց ան ալ  
գիտեմ թէ իզմէ սէր կ'ուզես՝ ըսելով.  
Տուր չէն, որդեռէն, զնէրո +\*: Գիտեմ որ  
կեանքս անոր համար միայն պահեցիր  
եւ զիս դժոխքին անդնդոցը մէջ չնե-  
տեցիր, որ բոլոր սրտէս սիրեմ զքեզ:  
Աւասիկ Աստուած իմ, պատրաստ եմ  
քու հաճոյքդ կատարելու: Բոլորովին  
քեզի կը նուիրեմ ինք զինքս: Կը սիրեմ  
զքեզ, Տէր, որ մի միայն բարութիւն  
եւ բոլորովին սէր ես: Թագաւոր եւ  
Տէր կընտրեմ զքեզ իմ ողորմելի եւ

աղքատ սրտիս։ Դուն ասոր կը բաղձաս։  
ես ալ սիրտս քեզի տալու կը փափա-  
քիմ, թէեւ ցուրտ, թէեւ շատ խեղճ  
ու ողորմելի ըլլայ. բայց եթէ ընդունիս,  
կը նորոգես ալ։ “Նորոգէ զիս Տէր, նո-  
րոգէ. ալ չեմ ուզեր առաջուան կենացս  
մէջ ըրածիս պէս անշնորհակալու եւ  
ցուրտ կեանք անցընել, որ ինծի ցուցու-  
ցած անսպառ սիրոյ արժանի սիրոյդ դի-  
մաց պաղութեամբ վարուեցայ։ Ընորհք  
տուր որ աս օրւընէ սկսեալ՝ անցած կե-  
նացս ամէն պակասութիւններուն տեղը  
լեցընեմ եռանդուն եւ գործունեայ սի-  
րովս։

Աստուած իմ, Աստուած իմ, զքեզ  
սիրել կը բաղձամ. այո՛, կը բաղձամ  
միայն զքեզ սիրել։




## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՉԱՆ ՄԱՐԻԱՄ

Մարիամ բոլորովին եր որդւցն կը  
նմանի: Եւ որովհետեւ Մայր ողորմու-  
թեան է, այն ատեն սաստիկ շատ կ'ու-  
րախանայ՝ երբ տառապեալ եւ ամենուն  
երեսէն ձգուածներուն օգնութեան  
կրնայ հասնիլ եւ զիրենք մխիթարել:  
Մարիամ աւելի կը բաղձայ մեղաւորաց  
բարիք ընելու՝ իրենց շնորհք տալու,  
քան թէ անոնք իրմէն ընդունելու:

Յոյս մեր, ողջլեր:



### Ժ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

“**Ա**վ անմիտ որդիք աշխարհիս,  
կը գոչէ Ս. Օգոստինոս, ո՛չ տառա-  
պեալք, ձեր սիրտը հանգչեցընելու  
համար ո՞ւր կ'երթաք: Յիսուսին եկէք,  
ինչու որ ինք միայն ձեր բաղձացածը  
կրնայ տալ, Ո՛վ անձն իմ, անմիտ

Մ' ըլլար դուն ալ . զԱստուած միայն խըն-  
դրէ՝ մեկ հատիկ բարութիւնը , որ ամէն  
բարութիւնները կը բովանդակէ : Եւ  
եթէ զինք շուտով գտնել կ'ուզես , ա-  
հաւասիկ քեզի մօտ է . ըսէ իրեն բաղ-  
ձացածդ , որովհետեւ ինք անոր համար  
միայն աս նուիրական տապանակին մէջ  
կեցեր է , որպէս զի աղաչանացդ լսէ :  
Ա . Թերեզիա կ'ըսէ թէ Ամէն մարդուն  
թոյլ տրուած չէ թագաւորին հետ ան-  
ձամբ խօսակցիլ . մեծ բան կը համարինք՝  
եթէ խնդրուածքնիս կարող ըլլանք եր-  
րորդի մը ձեռքով անոր հասցընելու :  
Բայց քեզի հետ խօսելու համար , ով  
թագաւոր փառաց , երրորդի մը հար-  
կաւորութիւն չունինք . ինչու որ դուն  
պատրաստ ես Ա . Խորհրդոյն մէջ ամե-  
նուն խնդրուածքը յօժարութեամբ  
լսելու : Զքեզ խնդրողն ամէն ժամա-  
նակ հոն կրնայ գտնել , եւ որչափ որ  
կ'ուզէ՝ կրնայ քեզի հետ խօսակցիլ ու  
հարկաւոր եղածը խնդրել : Թագաւոր-

Ները տարւոյն մէջ հաղիւ քանի մ'ան-  
դամ մարդուն թող կու տան իրենց  
առջեւն ելլելու, ան ալ որչափ աշխա-  
տութեամբ կրնայ մարդ ձեռք բերել:  
Բայց քեզի, ով Աստուած Հզօր, թա-  
գաւոր հրեշտակաց եւ մարդկան, քեզի  
ամէն ժամանակ կրնանք այցելութիւն  
ընել, որչափ եւ երբ կը բաղձանք. գի-  
շեր ցորեկ պատրաստ ես քեզի այցե-  
լութիւն ընդողներն ընդունելու:

Ո՞՛չ ցանկալի Յիսուս, գուն՝ կամ Ա.  
Հաղորդութեամբ ինք զինքդ մեզի կը  
պարգեւես, կամ մեր սեղաններուն  
վրայ կը սպասես, եւ սիրոյդ քաղցր զօ-  
րութեամբը քեզի կը ձգես սրտերը,  
որոնք սիրոյդ կրակովը վառուելով եւ  
անսահման բարութեանդ վրայ դարմա-  
նալով, աւելի եւս եռանգուն սիրով  
կը բորբոքին՝ միշտ հաճոյքդ ընելու եւ  
անդադար վրադ մտածելու: Աղէ, քեզի  
քաշէ աս խեղճ սիրտս՝ որ ճշմարտիւ  
զքեղ սիրել եւ իր բովանդակ կեանքը

քու ծառայութեանդ մէջ անցընել կը  
բաղձայ: Քու բարերար ձեռքդ կը դնեմ  
յոյսս, բաղձանքներս, հոգիս, մարմինս,  
մէկ խօսքով՝ ամէն ունեցածս: Ընդու-  
նէ, Տէր իմ, աս չնչին նուէրն, եւ քեզի  
հաճոյ եղածին պէս կարդագրէ զիս:

Չեմ ուզեր այսուհետեւ, ով սէր  
իմ, չեմ ուզեր քու հրամանացդ, քու  
կարդագրութեանցդ դէմ տրտնջել.  
Վասն զի գիտեմ որ ամէնն ալ սիրալիր  
սրտէդ կը բղխեն եւ իմ աղէկութեանս  
համար են: Քու աստուածային կամացդ՝  
հիմայ ու միշտ կատարեալ հպատակու-  
թիւն մատուցանելու համար՝ ինծի բաւ-  
ական է գիտնալ միայն՝ որ դուն այսպէս  
կը հաճիս, այսպէս կ'ուզես: Ըսէ ինչ  
որ կ'ուզես եւ ինչպէս որ կ'ուզես: Կամքս  
կը միացընեմ քուկինիդ հետ, որ բո-  
լորովին սուրբ, բարի, կատարեալ եւ  
ամենայն սիրոյ արժանի է: Ով սուրբ  
կամք Աստուծոյ իմոյ, ինչպէս սիրելի  
ես. կը բաղձամ միշտ քեզի հետ սեր-

տիւ միանալ, քեզի հետ ապրիլ ու քեզի  
հետ մեռնիլ: Կը ցանկայի որ քու բաղ-  
ձանքդ՝ իմ բաղձանքս, քու կամքդ՝ իմ  
կամքս, քու յօժարութիւններդ՝ իմիւ-  
ներս ըլլային: Աստուած իմ, Աստուած  
իմ, օգնէ ինծի. շնորհք տուր որ աս  
օրւընէ՝ միայն քեզի, միայն քու ուղածդ  
ընելու համար ապրիմ, եւ միայն քու  
կամքդ կատարեմ: Շնորհք տուր, որ  
ինչպէս դուն ինծի համար մեռար եւ  
իմ կերակուրս ըլլալ հաճեցար, ես ալ  
նմանապէս քեզի համար մեռնիմ, քեզի  
համար սպառիմ, ոչնչանամ: Անիծեալ  
ըլլայ ան ժամանակն՝ որ զքեղ շսիրեցի,  
որ իմ սեպհական կամքս կատարեցի:  
Քոլոր սրտէս կը սիրեմ զքեղ, եւ բո-  
լորովին քեզի կը նուիրեմ իմ անձս:  
Ո՛վ կամք Աստուածոյ իմոյ, դուն ես  
սրտիս միակ սէրը:



## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Մեծունիւն եւ գործ է մաս են, կ'ըսէ  
երկնից թագուհին, չէ բաշխեցէց սէրելւաց  
իմոց ուժունիւն\*: Ուրեմն սիրենք զՄա-  
րիամ, եթէ շնորհօք հարստանալ կը  
բաղձանք: Աստուծոյ ծառային մէկը  
զՄարիամ՝ Շնորհաց գանձապետ կ'ա-  
նուանէ: Երանելի է այն մարդն՝ որ լի  
վստահութեամբ եւ կատարեալ սիրով՝  
աս գանձապետին կը դիմէ: Մայր իմ,  
յոյս իմ, դուն կրնաս զիս սուրբ ընել-  
անոր համար բոլոր յոյսս, բովանդակ  
վստահութիւնս քու վրադ կը դնեմ:  
Ընդունէ ինծի շնորհք, որ կեանքս սըր-  
բութեամբ անցընելով՝ արժանի ըլլամ՝  
մասնակցելու այն երանութեան՝ զոր  
դուն երկինքը կը վայելես:

Ամենասիրելի Մայր, աղաչէ ինծի  
համար:

\* Առակ. լ. 18:

## ԺԱ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

“Գրութաններ, կ'ըսէ Ա. Թերեզիա, որ մեր սիրելի Հովուէն՝ Յիսուսէն չեռանանք, որովհետեւ իրենց Հովուին աւելի մօտ եղող ոչխարները բնականապէս աւելի կը Հոգացուին եւ իրենց վրայ աւելի զգուշութիւն կ'ըլլուի. եւ երբեմն նոյն իսկ Հովուին կերածէն մաս մը կ'ընդունին։ Երբ որ Հովիւը կը քնանայ, գառնն իրմէն չի հեռանար, մինչեւ որ կամ Հովիւն արթնայ եւ կամ ինքն իսկ գառնը զինք արթընցընէ, եւ ան ժամանակ Հովուէն նորանոր գդուանք կ'ընդունի։

Ո՞վ Ա. Հաղորդութեան մէջ ծածկուած Յիսուս, ահա բոլորովին քեզի մօտենալով՝ ուրիշ շնորհք չեմ Խնդրեր քեզմէ, բայց եթէ եռանդ եւ քուծառայութեանդ մէջ յարատեւութիւն։ Շնորհակալ կ'ըլլամ քեզի, ով սուրբ հաւատք, որ կը սովորեցընես եւ կ'ա-

պահովցընես զիս, որ աս Ս. Խորհուրդը՝  
 աս Երկնաւոր Հացը՝ սովորական Հաց  
 չէ, Հապա Քրիստոս Տէրն մեր է՝ իր աս-  
 տուածութեամբն ու մարդկութեամբը:  
 Աստուած իմ, Հաստատութեամբ այս-  
 պէս կը Հաւատամ. եւ թէպէտ մար-  
 մնաւոր աչօք չեմ տեսներ, սակայն  
 Հաւատոյ լուսովն աս Նշխարքին տակ  
 զքեղ իբրեւ Երկնից եւ Երկրի Տէրն ու  
 աշխարհքիս Փրկիչը կը ճանչնամ: Ով  
 քաղցր Յիսուս, ինչպէս որ յոյսս, փըր-  
 կութիւնս, զօրութիւնս եւ միակ միսի-  
 թարութիւնս ես, անանկ ալ կը բաղձամ  
 որ միակ սէրս, մտածութեանցս ու բաղ-  
 ձանացս միակ նիւթն ըլլաս: Ինծի աւելի  
 ուրախութիւն կը պատճառէ քու ան-  
 չափ Երանութիւնդ՝ քան ան բարիքները  
 զոր աս աշխարհքիս վըայ եւ նաեւ անդիի  
 աշխարհք կրնամ վայելել: Բան մը ինծի  
 այնչափ Հածոյ չէ, սիրելի Փրկիչ իմ,  
 որչափ քու կատարեալ Երջանկութիւնդ,  
 Երանութեանդ անսպառական ըլլալը:

Տիրէ, իշխէ, Տէր, իմ սրտիս վրայ, զոր  
բոլորովին քեզի կը նուիրեմ։ Կամքս,  
միտքս, հոգւցս ամէն կարողութիւնները  
քու սիրոյդ գերիներն ըլլան։ Այսու-  
հետեւ իրենց ծառայութիւնն ինձի անոր  
համար միայն մատուցանեն՝ որ զքեզ  
կատարելապէս կարող ըլլամ ճանչնալ  
եւ փառքդ աւելցընել։ — Ասանկ էր  
քու կեանքդ աս աշխարհիս վրայ, ով  
Մայր Յիսուսի իմոյ՝ ամենասուրբ կցս։  
Ինձի ալ քու սիրելի Որդիեդ շնորհք  
ընդունէ, որ ասկից վերջը քեզի նման  
կեանք անցընեմ, ինք զինքս բոլորովին  
Աստուծոյ նուիրելով, եւ կատարելա-  
պէս իրեն ըլլալէն զատ՝ երանութիւն  
չփնտռելով։

Յիսուս իմ, զիս բովանդակ քուկդ  
ըրէ. դուն ալ բոլորովին իմս եղիր։

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### Ա. ԿՈՅԱՆ ՄԱՐԻԱՄ

Երանեալ է այս՝ որ ունիցք առ դընան-  
չմ հանաղաղ, եւ պահիցէ զսեամս մոից է-  
մաց\*: Երանելի է ան մարդը՝ որ Մարեմայ  
ողորմութեան դրան առջեւ՝ հարուստ-  
ներու դրանց առջին կեցող ու ողոր-  
մութիւն խնդրող մուրացկաններու պէս՝  
շնորհք կը խնդրէ: Բայց աւելի եւս  
երանելի է անիկայ՝ որ Մարեմայ վրայ  
տեսած առաքինութեանցը նմանիլ կը  
ջանայ, մանաւանդ ողջախոհութեանն եւ  
խոնարհութեանը: Ո՛վ ամենախոնարհ  
եւ ամենամաքուր կըս, ընդունէ ինծի  
ամէնէն առաջ այս երկու գլխաւոր ա-  
ռաքինութեանցդ հետեւելու շնորհք,  
որպէս զի արժանի ըլլամ միշտ քու  
առատ շնորհաբաշխութեանցդ:

Յշս իմ Մարիամ, ինծի օգնութեան  
հասիր:

\* Առակ. ը. 34:

## ԺԲ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒՄԾ սէր է, եւ որ իսյ է սէրն՝  
բնակեալ է յԱստումած, եւ Աստումած ի նմա  
բնակէ\*: ԶՅԻՍՈւՍ սիրող հոգին ի ՅԻ-  
ՍՈւՍ միայն կը բնակի եւ ՅԻՍՈՒՍ ի նմա:  
Որ սէրն պա, կ'ըսէ Փրկիչը, սէրեացէ է  
Հօրէ իմէ, եւ առ նա եկեացու+ եւ օնեանո  
առ նմա արացու+\*\*: ԵՐԲ Ս. Փիլիպպոս  
ԿԵՐԵԹՆ վերջին թոշակը պիտ'որ առ-  
նուր, ամենասուրբ Խորհրդեան իր սե-  
նեակը մանելը տեսնելով՝ “Ահաւասիկ  
իմ սէրս, իմ սէրս, գոչելու սկսաւ:  
Այսպէս պէտք է որ գոչէ ամէն քարդ,  
ԵՐԲ Ս. Հաղորդութեան առջեւ կը կենայ.  
Աւասիկ իմ սէրս, աւասիկ իմ՝ երկնից  
եւ երկրի վրայ գտնուող սիրոյս մէկ  
հատիկ առարկան:

Դուն, Տէր իմ, սուրբ Աւետարանիդ  
մէջ ըսիր՝ թէ զքեզ սիրողը գուն ալ  
կը սիրես, իր քովը կը բնակիս եւ եր-

\* Ա. Յովհ. Դ. 16: \*\* Յովհ. Ճ. 23:

բեք իրմէ չես բաժնուիր։ Ահա աշխարհիս ամէն արարածներէն աւելի կը սիւրեմ զքեղ։ ասոր փոխարէն դուն ալ սիրէ զիս. ինչու որ քու սէրդ աւելի կը համարիմ՝ քան աշխարհքիս ամէն բարիքները։ Եկուր, եկուր, բնակութիւնդ սրտիս աղքատ տնակին մէջը դիր, եւ այնպէս հաստատէ՝ որ մէյ մ'ալ դուրս չելիս, կամ լաւ եւս ասել՝ ես զքեղ սրտէս չեռացընեմ. վասն զի գիտեմ որ դուն չես հեռանար՝ եթէ ես չմերժեմ։ Բայց ինչպէս որ յառաջագոյն վոնտեցի, հիմայ ալ կրնամ զքեղ վոնտել։ Այլ դու, Տէր, մի թողուր որ այսպիսի ապերախտութիւն մը, այսպիսի ահագին ոճրագործութիւն մը պատահի, ինձի այսչափ մեծ մարդասիրութիւն ցուցընելէդ՝ այսչափ շնորհքներով զիս հարըստացընելէդ ետեւ։ Բայց որովհետեւ կրնայ պատահիլ, անոր համար հիմակուընէ կ'ուզեմ մեռնիլ, Տէր իմ, եթէ քեզի հաճոյ է, որպէս զի մահուամբ

անդիի աշխարհք քեզի հետ միանամ,  
եւ քեզի հետ միացած յաւիտեան  
ասլրիմ։ Այո՛, Յիսուս իմ, աս է իմ  
բաղձանքս, աս է իմ խնդրուածքս եւ<sup>1</sup>  
յօսս։ Քեզի կը փաթթուիմ, որ աւելի  
եւս սերտիւ սրտիս մէջ պահեմ զքեզ։  
Երանի թէ միշտ սիրէի զքեզ, որով  
գուն ալ քու սէրդ ինծի չզլանայիր։ Կը  
յուսամ, Աստուած իմ, որ յաւիտե-  
նականութեան մէջ զիրար պիտ' որ սի-  
րենք. ամէն։

Յիսուս իմ, միշտ զքեզ սիրել ու  
քեզմէ սիրուիլ կ'ուզեմ։

---

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ


#### Ա Ր Ս. Կ Ո Յ Ս Ն Մ Ա Ր Ի Ա Մ

Ոյտ ժործէցեն ինեւ՝ ու մէլլէցեն\*։ Ով  
որ զիս մեծարելու չի հեղդար, ով որ  
իմ ծառայութեանս մէջ հաւատարիմ

\* Սիրոք, Դ.Դ., 30 :

կը մնայ, կ'ըսէ Մարիամ, այնպիսւոյն  
յաւիտենական փրկութիւնն ապահո-  
ված է: Եւ որոնք փոյթ կ'ընեն որ ու-  
րիշներն ալ զիս ճանչնան, ինծի պատիւ-  
ընեն, զիս սիրեն, անոնք մշտնջենաւոր  
ուրախութեան նախասահմանեալ են:  
Ով սիրելի Մայր, կը խոստանամ որ  
դէպք մը պատահելուն պէս՝ ձեռքէս  
եկածին չափ հրապարակաւ կամ առ-  
տնին քու պատուցդ եւ ջերմեռանդու-  
թեանդ վրայ խօսիմ:

Սուրբ Կոյս Մարիամ, արժանի ըրէ  
զիս քու պատիւդ հոչակելու:



## ԺԳ. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

**Յ**ղիջին աչի իմ եւ սիրո իմ անդ զա-  
մենայն առողջութեան \*: Ահաւասիկ Յիսուս աս  
խոստումը Հաղորդութեան խորհրդոյն  
միջոցովը կատարեց, որուն մէջ գիշեր

\* Պ. Թագ. թ. 13.

ցորեկ ներկայ է։ Բաւական չէր, Տէր,  
որ ցորեկը միայն Ա. Խորհրդոյն մէջ կե-  
նայիր, երբ երկրպագուքդ քեզի այց-  
ելութեան կռւ գան. ի՞նչ հարկ կար  
նոյն իսկ գիշերն ալ կենալ, երբ մար-  
դիկ եկեղեցիները կը գոցեն, զքեզ  
մինակ կը թողուն եւ տներնին կ'երթան։  
Բայց ես պատճառը կը հասկընամ։ Քու  
արտաքոյ կարդի սէրդ՝ զքեզ այնպէս  
աշխարհիս հետ կապեց, որ նաեւ գի-  
շերը մեզմէ չես կրնար հեռանալ։ Ո՛հ  
սիրելի Փրկիչ իմ, քու այնչափ քաղ-  
ցրութիւնդ միայն բաւական էր՝ որ ամեն  
մարդ բռնադատուէր միշտ ամենասուրբ  
Հաղորդութեան առջեւ կենալու, անկէ  
ամենեւին չբաժնուելու, մինչեւ որ բըռ-  
նութեամբ ստիպուէին հեռանալ։ Եւ  
ան ժամանակն ալ պէտք էր որ ամեն  
մարդ իր մտածութիւնը, իր բաղձանքը,  
իր սիրտը խորաններուն վրայ թողուր  
եւ մարդացեալ Աստուծոյդ նուիրէր իր  
բոլոր սէրը, որ տապանակին մէջ անոր

Համար միայն փակուած կեցեր ես, որ-  
պէս զի զքեղ սիրող հոգիներուն այցե-  
լութիւնն ընդունիս, իրենց աղքատու-  
թեանն օգնես եւ զիրենք միսիթարես:

Յիսուս իմ, զքեղ Ճշմարտապէս սի-  
րել կուզեմ, բոլոր կամքս քեզի կը  
նուիրեմ, քեզի կընծայեմ ամեն յօ-  
ժարութիւններս: Ո՛չ Աստուած իմ,  
դուն աս տապանակին մէջ փակուած  
կեցեր ես՝ չէ թէ միայն անոր համար,  
որ կարող ըլլաս մեզի մօտ գտնուիլ,  
այլ նաեւ անոր համար՝ որ ինք զինքդ  
զքեղ սիրող հոգիներուն տաս: Բայց  
Տէր, ով կրնայ յանդգնիլ քեզի մօտե-  
նալու, քու անարատ մարմինդ ճաշա-  
կելու: Սակայն ով կրնայ քեզմէ հեռա-  
նալ, քեզմէ՝ որ անոր համար նուիրա-  
կան հացին տակ ծածկուեր կեցեր ես,  
որ մեզի մերձենաս եւ զմեղ քեզի հետ  
միացընես: Դուն շատ կը բաղձաս որ  
զքեղ մեր սիրտն ընդունինք. մեծ ցան-  
կութենեղ կայրիս ու արտաքոյ կարգի

կ'ուրախանաս՝ երբ ինք զինքդ մեզի հետ  
միաւորած կը տեսնես։ Ուրեմն եկուր,  
Յիսուս իմ, եկուր իմ սիրու։ Կը բաղ-  
ձամ զքեզ ընդունիլ, վասն զի սրտիս  
Աստուածն ես։ Սիրելի Փրկիչ, իմ հա-  
ճութիւնս, կամքս, միով բանիւ՝ ամէն  
ունեցածս քեզի կ'ընծայեմ։ Ով սէր,  
ով իմ սիրոյս Աստուածը, տիրէ վըաս,  
ջնջէ, վերցուր իմ ամէն բանս որ  
քեզի հաճոյ չէ։ Սէր իմ, մի թողուր  
որ ան հոգին՝ որ զքեզ Ս. Խորհրդոյն  
մէջ ընդունելուն համար՝ Աստուածու-  
թեանդ փառաւորութեամբը լեցուած  
է, դարձեալ արարածոց հետ միանայ։  
Կը սիրեմ զքեզ, Աստուած իմ, միշտ  
կը սիրեմ զքեզ, եւ զքեզ միայն սի-  
րել կը բաղձամ։

Յիսուս, քու սիրոյդ քաղցր կապա-  
նօքը զիս քեզի քաշէ։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Սուրբ Քեռնարդոս կը յորդորէ զմեզ  
ըսելով՝ թէ ։ Ծնորհք խնդրենք, եւ  
Մարիամայ ձեռքով խնդրենք ։ ։ ։ Մարի-  
ամ, կ'ըսէ Ս. Պետրոս Դամիանեան, Աս-  
տուծոյ շնորհաց գանձապետն է ։ ։ ։ Մա-  
րիամ կրնայ եւ կ'ուզէ զմեզ հարստա-  
ցընել, ուստի եւ կը հրաւիրէ զմեզ  
դոչելով՝ թէ Ու ո՞ւ իցէ անդժամ, եկեցին  
առ իս\* ։ Սիրելի Դշեսյ, Մայր իմ Մա-  
րիամ, գթած աչուըներդ խեղճ մեղա-  
ւորիս դարձուր, որ ամենուն երեսէն  
ձգուելով, քեզի դիմեր՝ իր բովանդակ  
յոյսն ու իր բոլոր վստահութիւնը քու  
վրադ հաստատեր է, եւ ողորմութիւն  
կը խնդրէ ։

Քու պաշտպանութեանդ տակ կ'ա-  
պաւինինք, ով Ս. Աստուածածին ։

\* Առակ. թ. 4 :

## ԺԴ. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

ԱՅԱ սիրելի Յիսուս իմ, կը լսեմ  
որ փակուած տապանակիդ մէջէն կ'ըսես.  
Այս է հանգիստ իմ յանձնուանս յանձնենք .  
ի ամա բնակեցայ, զի հաճեցայ ընդ սա\*:  
Ապա ուրեմն եթէ դուն բնակութիւնդ  
կամօք մեր մէջը, մեր խորանաց վըսայ  
հաստատեցիր. եթէ ամենասուրբ Խոր-  
հըրդեան մէջ կենալը քու հանգիստդ  
կը համարիս, եւ մեղի ունեցած սաստիկ  
սէրէդ՝ ուրախութիւնդ հոն կը գտնես.  
կը վայելէ որ մեր սրտերն ալ քեղի  
հետ միաւորին, եւ բոլոր հանգիստնիս  
եւ ուրախութիւննիս ի քեզ գտնենք:  
Ստուգիւ երանելի էք, աստուածասէր  
անձինք, որ աշխարհքիս վըսայ ձեր երա-  
նութիւնն ի Յիսուս միայն կը գտնէք,  
իրեն հետ խօսակցելու՝ իրեն ստէպ այ-  
ցելութիւն ընելու մէջ: Երանելի կը  
համարէի ինք զինքս, Տէ՛ր, եթէ ես ալ

\* Սաղբ. ՁԼԱ. 13:

այսուհետեւ ուրիշ բան չմտածէի, եթէ  
հաճութիւնս ուրիշ բանի մէջ չդժոնէի,  
բայց եթէ միշտ քու առջեւդ ըլլալու՝  
անդադար քու վրադ խորհելու մէջ, որ  
Ս. Հաղորդութեան ձեռքով միշտ իմ  
վրաս՝ իմ լաւութեանս վրայ կը մտա-  
ծես:

Ո՞վ սիրոյ Աստուած, ինչո՞ւ համար  
այսչափ ատեն անցուցի առանց զքեզ  
սիրելու: Դժբախտ տարիներ, անիծեալ  
ժամանակ: Բայց կ'օրհնեմ ինձի ցու-  
ցուցած անսպառ երկայնմտութիւնգ, որ  
այնչափ տարիներ համբերեցիր, այնչափ  
ժամանակ սպասեցիր, որ քու անսպառ  
սիրոյդ՝ ապերախտութեասբս հատու-  
ցում կ'ընէի: Ինչո՞ւ արդեօք, Աստուած  
իմ, ինչո՞ւ: Որպէս զի ես վերջապէս  
քու անչափ ողորմութենէդ եւ անհա-  
մեմատ սէրէդ յաղթուելով, ինք զինքս  
բոլորովին քու ծառայութեանգ նուի-  
րեմ: Տէր, ալ չեմ ուզեր քեզի դէմ  
դնել: Պէտք է որ գոնէ կենացս մնա-

ցած կարճ ժամանակը քեզի ծառայելու,  
քու կամքդ ընելու գործածեմ: Կը յու-  
սամ, Յիսուս իմ, որ օգնութեամբդ բո-  
լորովին քուկդ կըլլամ: Շատ ու մե-  
ծամեծ օգնութիւններ ըրիր ինձի ան-  
ժամանակն իսկ՝ երբ քեզմէ կը փախ-  
չէի, քու սերդ ոչինչ կը համարէի,  
զքեղ կը վշտացընէի. որչափ աւելի  
եւս կրնամ հիմայ յուսալ, որ զքեղ  
սիրել՝ հաճոյքդ կատարել կը բաղձամ:  
Ա՛Հ Աստուած իմ, որ անչափ եւ ան-  
սպառ սիրոյ արժանի եւ, ինձի շնորհք  
տուր որ զքեղ սիրեմ: Կը սիրեմ զքեղ,  
Աստուած սրտի իմոյ, բոլոր սրտես՝ ամեն  
բանեն վեր, իմ անձես, իմ կեանքէս  
աւելի կը սիրեմ զքեղ: Կը ցաւիմ, ով  
անեղը բարութիւն, կը ցաւիմ որ զքեղ  
վշտացուցի եւ դառնացուցի: Թողութիւն  
տուր. բայց միանդամայն շնորհէ որ նախ  
աս աշխարհքիս մէջ մինչեւ ցմահ, եւ  
ետքը ի հանդերձեալն յաւիտեանս սի-  
րեմ զքեղ: Ցուցուր աշխարհքիս ամե-

նազօր զօրութիւնդ : Ըսէ աս հրաշքնալ,  
ով ամենակարող Աստուած, որ ինձի  
պէս ապաշնորհ մը, որ անչափ սիրոցդ  
փոխարէն՝ քեզի մեծ ապերախտու-  
թեամբ հատուցում ըրած է, փոխուի  
եւ գքեղ սաստիկ սիրողներէն մէկն ըլ-  
լայ : Յիսուս իմ, լսէ աղաչանացս : Աս է  
սաստիկ բաղձանքս . այս եղանակաւ բո-  
լոր կենացս մէջ գործելու հաստատուն  
առաջադրութիւն կը դնեմ : Դուն որ  
ինձի աս յօժարութիւնը կու տաս, զօ-  
րութիւն ալ շնորհէ :

Շնորհակալ եմ, Յիսուս իմ, որ մին-  
չեւ հիմայ ինձի համբերեցիր :

---


### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

#### Ա. Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

ՈՎ Մարիամ, ոչ ոք կրնայ փրկուիլ  
առանց քու օգնութեանդ . մէկը մեղքէն  
աղատ չի կրնար ըլլալ՝ առանց քու

մասնաւոր ձեռնտուութեանդ . Նցյնպէս  
ալ առանց քեզի՝ մէկը պարգեւ մը չի  
կրնար ընդունիլ : Ուրեմն, Տիկին իմ,  
յոյս իմ, եթէ ինծի օգնութեան չհաս-  
նիս՝ անշուշտ կորսուած եմ . չեմ կրնար  
գալ զքեղ երկինքն օրհնել : Սակայն,  
ով հզօր Թագուհի, շատ սուրբերէն  
կը լսեմ, որ միաբերան կ'ըսեն թէ քեզի  
ապաւինողներն երբեք ձեռքէ թող չես  
ի տար, օգնութիւնդ անօնց երբեք չես  
զլանար . միայն անիկայ կը կորսուի՝ որ  
քեզի չի գիմեր : Անոր համար ես ողոր-  
մելիս քեզի կը գիմեմ, քեզի կ'ապաւի-  
նիմ, բովանդակ յոյսս ու ակնկալու-  
թիւնս քու վրագ կը հաստատեմ :

Ով Մարիամ, գուն ես բոլոր վստա-  
հութիւնս եւ յուսոյս պատճառը :



## ԺԵ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ՈՒՄ ԵՀԻ արկանեւ յերէեւ . Եւ զինւ .  
Համբաւ նէ արդէն իսկ բորբոքէր \* : Հ. Փր .  
Ողիմպիոս կ'ըսէ թէ “Ամենեւին բան մը  
չկայ աշխարհքիս վրայ՝ որ աստուածային  
հուրն այնպէս սաստիկ մարդուս սրտին  
մէջ վառէ, ինչպէս մեր խորաններուն  
վրայ կեցած Հաղորդութեան խորհուր-  
դը : Ասոր համար օր մը Փրկիչը Ս.  
կատարինէ Սիէնացւոյն երեւցաւ՝ Ս .  
Հաղորդութեան մէջ իբրեւ բորբոքեալ  
հնոց, որմէ աստուածային սիրոյ բոցերն  
առատութեամբ կը ցոլանային եւ բո-  
լոր աշխարհքիս վրայ կը տարածուէին :  
Ուստի սրբուհին կը զարմանար թէ ինչ-  
պէս կրնան մարդիկ ապրիլ առանց Աս-  
տուծոյ սիրով բորբոքելու, գիտնալով  
թէ Աստուած զիրենք անչափ սիրով  
կը սիրէ : Օգնէ ինձի, Տէր, որ քու սի-  
րոյդ հրովը վառիմ բորբոքիմ : Շնորհք

տուր ինծի որ ուրիշ բան չմտածեմ,  
ուրիշ բանի չցանկամ, ուրիշ բան  
չփնտռեմ՝ բայց եթէ զքեզ միայն: Ե-  
րանելի կը համարէի ինք զինքս, եթէ  
այս աստուածային սուրբ հուրը բոլո-  
րովին դրաւէր զիս, եւ երկրաւոր ցան-  
կութիւններն ոչնչանային սրտիս մէջ:

Ո՛չ Յիսուս իմ, կը տեսնեմ որ ինծի  
ունեցած սիրոյդ սաստկութենէն ինք  
զինքդ բոլորովին ողջակէզ ըրիր եւ  
մեր խորանաց վրայ դրեթէ սպառեցար:  
Ուրեմն կը վայելէ՝ որ ինք զինքդ ինծի  
նուիրելուդ դիմացը՝ ես ալ ինք զինքս  
բոլորովին քեզի մատուցանեմ: Այո՛,  
Աստուած իմ եւ գերագոյն Տէր իմ,  
բովանդակ քեզի կը նուիրեմ հոգիս,  
անձս, բոլոր կամքս, ամէն ունեցածս եւ  
կեանքս: Կը խառնեմ, ով յաւիտենա-  
կան Հայր, աս իմ չնչին նուերս՝ այն  
անսահման պատարագին հետ, զոր քու  
Որդիդ Յիսուս խաչափայտին վրայ քեզի  
նուիրեց, եւ ամէն օր շատ անդամ կը

նուիրէ: Ընդունէ, Հայր, աս իմ պատարագս՝ սիրելի Որդւոյդ Յիսուսի արժանեացը համար. Եւ ինծի շնորհք տուր՝ որ նոյն զոհը միշտ կարենամ մատուցանել. Եւ վերջապէս ինք զինքս քեզի եւ քու պատուոյդ նուիրելով՝ մեռնիմ։ Կը բաղձայի ան շնորհաց, որ այնչափ մարտիրոսներուն տրուեցաւ, այս ինքն՝ քեզի համար Նահատակուիլ։ Աակայն եթէ այսպիսի մեծ շնորհքի արժանի չեմ, գոնէ շնորհէ որ ամեն բաղձանքներս, բոլոր կեանքս՝ քու աստուածային կարգագրութեանցդ տակ ձգեմ, եւ ամենայն յօժարութեամբ ան մահն ընդունիմ՝ զոր դուն ինծի կը խրկես։ Կ'ուզեմ մեռնիլ, Տէր, որպէս զի ասով զքեզ փառաւորեմ, քեզի հաճոյ ըլլամ. Եւ գոհ սրտով քեզի կ'ընծայեմ կեանքս ու մահս։

Յիսուս իմ, կ'ուզեմ մեռնիլ միայն քեզի հաճոյ ըլլալու համար։

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՏՆ ՄԱՐԻԱՄ

Թոյլ տուր ինծի, ովք քաղցր Դշեսց,  
որ զքեզ քու ծառաներուդ հետ՝ “Մեր  
բովանդակ յուսոյն պատճառն” անուա-  
նեմ ու ըսեմ” թէ “Բոլոր յոյսս վրագ  
դրած եմ: Դուն մեղացս թողութիւն  
ընդունէ, մինչեւ ցմահ ի բարին յարա-  
տեւել եւ քաւարանէն շուտ աղատել  
տուրն: Անոնք՝ որ կը փրկուին, իրենց  
երանութիւնը քու բարեխօսութեամբդ  
կ'ընդունին: Ուրեմն ովք Մարիամ, քե-  
զի կ'իյնայ զիս փրկել. վասն զիս որուն  
փրկութիւնն որ գուն կ'ուզես՝ անհրա-  
ժեշտ պէտք է որ երանութեան հասնի:  
Ուրեմն ուզէ միայն զիս փրկել, եւ ան-  
շուշտ կը փրկուիմ: Դուն զանոնք կը  
փրկես, որոնք քեզի կ'ապաւինին. ահա  
ես ալ քեզի կը դիմեմ եւ կ'ըսեմ.

Զքեզ օգնութեան կանչողներուն  
փրկութիւնը, փրկէ զիս:

## ԺԶ • ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Երևանի թէ մարդիկ իրենց թշուառութեանց ու աղետից մէջ ամենասուրբ Խորհրդոյն ընթանային՝ իրենց չարեացը դարման գտնելու։ Ստուգիւ այն ժամանակ հիմակուան պէս խեղճ չէին ըլլար։ Կ'ողբար երբեմն Երեմիա մարդարէն. Մէնէ, կ'ըսէր, ուեւ ՞ւ գուցէ է Գաղաքառ իստ բժեշէ ՞ւ իոյցէ անդ։ զաղաղ լեռը՝ բժշկական համեմներով երեւելին, Յիսուսի Քրիստոսի օրինակն է, կ'ըսէ մեծարոյն Բեղա, որ մեր ամէն չարեաց դարմանը՝ Ա. Հաղորդութեան Խորհրդով հոգալու պատրաստ կը կենայ։ Կարծես թէ Փրկիչն մեր այսպէս կը գոչէ մեղի. Ինչո՞ւ կը տրտնջէք ձեր խեղճութեան վրայ, որդիք Ադամայ, այս Խորհրդոյն մէջ ունենալով ձեր ամէն չարեաց թէ բժիշկն ու թէ դեղը։ Եկայ+ առ իս ամենեւեան, կ'ըսէ, և և և

հանդուցեց շնչել \*: Ուրեմն զազարու քերց  
հետ կըսեմ. Տէր, ահաւասիկ ղոր դուն  
կը սիրէիր՝ հիւանդացեր է: Ես եմ այն  
ողորմելին՝ զոր դուն կը սիրես, բայց մեզ-  
քերով չարաշար վիրաւորուած՝ քեզի  
կը դիմեմ, որպէս զի բժշկես: Բժշկէ,  
բժշկէ զիս. որովհետեւ քեզի դեմ  
մեղանչեցի:

Քու սիրոյդ քաղցր կապանքովը բո-  
լորովին քեզի քաշէ զիս: Աւելի կ'ու-  
ղեմ քեզի հետ կապուած մնալ, քան-  
թէ բոլոր աշխարհքիս տէրն ըլլալ: Աս  
աշխարհքիս վրայ զքեզ միայն սիրել  
կ'ուղեմ: Քեզի նուիրելու քիչ բան  
ունիմ. բայց՝ եթէ աշխարհքիս բոլոր  
թագաւորութիւնները կարենայի ստա-  
նալ, անոր համար միայն կ'ուղէի՝ որ քու  
սիրոյդ համար ամենէն հրաժարիմ: Ուս-  
տի կը հրաժարիմ ամէն ունեցածէս:  
Կը թողում մերձաւորներս, հանգիստս,  
հաճութիւններս, նաեւ հոգեւորական

միսիթարութիւններս։ Քեզի կը նուիւրեմ աղատութիւնս, կամքս եւ բովանդակ սէրս։ Կը սիրեմ զքեզ, ով անեղրական բարութիւն, անձէս ալ աւելի կը սիրեմ, եւ կը յուսամ որ յաւիւտեան սիրեմ։

Յիսուս իմ, ինք զինքս բոլորովին քեզի կը մատուցանեմ. ընդունէ զիս։




## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՏՆ ՄԱՐԻԱՄ

Ով թագուհի իմ, գուն անձամբ Ա. Քրիդիդայի ըսիր. “Որչափ ալ մէկը մեղանչած ըլլայ, եթէ ուղղուելու դիտաւորութեամբ ինձի դիմէ, պատրաստ եմ անմիջապէս զինք ընդունելու։ Զեմնայիր թէ որչափ մեղանչած է, այլ թէ ինչ կամքով, ինչպիսի պատրաստութեամբ ինձի կու գայ։ Իր վէրքերն օծելու, պատելու, նաեւ բժշկելու զանց

չեմ առներ, որովհետեւ կը կոչուիմ եւ  
արդեամբ ալ եմ Մայր ողորմութեան։  
Ուրեմն եթէ կրնաս զիս բժշկել եւ  
կ'ուզես, աւասիկ քեզի կ'ապաւինիմ,  
երկնաւոր բժիշկ եւ Մայր իմ, բժշկէ  
հոգւոյս բազմապատիկ վէրքերը, որովհ-  
հետեւ եթէ խօսք մը միայն զրուցես  
Որդւոյդ, անմիջապէս կը բժշկուիմ։  
Սիրելի Մայր, գթա վրաս։



## ԺԷ • ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

**Ծ**իրԱՐ սիրող անձինք ամէն բանէ  
աւելի իրենց սիրելեաց տեսութեամբը  
կ'ուրախանան։ Ուրեմն եթէ ճշմարտու-  
թեամբ զՅիսուս կը սիրենք, պէտք ենք  
բաղձալ միշտ իրեն քով՝ իրեն հետ  
գտնուիլ։ Տէրն մեր Ա. Հաղորդութեան  
խորհրդոյն մէջ զմեզ կը տեսնէ, մեր  
խնդրուածքները կը լսէ. ինչու համար  
մենք ալ իրեն հետ չենք ուզեր խօսիլ։

Եր Ներկայութեամբը մեզի շնորհած  
ընկերակցութեանը համար պէտք էինք  
ուրախանալ: Ուրախանանք ուրեմն իր  
փառաց եւ մեզի ցուցուցած սիրոյն վրայ,  
որով Հաղորդութեան խորհրդոյն ձեռ-  
քով անհամար հոգիներ իրեն կը քա-  
շէ: Բաղձանք որ ամէն մարդիկ սիրեն  
զՅիսուս, սրտերնին բոլորովին իրեն  
նուիրեն. Եւ կամ գոնէ մենք ուզենք  
որ մեր բոլոր յօժարութիւնները, մեր  
իղձերն իրեն բոլորանուեր ողջակէղ ըւ-  
լան: Բաղձանք որ ինքն ըլլայ մեր սէրը,  
մեր ամէն ցանկութիւնն եւ մեր բովան-  
դակ հաճութիւնը: Հայրն Սալեղ ար-  
տաքոյ կարդիկ՝ ուրախանար՝ երբ կը լսէր  
որ Ա. Հաղորդութեան վրայ կը խօսուի:  
Եւ որչափ ալ Հաղորդութեան խորհր-  
դոյն այցելութիւն ընէր, քիչ կ'երեւար  
իր բորբոքեալ սէրն ըստ բաւականին  
յագեցընելու: Վանաց դուռը կանչուած,  
սենեակը դարձած, վանաց մէջ ասդին  
անդին դացած եկած ատեն՝ աս առիթ-

ներով իր սիրելի Փրկչին գոնէ քանի  
մը վայրկեան այցելութիւն կ'ընէր. այն-  
պէս որ միտ դրուեցաւ թէ օրուան մէջ  
եւ ոչ ժամ մը կ'անցնէր՝ որ Ա. Խորհրդա-  
դոյն այցելութիւն չընէ: Ասով արժա-  
նի եղաւ Հաղորդութեան խորհրդոյն  
Ճշմարտութիւնը եւ Յիսուսի Քրիստոսի  
նոյն Խորհրդոյն մէջ իրական ներկայու-  
թիւնը հերետիկոսաց դէմ պաշտպա-  
նած ատեն՝ անոնց ձեռքով սպանուելու:

Երանի թէ, Յիսուս, ես ալ այսպիսի  
գեղեցիկ մահուամբ մեռնելու բախտն  
ունենայի, այս ինքն՝ պաշտպանելով աս  
Ա. Խորհրդոյն Ճշմարտութիւնն, որով  
դուն, քաղցր Փրկիչ իմ, քու սիրոց  
մեծութիւնը մեղիցուցուցիր: Ո՛հ սիրե-  
լի Աստուած, դուն Ա. Խորհրդոյս ձեռ-  
քովը մեծամեծ հրաշքներ կը գործես.  
ուրեմն աս սքանչելիքն ալ ըրէ՝ որ ես  
ինք զինքս բոլորովին քեզի նուիրեմ:  
Դուն կը բաղձաս որ բոլորովին քուկդ-  
ըլլամ եւ իրաւամբ ալ: Տուր ինձի ու-

րեմն այս շնորհքն՝ որ ամենայն զօրութեամբ, բոլոր յօժարութեամբ զքեզ սիրեմ։ Աս աշխարհքիս բարութիւնները տուր որուն որ կը հաճիս, տուր քեզմէ խնդրողներուն։ Ես քու սիրոյդ միայն կը փափաքիմ, ան միայն կ'ուզեմ։ անկէ ի զատ երբեք ուրիշ բանի ետեւէն իյնալ չեմ ուզեր։ Կը սիրեմ զքեզ, Յիսուս. շնորհք տուր՝ որ կարող ըլլամ յարատեւել. աս ինձի բաւական է։

Յիսուս իմ, ե՞րբ գայ պիտ'որ ժամանակ՝ որ Ճշմարտապես կարող ըլլամ զքեզ սիրել։



## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ


### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ո՛վ սիրելի Թագուհի իմ, ինչպէս քաղցր է ան անունը, զոր զքեզ սիրող անձինք քեզի կու տան, այսինքն՝ Մայր սիրելի։ Ստուգիւ Թագուհի իմ, ամենայն

սիրոյ արժանի ես: Քու գեղեցկու-  
թիւնդ նոյն իսկ Աստուծոյ սիրելի ըռաւ  
զքեղ: Անունդ միայն՝ զքեղ սիրողնե-  
րուն այնչափ հաճոյական է, որ երբ  
արտաբերելու եւ կամ միայն լսելու ըւ-  
լան, սիրովդ կը բորբոքին, եւ զքեղ  
սիրելու բաղձանքն իրենց սրտին մէջ  
կ'առաւելու: Ով քաղցր, ով սիրելի,  
ով բազմագութ Կոյս Մարիամ, չկայ  
քու սիրելիներէդ մէկն՝ որ քու անունդ  
կանչէ, եւ դուն զինքը սիրովդ չբորբո-  
քես: Ուրեմն կը վայլէ, ով սիրելի Մայր,  
որ ես ալ զքեղ սիրեմ: Բայց չեմ շա-  
տանար զքեղ այնպէս միայն սիրելով՝  
ինչպէս որ ուրիշները կը սիրեն: Ես  
զքեղ թէ հիմայ աս աշխարհքիս վրայ  
եւ թէ յետոյ արքայութեան մէջ Աս-  
տուծմէ ետքը՝ ամէն մարդիկներէն աւե-  
լի սիրել կը բաղձամ: Եթէ չափազանց  
է աս յօժարութիւնս, շատ յանդգնա-  
կան է խնդրուածքս, քու սիրելութիւնդ  
եւ առանձինն եղանակաւ ինծի ցուցու-

ցած սէրդ է ասոր պատճառը։ Եթէ  
դուն քիչ սիրուելու արժանի ըլլայիր,  
եւ ալ զքեղ քիչ կը սիրէի։ Ընդունէ  
իմ աս յօժարութիւնս, եւ ասոր նշան՝  
զքեղ սաստիկ սիրելու շնորհք ընդունէ  
ինձի Աստուծմէ. վասն զի որչափ մէկն  
զքեղ աւելի սիրէ, այնչափաւ ելի զԱս-  
տուած կը սիրէ։

Ո՛վ սիրելի Մայր, զքեղ սիրել կը  
բաղձամ։



## ԺԷ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

**Յ**ԻՒՍՈՒՄ օր մը Յովսափատու ձորը  
փառաց աթոռոյն վրայ պիտ'որ նստի.  
բայց հիմայ Հաղորդութեան խորհրդոյն  
մէջ՝ իբրեւ սիրոյ գահին վրայ կը կե-  
նայ։ Եթէ թագաւոր մը՝ խաշնարածի  
մը իր սէրը ցուցընելու համար՝ գար  
անոր մօտ բնակէր, ինչպիսի մեծ ապե-  
րախտութիւն կ'ընէր գեղացին՝ եթէ

շատ անգամ անոր այցելութեան չեր-  
թար, մանաւանդ գիտնալով որ թա-  
գաւորը զինքն ստէալ տեսնելու համար  
բնակութիւնն ան գեղը դրած է: Ո՛վ  
սիրելի Յիսուս իմ, դու ինձի ունեցած  
սաստիկ սիրոյդ համար Ա. Խորհրդեան  
մէջ կը կենաս: Եթէ կարելի ըլլար՝  
ես ալ գիշեր ցորեկ կ'ուզէի քու առ-  
ջեւդ կենալ: Տէր իմ, Երկինքի հրեշ-  
տակը սուրբ տապանակը շրջապատած՝  
մեզի ցուցուցած անշափի սիրոյդ վրայ կը  
զարմանան. որչափ աւելի պատշաճական  
է՝ որ ես ալ զքեղ մեր սիրոյն համար  
խորաններուն վրայ տեսնելով՝ գոնէ մօ-  
տաւորութեամբս զքեղ դոհ ընելու  
ջանամ, եւ ինձի ցուցուցած սիրոյդ  
շնորհակալ ըլլամ:

Կը սիրեմ զքեղ, ով Հաղորդու-  
թեան խորհրդոյն մէջ ծածկուած Աս-  
տուած, հաց հրեշտակաց, աստուածայ-  
ին կերակուր: Այն, կը սիրեմ զքեղ.  
սակայն ոչ ես եւ ոչ ալ դուն դոհ ենք

աս սիրով, որովհետեւ շատ նուազ է:  
Ճնորհք տուր, Յիսուս իմ, որ լաւ ճանչ-  
նամ թէ ինչպիսի անսպառ գթութիւն  
է սիրածս: Զօրութիւն տուր սրտիս՝ որ  
ամէն երկրաւոր յօժարութիւններէն  
աղատի եւ քու սիրոյդ փափաքի: Դուն  
երկինքէն ամէն օր մեր խորաններուն  
վրայ կ'իջնաս, որպէս զի զքեզ սիրենք  
եւ քեզի հետ բոլորովին միանանք: Ու-  
րեմն կը վայլէ որ ես ալ աս վայրկենէս  
ամենեւին ուրիշ բան չմտածեմ, բայց  
եթէ զքեզ սիրել, քեզի հաճոյ ըլլալ:  
Բոլոր զօրութեամբս, բոլոր սրտէս կը  
սիրեմ զքեզ, Յիսուս իմ: Եւ եթէ այս  
սիրոյս փոխարէն տալ կ'ուզես՝ բազմա-  
պատկէ նոյն սէրը, որ միշտ աւելի սի-  
րեմ եւ քեզի աւելի հաճոյ ըլլալու  
ջանամ:

Յիսուս իմ, Ճնորհք տուր որ կարող  
ըլլամ զքեզ կատարելապէս սիրել:


## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՉՆ ՄԱՐԻԱՄ

Ինչպէս որ երեսէ ձգուած հիւանդաները՝ միայն հասարակաց հիւանդանոցին մէջ ապաստանարան կը գտնեն, անանկ ալ թշուառ մեղաւորները, թէպէտ ամէնէն մերժուին, անօգնական չեն մնար. վասն զի Մարիամ սաստիկ գթով իրենց հոգ կը տանի: Աստուած զՄարիամ աշխարհքիս շնորհեց, որպէս զի ամենուն մանաւանդ մեղաւորաց տեղի ապաւինի ըլլայ: Ուրեմն, Մարիամ, եթէ քեզի ապաւինիմ, չես կրնար զիս մեղացս համար մերժել: Մանաւանդ թէ որչափ աւելի թշուառ եւ ողորմելի եմ, այնչափ աւելի պաշտպանութեանդ ապաւինելու իրաւունք ունիմ. վասն զի Աստուած զքեզ ասոր համար ստեղծած է: Ուստի քեզի կ'ապաւինիմ, Մայր ողորմութեան. ինք զինքս քու պաշտպանութեանդ կը յանձնեմ: Դուն ապտասան

ես մեղաւորաց. ուրեմն իմ ապաւէնս  
ու յաւիտենական փրկութեանս յօյսն  
եղիր: Եթէ դուն զիս մերժես, ուր եր-  
թամ, ի՞նչ ընեմ:

Իմ պատսպարանս Մարիամ, փրկէ  
զիս:



## ԺԹ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

**Ա**մէն մարդ կ'ուրախանայ իր սի-  
րելի բարեկամին բնակակից ըլլալուն.  
ապա ուրեմն մեզի ալ մեծ խնդութիւն  
պիտի պատճառէ աս արտասուաց հով-  
տին մէջ մեր երկնաւոր բարեկամին  
քովն ըլլալ, որ զմեզ ամէն բարիքներով  
կրնայ լնուլ, եւ զմեզ սաստիկ սիրելուն  
համար մեր մէջը կը բնակի: Յայտնի է  
թէ Հաղորդութեան խորհրդոյն միջո-  
ցաւ որչափ որ կը բաղձանք՝ կրնանք  
Յիսուսի հետ խօսակցիլ, մեր սիրտն  
անոր բանալ, հարկաւոր եղածն անոր

յայտնել եւ մեր փրկութեան կարեւոր  
շնորհքներն իրմէ խնդրել. կրնանք եր-  
կնից թագաւորին հետ ամենայն վստա-  
հութեամբ եւ առանց ակնածութեան  
խօսիլ: Շատ երանելի եղաւ Յովսէփ  
գեղեցիկ, որ Աստուած իր շնորհքներո-  
վը զինք միսիթարելու համար իր բանտն  
իջաւ\*: Քայց որչափ աւելի է մեր երա-  
նութիւնը, որ աս վշտալից աշխարհքիս  
վրայ մարդացեալ Աստուած մ'ունինք,  
որ իր ճշմարիտ ներկայութեամբ մեր  
բոլոր կենաց մէջ մեզի օգնութեան կը  
հասնի: Ինչպիսի մեծ ուրախութեան  
պատճառ կ'ըլլայ խեղճ բանտարկելց  
մը՝ եթէ սիրելի բարեկամն իրեն այց-  
ելութիւն ընէ, զինք միսիթարէ, քա-  
ջալերէ, իրեն օգնական ըլլայ եւ ամէն  
հնարք գործածէ անոր վշտերը թեթեւ-  
ցընելու: Այսպէս է մեր ամենասիրելի  
բարեկամը Յիսուս, որ Ս. Խորհրդոյն  
մէջէն զմեղ կը քաջալերէ. Ահա-առէի

Էս ընդ Յեղ Եմ, կ'ըսէ, զամենայն տուուր\* :  
 Տեսէք, ես երկինքէն անոր համար միայն  
 աս ձեր բանտերն իջայ՝ որպէս զի զձեղ  
 միսիթարեմ, ձեզի օդնեմ, զձեղ փրո-  
 կեմ: Ընդունեցէք զիս, քովս մնացէք,  
 միացէք հետս. այսպէս ձեր խեղճու-  
 թիւնն այնչափ չէք զգար, եւ յետոյ  
 զձեղ արքայութիւն կը տանիմ, ուր  
 կատարեալ երանութիւնը կը վայելէք:

Ո՛վ Աստուած, ո՛վ անըմբոնելի սէր,  
 որովհետեւ դուն մեզի աւելի մօտ գըտ-  
 նուելու համար մեր խորաններուն վրայ  
 կ'իջնաս, ես ալ կ'առաջադրեմ քեզի  
 ստէսլ սցցելութիւն ընել, որչափ կա-  
 րելի է քու սիրալիք մօտաւորութիւնդ  
 վայելել՝ որ սուրբերն երանելի կ'ընէ:  
 Երանի թէ կարող ըլլայի միշտ քու  
 առջեւդ կենալ, քեզի երկրպագութիւն  
 ընել եւ զքեղ սիրել: Կ'աղաչեմ, Տէր,  
 քեզի քաշէ զիս՝ երբ կամ ծուլու-  
 թեամբ եւ կամ աշխարհքիս դործքե-

բով զբաղած, քեզի այցելութիւն ը-  
նելու անփոյթ ըլլամ: Երկնային ցան-  
կութիւն մը վառէ սրտիս մէջ Ա. Խոր-  
հըրդեան միջոցով միշտ քեզի հետ ըլ-  
լալու: Երանի թէ միշտ զքեզ սիրած՝  
քու հաճոյքդ կատարած ըլլայի: Այսու  
ամենայնիւ մեծ միսիթարութիւն է ինձի  
մտածել որ գեռ ժամանակ կայ՝ չէ թէ  
միայն երկինքն այլ նաեւ աշխարհքիս  
վրայ՝ աս բաղձանքս ի գործ դնելու:  
Անոր համար հաստատութեամբ կ'ա-  
ռաջադրեմ այսօրուընէ սկսիլ զքեզ  
ճշմարտութեամբ սիրելու, ով անեզը  
եւ անչափ բարութիւնս, սէրս, գանձս  
եւ ամէն բանս: Բովանդակ զօրու-  
թեամբս զքեզ սիրել կը բաղձամ:


Օդնէ ինձի, Աստուած իմ, որ կարող  
ըլլամ զքեզ սիրել:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Մի յուսահատիր, ով մեղաւոր, հաւատով եւ վստահութեամբ հզօր թագուհւոյս դիմէ, անիկայ քեզի կ'օգնէ: Իր ձեռքն ամէն ժամանակ շնորհք եւ ողորմութիւն կը գտնես: Գիտցիր որ աւելի կը բաղձայ ինք քեզի շնորհք տալու՝ քան թէ դուն իրմէ խնդրելու: Երբեք չեմ դադրիր Աստուծոյ շնորհակալ ըլլալ՝ որ ճանչցուց ինծի զՄարիամ: Ո՞չ ինչպէս խեղճ կ'ըլլայի, ով մեծազօր Դշնոյ, եթէ զքեզ չճանչնայի, եթէ քու ծառայութիւնդ մոռնայի: Կը գովեմ, կը սիրեմ զքեզ, սիրելի Մայր, յոյսս քու վրադ կը դնեմ, եւ ինք զինքս քեզի կը նուիրեմ:

Ով Մարիամ, երանի անոր՝ որ զքեզ կը ճանչնայ եւ յոյսը քու վրադ կը դնէ:



## Ի. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

**Յ**ԱԿՈՒՄ յայնմէի եղիցի աղբեր բա-  
յեալ պահն գուստի, և բնակչացն Երաստ-  
ումի է Առաջնական Թղթագութեան Մարդարէին  
գուշակած աղբիւրը՝ Ա. Հաղորդութեան  
Խորհրդեան մէջ գտնուող Յիսուսն է,  
որուն՝ ուզած ատենիսիս կրնանք երթալ,  
եւ մեղօք աղտեղած հոգինիս լուալ եւ  
մաքրել։ Եթէ պակսեցանք, եթէ մե-  
ղանչեցինք, սրբուելու լաւագոյն միջոցն  
է զղջացեալ սրտիւ Ա. Խորհրդեան դի-  
մել։ Այո՛, Յիսուս իմ, այո՛, այգպէս  
կ'առաջադրեմ այսուհետեւ ընել. դի-  
տեմ որ աս աղբիւրին ջրերը չէ թէ  
միայն աղտեղութենէն կը մաքրեն, այլ  
նաեւ կը լուսաւորեն, ոյժ կու տան ալ  
մեղաց մէջ չիյնալու, զօրութիւն կու  
տան՝ ամէն դժբախտութեանց ուրա-  
խութեամբ տանելու, եւ մեր սրտին  
մէջ սէրդ աւելի եւս կը բորբոքեն։ Գի-

տեմ, Տէր, որ աս պատճառաւ Ա. Խոր-  
հըսդոյն մէջ իմ այցելութեանս կը  
սպասես, եւ քու այցելուներդ այսպիսի  
շնորհքներով կը վարձատրես: Ո՛վ Յի-  
սուս, լուա, մաքրէ զիս՝ այսօր ըրած  
ամէն պակսութիւններէս: Շատ կը ցաւ-  
իմ որ զքեղ վշտացուցի, քեզի անհա-  
ճոյ եղայ: Զօրութիւն տուր որ ասկէ  
ետեւ մէյ մ'ալ չիյնամ. տուր միան-  
գամայն զքեղ սիրելու սաստիկ եռանգ:  
Ո՛հ, ինչպէս երջանիկ կ'ըլլայի եթէ միշտ  
քովդ կարենայի կենալ, ինչպէս քու  
հաւատարիմ ծառաներէդ շատերը կ'ը-  
նէին: Կարմեղեան կարգէն Եղ. Փրան-  
կիսկոս Յիսուսի՝ երբ եկեղեցւոյ մ'առ-  
ջեւէն կ'անցնէր, ուր Ա. Խորհուրդը  
դժնուէր, քանի մը վայրկեան իր սիրելի  
Փրկչին այցելութիւն չըրած՝ յառաջ  
չէր կրնար երթալ: Եւ սովորութիւն  
ունէր ըսելու՝ թէ “Քարեկամի մը չի  
վայլեր՝ որ իր սիրելոյն տան առջեւէն  
անցած ատեն՝ ներս չմտնէ բարեւ”


չտայ եւ հետը քանի մը խօսք չխօսի՞ :

Բայց ինք քանի մը խօսքով չէր շատանար, հապա իր Տիրոջն առջեւ այնշափ ժամանակ կ'անցընէր, որչափ որ կրնար :

Միակ եւ անչափ բարութիւն իմ Յիսուս, կը տեսնեմ որ դուն անոր համար աս Խորհուրդը հաստատեցիր եւ մեր խորաններուն վրայ կը կենաս, որպէս զի զքեղ սիրեմ : Անոր համար ինծի սիրոտ մը տուիր, որ կարող ըլլամ Ճշմարտիւ զքեղ սիրել : Բայց ուսկից կ'ըլլայ որ ես անշնորհակալուս չեմ սիրեր զքեղ եւ կամ այնչափ քիչ կը սիրեմ : Զէ, չէ. չի վայլեր որ անսպառ սիրոյ արժանի Աստուածս քիչ սիրուի : Քու ինծի ցուցուցած սէրդ միայն՝ նոյնպիսի միսադարձ սիրոյ արժանի է : Դուն Աստուած ես, իսկ ես՝ չնչին որդ . եթէ քեզի համար մեռնիմ, եթէ քեզի համար սպառիմ, ոչինչ է համեմատութեամբ մեզի ցուցուցած սիրոյդ, որ խաչի

մահուամբ մեռար եւ ամէն օր շատ անգամ մեր խորանաց վրայ՝ ինք զինքդ ողջակէղ կը մատուցանես։ Օգնէ ինծի որ զքեղ սիրեմ, եւ ամենէն աւելի բաղձացածդ եւ քեղի ամենէն աւելի հաճոյ եղածն ընեմ։

Սիրելիս իմն է, եւ ես իրենն եմ։



## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ո՞վ քաղցր, սիրելի եւ գթած թագուհի իմ, դուն ողորմութեանդ ապաւինողին արժանեացը չես նայիր, հապա առանց բացառութեան ամէն գթութեանդ դիմողին օգնելու պատրաստ ես։ Գիտեմ, Մայր սուրբ, որ եթէ ես քեզի ապաւինիմ, ինծի մարդասիրութեամբ կը լսես ու զիս կ'ընդունիս։ Լսէ ուրեմն աղաչանացս։ Ստուգիւ մեծ մեղաւոր մընեմ եմ ես, բիւր գժոխոց արժանի. բայց

Բնք զինքս ուղղել կ'ուղեմ, կ'ուղեմ  
զԱստուած սիրել, զոր այնչափ անդամ  
զայրացուցի: Փրկէ եղկելի հոգիս, որ  
քուկդ է եւ ոչ իմն: Աղաչանքս լսեցիր,  
Մայր իմ. կը յուսամ որ խնդրուածքս  
կը կատարես:

Քուկդ եմ, Մարիամ, փրկէ զիս:

---

## ԻԱ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

**Ա**ՅՑԵԼՈՒ ԵՍԿ՝ անդր եւ արծուելի ժո-  
ղովեսցին \*: Աս խօսքով՝ Ս. Հարք ընդ-  
հանրապէս Ս. Հաղորդութիւնը կ'ի-  
մանան. իսկ արծիւ ըսելով՝ ան հոգի-  
ներն, որ աշխարհքիս ամէն բանն ոտ-  
քի տակ առած՝ արծիւներու պէս եր-  
կրէն զատուելով՝ մինչեւ երկինք կը  
բարձրանան, ուր է իրենց բոլոր սէրն  
ու բաղձանքը: Իսկ երկրիս վրայ իրենց  
բնակարանը՝ տապանակն է, ուր Քրիս-

տոս՝ իր աստուածութեամբն ու մարդկութեամբը ներկայ կը գտնուի. Եւ հոնքենալէն երբեք չեն ձանձրանար: Եթէ արծիւք, կ'ըսէ Ա. Յերոնիմոս, գիականց հոտն առնելուն պէս՝ կը սրանան կուգան, որչափ աւելի հարկ է որ մենք Ա. Խորհրդոյն մէջ գտնուող Յիսուսի կենդանի մարմնոյն ընթանանք, որ մեր հոգւոյն սննդարար կերակուրն է: Ասոր համար է՝ որ այնչափ սուրբք այս արտասուաց հովիտը՝ ծարաւի եղջերուաց պէս աս երկնային աղբիւրին կ'ընթանային: Հ. Բաղտասար Ալուարէզ՝ ամենասուրբ Հաղորդութեան յաճախ այցելութիւն ընելէն չէրդադրեր. մինչեւ երբեմն ամբողջ գիշերներ անոր առջին կ'անցընէր: Կուլար, կ'ողբար, երբ մեծատանց պաշտոները փառասէր մարդիկներով լեցուն կը տեսնէր, որ պարզ մարդէ մը չնչին բարիք կամ պատիւ մ'ընդունելու յուսով, կը ջանան անոր հաճոյ ըւլալ: Իսկ ասոր հակառակ գատարկ կը

Թռղուն եկեղեցիներն՝ ուր երկնից եւ  
երկրի Տէրը կը բնակի, որ անչափ հա-  
րուստ է եւ յաւիտենական գանձերով  
լի: Երանի կու տար վանականաց՝ որ  
ամէն ժամանակ՝ գիշեր ցորեկ, նոյն իսկ  
իրենց վանացը մէջ Յիսուսի այցելու-  
թիւն կրնան ընել, զոր աշխարհականք  
չեն կրնար:

Տէր իմ, դուն թէեւ տեսար որ քու  
անչափ սիրոյդ ապերախտ պիտի ըլլամ,  
սակայն չգարշեցար անսպառ մարդասի-  
րութեամբդ զիս քեզի կանչելու եւ Ա.  
Հաղորդութեամբ քեզի մերձեցընելու:  
Ահաւասիկ կու դամ, կը մերձենամ.  
դուն զիս փոխէ: Հանէ սրտէս ան սէրն՝  
որ քեզի հետ յարաբերութիւն չունի,  
ան ցանկութիւններն՝ որոնք քեզի հա-  
ճոյ չեն, ան խորհուրդներն՝ որ քեզի  
համար չեն: Յիսուս իմ, սէր իմ եւ  
ամէն բանս, քեզի միայն հաճոյ ըլլալ կը  
բաղձամ, քեզի միայն ուրախութեան  
պատճառ ըլլալ: Դուն միայն արժանի

ես ամէն սիրոյ. զքեղ միայն կ'ուզեմ  
իմ բոլոր սրտես սիրել: Ծնորհք տուր,  
Տէր, որ ամէն բանէն հրաժարիմ, բոլոր  
անձս քեղի կենդանի ողջակեղ ընեմ,  
անձուկ կապով քեղի հետ միանամ:  
Բայց այնպէս միանամ, որ այսուհետեւ  
երբեք քեղմէ բաժնուիլ կարող չըլլամ,  
ոչ աս աշխարհքիս մէջ եւ ոչ ալ ան-  
դիի աշխարհք:

Ամենաքաղցր Յիսուս իմ, թող մի  
տար որ երբեք քեղմէ բաժնուիմ:




## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Դիոնիսիոս Կարդուսեան զամենա-  
սուրբ Կոյսն՝ իր մայրական սրտին ապա-  
ւինող մեղաւորներուն փաստաբանը կը  
կոչէ: Արդ որովհետեւ, ով Մայր Աս-  
տուծոյ, քու պաշտօնդ է պաշտպանել  
ու ողորմիլ նաեւ ամենամեծ մեղաւոր-

ներուն, որ քեզի կ'ապաւինին, ահա ես  
ալ քեզի կու դամ: Սիրելի Փաստա-  
բանս, կատարէ պաշտօնդ, պաշտպանէ  
զիս: Գիտեմ որ շատ անդամ վշտացու-  
ցի զԱստուած, իր բիւր բարութեանցն  
ու շնորհաց ապերախտ եղայ: Բայց աս  
չարիքն եղած է. կը ցաւիմ մեծապէս,  
եւ ուրիշ բան չեմ կրնար ընել՝ եթէ  
ոչ սրտանց զղջալ: Իսկ դուն կրնաս ինձի  
օգնել. բաւական է որ Որդւոյդ ըսես՝  
թէ պաշտպանս ես. անով բոլոր մեղ-  
քերուս թողութիւն կ'ընդունիմ եւ  
ստուգիւ կը փրկուիմ:

Սիրելի Մայր, քեզի կ'իյնայ զիս  
փրկութեան հասցընել:



## ԻԲ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

**Ե**ՐԳՈՑ երգոյն Հարսն իր Փեսան  
կը փնտռէր, եւ չդժնելով՝ կը հարցը-  
նէր. Մինէ զըր ոիրեաց անյն էօ ուեսէ+ \*:

\* Երդ. երդ. գ. 3:

Դեռ ան ժամանակ Յիսուս աշխարհք  
չէր եկած. բայց Հիմայ զՅիսուս սիրող  
հոգին ամէն ժամանակ Հաղորդութեան  
խորհրդոյն մէջ զինք կրնայ գտնել։ Հ.  
Աւիլա սովորութիւն ունէր ըսելու, թէ  
չկայ տեղ՝ որ սրբագոյն եւ ազնուա-  
դոյն ըլլայ քան եկեղեցիներն՝ ուր Յի-  
սուս Քրիստոս ներկայ է Ա. Խորհր-  
դոյն մէջ։

Ո՞վ անսահման սիրոյ արժանի Աս-  
տուած, ի՞նչպէս կրցար ան աստիճանի  
խոնարհիլ, որ մարդիկներուն մէջ մնա-  
լու եւ իրենց սրտին հետ միանալու  
համար հացի կերպարանաց տակ ծած-  
կուեցար։ Ո՞չ մարմնացեալ քան, ան-  
սպառ է խոնարհութիւնդ, ինչու որ նա-  
եւ սէրդ անսահման է։ Ինչպէս կրնամ  
բոլոր սրտէս չփրել զքեզ, երբ կը տես-  
նեմ թէ ինչնր ըրիր սէրս քեզի քա-  
շելու համար։ Բոլոր սրտէս կը սիրեմ  
զքեզ, Յիսուս իմ, եւ աւելի քու հա-  
ճութիւնդ կ'ուզեմ, քան իմ շահս եւ

կամացս կատարումը։ Բոլոր բաղձանքս  
ըլլայ այսուհետեւ, Աստուած իմ, սէր  
իմ, քու հաճոյքդ կատարել։ Վառէ  
սրտիս մէջ սաստիկ եռանդ անդադար  
առջեւդ կենալու, քեզի հետ խօսակցե-  
լու եւ զքեզ սիրտս ընդունելու։ Ստու-  
դիւ մեծ ապերախտութիւն կ'ընէի, ե-  
թէ քու քաղցր ու սիրալիր հրաւերդ  
չընդունէի։ Զնջէ սրտէս, Տէր իմ,  
արարածական իրաց սէրն ու բաղձանք-  
ները. ինչու որ դուն միայն արժանի ես  
որ բոլոր սէրս ու բաղձանքներս քեզի  
ըլլան։ Կը սիրեմ զքեզ, ամենասիրելի  
Աստուած։ Քեզմէ զատ բանի չեմ բաղ-  
ձար։ Իմ հաճութիւններս կատարել  
չեմ ուղեր, քու սուրբ կամքդ ընել  
կը բաղձամ։ Եւ ասիկայ բաւական է  
ինծի։ Ընդունէ, Յիսուս իմ, մեղաւորի  
մը բարի բաղձանքը, որ Ճշմարտիւ զքեզ  
սիրել կը փափաքի։ Քու շնորհքովդ  
օգնութեան հասիր ինծի, որպէս զի ես՝  
որ մինչեւ հիմայ դժոխոց եղկելի գե-

ըին եղած էի, ասկից ետքը քու սիրոյդ  
երջանիկ ծառան ըլլամ:

Կը սիրեմ զքեզ, Յիսուս իմ, բա-  
րութիւն իմ. ամէն բարիքներէն աւելի  
կը սիրեմ զքեզ:




## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ով քաղցր Թագուհի իմ, սիրելի  
Մայր, թէպէտ ես Որդիեղ ապստամ-  
բեցայ, բայց հիմայ զղջացեալ սրտիւ  
քեզի կը դիմեմ, որպէս զի մեղացս թո-  
ղութիւն ընդունիս: Մի ըսեր որ չես  
կրնար. վասն զի դուն հաշտութեան  
միջնորդ ես, եւ քու պաշտօնդ է օդնել  
անոնց՝ որոնց փրկութիւնը վտանգի մէջ  
է: Հզօր Թագուհի, դուն օդնական ես  
վտանգելոց. եւ ով ինծի չափ վտանգի  
մէջ կը գտնուի: Ես զԱստուած եւ իր  
շնորհքը կորսընցուցի, եւ գժոխոց ար-

ժանի եղայ. բայց չեմ գիտեր թէ թու-  
զութիւն ընդունեցայ. մանաւանդ որ  
կրնամ զինք նորէն կորսընցընել: Իսկ  
գուն աս ամէն չարեաց դարմանը կրնաս  
գտնել: Ամէն բարիքներն ընդունելու  
յոյսս վրադ դրած եմ. թողութիւն,  
յարատեւութիւն եւ վերջապէս ար-  
քայութիւնը քու ձեռքդ են: Կը յու-  
սամ որ քու բարեխօսութեամբդ օր մը  
փրկութեան հասնելով, ես ալ արքայ-  
ութեան մէջ՝ երանելեաց հետ անչափ  
ողորմութիւններուդ շնորհակալ պիտի  
ըլլամ. ամէն:

Ով Մարիամ, քու ամենազօր բարե-  
խօսութեամբդ օգնէ ինծի:



## ԻԳ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

**Ա**ՅՆՉԱՓ քրիստոնեայք ամէն տե-  
սակ աշխատութիւն յանձն առնելով,  
իրենք զիրենք մեծամեծ վտանգներու

մէջ գնելով, սուրբ Երկրին այն տեղերուն այցելութեան կ'երթան, ուր մեր սիրելի Փրկիչը ծնաւ, չարչարուեցաւ եւ մեռաւ: Բայց մենք պէտք չունինք այսպիսի Երկայն ճամբորդութիւններ ընելու եւ ինք զինքնիս մեծ վտանգներու մէջ գնելու. ինչու որ Տէրն մեր մեզի շատ մօտ է, մեզմէ քիչ մը հեռու մեր եկեղեցիներուն մէջ հաստատած է իր բնակութիւնը: «Եթէ պանդուխտները, կ'ըսէ Ա. Պաւղինս, Երանելի կը համարին իրենք զիրենք որ սուրբ տեղերէն, Քրիստոսի ծնած այրէն, թաղուած գերեզմանէն քիչ մը հող բերեն. որչափ աւելի պէտք ենք մենք այց ելլել Հաղորդութեան խորհրդոյն, որուն մէջ Յիսուս Քրիստոս անձամբ կը գտնուի. զոր ընելու ոչ մեծ աշխատութիւն պէտք է եւ ոչ վտանգ կայ: Կուսան մը՝ որուն սիրաբը Ա. Խորհրդոյն սաստիկ սէր բորբոքած էր Աստուած, Նամակի մը մէջ աս խօսքերը գրած է. «Տեսայ որ Աս-

տուծմէ ընդունած ամէն բարութիւններս Ս. Հաղորդութեան ձեռքով ընդունած եմ: Բոլոր անձս Յիսուսի Քրիստոսի նուիրեցի: Անթիւ շնորհքներ կան՝ որոնց մարդիկ մասնակից չեն ըլլար, վասն զի չեն ընթանար ամենասուրբ Հաղորդութեան: Իմացայ, տեսայ թէ Փրկիչն մեր սաստիկ կը բաղձայ այս Խորհրդոյն մէջէն անհամար շնորհքներ բաժնելու: Ո՞չ սուրբ Խորհուրդ, ով սրբազն հաց: Ո՞ւր կը ցուցընէ Աստուած՝ իր մեծազօր զօրութիւնն աս հացէն աւելի: Այս նշխարքին տակ ան ամէն բան կը գտնենք՝ զոր Աստուած մեզի համար ըրած է: Երանելեաց վիճակին նախանձելու պատճառ չունինք. ինչու որ զնոյն Աստուած մենք ալ երկրիս վրայ ունինք, որ մեզի ունեցած արտաքոյ կարգի սէրն աւելի զարմանալի եղանակաւ մը մեզի կը ցուցընէ: Աստուծոյ սիրովը վառուած հոգիներ, ջանացէք՝ որ ձեզի հետ ծանօթութիւն

ունեցողները յորդորէք Ա. Խորհրդոյն  
ստէպ այցելութիւն ընելու եւ անոր մեծ  
ջերմեռանդութիւն ունենալու : Այսպէս  
կը խօսիմ, վասն զի սուրբ Խորհրդոյն  
վրայ մտածելով ինք իրմէս կ'ելեմ: Եւ  
չեմ կրնար ալ ամենասուրբ Հաղորդու-  
թեան վրայ չխօսիլ, որ անչափ սիրոյ ար-  
ժանի է: Աս սքանչելի Խորհրդոյն մէջ  
ծածկուած Յիսուսին համար ինչ ընե-  
լիքս չեմ գիտեր: Այսպէս կը լմնցընէ  
նամակը:

Ո՛հ սերովքէք, դուք Աստուծոյ սի-  
րովը բորբոքած՝ հոս իմ եւ ձեր Աստու-  
ծոյն բոլորտիքը կը կենաք: Սակայն չէ  
թէ ձեր՝ հապա իմ սիրոյս համար եր-  
կնից թագաւորը մեր խորաններուն վրայ  
իր բնակութիւնը հաստատած է: Աղէ  
ով սուրբ հրեշտակք, իմ սիրտս ալ  
ձեր սիրովը բորբոքեցէք, ձեր եռան-  
դեամբը զիս լեցուցէք:

Յիսուս իմ, ինծի շնորհք տուր, որ  
մարդկան ունեցած սիրոյդ մեծութիւնը

Ճանչնամ, եւ սիրոյդ այնչափ մեծութիւնը տեսնելով, սրտիս եռանդը բորբոքի զքեղ աւելի եւս սիրելու, քեզի աւելի եւս հաճոյ ըլլալու։ Կը սիրեմ զքեղ, սիրելի Փրկիչ իմ, եւ միայն քեզի հաճոյ ըլլալու համար կ'ուզեմ զքեղ սիրել։

Յիսուս իմ, կը հաւատամ քեզի, յոյսս քու վրադ կը դնեմ, կը սիրեմ զքեղ, եւ ինք զինքս բոլորովին քեզի կը նուիրեմ։



## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ով սիրելի Կոյս, գթած Մայր ու ինամակալ որբոց։ Այն ողորմելի որբերը՝ մենք մեղաւորքս ենք, որ Աստուծոյ դէմ մեղանչելով՝ զինք կորսընցուցինք։ Սուրբ Կոյս Մարիամ, քեզի կ'ապաւինիմ. զԱստուած՝ իմ հայրս կորսնցուցի.

բայց դուն իմ Մայրս ես: Դուն պէտք  
է որ վրաս գթաս, ինծի օգնես որ դար-  
ձեալ կարող ըլլամ գտնել: Աս մեծ  
խեղճութեանս մէջ՝ զքեզ ինծի օգնու-  
թեան կը կանչեմ. գթա վրաս: Առանց  
օգնութեան ու անմիսիթա՞ր պիտի թո-  
ղուս զիս: Ո՛չ չէ, չէ. չի կրնար ըլլալ:  
Ո՞վ երբեք քեզի աղաշած է, որ դուն  
անոր օգնած չըլլաս: Ո՞վ քու պաշտպա-  
նութեանդ դիմած է, որ կորսուած ըլլայ:  
Միայն քու ողորմութեանդ չապաւինո-  
ղը կրնայ դատապարտուիլ: Ուրեմն թա-  
գուհի իմ եւ Մայր, եթէ փրկութիւնս  
կ'ուզես, շնորհք առ ինծի՝ որ միշտ քե-  
զի դիմեմ, փորձութեանց մէջ զքեզ  
օգնութեան կանչեմ եւ քեզի ջերմե-  
ռանդ ըլլամ:

Սուրբ Աստուածածին, օգնէ ինծի  
որ վրադ մեծ վստահութիւն ունենամ:

## ԻԴ. ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

**Ա**ՐԴԱՐԵՒ գու ես Աստուած ծած-  
իւալ\*: Աստուածային սիրոյ գործքերէն  
ամենեւին մէկուն այնչափ չի յարմա-  
րիր Մարդարէին աս խօսքը, որչափ ա-  
մենասուրբ Հաղորդութեան խորհրդոյն,  
որուն մէջ Աստուած բոլորովին ծած-  
կուած է: Բանն յաւիտենական մարմին  
առնելով՝ ծածկեց միայն աստուածու-  
թիւնը, եւ իբրեւ լոկ մարդ երեւցաւ:  
Իսկ հիմայ Ս. Հաղորդութեան մէջ իր  
մարդկութիւնն ալ ծածկելով՝ հացի  
կերպարանաց տակ մտած է, որպէս զի  
իր սիրոյն առաւելութիւնն յայտնի ցու-  
ցընէ. “Ծածկեալ է աստուածութիւնը,  
կ’ըսէ Ս. Բեռնարդոս, ծածկեալ է մարդ-  
կութիւնը. միայն իր սիրոյն մեծու-  
թիւնը կը տեսնուի” : Երբ որ մարդիկ-  
ներուն ունեցած մեծ սէրդ կը յիշեմ,  
Փրկիչ իմ, ինչ ըսելիքս չեմ գիտեր:

Աս սէրդ այնպէս սաստիկ եղաւ՝ որ նա-  
եւ մեծվայելըութիւնդ ծածկեցիր, փա-  
ռացդ շքեղութիւնը մէկդի դրիր, եւ  
Ս. Խորհրդոյս մէջ գտնուած ժամանակդ՝  
կարծես թէ ուրիշ բան չես ըներ՝ բայց  
եթէ զմարդիկ սիրել եւ իրենց ունեցած  
սէրդ յայտնել: Բայց ո՞չ, անոնք քու  
անչափ սիրոյդ քեղի ի՞նչ փոխարէն կը  
մատուցանեն :

Ո՛վ Յիսուս, դուն ան աստիճանի կը  
բաղձաս մարդիկներէն սիրուիլ՝ որ ի-  
րենց օգուտը քու փառքէդ ալ մեծ կը  
համարիս: (Կերէ համարձակութեանս,)  
Տէր իմ, չէի՞ր գիտեր թէ աս սիրոյ  
ցոյցդ ո՞րչափ անարգութիւններու եւ  
թշնամանքներու պատճառ պիտի ըլլար  
քեղի: Կը տեսնեմ, եւ դուն արդէն  
շատոնց տեսած էիր, թէ մարդիկներուն  
մեծ մասը քեղի բաւական պատիւ պիտի  
չմատուցանէ, պիտի չուզէ ճանչնալ թէ  
ճշմարիտ Աստուած ներկայ ես յա-  
մենասուրբ Հաղորդութեան: Գիտեմ որ

նոյն մարդիկ սրբագործեալ նշխարք-  
ները կրակի մէջ նետեցին, գետինը  
նետելով՝ ոտքի տակ առին, կոխկոտե-  
ցին։ Աը տեսնեմ նաեւ քեզի հաւա-  
տացողներէն շատերը՝ որ իրենց երկըր-  
պագութեամբքն այնչափ անօրէնու-  
թեանց փոքր հատուցում ընելու տեղ,  
կամ իրենց անվայել կեցուածքով  
դքեղ աւելի եւս կը վշտացընեն եկե-  
ղեցեաց մէջ, եւ կամ խորաններու վրաց  
մինակ կը թողուն դքեղ։ Երբեմն կան-  
թեղն ալ հոգալու փոյթ չեն տանիր։  
Երանի թէ արցունքներովս՝ նաեւ ա-  
րեամբս կարող ըլլայի ան տեղերը մա-  
քրել, ուր քու սիրալիր սիրտդ եւ ան-  
չափ սէրդ անպատուեցաւ։ Բայց՝ եթէ  
աս կարելի չէ, դոնէ կը բաղձամ եւ  
հաստատութեամբ կ'առաջադրեմ այս  
օրուընէ սկսեալ՝ մարդիկներէն կրած  
այնչափ անպատուութեանցդ փոխարէն  
ընելու համար՝ ստեղ քեզի այցելու-  
թեան գալ եւ երկրպագութիւն ընելը

ինչպէս որ այսօր կ'երկրպագանեմ։ Ընդունէ, Հայր յաւիտենական, աս տկար մեծարանքը՝ զոր հիմայ աշխարհքիս ամենէն մեծ մեղաւորս քեզի կը մատուցանեմի հատուցումն այնչափ անիրաւութեանց՝ որ քու սիրելի Որդւոյդ գէմ գործուեցան եւ կը գործուին։ Ընդունէ ան անսահման պատույն հետ միացընելով՝ զոր Քրիստոս խաչափայտին վրայ քեզի մատոյց եւ ամէն օր ալ Հաղորդութեան խորհրդոյն մէջ կը մատուցանէ։ Տէր, երանելի կը համարէի ինք զինքս՝ եթէ կարող ըլլայի զամէնքը Ախորհրդոյն ջերմեռանգութեան բորբոքել։

Ո՛վ ամենասիրելի Յիսուս, քու շնորհքովդ մարդկան սիրտը շարժէ՝ որ զքեզ ճանչնան ու բորբոքեալ սիրով սիրեն։




## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### Ա. ԿՈՅԱՆ ՄԱՐԻԱՄ

Ակ մեծագործագուհի, որչափ քա-  
ջազբերռութիւնն կը զգամ, երբ յաւիտե-  
նական փրկութեան հասնելու երկիր-  
դին մէջ՝ ինք զինքս քու պաշտպանու-  
թեանդ կը յանձնեմ, մտածելով որ  
դուն, սիրելի Մայր, այնչափ հարաւստ  
ես շնորհքներով՝ որ իրաւամբք “Ծով  
եւ աղբիւր շնորհաց եւ միսիթարու-  
թեանց, լրումն ամենայն բարութեանց, ո  
կը կօչուիս: Քու վրադ ունեցած վստա-  
հութիւնս անհամեմատ կ'առաւելու,  
մտածելով թէ որչափ կ'աշխատիս ու-  
րիշներուն բարիք ընելու. այնպէս որ  
շատ կը վշտանաս՝ երբ մէկը քեզմէ  
շնորհք չի խնդրեր: “Անիրաւութիւն  
կ'ընէ քեզի, ով սիրելի Մայր, ով որ  
զքեզ օգնութեան չի կանչեր: Ո՞հ  
մեծատուն եւ լի ամենայն իմաստու-  
թեամբ գթած թագուհի, գիտեմ որ

դուն հոգւս հարկաւորն ու օգտակարն իզմէ աւելի կը ճանչնաս, եւ զիս աւելի կը սիրես՝ քան թէ ես ինք զինքս կրնամ սիրել: Ընդունէ ինծի Աստուծմէ ան շնորհքը, զոր հոգւս օգտակար կը համարիս. աս միայն խնդրէ ինծի համար, եւ ասով կը շատանամ:

Աստուծած իմ, տուր ինծի ան շնորհքը, զոր սիրելի Մայրդ ինծի համար կը խնդրէ:



## ԻԵ. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

Յօղոս առաքեալ կը գովէ Քրիստոսի հնազանդութիւնն, ըսելով թէ իր յաւիտենական Հօրը մինչեւ ցմահ հնազանդ եղաւ: Բայց ասկէ անհամեմատ աւելին ըրաւ Հաղորդութեան խորհրդոյն մէջ: Վասն զի հոն չէ թէ միայն յաւիտենական Հօր՝ այլ նաեւ ամէն մարդու հնազանդ կ'ըլլայ, ոչ միայն

մինչեւ ցմահ, այլ մինչեւ աշխարհքիս  
կատարածը: Աս երկնից թագաւորն  
մարդու մը խօսքին հնազանդելով՝ եր-  
կինքէն աշխարհք կ'իջնայ. Ես ու ըստ-  
դէմ դաստիամ\* : Տապանակին մէջ հան-  
դարտ կը կենայ, ինք իրմէն չի շարժիր:  
Թող կու տայ որ ուր կ'ուզեն զինք դնեն,  
թէ ամենուն առջեւ ճաճանչին մէջ՝ թէ  
տապանակին մէջ փակուած. ուր որ  
կ'ուզեն տանիլ՝ ամենայն յօժարու-  
թեամբ յանձն կ'առնու երթալ: Թոյլ  
կու տայ որ զինք բաշխեն որուն որ կ'ու-  
զեն, արդարներուն ու մեղաւորներուն:  
Աշխարհքիս վրայ ապրած ժամանակը  
կը հնազանդէր ամենասուրբ կուսին եւ  
Ս. Յովսէփայ, կ'ըսէ Վուկաս. բայց եր-  
կինք համբառնալէն ետքը՝ այնչափ ա-  
րաբածոց կը հնազանդի, որչափ որ քա-  
հանայք կան:


Ո՛Հ սիրալիր սիրտ Յիսուսի իմոյ, որ  
ամէն առաքինութեանց՝ բայց մանաւանդ

սիրոյ աղբիւրն ես, թոյլ տուր որ սիրտս  
 քեզի բանամ: Կը բաղձայի քեզի այն-  
 չափ պատիւ եւ փառք տալ որչափ դուն  
 աս խորհրդոյն մէջ յանիտենական Հօրդ  
 կու տաս: Գիտեմ որ դուն զիս աս սե-  
 ղանոյն վրայ միշտ նոյն սիրով կը սիրես,  
 որով սիրեցիր երբ դառն ցաւերու խա-  
 չափայտին վրայ մեզի համար աստուա-  
 ծային կեանքդ սպառեցիր: Ո՛վ աս-  
 տուածային սիրտ, լուսաւորէ ամենզքեզ  
 չճանչցողները: Քու չարչարանացդ ար-  
 ժանեօնն աղատէ կամ գոնէ միսի-  
 թարէ քաւարանի հոգիները, որ իբրեւ  
 ընտրեալ՝ արդէն քուկդ են: Երկինքի  
 երանեալներուն եւ երկրիս վրայ դըտ-  
 նուող արդար հոգիներուն հետ քեզի  
 կ'երկրպագանեմ, զքեզ կը սիրեմ ու  
 քեզի շնորհակալութիւն կը մատուցա-  
 նեմ: Մաքրէ, ով սուրբ սիրտ Յիսուսի,  
 իմ սիրտս ամեն արարածական յօժա-  
 րութիւններէն, եւ քու սուրբ սիրովդ  
 լեցուր: Ո՛վ քաղցր սիրտ Յիսուսի,

գրաւէ իմ սիրտս, որպէս զի աս օրւընէ  
սկսեալ՝ բոլորովին քուկդ ըլլայ, եւ  
ճշմարտապէս կարող ըլլամ ըսել Առա-  
քելցյդ հետ. Ու Դինեացէ շի է սիրոյն  
Քըխառասի\*: Ով ամենասուրբ սիրտ, գրոշ-  
մէ սրտիս մէջ դառն չարչարանքներդ  
ու վշտերդ, որոնց աս աշխարհքիս վրայ  
այնպէս մեծ սիրով համբերեցիր իմ սի-  
րոյս համար: Ծնորհք տուր որ զանոնք  
տեսնելով, ես ալ բաղձանք ունենամ  
աս կենացս ամէն վշտացն եւ նեղու-  
թեանցը համբերութեամբ տանելու:  
Ով խոնարհ սիրտ Յիսուսի, քու խո-  
նարհութենէդ ինծի մաս մը տուր: Սիրտ  
հեզ, քու հեզութենէդ ինծի բաժին  
հանէ: Զնջէ սրտէս ան ամէն ցան-  
կութիւնները՝ որ քեզի անհաճոյ են:  
Ծնորհք տուր որ ինք զինքս բոլորովին  
քեզի նուիրեմ, եւ ուրիշ բանի չբաղ-  
ձամ, բայց եթէ ինչ դուն կ'ուզես որ  
բաղձամ: Զօրութիւն տուր որ միայն

քեզի հնագանդելու, զքեղ սիրելու եւ  
քեզի հաճոյ ըլլալու. համար ապրիմ:  
գիտեմ որ քեզի շատ պարտականու-  
թիւն ունիմ. վասն զի ինծի արտաքոյ  
կարգի շատ ուեր ցուցոցիր, անոր հա-  
մար մեծ քան չէ՝ եթէ ես ալ քու ոի-  
րցդ համար ինք դիմքս քեզի բոլորա-  
նուեր ողջակեղ ընեմ:

Սիրու Յիսուսի իմոյ, դուն եղիր իմ  
սրտիս մի միայն տէրը:



## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### Ա. Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

“Մարիամ ան երկնառոր տապանն է,  
կ'ըսէ Ս. Քեռնարդոս, որուն մէջ եթէ  
յարմար ժամանակին մոնելով՝ ամրա-  
նանք, յաւիտենական դատապարտու-  
թեան նաւաբեկութենէն կը պրծինք՝  
Տապանը՝ որուն մէջ նոյ համաշխարհա-  
կան ջրհեղեղէն ազատեցաւ, Մարեմայ

օրինակն էր։ Սակայն Մարիամ անկէ  
աւելի մեծ եւ զօրաւոր տապան է. վասն  
զի Նոյի տապանին մէջ քանի մը հոգի  
եւ քիչ անասուններ կրցան աղատիլ.  
իսկ մեր աղատիչը Մարիամ ամեն իր  
պաշտպանութեան ապաւինողներն իր  
վերարկուին տակ կ'առնու, եւ զամենքն  
ապահովապէս փրկութեան կը հաս-  
ցընէ։ Շատ խեղճ ու տառապեալ կ'ըւ-  
լայինք, եթէ զՄարիամ չունենայինք. ի  
վերայ այսր ամենայնի որչափներ կան,  
որ յաւիտեան կը կորսուին, Տիկին իմ.  
բայց ինչո՞ւ համար. վասն զի քու գթու-  
թեանդ չեն ապաւինիր։ Ո՞վ երբեք կոր-  
սու եցաւ իրենց յոյսը քու վրադ գնող-  
ներէն, քեզի ապաւինողներէն։

Ամենասուրբ Կոյս Մարիամ, օգնէ  
մեզի՝ որ միշտ քեզի ապաւինինք։

## ԻՉ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

**Յ**ԱՆԴԵԱՑԻՔ էւ ուրախ լեռն-  
 իւն Սկսնէ, զի բարյըրաց Սուրբն Խորայ-  
 էլլ է Հջ նորա\*: Ո՛վ Աստուած, քանի  
 ուրախութեամբ, ո՛րչափ յուսով պէտք  
 էինք լեցուիլ՝ մտածելով որ աս աշ-  
 խարհքիս վրայ, մեր եկեղեցիներուն մէջ,  
 մեր բնակութեանը մօտ՝ Հաղորդու-  
 թեան խորհրդոյն մէջ կը բնակի Սուրբն  
 սրբոց, Ճշմարիտն Աստուած՝ որ իր ներ-  
 կայութեամբն երկնից սուրբերն երա-  
 նելի կընէ, ան որ գլխովին սէր է: Աս  
 խորհուրդը՝ սիրոյ խորհուրդ չէ միայն,  
 այլ նոյն իսկ սէր է, նոյն Աստուածն է,  
 որ իր արարածոցը ցուցուցած անչափ  
 սիրոյն համար՝ ամենայն իրաւամբ սէր  
 կը կոչուի. Ասուսած սէր է\*\*\*: Սակայն  
 կը լսեմ, Ցիսուս իմ, որ կը գանգատիս  
 թէ Օռար էի, եւ ու ժողովեցէ+ զիս\*\*\*:

։ Եսայ. ԾԲ. 6: ։ Ա. Յով. Դ. 8:

։ Մաթ. ԻԵ. 43:

Ստոյգ է, Տէր, լսածդ, գանգատելու  
իրաւունք ունիտ: Ես ալ ան ապերախտ-  
ներէն մէկն եմ, որ զքեզ թող տալով,  
երեսէ ձգելով, հազիւ քիչ անգամ  
քեզի այցելութեան կու գան: Պատժէ  
զիս ուղածիդ պէս. բայց յանցանացս  
արժանի պատժով մի պատժեր. քու  
առջեւէդ մի մերժեր զիս: Այսուհետեւ  
ինք զինքս ուղղել կ'ուղեմ: Աս օրւընէ  
սկսեալ՝ չէ թէ միայն քեզի այցելու-  
թիւն ընել, այլ նաեւ ձեռքէս եկա-  
ծին չափ միշտ քովդ մնալ կը բաղձամ:

Ո՛վ բազմագութ Փրկիչ իմ, շնորհք  
տուր որ աս խոստմանս հաւատարիմ  
մնամ. եւ իմ օրինակաւս ուրիշներն ալ  
յորդորեմ, որ Ա. Հաղորդութեան խոր-  
հըրդայն մէջ՝ քեզի յաճախ այցելու-  
թիւն ընեն: Կը լսեմ որ յաւիտենա-  
կան Հայրդ կ'ըսէ. Դու է Ուրեմն է՞ սիրելք՝  
ընդ ոք հաճեցայ\*: Արդ եթէ Աստուած  
իր բոլոր հաճութիւնն ի քեզ կը գտնէ,

ես ողորմելիս ու շնչին որդո՞ աս արտա-  
սուաց հովտին մէջ իմ ուրախութիւնս,  
իմ բերկրութիւնս ի քեզ ինչպէս  
չգտնեմ: Ով հուր սպառիչ, այրէ սպա-  
ռէ սրտէս ամէն արարածական իրաց  
ցանկութիւնը. վասն զի անոնք են՝ որ զիս  
քեզմէ կը հեռացընեն: Եթէ ու զենաս՝  
կրնաս ընել. Տեր, ենէ իամիս՝ կարող ես զիս  
սրբէլ\*: Գուն իմ սիրոյս համար շատ  
բան ըրիր. աս մէկ հատիկ շնորհքն ալ  
ըրէ, հանէ սրտէս ամէն սէրն որ քեզի  
համար չի վառիր: Աւասիկ, Աստուած  
իմ, բոլոր անձս քեզի կը նուիրեմ: Կե-  
նացս մնացած սակաւօրեայ ժամանակն  
ամենասուրբ Խորհրդացն կը նուիրեմ:  
Յիսուս իմ, կ'ուզեմ որ գուն՝ թէ աս  
կենացս մէջ իմ միակ սէրս, միակ միսի-  
թարութիւնս ըլլաս, եւ թէ մահուանս  
ժամանակը իբրևու վերջին թոշակ ննծի  
արքայութեան առաջնորդ ըլլաս: Այս-  
պէս կը յուսամ, այսպէս ալ ըլլայ:

Ե՞րբ, Յիսուս իմ, ժամանակ պիտի  
գայ՝ որ քու գեղեցիկ տեսութեամբդ  
զմայլիմ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ԱՌ Ս. ԿՈՅՉԱՆ ՄԱՐԻԱՄ

**Մ**եր ամէն չարեաց դարմանն ու հիւ-  
անդութեանց բժշկութիւնը քեզմով  
կը գտնենք, ով սիրելի Մայր. քեզմէ-  
է տկարութենէն կանգնելու մեր զօ-  
րութիւնը: Դուն ես այն դուռն որ մե-  
զի բացուած է՝ մեղաց ծառայութենէն  
ելելու համար: Քեզի դիմելով կը գըտ-  
նենք մեր սրտին հանդարտութիւնը, ին-  
չու որ դուն ես մարդկան անկասկած  
խաղաղութիւնը. կը գտնենք աս կենաց  
տառապանացը մէջ՝ մեր միսիթարու-  
թիւնը, ինչու որ դուն մեր պանդիստու-  
թեան միսիթարութիւնն ես: Վերջա-  
պէս ի քեզ կը գտնենք Աստուծոյ ա-

մէն շնորհքներն եւ զնոյն ինքն Աստուած։ Դուն ես Աստուծոյ շնորհաց աթոռը, դուն ես ան կամուրջը՝ որուն վրայէն Աստուած անցաւ։ Երջանիկ կամուրջ, որուն վրայէն անցնելով՝ մեղի եկաւ մեր մեղաց համար մեզմէ հեռացող Աստուած, եւ իր անսպառ շնորհքով մեր սրտին մէջ բնակեցաւ։

Ո՛վ Մարիամ, դուն ես իմ զօրութիւնս, աղատութիւնս, խաղաղութիւնս ու փրկութիւնս։

---

## ԻԵ · ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

**Ա**ՅՈՒՐԲ ԵԿԵՂԵցին ամենասուրբ Հաղորդութեան տօնին այսպէս կ'երգէ. Ո՛վ իցէ աղէ մէ՝ որոյ իցէ Աստուած յօդ ի նոսու, որոյէս Տէր Աստուած մէր յամենայնէ՝ որովհ իարդասացու+ ու+ նո\*։ Հեթանոսք լսելով մեր սիրոյն համար Աստուծոյ

ըրածները, զարմանալով կ'ըսէին. “Ա՛հ, որչափ բարերար է եղեր Աստուածն քրիստոնէից” : Եւ ստուգիւ Ճշմարիտ է ըսածնին. ինչու որ թէեւ հեթանոս իրենց քմաց համաձայն աստուածներ կը հնարէին, այսու ամենայնիւ այնչափ առասպելեալ եւ սուտ աստուածներուն մէջ մէկու մը համար ալ չեն ըսեր թէ մարդկան այնչափ սէր ունեցած ըլլայ՝ ինչպէս մեր Ճշմարիտ Աստուածն, որ զինքը պաշտողներուն իր սէրը ցուցընելու եւ զիրենք շնորհքով լեցընելու համար՝ սիրոյ այնպիսի մեծ սքանչելիք գործեց, որ անով միշտ մեզի հետ կ'ըլլայ, անդադար մեր խորանաց վրայ ծածկեալ ու փակեալ կը մնայ, իբրեւ թէ եւ ոչ րոպէ մը մեզմէ կարենայ բաժնուիլ: Յէշառակ արար ստոնչելեաց իւրոց\* :

Աւքեմն, ամենասիրելի Յիսուս իմ, գուն աս ամենամեծ հրաշքն ուղեցիր գործել, որպէս զի միշտ մեր քով մնա-

լու սաստիկ բաղձանքդ լեցընես : Ի՞նչ է  
ուրեմն պատճառ՝ որ մարդիկ քու առ-  
ջեւեդ կը փախչին . ի՞նչպէս կրնան այն-  
շափ ժամանակ քեզմէ հեռու ապրիլ :  
Ինչո՞ւ համար այնպէս քիչ անգամ՝ քեզի  
այցելութիւն կ'ընեն . եւ եթէ քառորդ մը  
առջեւդ կենան, ձանձրութենէն իրենց  
հազար տարի կու գայ : Ո՛հ, Յիսուս,  
որչափ մեծ է համբերութիւնդ : Գի-  
տեմ, Տէր իմ, որ շատ մեծ է . վասն զի  
մեզի ունեցած սէրդ ալ արտաքոյ կարգի  
մեծ է : Եւ աս կը ստիպէ զքեզ միշտ  
մեզի պէս ապերախտներու մէջ մնալու :

Ո՛վ Աստուած, որովհետեւ անչափ  
ես կատարելութեամբ, ուստի նաեւ  
սիրով, մի թողուր ապա որ ես ալ այ-  
սու հետեւ ան ապերախտներէն ըլլամ,  
որոնց մէջ մինչեւ հիմայ գտնուեցայ :  
Տուր ինձի այնպիսի սէր՝ որ քու ար-  
ժանեացդ եւ իմ պարտուցս համեմատ  
ըլլայ : Կը խոստովանիմ, Տէր, որ ես ալ  
երբեմն առջեւդ կենալէն ձանձրացայ ,

վասն զի զքեղ չէի սիրեր եւ կամ քիչ  
կը սիրէի: Սակայն եթէ շնորհքովդ այն-  
չափի հասնիմ՝ որ զքեղ ճշմարտապէս  
սիրեմ, ալ անկէ ետքը գիշեր ցորեկ  
Սիրելոցդ առջեւը կենալն ինձի ծանր  
չի դար: Յաւիտենական Հայր, քեզի  
կը նուիրեմ միածին Որդիդ. ընդունէ  
զինքն իմ անձինս տեղ, եւ իր արժա-  
նեացը համար ինձի Ա. Հաղորդութեան  
այնպիսի վառեալ սէր պարգեւէ, որ  
ամէն ժամանակ՝ մտքով ու ցանկու-  
թեամբ ան եկեղեցիներուն մէջ ըլլամ,  
ուր ամենասուրբ Խորհուրդը կը գըտ-  
նուի. անդադար անոր վրայ Խորհիմ,  
ան ըլլայ իմ բաղձանքս, անոր այցելու-  
թիւն ընելու ժամանակին սպասեմ, եւ  
անոր հետ տեսութիւն ընելով՝ Յիսու-  
սիս մօտաւորութեամբն զմայլիմ:

Աստուած իմ, Յիսուսի արժանեացը  
համար ինձի շնորհք տուր՝ որ Ա. Հա-  
ղորդութեան սաստիկ սէր ունենամ:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### Ա. Ս. ԿՈՅՏՆ ՄԱՐԻԱՄ

Մարիամ Դաւթին այն աշտարակն  
է, որուն համար Ա. Հոգին կ'ըսէ՛ թէ  
Պարանոց +ո իբրեւ զաշտարակն Դաւթինէ. հա-  
ղաք վահան+ ի-իւեալ էն զնանէ, ամենայն ներտ  
սպառազինոց\*: Այսինքն՝ աշտարակ մը  
հազար վահանով եւ սպառազինութեան  
ամէն զէնքերով զարդարուած, իրեն  
ապաւինողները պաշտպանելու համար:  
Ուրեմն ամենասուրբ Կոյս, դուն աշտա-  
րակ ես պատերազմի մէջ գտնուողներուն  
համար: Ո՛վ սիրելի Թագուհի իմ, որ-  
չափ յարձակում կը կրեմ թշնամինե-  
րէս, որոնք զիս չորս կողմանէ պաշտարած՝  
Աստուծոյ շնորհքէն եւ քու պաշտպա-  
նութենէդ մերկացընել կ'ուզեն: Բայց  
դու ես իմ զօրութիւնս: Չես քաշուիր՝  
իրենց վստահութիւնը քու վրադ դնող-  
ներուն համար պատերազմելէն, ինչու

\* ԵՐԳ. ԵՐԳ. Դ. 4:

որ անոնց հզօր պաշտպանն ես։ Ուրեմն  
քովս կեցիր եւ պաշտպանէ զիս։ բոլոր  
յօյսս քու վրադ հաստատած եմ։  
Մարիամ, Մարիամ։ քու անունդ  
իմ զէնքս է։

## ԻԵ. ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Յօնաշ բան կրնայ մեղի զլանալ Աս-  
տուած, կ'ըսէ Պօղոս առաքեալ՝ իր  
միածին Որդին մեղի պարգեւելէն ետքը.  
Զիանք ու նովաւ հանդերձ զամենայն շնոր-  
հիցէ մեղ \*։ Գիտենք որ Հայրն յաւի-  
տենական ամէն իշխանութիւն տուաւ  
Ցիսուսի. Զամենայն ինչ ետ Հայր է յեւս-  
նորա : \*\* Ուրեմն անդադար շնորհակալ  
ըլլանք Աստուծոյ բարութեան, ողոր-  
մութեան, առատաձեռնութեան, որ  
զմեզ ամէն շնորհքներով եւ բարու-  
թիւններով հարստացընելու համար՝ իր

\* Հռովմ. Ը. 32:

\*\* Յով. Ճ. Գ. 3:

սիրելի Որդին մեզի շնորհեց Հաղորդու-  
թեան խորհրդոյն մէջ։ Յամենայն մէժա-  
շաբու+ դու+ նովա+ ... զի դու+ մի նուպ-  
չցի+ եւ մէ իւ+ շնորհօ+ \*։ Ուրեմն ով Փըր-  
կիւ աշխարհի, մարմնացեալ Քանդ Աս-  
տուած, կրնամ ամենայն համարձակու-  
թեամբ ըսել թէ դու իմս ես, բոլորո-  
վին իմ՝ եթէ ուզեմ։ Քայց կրնամ յան-  
դըգնիլ ըսելու թէ ես ալ բոլորովին  
քուկդ եմ՝ ինչպէս դուն կ'ուզես։ Թող  
մի տար, Տէր, որ աշխարհքիս վրայ այս-  
պիսի ապերախտութիւն դործուի, որ  
դուն իմ բաղձացած ժամանակս՝ իմս  
ըլլաս. իսկ ես՝ ասոր հակառակ դէմ  
դնեմ քու բաղձանքիդ՝ որ կ'ուզես թէ  
քուկդ ըլլամ, եւ չուզեմ քուկդ ըլ-  
լալ։ Ստոյգ է, յառաջադոյն աս բանս  
պատահեցաւ, բայց թող մի տար որ այ-  
սուհետեւ ալ ըլլայ։ Հաստատուն ա-  
ռաջադրութիւն կը դնեմ՝ այսօրուընէ  
ինք զինքս քեզի բոլորանուէր ողջակէզ

\* Ա. Կոբու. Ա. 5.

ընելու: Քեզի կը նուիրեմ այսօր եւ ընդ  
միշտ իմ կեանքս, կամքս, խորհուրդ-  
ներս, գործքերս եւ կրած ամէն վշտերս:  
Աւասիկ Տէր, այսուհետեւ քուկդ եմ.  
Քեզի նուիրեալ պատարագի մը պէս՝  
ամէն արարածական իրերէն կը հրա-  
ժարիմ, եւ բոլոր անձս քեզի կ'ընծայեմ:  
Քու աստուածային սիրոց բոցովը մա-  
շէ, սպառէ զիս: Զեմ ուղեր որ այսու-  
հետեւ արարածները սրտիս մէջ մաս  
մ'ունենան: Այն սէրն զոր նաեւ զքեզ  
չսիրած՝ մանաւանդ թէ զքեզ ատած  
ժամանակս ինծի ցուցուցիր, կը յուսա-  
ցընէ զիս՝ որ հիմայ ալ որ զքեզ կը սի-  
րեմ՝ աղաչանքս կ'ընդունիս:

Հայր յաւիտենական, քեզի կը նուի-  
րեմ այսօր սիրելի Որդւոց Յիսուսի  
ամէն առաքինութիւնները, հառաչանք-  
ներն եւ սրտին ամէն իղձերը: Ընդունէ  
զանոնք իմ ձեռքէս, եւ իր արժանեաց  
համար՝ որ իմս են, վասն զի ամէնն  
ալ ինծի պարգեւած է, այն շնորհք-

Ները տուր ինծի՝ զոր միածին Որդիկ  
ինծի համար քեզմէ կը խնդրէ։ Յիսու-  
սին աս արժանեօքը շնորհակալ կ'ըլլամ  
մինչեւ հիմայ ինծի ըրած ողորմութեանդ  
եւ բարերարութեանցդ։ ‘Նոյն արժա-  
նեօք հատուցում կ'ընեմ իմ մեղացս  
պարտուցը։ ‘Նոյն արժանեօք կը յուսամ  
քեզմէ ամենայն ինչ, թողութիւն, յա-  
րատեւութիւն, արքայութիւն, եւ ա-  
մենէն մեծ պարգեւը՝ քու սուրբ սէրդ։  
Գիտեմ, Տէր, որ աս շնորհքներուն ես  
եմ արգելք դնողը. բայց դուն ասոր ալ  
դարման տար։ Աս շնորհքները կը խըն-  
դրեմ Յիսուսի Քրիստոսի անուամբը,  
որ խոստացաւ թէ Զոր ինչ եւ ինդրէցէն  
է Հօրէ իմէ յանուն իմ, ուսցեցել\*։ Ուրեմն  
այս անուամբ խնդրածս չես կրնար ինծի  
զլանալ։ Տէր, ուրիշ բանի չեմ բաղձար,  
բայց եթէ զքեզ սիրել, ինք զինքս բո-  
լորովին քեզի տալ. որպէս զի այսուհե-  
տեւ՝ յառաջուան պէս քու մեծ սիրոյդ

անշնորհակալու չըլլամ։ Քու հայրական  
աչքովդ նայէ ինծի եւ լսէ աղաչանաց։  
Ճնորհք տուր որ այս օր՝ Ճշմարտապէս  
եւ կատարեալ սիրով քեզի դառնա-  
լուս նշանաւոր օրն ըլլայ։ Ճնորհէ որ  
այսուհետեւ ըզքեզ սիրելէն երբեք  
չգաղրիմ։ Կը սիրեմ զքեզ, ով Աս-  
տուած իմ, կը սիրեմ զքեզ, անսահ-  
ման բարութիւն իմ, արքայութիւն իմ,  
կեանք իմ, կը սիրեմ զքեզ։

Յիսուս իմ եւ ամենայն ինչ, դուն  
կը բաղձաս որ պքուկդ րլլամ, ես ալ  
անկէ զատ բան չեմ ուզեր։

---

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

#### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ամենասուրբ Կոյս Մարիամ, որչափ  
օգնութիւն կը գտնեմ տառապանաց  
մէջ, որչափ միիթարութիւն՝ նեղու-  
թեանցս մէջ, փորձութեան ժամանակ՝

ինչ զօրութիւն կը զգամ, երբ անունդ  
կը յիշեմ եւ զքեղ օգնութեան կը  
կանչեմ։ Մեծապէս իրաւունք ունիք,  
ով երանեալք երկնից, կոչելու իմ  
Մայրս՝ “Նաւահանդիստ վտանգելոց,  
խեղճութեան ժամանակ” սփոփութիւն,  
տառապանաց մէջ՝ միսիթարութիւն, եւ  
արտասուաց փարատիչ։ Մայր իմ Մա-  
րիամ, օգնէ ինծի, վասն զի լի եմ ամեն  
տեսակ մեղքերով, թշնամիներէն պա-  
շարուած, առաքինութիւններէն բոլո-  
րովին զուրկ, Առտուծոյ սէրէն պաղած։  
Օգնէ, կ'աղաչեմ, օգնէ ինծի, որ նոր  
կեանք մը սկսիմ։

Փոխէ զիս, Մայր իմ, փոխէ սիրտս.  
Գիտեմ որ աս քանս յաջողցընելը քու  
ձեռքբերէ։

## ԻՇ. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

**Ա**յսաւիկ էամ ես ուր գուրա եւ բու-  
խեմ\*: Ով մարդասէր հովիւ, որ սիրելի  
խաշանցդ համար ինք զինքդ խաշին վրայ  
զոհ մատուցանելով՝ մեղի համար մեռ-  
նիլը բաւական չհամարեցար. հապա  
նաեւ մեր խորաններուն վրայ աս աս-  
տուածային Խորհրդեան մէջ մեր սիրոյն  
համար ծածկուած մնալ ուղեցիր, որ-  
պէս զի մեր սրտին դուռն աւելի ստէպ  
եւ աւելի մօտէն կարող ըլլաս բախել,  
եւ այսպէս մեր սրտերուն մօտենալ  
կարենաս. ո՞չ, երանի թէ ես ալ մօ-  
տաւորութեամբդ այնպէս կարենայի ու-  
րախանալ, ինչպէս Հարսդ կը ցնծար  
ու կը գոչէր՝ թէ Ընդ հովանեաւ նոր-  
շանիացայ նորել, նորոյ\*\*: Ով ցանկալի  
Խորհուրդ, երանի էր ինծի՝ եթէ զքեզ  
սիրէի, բայց ճշմարտապէս սիրէի: Այն  
ժամանակ գիշեր ցորեկ քեզմէ հեռա-

\* Յայտն. Դ. 20:

\*\* ԵՐԿ. ԿՐԿ. Բ. 3:

նալ չեի ուզեր, բոլոր խնդութիւնս ու  
երանութիւնս հացի կերպարանաց տակ  
ծածկուած փառացդ շքին մէջ կը գըտ-  
նէի, զոր եռանդուն հոգիք կը վայելեն:  
Աս սիրոյ Խորհրդեան մէջ պահուած  
շնորհօքդ բոլորովին քեզի քաշէ զիս:  
Զիես զիս. զնեա հոգոյ իւղու +ոց ընթացու-  
թէ+\*: Այս, սիրելի Փրկիչ իմ, այն ժա-  
մանակ ամէն բան թող կու տայի, ամէն  
երկրաւոր հաճութիւններէ կը հրաժա-  
րէի, եւ սուրբ Հաղորդութեան մէջ  
ծածկուած Աստուծոյդ ետեւէն կ'եր-  
թայի:

Ուղիւ Նորագունէ Յինենոյ շուրջ զե-  
ղանով +ով\*\*: Կատարելութեան որչափ  
գեղեցիկ պառողներ կը բերեն՝ նո-  
րատունկ ծառերու պէս՝ ան երանելի  
հոգիներն, որ ամենասուրբ Հաղորդու-  
թեան առջեւ կեցած՝ քու սիրովդ կը  
վառին կը բորբոքին: Բայց ես այսպէս  
ամէն առաքինութիւններէն թափուր,

սեղանոյդ առջեւ ելլելու կ'ամչնամ։  
Դուն կը հրամայես որ զքեզ մեծարելու  
համար սեղանոյդ մերձեցողը՝ առանց  
ընծայի չգայ. Ու Երեւեցիս առաջ  
Տեռան Աստուծոյ ուստ ունայնայեւն։<sup>\*</sup>  
Ուրեմն ինչ ընեմ, չելլեմ առջեւդ,  
քեզի այցելութիւն չընեմ։ Ոհ, չէ. դուն  
աս չես ուզեր։ Թէեւ աղքատ եւ խեղճ՝  
քեզի կը ներկայանամ. դուն շնորհէ  
ինծի ան պարգեւներն՝ զոր կը բաղձաս  
որ ես քեզի նուիրեմ։ Կը տեսնեմ որ  
դուն Ս. Խորհրդոյն մէջ կը կենաս եւ<sup>1</sup>  
կը սպասես՝ ոչ միայն սիրելիներուդ  
վարձք տալու համար, հապա նաեւ աղքատացեալները քու շնորհացդ տուրքերով։ Հարստացընելու համար։

Աստուած իմ Յիսուս, այսօր իսկ քու  
սիրալիր դիտաւորութիւններդ իմ վրաս  
կատարէ։ Ով իմ սրտիս թագաւորը; Քու  
հօտիդ սիրով խանդակաթ վառուած  
հովիւ, աս սիրոյաթոռոցդ կը մերձենամ.

\* Երկր. օրին. Ժ. Զ. 16:

ու երկրպագութիւն կ'ընեմ։ Եւ որովհետեւ մատուցանելու ուրիշ բան չունիմ, ողորմելի սիրտս իբրեւ ընծայ առջիդ կը դնեմ, որ սիրոյդ եւ հաճոյիցդ ողջակէղ ըլլայ։ Չեռքէս եկածին չափ կ'ուղեմ սիրել զքեղ։ քեզի քաշէ զիս։ Սուրբ կամացդ հետ անքակ կապէ զիս։ որպէս զի կարող ըլլամ զօղոս առաքելոյն հետ ըսել ուրախութեամբ՝ թէ Ես իտուալ Յէսուսի Քրիստոսէ<sup>\*</sup>։ Զիս քեզի հետ միացուր։ Ծնորհք տուր որ ամէն բան կորսնցընեմ։ Եւ զքեղ միայն գտնեմ, զքեղ միայն սիրեմ։ Կը սիրեմ զքեղ, Ա. Խորհրդոյն մէջ ծածկեալ Աստուած իմ։ քեզի հետ սերտիւ կը կապուիմ։ կ'ուղեմ քեզի հետ միաւորիլ։ Ծնորհէ որ զքեղ միայն գտնեմ, զքեղ միայն սիրեմ։

Յիսուս իմ, գուն միայն ինձի բաւական ես։

\* Եփես։ Գ. 11. Յանձնական և ՀԱ բջ.

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Սուրբ Բեռնարդոս կ'անուանէ զՄարիամ “Արքունի Ճանապարհ, որուն վրայէն, կ'ըսէ, ապահովութեամբ մեր սիրելի Փրկչին եւ փրկութեան կրնանք հասնիլու: Ուրեմն, ով Թագուհի իմ, որովհետեւ դուն հզօր պաշտպանութեամբդ մեր հոգիներուն առ Աստուած կ'առաջնորդես, կ'աղաշեմ՝ զիս մայրենի բազկացդ մէջ ընդունէ եւ Աստուծոյ հասցուր: Տար, տար զիս. եւ եթէ դէմ գնեմ, բռնութեամբ տար: Կապէ՛ կաշկանդէ հոգիս եւ անսաստ կամքս քու սիրոյդ քաղցր եւ հզօր կապանքովը, որպէս զի բոլոր արարածները թող տալով՝ զԱստուած միայն եւ իր աստուածային ամենասուրբ կամաց կատարումը փնտուէ: Ո՛վ սքանչելի Դշխոյ, ցուցուր երկնից թէ որչափ մեծ է զօրութիւնդ: Քու սյնչափ սքանչելիքներուդ վրայ՝ աս

Հրաշքն ալ գործէ, եւ զիս Աստուծոյ  
մօտեցուր, որ Աստուծմէ բոլորովին հե-  
ռացած եմ:

Մարիամ, դուն կրնաս զիս սուրբ  
ընել. կը յուսամ որ իրօք ալ կ'ընես:

## Լ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

**Ա**յցելութիւն նաւուցանես զերեսս +ո յի-  
նէն\*: Կը վախնար Յովը տեսնելով  
որ Աստուած երեսն իրմէ կը ծածկէ:  
Բայց մենք վախնալու պատճառ չունինք՝  
երբ կը տեսնենք թէ Յիսուս Քրիստոս  
Ս. Հաղորդութեան մէջ իր մեծվայել-  
չութիւնը մեզմէ կը ծածկէ: Մանաւանդ  
թէ պէտք է որ ասով մեր վստահու-  
թիւնն ու սէրն աւելնայ. Վասն զի մեր  
սեղաններուն վրայ անո՞ր համար միայն  
հացի կերպարանաց տակ ծածկուած է,  
որպէս զի իր սէրն աւելի յայտնի ընէ  
եւ զմեղ քաջալերէ իրեն վստահելու:

Աստուած՝ ան Ս և Խորհրդոյն մեջ իր  
երեսը մեզմէ ծածկելով, իր մեծ սէրը  
յայտնի կ'ընէ, կ'ըսէ Կովարինոս։ Վասն  
զի եթէ երկնից Թագաւորն իր շքեղու-  
թիւնը մեր խորանաց վրայ յայտնապէս  
մեր առջեւը դնէր, ով կը համարձա-  
կէր անոր մերձենալ եւ իր իղձերն ու  
ցանկութիւններն անոր յայտնել։

Ո՛վ Յիսուս իմ, ինչպիսի գեղեցիկ  
հնարք է մտածածդ, որ ամենասուրբ  
Հաղորդութեան մեջ ինք զինքդ հացի  
կերպարանաց տակ ծածկեցիր, որպէս  
զի քու տեսութեանդ բաղձացողը՝ զքեզ  
հոս երկրիս վրայ կարող ըլլայ միշտ  
գտնել ու սիրել։ Իրաւունք ունէր ու-  
րեմն Մարգարէն գոչելու՝ թէ երթան  
մարդիկ, բոլոր աշխարհ հոչակեն Աս-  
տուծոյ մեզի ունեցած սիրոյն մեծու-  
թիւնը. Պատմեցէ+ է հենանոս զժործա-  
նորա\*։ Ո՛հ սիրալիր սիրտ Յիսուսի, ա-  
մէն արարածոց սրտերը գրաւելու ար-

ժանի ես։ Ո՛վ սիրտ աստուածային, որ  
մեղի ունեցած սիրովդ կը բորբոքիս,  
սպառէ, մաշէ զիս բոլորովին, ինծի սի-  
րոյ եւ շնորհաց նոր կեանք մը տուր։  
Եյնպէս միացուր զիս քեզի հետ, որ  
այսուհետեւ քեզմէ երբեք կարող չը-  
լամ հեռանալ։ Ո՛վ սիրտ Յիսուսի, որ  
միշտ պատրաստ ես քեզի գիմողներուն  
օգնութեան հասնելու, ընդունէ զիս։  
Ո՛վ սիրտ Յիսուսի իմց, որ աշխարհ-  
քիս մեղացը համար խաչին վրայ խո-  
ցուեցար, շնորհէ ինծի մեղացս վրայ  
Ճշմարիտ ցաւ։

Գիտեմ, Տէր, որ աս Ս. Խորհրդոյն  
մէջ այն բորբոքեալ սէրը կը պահես,  
զոր մահուանդ ժամանակ Գողգոթայ  
լերան վրայ ունէիր. ուստի շատ կը  
բաղձաս որ զիս քեզի հետ բոլորովին  
միացընես։ Կարելի բա՞ն է որ ես այ-  
սուհետեւ քեզի գէմ կենամ, եւ չու-  
զեմ ինք զինքս քու կամացդ ու քաղ-  
ձանացդ յանձնել։ Ոչ Յիսուս իմ, քու

արժանեացդ համար՝ վիրաւորէ սիրտս  
եւ քու սուրբ սրտիդ հետ միացուր:  
Իսկ ես կ'առաջադրեմ շնորհքովդ ամէն  
հաճոյքդ կատարել, ոտքի տակ առնե-  
լով ամէն մարդկային ակնածութիւն-  
ները, հրաժարելով ամէն հաճոյքնե-  
րէ՝ որ սուրբ կամացդ կատարման ար-  
գելք կրնան ըլլալ: Շնորհէ, Տէր, որ  
հաստատ պահեմ առաջադրութիւնս,  
այնպէս որ ասկէ ետեւ ամէն խոր-  
հուրդներս, խօսքերս, գործքերս քու  
բաղձանացդ համեմատ ըլլան: Ո՛վ սէր  
Աստուծոյ իմոյ, ամէն օտար սէր իզմէ  
բոլորովին հեռացուր: Յոյս իմ Մարիամ,  
գուն Աստուծոյ առջեւ ամենազօր ես.  
ընդունէ ինծի շնորհք՝ որ Յիսուսի սի-  
րոյն մէջ մինչեւ ցմահ յարատեւեմ.  
ամէն: Այսպէս կը յուսամ, այսպէս ալ  
ըլլայ հիմայ եւ յաւիտեանս:

Ո՛վ կրնայ զիս Յիսուսի Քրիստոսի  
սէրէն բաժնել:


## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՏՆ ՄԱՐԻԱՄ

Սուրբ Քեռնարդոս կը հաստատէ թէ  
Մարիամ չի կրնար զմեղ աւելի սիրել՝  
քան որչափ իրօք կը սիրէ։ Անոր համար  
մեր վրայ արտաքոյ կարգի գութ ունի,  
մեր վշտացը ցաւակից կ'ըլլայ եւ մեծա-  
զօր զօրութեամբը մեզի միշտ օգնու-  
թեան կը հասնի։ Արդ ով հզօր թա-  
գուհի իմ, որովհետեւ կատարեալ ես  
զօրութեամբ, լի ես գթութեամբ, ուս-  
տի եւ քեզի գիմողները կրնաս փրկել,  
անոր համար կը պաղատիմ քեզի այսօր  
եւ միշտ ըսելով, ով հզօր թագուհի,  
պատերազմելու ժամանակ քովս կեցիր.  
զօրացուր զիս որ չիյնամ. զժոխոց գէմ  
պատերազմելու ստիպուած ատենս օգ-  
նէ ինձի։ Եւ եթէ տեսնես որ իյնալու  
վրայ եմ, երկնցուր հզօր բազուկի եւ  
կանգնէ զիս։ Գիտես թէ մինչեւ կենացս  
յետին շունչը որչափ փորձութեանց

դէմ գնելու պիտի հարկադրիմ։ Ո՛վ  
յոյս իմ, ապաւէն իմ եւ զօրութիւն  
իմ Մարիամ, թոյլ մի տար որ Աստու-  
ծոյ շնորհքը դարձեալ կորսնցընեմ։ Ես  
իմ կողմանէս կ'առաջադրեմ միշտ քեզի  
դիմել, եւ ամէն փորձութեան ատեն՝  
շուտ մը օգնութեանդ ապաւինիլ ը-  
սելով.

Օգնէ ինծի, Մարիամ, օգնէ ինծի։



## ԱՅՀ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

**Յ**ԵԿՉՊԻՍԻ գեղեցիկ տեսարան կը  
մատուցանէ մեզի քաղցր Փրկիչն մեր՝  
երբ ճամբորդութենէ յոդնած, լի սի-  
րով եւ գթութեամբ ջրհորի մը քով  
կը նստէր ու Սամարացի կնոջ կը սպա-  
սէր, որ դարձընէ, ուղղութեան բերէ  
եւ փրկութեան հասցընէ. Եւ Յիսուս  
նորէր է վերայ աղբերն\*։ Այսպիսի քաղ-

\* Յով. Դ. 6:

ցրութեամբ ալ երկինքէն իջնալով՝ մեր  
սեղաններուն վրայ մեղի կը սպասէ,  
իբրեւ շնորհաց աղբիւրներու քով, եւ  
կը հրաւիրէ որ երթանք հետը գոնէ  
քիչ մը ժամանակ խօսակցինք, որպէս  
զի իր սիրովը զմեզ բորբոքէ: Կարծես  
թէ Փրկիչը մեր սեղաններուն վրայէն  
կը գոչէ ու ամենուն կ'ըսէ. Ով մարդիկ,  
ինչո՞ւ համար իզմէ կը փախչիք. ինչո՞ւ  
ինձի չէք մերձենար, որ սրտանց կը սի-  
րեմ զձեղ, եւ միայն ձեր բարւոյն հա-  
մար հոս կը կենամ: Ի՞նչ բանէ կը  
վախնաք: Ես աշխարհք եկած եմ, չէ  
թէ զձեղ դատելու, հապա աս սիրոյ  
խորհրդեան մէջ ծածկուելով, ամենուն  
բարիք ընելու եւ ամեն ինձի դիմողները  
փրկելու համար: Ու եկի զի դատեցայց  
շաշխարհն, այլ զի քրիեցից շաշխարհն\*:

Ուրեմն մտածենք՝ թէ ինչպէս որ  
երկինքն Յիսուս Մէշտ ինդանի է՝ լինել  
բարեխօս վասն մէր\*\*\*, ասանկ ալ Ա. Խոր-

\* Յով. Ժ. 47:     \*\* Երբ. 1: 25:

Հըրդոյն մէջ ներկայ է, եւ անդադար  
մեղի համար իր բարեխօսութեան պաշ-  
տօնն ի գործ կը դնէ, միշտ ինք զինք  
յաւիտենական Հօր պատարագ կը մա-  
տուցանէ, որպէս զի մեղի համար ողոր-  
մութիւն եւ շնորհք ընդունի: Ասոր  
համար Թովմաս Կեմպացին կ'ըսէ թէ  
Պէտք է որ ստեղ Հաղորդութեան խոր-  
Հըրդոյն ձեռքովը Յիսուսի մերձենանք  
եւ հետը խօսակցինք, առանց վախի եւ  
ակնածութեան՝ իբրեւ սիրելի բարե-  
կամի հետ:

Արդ որովհետեւ հրասան կու տաս  
որ քեզի մերձենամ, թոյլ տուր միան-  
դամայն, ով ծածկեալ Թագաւոր եւ  
Տէր փառաց, որ վստահութեամբ բա-  
նամ առջեւդ սիրտս եւ ըսեմ. Ով Յի-  
սուս, հոգւստ միակ սէրը, կը ճանչնամ  
մարդիկներուն քեզի ըրած անիրաւու-  
թիւնը: Դուն զանոնք կը սիրես. իսկ  
անոնք զքեզ չեն սիրեր: Դուն անոնց  
բարիք կ'ընես. եւ աս ամէն բարեաց փո-

խարէն իրենցմէ թշնամանք կ'ընդունիս։  
Դուն անոնց կը մերձենաս, իրենց հետ  
բարեկամանալ կ'ուզես. իսկ անոնք քեզի  
միտ չեն դներ։ Դուն քու շնորհացդ  
գանձն անոնց առջեւը բացած՝ կը հրա-  
ւիրես որ գան առնուն. իսկ անոնք  
շնորհքն իրենցմէ կը մերժեն։

Ո՛չ Յիսուս իմ, ի՞նչպէս եղաւ՝ որ  
ես ալ այնչափ երկայն ժամանակ այս  
ապերախտներուն հետ միաբանեցայ. եւ  
ոչ միայն շնորհքդ մերժեցի, այլ նաեւ  
զքեզ վշտացուցի։ Այս ինձի. կը ցա-  
ւիմ աս մեծ ապերախտութեանս վրայ։  
Այսուհետեւ կը բաղձամ ինք զինքս  
ուղղել. կ'առաջադրեմ կենացս մնացած  
օրերը ջանալ որ քեզի հասցուցած ան-  
շափ գառնութեանցս՝ ձեռքէս եկածին  
շափ հատուցում ընեմ, քու կամքդ  
միայն կատարեմ։

Ըսէ Տէր իմ, ըսէ, իզմէ ի՞նչ կ'ու-  
զես. ես ալ առանց ընդդիմութեան  
եւ մեծ յօժարութեամբ ամենայն ինչ

կը կատարեմ: Սուրբ Հնազանդութեան  
ձեռքովը ճանչցուր միայն կամքդ. եւ կը  
խոստանամ ամէն ակնարկութեանցդ  
կատարեալ հպատակութիւն մատու-  
ցանել: Ո՛վ Աստուած իմ, հաստատու-  
թեամբ կ'առաջադրեմ ասկէ ետքը այն  
միայն ընել՝ ինչ որ կը տեսնեմ թէ  
քեզի շատ հաճոյական է, թէպէտ եւ  
հարկ ըլլայ ամէն բան կորսնցընել,  
ծնողքս, ազգականներս, բարեկամներս,  
պատիւս, առողջութիւնս եւ նոյն իսկ  
կեանքս: Ամէն բան կորսուի. քու հա-  
ճոյքդ միայն կատարուի: Երջանիկ է  
մարդ՝ երբ ամէն բան կը կորսընցընէ,  
որպէս զի քու սիրտդ հաճեցընէ: Կը  
սիրեմ զքեզ, ով անեզը բարութիւն.  
վասն զի ամէն բարութիւններէն աւելի  
սիրելի ես: Կը միաւորեմ իմ խեղձ  
սիրտս սերովբէից սիրավառ սրտին հետ,  
կը միացընեմ Մարեմայ եւ քու սրտիդ  
հետ: Բոլոր սրտէս ու ամէն զօրու-  
թեամբս կը սիրեմ զքեզ, զքեզ միայն

սիրել կը բաղձամ, միշտ միայն զքեզ  
սիրել կը ցանկամ:

Աստուած իմ, Աստուած իմ, ես  
քուկդ եմ. գուն ալ իմն ես. ամէն:



## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

### ԱՌ Ս. ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Մեր ամենասուրբ մայրը Մարիամ  
միշտ Աստուծոյ առջին կենալով՝ ան-  
դադար մեղի համար կը բարեխօսէ, եւ  
զմեղ կը պաշտպանէ իր աղօթիւքն՝ որ  
Աստուծոյ առջեւ շատ զօրաւոր են: Իր  
գթած աչուրները միշտ բաց են, եւ  
կը դիտեն ամէնուն եւ մանաւանդ իր  
ջերմեռ անդներուն կարօտութիւնները:  
Ապա ուրեմն, ով ամենասիրելի Մայր,  
կը տեսնես նաեւ իմ խեղճութիւնս, կը  
տեսնես թէ որչափ վտանգներու մէջ  
կը պարտիմ, եւ ստուգիւ բնծի համար  
կ'աղաչես: Աղաչէ, աղաչէ, եւ աղաչե-

Են մի դազրիր՝ մինչեւ որ զիս երկինքը  
քու քովդ չտեսնես, ուր քեզի անդա-  
դար շնորհակալութիւն մատուցանեմ:  
Լաւ գիտեմ որ դուն, ամենաքաղցր Մայր,  
Յիսուսէն ետքը՝ քու հաւատարիմ ծա-  
ռայիցդ ապահով փրկութիւնն ես: Ըն-  
դունէ ինձի ուրեմն այն միակ շնորհքը՝  
զոր կը խնդրեմ քեզմէ այսօր, այս ինքն՝  
մինչեւ ցմահ քեզի հաւատարիմ մնալու  
շնորհքը. որպէս զի մահուանէս ետքը  
գամ զքեզ երկինքն օրհնեմ, բոլորո-  
վին ապահով ըլլալով՝ որ ալ անկէ  
ետեւ ամենասուրբ ոտքէդ պիտի չհե-  
ռանամ՝ քանի որ Աստուած Աստուած է:

Ով Մարիամ, սիրելի Մայր, շնորհէ  
որ միշտ քուկդ ըլլամ. ամէն

## ՅԱՆԿ ԱՂՈԹԻՑ

Երես

<b>ԵՐԵՍՈՒՄՆ ԱՂՈԹՔՆԵՐ</b>	
Պատրաստութիւն . . . . .	1
Աղօթք գոհութեան . . . . .	3
Հայր մեր: Ողջոյն քեզ, Մարիամ .	7
Աղօթք առ Ա. Աստուածածին . . .	8
Աղօթք առ Ա. Յովսէփ Աստուա-	
ծահայր . . . . .	10
Ողջոյն քեզ, Յովսէփ . . . . .	11
Աղօթք առ պահապան հրեշտակն .	11
<b>ՊԱՏԱՐԱԳԻ ԱՂՈԹՔՆԵՐ</b> . . . . .	13
Հաւատամբ ի մի Աստուած . . .	22
<b>ԻՐԻԿՈՒՄՆ ԱՂՈԹՔՆԵՐ</b>	
Պատրաստութիւն . . . . .	40
Աղօթք շնորհակալութեան . . . . .	43
Աղօթք զզման եւ առաջադրու-	
թեան . . . . .	45
Աղօթք ինք զինք Ա. Աստուածածնի	
պաշտպանութեան յանձնելու .	46
Աղօթք առ Ա. Յովսէփ Աստուա-	
ծահայր . . . . .	48
Աղօթք յանկարծական մահուանէ	
ազատելու համար . . . . .	49
<b>ԱՂՈԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՖԱԾԻՆ</b>	
ՀԱԲԹՈՒՄՆ ՕՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ	
Կիբակի. Աղօթք մեղաց թողութեան	
համար . . . . .	52

Երես

ԵՐԻՇ+ՀԱՅԻՆԻ . Աղօթք յարատեւու-	54
թիւն ընդունելու համար . . . . .	
ԵՐԵ+ՀԱՅԻՆԻ . Աղօթք երջանիկ մահ	56
խնդրելու համար . . . . .	
ՉՐԵ+ՀԱՅԻՆԻ . Աղօթք դժոխքէն ազա-	59
տելու համար . . . . .	
ՀԵՆԴՀԱՅԻՆԻ . Աղօթք յաւիտենական	61
երանութեան համար . . . . .	
Ո-ՐԻՄԻ . Աղօթք Յիսուսի եւ Մա-	64
րեմայ սէրն ընդունելու համար . .	
ՇՄԻՄԻ . Աղօթք Մարեմայ բարեխօ-	66
սութիւնը խնդրելու համար . . . .	

ՕՐՈՒԱՆ ՄԵԶ ԸՆԵԼՈՒ ԶԱՆԱԶԱՆ

ԱՂՕԹՔՆԵՐ

Աղօթք ծնողաց՝ իրենց որդւոցը	70
համար . . . . .	
Աղօթք ծնողաց համար . . . . .	72
Աղօթք եղբարց ու քերց համար .	75
Աղօթք ամէն հաւատացելոց համար	76
Աղօթք քաւարանի հոգւոց համար	78
Աղօթք մաղձայուզի եւ հիւանդու-	
թեան ժամանակ . . . . .	80
Աղօթք նեղութեան կամ հիւան-	
դութեան ատեն . . . . .	82
Աղօթք Եկեղեցւոյ վերահաս տառա-	
պանաց առջեւն առնելու համար	84
Աղօթք Ա . Թուվմայի՝ առաքինու-	
թիւնները ստանալու համար . . .	85
Աղօթք առ սիրտ Յիսուսի . . . .	88

Երես

<b>Ուրիշ աղօթք առ ամենասուրբ</b>	
սիրտ Յիսուսի . . . . .	91
<b>Հրեշտակ Տեառն</b> . . . . .	93
<b>Ուրախ լեր Թագուհի Երկնից</b> . . . . .	93
<b>Ողջ լեր Թագուհի</b> . . . . .	95
<b>Լիթանիա Ս. Կուսին</b> . . . . .	96
<b>Ընդ հովանեաւ</b> . . . . .	99
<b>Ողջոյն Թագուհի Երկնաւորաց</b> . . . . .	100
<b>Վասն Արքուհւոյ . — Ս. զԱստուածածինն . — Ընկալ տէր</b> . . . . .	100
<b>Մայր սուրբ</b> . . . . .	101
<b>Մեծացուսցէ</b> . . . . .	103
<b>Ապաշխարութեան Եօթն սաղմոսները</b> . . . . .	105
<b>Տէր ամենակալ</b> . . . . .	119
<b>Հաւատով խոստովանիմ</b> . . . . .	124
<b>Աղօթք սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, Երբ մէկը սատանային որոգայթին մէջ ինկած է</b> . . . . .	132
<b>Աղօթք Ս. Գրիգորի Նարեկացւոյ առ Ս. Աստուածածին</b> . . . . .	135
<b>ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ</b>	
<b>Պատրաստութիւն</b> . . . . .	140
<b>Աղօթք Խղճի մտաց քննութենէ յառաջ</b> . . . . .	144
<b>Աղօթք մտաց լուսաւորութեան համար</b> . . . . .	147
<b>Քննութիւն Խղճի մտաց</b> . . . . .	148
<b>Աղօթք Խղճի մտաց քննութենէ ետեւ</b> . . . . .	153
<b>Աղօթք առ Յիսուս Փրկիչ</b> . . . . .	155
<b>Աղօթք առ Հոգին սուրբ</b> . . . . .	157


Երես

<b>Աղօթք զղջման ու առաջադրութեան</b>	158
<b>Աղօթք առ Ս. Աստուածածին</b>	160
<b>Զօրաւոր աղօթք զղջման</b>	161
<b>Խոստովանիմ առաջի</b>	162
<b>Աղօթք շնորհակալութեան խոստովանութենէն ետեւ</b>	163
<b>Աղօթք խոստովանանքին ընդունելութեանը համար</b>	165
<b>Աղօթք յարատեւութեան շնորհք ընդունելու համար</b>	167
<b>Աղօթք առ Ս. Աստուածածին</b>	168
<b>Ներդորժութեան երեւասարդաբանութեան նական առաջարկներ</b>	
<b>Ներգործութիւն հաւատութիւնութեանց</b>	169
<b>Ներգործութիւն Յուսոյ</b>	170
<b>Ներգործութիւն Սիրոյ</b>	171
<b>Ս. ՀԱՊՈՐԴՈՒԹԵԱՆ ԱԳՕԹՔՆԵՐԻ Պատրաստութիւն</b>	173
<b>Ամենասահմանային Հաղորդութեան մեջեւնալիքն յատագ.</b>	
<b>Ներգործութիւն հաւատութիւն</b>	176
<b>Ներգործութիւն յուսոյ</b>	178
<b>Ներգործութիւն սիրոյ</b>	179
<b>Ներգործութիւն խոնարհութեան</b>	180
<b>Ներգործութիւն զղջման</b>	182
<b>Ներգործութիւն փափաքանաց</b>	183
<b>Ամենասահմանային Հաղորդութեանին եղածը.</b>	
<b>Ներգործութիւն հաւատութիւն</b>	185
<b>Ներգործութիւն ընդունելութեան</b>	186

	Երես
Ներգործութիւն շնորհակալութեան	187
Ներգործութիւն նուիրման . . . .	188
Ներգործութիւն աղաչանաց . . . .	191
Աղօթք առ. Ա. Աստուածածին Հա- ղորդութենէն ետեւ. . . . .	194
Աղօթք Ամակառար ներողը-Ռետանը .	196
<b>ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ</b>	
<b>ԱՂՕԹՔՆԵՐ</b>	
Քրիստոսի ծննդեան . . . . .	197
Նոր տարւոյ . . . . .	199
Աստուածայայտնութեան . . . .	200
Տեառնրնդառաջին . . . . .	202
Աւետման . . . . .	203
Զատկին . . . . .	204
Համբարձման . . . . .	206
Հոգեգալստեան . . . . .	207
Սուրբ Երրորդութեան . . . . .	209
Վերափոխման . . . . .	211
Ծննդեան Ա. Աստուածածնի . .	213
Անուան Մարեմայ . . . . .	215
Անարատ յղութեան . . . . .	216
<b>ՔԱՆԻ ՄԸԼ ՍՈՒՐԲԵՐՈՒ ԱՂՕԹՔՆԵՐ</b>	
<b>Աղօթք առ. սուրբ Յովսէփ Աստուա- ծահայր . . . . .</b>	<b>218</b>
Աղօթք առ. սրբուհի Աննա . . . .	220
Աղօթք առ. Ա. Յովհաննէս Մկրտիչ	221
Աղօթք առ. Ա. Պետրոս եւ Պօղոս	223
Աղօթք առ. Ա. Ստեփանոս նախավկայ	224
Աղօթք առ. Ա. Գրիգոր Լուսաւորիչ	226
Լիթանիա ի պատիւ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին . .	228
Աղօթք առ. սրբուհի Հռիփսիմէ .	233

	ԵՐԵՒ
Աղօթք առ Ս. Հայր Անտոն ճգնա-	
ւոր . . . . .	235
Աղօթք անուանը սրբոյն . . . . .	236
<b>ՄԱՄԱՏՈՒՅ ԶԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆԵՐ</b>	
Ա. Ճանապարհ խաչկը . . . . .	239
Բ. Պատուասպառութիւն ծննդեան Քրիս-	
տոսկ . . . . .	263
Գ. Ս. Վարդարանին Ջերմեան-	
դութիւնը . . . . .	266
Դ. Ս. Կուսին եօնը ցաւոց Ջերմե-	
անդութիւնը . . . . .	272
Կայր առ խաչին . . . . .	281
Ե. Խնճօրեայ պատուասպառութիւն ան-	
դրաբ յղութեան Ս. Կուսին . . . .	284
Լիթանիա անարատ Յղութեան . .	287
Զ. Ջերմեանդութիւն առ Ս. Աս-	
տուածանայը Յովակի .	
Ս. Յովսեփայ ցաւերն եւ ուրախու-	
թիւնները . . . . .	301
Համառօտ մաղթանք առ Ս. Յով-	
սեփ . . . . .	308
Է. Փոփրէկ ժամերդութիւն ի պատիւ-	
անարաբ յղութեան Ս. Կուսին . .	310
<b>ԱՌ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԶԱՆԱԶԱՆ</b>	
ԱԴՕԹՔՆԵՐ	
Աղօթք ինք զինքը Ս. Աստուածա-	
ծնի յանձնելու . . . . .	328
Աղօթք Ս. Աստուածածնի առաքի-	
նութեանցը նմանելու համար . .	330

	ԵՐԵԱ
Աղօթք սղջախոհութեան չնորհք ինդրելու համար . . . . .	332
Աղօթք բարի մահ ինդրելու համար	334
Աղօթք սատանային փորձութիւն- ներէն ազատելու համար . . . . .	335
Աղօթք առ սիրտն Մարիամն . .	337
Աղօթք Ս. Աստուածածնի սէրն ըն- դունելու համար . . . . .	339
Աղօթք զղջացեալ անձի մը առ Մա- րիամ	342
Աղօթք զոր Մարեմայ ամէն որդին ընելու է . . . . .	344
<b>ՔԱՆՏ ՄԸ ՍՐԲՈՑ ԱՌ ՄԱՐԻԱՄ ԱՂՕԹՔՆԵՐԸ</b>	
Արբոյն Ալոխիսսի . . . . .	346
Արբոյն Օգոստինսսի . . . . .	347
Արբոյն Յովհ. Գամանկացւոյն .	349
Արբոյն Բեռնարդոսի . . . . .	350
Ուրիշ Աղօթք . . . . .	352
Արբոյն Բոնաւենդուրայի . . . . .	352
Արբոյն Եփրեմի . . . . .	353
<b>ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ ԱՄԵՆԵՍՍՈՒՐԲ ՀԱՊԱՐ-</b>	
ԴՈՒԹԵԱՆ ԵՒ Ս. ԿՈՒՍԻՆ	
Պատրաստութիւն . . . . .	357
Հոգեւորական հաղորդութեան վրայ	366
Հոգեւորապէս հաղորդուելու եղանակ	368
Ամէն այցելութենէ յառաջ առ Յի- սուս փրկիչ աղօթք . . . . .	373
Ամէն այցելութեան վերջը առ Ս.	
Աստուածածին աղօթք . . . . .	382



2420

2353